Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-5 NOV 2

Յ Ե. Չ Ա Ր Ե Ն Ց

ՅԵՐԿԻՐ ՆԱՅԻՐԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

891.99
Չ - 28

ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՅԵՐԿԻՐ ՆԱՅԻՐԻ

ՎԵՊ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1926

Արտատպված է «Նորք» ամսագրից

ZUUՌ Арм.ССР
2331-54

Գրառեպվար № 448 (բ.) հ. 371 Տիրաժ 300

Յերևան, Պետհրատի 2-րդ տպարան պ. 646

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Յերկիր Նայիրի» վեպը լույս տեսնելուց հետո հեղինակը իր մի շարք հայրենակիցներից սկսեց ստանալ գրություններ, մեծ մասամբ բարեկամական նամակներ, վորոնցով այդ արգո նայիրցիները մի կողմից իրենց խորին գոհունակությունն են հայտնում հեղինակին, վոր նա, վորոշ տեսակետով, այսպես ասած՝ անմահացրել ե իրենց սրտին շատ մոտ Նայիրյան այդ քաղաքի որերն ու վաստակները,—իսկ, մյուս կողմից, դժգոհությունը, վոր հեղինակը, իր կամքից չերևի անկախ պատճառներով, Նայիրյան այդ քաղաքի մի քանի արգո քաղաքացիների մասին արձանագրել ե տեղեկություններ, վոր չեն համապատասխանում իրականության: Այսպես, որինակ, մի շարք քաղաքացիներ հայտնում են, վոր Նայիրյան այդ քաղաքի առաջին ծխականի տեսուչ յեղել ե վոչ թե պ. Մարուքեն, ինչպես ասված եր մեր աշխատության մեջ, այլ պ. Բյուզանդ Վարդերեսյանը, վորի և մի շարք վոչ այնքան ել գեղեցիկ արարքները ծխական դպրոցում, հիշյալ հիմնական սխալի պատճառով, վեպում վերագրված եյին պ. Մարուքեյին: Այս վերջինիս մասին մի շարք ամենաստույգ աղբյուրներ իրենց պարտքն են համարում հայտնել նաև այն, վոր նա, այսինքն պ. Մարուքեն, ավարտած ե յեղել վոչ թե Գևորգյան Ճեմարանը, ինչպես ասված եր մեր վեպում, այլ—տեղական յոթնամյա քաղաքային դըպրոցը, վորտեղից և, վորքան մեզ հայտնի չե, անցել ե արտասահման (Բերլին):—Սակայն այս վերջին հանգամանքն ե ահա, վոր այնպես ել մութ մնաց հեղինակին. մեզ այնպես ել չհաջողվեց ճշտել, թե յեղե՞լ ե նա արդյոք Բերլինում, ինչպես ինքն

է ասում, և, յեթե այս՝ իրերի ինչ պայմանների բերումով է, վոր նա կարողացել էր Նայիրյան այդ—թող ների ինձ ասել—բավականին հեռավոր քաղաքից թռչել—պատկերավոր ասած—այդքան հեռու:

Այս հանգամանքն է ահա, վոր այնպես էլ մութ մնաց մեզ համար ու չպարզաբանված.—և ահա, օգտվելով առիթից, խընդրում ենք բոլոր մեր հայրենակիցներին՝ յեթե նրանք ունեն ըստույգ տեղեկություններ հիշյալ կարևորագույն հանգամանքը ճշտող՝ թող բարի լինեն գրել մեզ, հետևյալ հասցեյով՝

Յերկիր Նայիրի. Յեղիշե Չարենցին.—

Մինչ այդ, օգտվելով մեր վեպի յերկրորդ հրատարակության ցանկալի առիթից՝ այսու մենք շտապում ենք առաջին հերթին մեր խորին շնորհակալությունները հայտնել մեր բոլոր հիշյալ բարեկամներին՝ վոչ այնքան մեզ, վորքան պատմությանը մատուցած նրանց հիշյալ անգնահատելի ծառայության համար,—և ապա՝ շտկել բոլոր այն սխալներն ու թերությունները, վոր մեր կամքից անկախ, տեղ եյին գտել մեր աշխատության էջերում:

1926. հունվար
Յերևան

ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

P. S.—*Մեր աշխատության մեջ գուցե և կան, ի հարկե, ավելի մեծ, թեկուզ մի քիչ այլ կարգի, սխալներ ու թերություններ, քան վերոհիշյալները.—բայց այդ սխալներն ու թերությունները շտկելու համար հարկավոր էր թերևս նորից գրել այս վեպը, բայց դա արդեն վոչ թե շտկում կլիներ, այլ անդամահատություն՝ մահվան սպառնալիքի ներքո: Ուստի և մենք հիմնականում թողնում ենք մեր աշխատությունն այնպես, ինչպես նա կա, չլինելով ժողովրդական*

այն իմաստուն ասացվածքից, վոր կուզեկի մեջքը գերեզմանը միայն կշտկի... Թեկուզ պիտի ասենք, վոր ժողովրդական այս իմաստուն ասացվածքում կա մի բան, վոր նրա ճշմարտությունը մեր աչքին դարձնում է բավականին թեյական.—այդ այն է, թե վ՞ոնց կարող է գերեզմանը—շտկել... Գերեզմանից հետո — էլ ինչ շտկում...:

Հասկացողը կհասկանա:

Յե. Չ.

Յերկիր Նայիրի՛, յերազ հեռավոր,
քնել ես քնքուշ Թագուհու նման.
միթե յե՞ս պիտի յերգեմ քեզ որոր
յեվ արքայական դնեմ գերեզման...

Վահան Տերյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Վաղո՜ւց, վաղո՜ւց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն։ Վաղո՜ւց յելք է փնտրում կուտակված մի կարոտ։ Մթի մեջ, գիշերի կեսին, կամ ցերեկը, յերբ յես զբաղված եմ լինում առորյա հոգսերով, կամ անգամ յերբ յես տարված եմ լինում գինու կամ կնոջ հմայիչ հաճույքով—ներսը, սրտիս խորքում, գողի պես զգույշ, կամացուկ շարժվում է նա։

Ինչպես վաղուց տրված մի խոստում, կամ ինչպես ժամանակին չվճարած պարտամուրհակ—ծանրանում է սրտիս, անողոք—ուտում է սիրտս։

Հաճախ պատկերանում է նա ինձ, որպես մի վաղեմի բարեկամ. վաղեմի ծանոթի մի նման, որին յես շատ առաջ եմ հանդիպել, բայց կորցրել եմ հետո—որերի մշուշից յելնում է նա հաճախ, որերի մշուշից նայում է ինձ։ Յերկա՜ր—յերկա՜ր նայում է աչքերիս։ Ասում է՝ չե՞ս ճանաչում։ Մոռացե՞լ ես—ասում է նա։ —Ու սահում է ելի, թաղվում է որերի մշուշում—կորչում է որերում։

Հազա՜ր-հազա՜ր տեսքով ու կերպարանքով պատկերանում է նա ինձ։ Լինում է, որ յես թերթ եմ կարդում, կամ, ասենք, գնում եմ շուկա փայտ գնելու։ Փայտ ծախողն է, ասենք, մի սովորական գյուղացի, մի սայլ փայտ է բերել շուկայում ծախելու։ Հարցնում եմ՝ ի՞նչ արժե, բարեկամ, փայտդ։—Այսքան, կամ այսքան։— Ու մի պահ, հարցական նայում է ինձ։ Յեվ, յերևակայո՞ւմ եք,—հանկարծ, այդ ամենասովորական գյուղացու աչքերից—աչքերի մշուշից—սահում է, ինձ է նայում—նա։ Նայում է յերկա՜ր-յերկա՜ր։ Ասում է՝ չե՞ս ճանաչում։—Մոռացե՞լ ես—հարցնում է նա։ Յեվ յես, փայտ գնելու փոխարեն անողոք մորմոքը սրտիս—վերադառնում եմ տուն։

Յերբեմն էլ յես տեսնում եմ նրան... հորս, Աբգար աղայի դեղնած, դեղնափայլ... մազերում։ Հորս, Աբգար աղայի դեղնափայլ մազերից ցոլնում է նա, հազարամյա—նայում է ինձ։ Հազար-հազար տեսքով ու կերպարանքով պատկերանում է նա։ Ապրում է, աներևույթ, մեր ամեն ինչում։

Բայց ո՞վ է, կամ ի՞նչ է նա—ահա ամենաեյականը։ Գուցե մեծ լինի զարմանքդ, սիրելի ընթերցող, յեթե ասեմ, վոր յես էլ չգիտեմ։ Գիտեմ, վոր նա—կա. յեղել է և հին է, վորպես իմ արյունն է—հին։ Կա—զգում եմ, շոշափում եմ սրտով, տեսնում եմ, —բայց հենց վոր ուզում եմ բռնեմ, տեսնեմ մարմնավոր, կանգնեցնեմ հաստատ—կորչում է, դառնում է աներևույթ, ցնդում է, վորպես ծուխ, կամ ցնորք։

Գորշ, ամենորյա, առորյա մեր կյանքում, կենցաղում, մորմոքում է նա մութ, աներևույթ, կանչում է—ո՞ւր... Յերբ, իրիկնադեմին, մեղմ, հատ-հատ ղողանջում է զանգը հին, խարխուլ զանգակատնից—կանչում է նա։ Ո՞վ է լսում։ Ով էլ վոր լսում է —շա՛տ բան է հասկանում։ Յես էլ, վոր մանկությունից լսել եմ նրա կանչը—շա՛տ բան եմ հասկացել։ Բայց էլ ինչո՞ւ չե խեղդում ինձ, ինչո՞ւ չե կարոտը խեղդում։ Ինչո՞ւ չե կանչում—մտերիմ, կանչում—անվերջ։ Յեվ յես ինչո՞ւ չեմ ուզում, ինչո՞ւ չեմ կամենում փնտրել, գտնել նրան, խոսել նրա հետ—սրտով, սիրել նրան։

Սիրելի ընթերցող։ Ներիր, վոր այս հարցերի պատասխանը չես գտնի այս գրքում։ Այս հարցերի պատասխանը քո սրտում, քո հոգում պիտի գտնես։ Պիտի ցանկություն զգաս գտնելու։ Ուրիշ վոչինչ։ Այո։—Ուրիշ վոչինչ...

—Ինչքա՜ն, ինչքա՜ն անգամ հարցրել եմ յես ինձ, թե ի՞նչ է, վերջապես—Նայիրին։ Գուցե քեզ տարորինակ թվա այս հարցը, սիրելի ընթերցող։ Բայց դա նույնքան է բնական, վորքան այն հարցը, թե ո՞վ ենք մենք, վերջապես—նայիրցիներս։ Ի՞նչ ենք մենք և ո՞ւր ենք գնում։ Ի՞նչ ենք յեղել յերեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը։

Ամեն, ամեն անգամ, յերբ նման հարցերը կերել են սիրտս —մեկը, մի ուրիշը կարծես, ուրվականի նման ցոլնելով որերից, որերի մշուշից, տվել է ուղեղիս չարախինդ մի հարց—«Չե՞ր կարելի արդյոք տեսնել մարմնավոր, պատկերացնել հաստատ յերկիրը Նայիրի։ Նու, թեկուզ հենց իրենց՝ նայիրցիների կյանքում, կենցաղում։ Շոշափել այդ յերևույթը—նայիրյանը—սրտով, շոշափել մարմնավոր, պատկերել յերկրային... Գուցե սուտ է Նայիրի, Նայիրին—չկա... Գուցե—հուշ է միայն—ֆիկցիա, միֆ։— Ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն...

. . . .

Սիրելի ընթերցող, թողնում եմ, վոր դու... այո, դու—գըտնես Նայիրին։ Սույն այս իմ պոեմանման վեպում կանցնեն աչքերիդ առաջով բազմաթիվ նայիրցիներ. սիրի՛ր, վորին կուզես, գտի՛ր, ում վոր սրտում, կամ հոգում կամենաս, յերկիրը Նայիրի։

Իսկ յեթե, բան է, չգտար—ներիր, սիրելիս՝ յես չեմ մեղավորը... Գուցե ճիշտ վոր՝ միրաժ է Նայիրին. ֆիկցիա. միֆ. ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն... Իսկ նրա փոխարեն—կա այսոր մի յերկիր, վոր կոչվում է Հայաստան, և այդ հին յերկրում ապրել են յերեկ և ապրում են այսոր շատ սովորական մարդիկ՝ սովորական մարդու սովորական հատկություններով։ Յեվ ուրիշ—վոչինչ։ Վոչ մի «յերկիր Նայիրի»—այլ միայն—մարդիկ, վոր ապրում են այսոր աշխարհի այն անկյունում, վոր կոչվում է Հայաստան, վոր հիմա դարձել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, իսկ 1917-ից առաջ վոչ այլ ինչ էր, յեթե վոչ Ռուսական Իմպերիայի մի հետամնաց ծայրամասը—և ուրիշ վոչինչ...

Ուրիշ վոչինչ։

. . . .

Մնացածը—վեպում։

Յե. Չ.

Մոսկվա, 1921, հոկտեմբեր.

Մ Ա Ս Ն   Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՔԱՂԱՔԸ ՅԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Այստեղ Նայիրյանն է նազում...

Վ. Տերյան

Նայիրյան այդ հնամյա քաղաքը ամեն ինչով նման էր Նայիրյան բոլոր հին ու նոր քաղաքներին. փոքր էր, վոչ բազմամարդ, խաբխուլ ու փոշոտ. ժամանակակից լեզվով այդպիսի քաղաքներին ասում են– գավառական հետամնաց քաղաք։ Յերբ է շինված Նայիրյան այդ հին քաղաքը—աստված ինքը գիտե. բայց ասում են, վոր այդ քաղաքը հիմնողները յեղել են հին Նայիրցիներ.—գուցե՝ խալդեր լայնաթիկունք ու ջլաբազուկ, գուցե՝ գանգրահեր ուրարտացիներ։ Սակայն պատմական այդ հանգամանքը, կարծում ենք, այնքան էլ կարեվոր չէ, վորովհետեվ խալդական կամ ուրարտական այն հին քաղաքից հիմա չերեվի տեղն էլ չէ մնացել. նրանց այն կավե, գետնափոր խրճիթների փոխարեն կանգնած են հիմա Նայիրյան այդ փոքրիկ քաղաքում քարե միհարկանի, յերկհարկանի և նույնիսկ յերեքհարկանի շինություններ՝ տներ ու խանութներ, վորոնք նույնքան են նման ուրարտական այն հին խրճիթներին, վորքան քո քիթը, ընթերցող... Եյֆելյան աշտարակին։ Այդ նոր տներից ու խանութներից մի քանիսը նույնիսկ թիթեղե կարմիր կամ կանաչագույն կտուրներ ունեն—մի հանգամանք, վոր քաներորդ դարից է գալիս—և, վորպես այդպիսին, նոր է և միանգամայն ուշագրավ։ Քաղաքի ցածլիկ տների ու խանութների միօրինակ ծովում թիթեղե այդ կտուրները աչքի յեն զարնում, ինչպես աչքի կզարներ կանացի յեվրոպական փետրազարդ գլխարկը արևելյան գյուղում։ Յեվ ի զուր չէ, վոր Նայիրյան այդ քաղաքում մինչև օրս էլ մի անհուն վախով ու պատկառանքով են խոսում այն անձնավորության մասին, վորը առաջին անգամ թիթեղե կտուրով է ծածկել իր յերկհարկանի բնակարանը. դա բոլորին հայտնի, բոլորից հարգված, այսպես անվանված Գ ե ն ե ր ա լ Ա լ ո շ ն է, ուխտուննանց

ՀՍՍՌ Арм.ССР
231-54

պատկառելի մի Նայիրցի, վորի հետ ընթերցողը դեռ շատ առիթ կունենա հանդիպելու սույն իմ այս պոեմանման վեպում։

Տները, ինչպես ասացի, Նայիրյան այդ քաղաքում ցածլիկ են, մեծ մասամբ միհարկանի, տափակ կտուրներով,—բայց տների ու խանութների այդ միօրինակ տափակության ծովում, քաղաքի ճիշտ կենտրոնում, վորպես ուրիշ մի աշխարհից, կամ յերկնքից ընկած քարե մի հրաշք—կանգնած կա, յերևակայեցեք... հինգհարկանի մի հսկա, քարե մի թյուրիմացություն... Ծխական դպրոցի ծանոթ ուսուցիչ պ. Մ ա ր ու ք ե   Դ ր ա ս տ ա մ ա տ յ ա ն ը, վոր պակաս մի հրաշք չե Նայիրյան այդ քաղաքում, ամեն անգամ այդ շինության մոտից անցնելիս ասում ե ինքնիրեն, կամ, յեթե խոսակիցներ ե ունենում — նրանց. «Ուրիշ բան ենք մենք, ուրիշ—յեվրոպացիք... Այ»—Յեվ նա հիացած աչքերով նայում ե հինգհարկանի շենքի տարօրինակ-փոքրիկ քառակուսի պատուհաններին։ «—Դեռ մենք շատ ենք հետամնաց»—ասում ե նա։ Այսպես ե մտածում պ. Մարուքեն—և նա, իհարկե, ունի իրավունք. պ. Մարուքեն ավարտել ե տեղական քաղաքային յոթնամյա դպրոցը և, իրերի անհայտ բերմունքով, յերկու-յերեք ամսով յեղել ե Բեռլինում.—գոնե այսպես ե հավատացնում ինքը, պ. Մարուքեն։ Նա սիրում ե միմիայն նորն ու կատարյալը և չի կարող տանել վոչ մի հնություն։ Այսպիսով նա, միանգամայն իրավացիորեն, յեվրոպացու հուշակ ե վայելում Նայիրյան այդ քաղաքում—և բոլորը, մեծ թե փոքր, բացի յերկրորդ ծխականի ուսուցիչ ընկ. Վառոդյանից, հարգում են նրան։

Բայց քաղաքը, բացի այդ հինգհարկանի հրաշք-շինությունից, ուներ մի շարք տեղական հրաշալիքներ, վորոնցով դժբախտաբար չեր հետաքրքրվում պ. Դրաստամատյանը։ Սակայն ինչ ուզում ե պ. Մարուքեն կարծե—առանց այդ հրաշալիքների Նայիրյան այդ քաղաքը յեթե վոչ իր ամբողջ հմայքը, գոնե իր հըմայքի կեսից ավելին անպայման կը կորցներ հենց իրենց, այդ քաղաքի բնակիչների աչքում։ Յեվ ճիշտ վոր. ինչո՞ւ համար կատարյալ հրաշալիքներ չեն կարող համարվել—թեկուզ հենց բեր-

դը, կամ, ասենք,—Վարդանի կամուրջը, կամ, վերջապես —Առաքելոց յեկեղեցին... Իսկ ձորի՝ Սլլան Քարը, Ճգնավորի մատուռը,—վո՞րը թվեմ։—Բոլորն էլ հրաշք են՝ զարմանալի զարմանք, անկարելի հնարք։

Սկսենք բերդից։

Քաղաքի արևմտյան ծայրում, վերը, ժայռակուռ, դեղին բըլուրի վրա—խիստ, խոժոռ, վորպես արևելյան քարե մի բռնակալ—բազմել ե բերդը։ Ժայռե իր գահի, աթոռի վրայից նայում ե քաղաքին։ Քարե մի վիթխարի արկղ լինի կարծես՝ ծանր՝ ընկել ե վերից ու կախված մնացել ե բլուրի վրա. Նստել ե՝ ծանր ու հաստատ.—Ընկել ե նախ մի հսկայական քարե արկղ կարծես—և հետո, մեկը մյուսի յետևից տեղացել են վար ուրիշ մեծ ու փոքր, ծանր ու թեթև, զանազանաձև սնդուկներ՝ մեկը մեկի վրա, կողք-կողքի. հրաշք ե, չես հասկանում զարմանում ես միայն։√Ասում են, վոր այդ բերդը շինելիս Նայիրցի վարպետները ձվի սպիտակուցն են գործածել շաղախի փոխարեն—ահա թե ինչու յե այդ բերդը անխորտակելի։ Անառիկ ե այդ բերդը—ամենքը այդ գիտեն—և դավաճանությունն ե, նենգ, ըստոր, Նայիրյան դավաճանությունն ե այդ բերդը հանձնել յեկվոր ոսոխներին։ Հիմարները միայն կարող են չզարմանալ այդ բերդի վրա—և այդպիսի հիմարներից ե, թող թույլ տրվի ասեմ, պ. Մարուքեն։ Յեվ թող ասի խնդրեմ պ. Դրաստամատյանը, այդ մեծամիտ «յեվրոպացին». ինչո՞վ, ինչո՞վ պիտի պաշտպանվեր հնամյա այդ քաղաքն առաջին իսկ թըշնամուց, յեթե բերդը չլիներ։ Այնտեղից, այո—բերդի անխորտակելի պատերի վրայից պիտի ռումբեր տեղան, յեթե պատերազմ լինի։ Այնտեղից—բերդի ժայռակերտ պատնեշների վրայից իջնի պիտի մի որ, վորպես յերկաթե մի բռունցք՝ պիրկ, անպարտ կորովը Նայիրյան ցեղի։—Վորպես յերկաթե մի բռունցք—իջնի պիտի մի որ թշնամու գլխին։ Ահա թե ինչ ե այդ բերդը—իհարկե հասկացողի համար։ Յեվ ահա թե ինչու—վարը, քաղաքում հանգիստ են տները՝ նիրհել են անհոգ ու անտարբեր։ Իսկ խանութ-

ների առաջնորդել է Նայիրցի խանութպանը և ծույլ, անփույթ հորանջելով՝ սպասում է գնորդի։ Յեվ ի՞նչ նշանակություն ունի այն հիմար, միանգամայն պատահական և ժամանակավոր հանգամանքը, վոր հիմա, 1913 թվին, բերդի ամենաբարձր աշտարակի վրա ծածանվում է վո՛չ Նայիրյան, արծվազարդ մի դրոշ։ Բերդը շինել են Նայիրցիները, բայց, դժբախտաբար, այդ նույն բերդն է հիմա յեկվոր սրիկաներին— ռ ու ս ն ե ր ի ն —պաշտպանում թե մեզնից, բերդի և քաղաքի իսկական տերերից—և թե ամեն մի թշնամուց։ Որը կգա—և նրանք կգնան։ Յեվ նորից, բերդի անառիկ ամրություններից, վորպես յերկաթյա ահեղ մի սպառնալիք—կելնե, կհառնե անսասան, Նայիրյան վոգին. կորովը. ուժը հազարամյա—Նայիրյան աշխարհի... Ու կվառվի նորից անմար խնդությամբ, կժպտա խնդագին յերկիրը հազարամյա—յերկիրը Նայիրի...

Այսպես եյին մտածում այդ բերդի մասին Նայիրյան այդ քաղաքում ապրող իսկական Նայիրցիները—և այս փաստի հանդեպ ի՞նչ կարող եր անել մի, թեկուզ և յեվրոպացի, պ. Դրաստամատյան...

Բերդից, քարե այդ վիթխարի սնդուկի յերկու կողքերից սկսվելով՝ ծուռ ու մուռ, հսկա սապատավոր ուղտերի նման, դեպի վար, դեպի քաղաքն են իջնում քաղաքի յերբեմնի պարիսպների հիմիկվա մնացորդները։ Առաջ, շատ հնում, քարե ուղտերի անընդհատ ձգվող մի քարավան է յեղել, ամրակուռ մի պարիսպ, վոր բերդից իջնելով անցնելիս է յեղել գետը և ամբողջ քաղաքը իր մեջն առնելով՝ տարիներ շարունակ պաշտպանել է բնակիչներին չարից ու վոսոխից։ Բայց հիմա քարե այն հսկա ուղտերի սապատներն են միայն—ծուռ, կոշկոճ բլուրների նման—տեղ-տեղ մնացել։ Մնացել են հիմա այն հին պարիսպների զորմանք հետքերը միայն—մեկն այնտեղ ահա, բերդի պատերին կպած, մյուսն այնտեղ, գետեզերքին, մեկն էլ—հեռու-հեռուն՝ քաղաքից դուրս։ Ամեն մեկը հիմա մամռապատ մի պատ է կատարյալ, չիմացողը կասե՝ ով է այս բլուրի քարերը հղկել, ազնվացրել և

մամռապատ պատել... Իսկ մի վիթխարի կտորը այդ առասպելական պարիսպի մինչև օրս էլ մնացել է քաղաքի միջով անցնող գետի ճիշտ մեջտեղը. գետի մեջտեղը մնացած պարիսպի այդ կտորն է ահա, վոր կոչվում է հիմա Վ ա ր դ ա ն ի կ ա մ ու ր ջ. Կարծում են՝ կամուրջ է յեղել և համոզված են, վոր այդպիսի մի կամուրջ Վ ա ր դ ա ն զ ո ր ա վ ա ր ը միայն կարող եր շինել, վորովհետև այսօրվա միամիտ Նայիրցին այն ամենը, վոր մեծ է և զարմանալի, ինչ վոր Նայիրյան է ու հաղթական - վերագրում է Վ ա ր դ ա ն Մ ա մ ի կ ո ն յ ա ն ի ն, վերջին այդ արքայակերպ Նայիրցուն, վորի մասին այսօր ամեն մի հասարակ Նայիրցի այնքանը միայն գիտե, վոր բարեկենդանի հինգշաբթի օրը բոլոր Նայիրյան յեկեղեցիներում պատարագ է լինում նրա հիշատակին, յերգվում է «Լ ռ ե ց ա մ պ ե ր ը» և այդ օրը բոլոր Նայիրցիները «տ ո ն» ունեն, այսինքն—անվանակոչություն... Բայց այդ չե, իհարկե, պատճառը, վոր Վ ա ր դ ա ն ի կ ա մ ու ր ջ ը Նայիրցիների աչքին դարձել է խորհրդավոր մի հրաշք՝ ահռելի գեղեցկություն։ Ասում են—և այդ բոլորը գիտեն—վոր գետում խեղդվածները գալիս հավաքվում են կամուրջի տակ գտնվող ահռելի վիհերում. վիհի վրա չե կանգնած այդ հսկա քարակույտը—ահա՛ թե ինչ։ Նրա տակ դատարկ է, բոլորովին դատարկ։ Յեվ այդ դատարկության վրա, վորպես Նայիրյան հնամենի զարմանք, յելել է կամուրջը, կախվել է, ծանր ու հաստատ, վիհերի վրա։ Վ ա ր դ ա ն ի կ ա մ ու ր ջ ը։—Յեվ այդ անհուն, անհատակ վիհերում, վորոնց մեջ ջուրն անգամ վարանում է լցվել—ապրում են ջրային գազաններ, պառավներ, մարդագլուխ գոմեշներ, ջրային հսկա մի ոձ, վոր կամուրջի «տ ե ր ն» է, կամուրջի բարի վոգին—և յերկու ջրահարս։ Ահա թե ինչու վոչ մի քաղաքացի չի համարձակվում լողանալ կամուրջի մոտերքը. քանի՜-քանի անգամ յեղել են դեպքեր, յերբ մի առաքինի, խելոք, բարի Նայիրցի գիշեր ժամանակ Վարդանի կամուրջի մոտերքից անցնելիս զգացել է հանկարծ, վոր քաշում են իրեն վար, դեպի վիհերը Վարդանի կամուրջի,—կանչում են, հմայում են, ուզում են խեղդեն։ Յեվ քանի՜-քանի անգամ Վարդանանց տոնին ս ու ր բ Գ և ո ր գ յեկեղեցու քարե ամբիոնից տ ե ր Հ ու ս ի կ ք ա հ ա ն ա ն զգուշաց-

րել է քաղաքացիներին, վոր նման դեպքերում ամեն մի իսկական նայիրցի իսկույն պետք է հիշի Վարդան զորավար քաջին և ամբարտավան պապերի հավատքով: Պիտի մտաբերի այն մեծ նպատակը, վորի համար ընկել է նա Ավարայրի դաշտում—և չըվարանի: Յեվ յեթե չվարանի՝ կցնդի, քամի կդառնա այն չար զորությունը, վոր թշնամու ցանկությամբ կախվել է Վարդանի կամուրջի վրա: Յեվ Վարդանի կամուրջը կդառնա հավատքի մի խորան՝ բարի մի զորություն:—Հարության սյուն կդառնա Վարդանի կամուրջը հավատացողի համար—ասել է հաճախ տեր-Հուսիկ քահանան: Բայց միշտ այնպես է պատահում, վոր ամենավտանգավոր վայրկյանին թռչում է Վարդանի անունը վարանոտ քաղաքացու ճղճիմ ուղեղից ու մնում է տեղը—դատարկ տարածություն, սարսափելի զարզանդ: Վոր, ի դեպս ասած, ավելի յե բարձրացնում Վարդանի կամուրջի հրաշալի հըմայքը քաղաքացիների աչքին: Յեվ ես չգիտեմ, չեմ կարող պատկերացնել, թե վորքա՜ն խղճուկ ու անհետաքրքիր պիտի թվար նայիրյան այդ քաղաքը նրանում ապրողների աչքին—յեթե այդ կամուրջը չլիներ: Բայց արի տես, վոր այդքան հետաքրքիր ու զարմանալի հնամյա այդ քաղաքում միայն կամուրջը չէ: Յեվ յեթե առաջարկվեր բնակիչներին ձեռք քաշել քաղաքի հրաշալիքներից մեկն ու մեկից՝ հարց է դեռ—չէի՞ն զիջի նրանք Վարդանի կամուրջը—հօգուտ Առաքելոց յեկեղեցու: Ուզում եմ ասած լինեմ, վոր չնայած Վարդանի կամուրջը քաղաքացիների սրտին չափազանց մոտ լինելու հանգամանքին—ուրիշ բան է այդ նույն քաղաքացիների համար Առաքելոց յեկեղեցին: Առաքելոց յեկեղեցին ամենամեծ ու ամենանշանավոր հրաշալիքն է, զարդն է, զարմանքն է այդ հնամյա քաղաքի—և բացի դրանից չկա ուրիշ մի ավելի հմայիչ զարմանք քաղաքացիների համար: Ինչ վոր է հոգին մարմնի նկատմամբ, ինչ վոր է ուղեղը, աչքը կամ սիրտը՝ մարդու կազմվածքում—նույնն է Առաքելոց յեկեղեցին նայիրյան այդ քաղաքում: Ինչ վոր է Նոտր Դամը փարիզցիների համար—նույնն է այդ քաղաքի բնակիչների աչքին—Առաքելոց յեկեղեցին:

Բերդից դեպի հյուսիս, վարը, բլուրի լանջին, ծվարել է Առաքելոց յեկեղեցին, վորպես քարից շինած մոխրագույն մի թռչուն: Առաքելոց յեկեղեցին թռչունի յե նման վերից—բերդից նայելիս. բայց դիմից նայելիս նա թողնում է նստած վարդապետի տպավորություն: Բարե ծեր մի վարդապետ է կարծես, նստել է բլուրի լանջին ու մնացել է նստած—դարեր, ու կմնա նստած, քանի դեռ կա աշխարհը և անհուն աշխարհում—յերկիրը Նայիրի: Վերը, գմբեթի ծայրին, խաչն է՝ պարզ, յերկթե նայիրյան մի խաչ: Ու խաչից սկսվելով՝ ծայրը վեր տնկած կոնաձև հոլի մի նման իջնում է գմբեթը քարե մի անհելի սնդուկի վրա:

—Ահա Առաքելոց յեկեղեցին: Հրաշք է, չես հասկանում—այնքան է պարզ: Բայց վորպեսզի ընթերցողը պարզ, ակնհայտնի կերպով կարողանա պատկերացնել Առաքելոց յեկեղեցու հմայիչ պարզությունը—յես կնկարեմ այստեղ, մոտավորապես նրա արտաքին տեսքը.



—ահա: Հասարակ է, պարզ է՝ նայիրյան վոգին է կարծես՝ կերպարանք ստացած: Անպաճույճ է, պարզ է—դրսից, բայց հասկացողի համար նա վորքա՜ն է անհուն ու բազմահրաշ...

Ճիշտ այնպես, ինչպես պատմել են ինձ, պատմեմ յես էլ քեզ, ընթերցող, Առաքելոց յեկեղեցու մասին. ուզում ես հավատա,

ուզում ես ծիծաղիր։ Բայց յես մոռացա ասել, թե ինչու յե այդ յեկեղեցին կոչվում Առաքելոց յեկեղեցի։ Յեվ հենց այստեղից ե ահա, վոր սկսվում ե այդ յեկեղեցու զարմանալին ու հրաշալին։

Բարե այդ յեկեղեցու քարաշեն գմբեթի պատերի վրա դըրսից քանդակել ե նայիրցի վարպետը տասներկու առաքյալների դեմքերը՝ մեկ-մեկ, կողք-կողքի տասներկու առաքյալ։ Հասկանում եք՝ քարի մեջ փորել ե հրաշալի դեմքեր։ Նրանք հիմա յել պարզ նայում են դիտողին գմբեթի հնաբույր, մամռոտ պատերից՝ կարծր, չոր, նայիրյան լեռնաքարի մեջ փորած հրաշալի դեմքեր։ Յեվ այն էլ կնկատի ուշադիր դիտողը, վոր առաքյալներից մեկի բոլոր դիմագծերը փորփրած են անխնամ. քիթը չը կա, իսկ աչքերի փոխարեն նայում են վերևից յերկու սև ու այլանդակ խոռոչներ։—Հուդայի դեմքն ե դա, կասի մեզ իմացողը,—վորին նայիրցի քրիստոնյա վարպետը տվել ե հրեշի կերպարանք։ Բայց Հուդայի այդ դեմքը իսկի յել կարծես քանդակված չլինի յեկեղեցու վրա, վորովհետև յեկեղեցին թեկուզ և պաշտոնապես կոչվում ե Տասներկու Առաքելոց, բայց ժողովուրդը համառորեն ասում ե՝ Տասնըմեկ Առաքելոց—և նա իրավունք ունի. նա չի հաշվում Հուդային. չի ուզում հաշվել։ Սակայն յեթե ժողովուրդը տասներկու առաքյալներին էլ չհաշվեր—էլի Առաքելոց յեկեղեցին վոչինչ չեր կորցնի իր դարավոր հմայքից։ Վորովհետև այլ ե նրա կոչումը և հմայքը—այլ։ Յեվ այն, ինչ վոր յես հիմա պիտի քեզ պատմեմ, սիրելի ընթերցող, թող քեզ դատարկ հեքյաթ կամ զրույց չթվա։ Յեթե մի անգամ պատահմամբ այդ քաղաքն ընկնես՝ հարցրու Առաքելոց յեկեղեցու մասին և քեզ ամեն մի տեղացի նույնը կպատմե, ինչ վոր յես պիտի պատմեմ. գուցե և ավելին։

Դեպքը պատահել ե այսպես։

Առաքելոց յեկեղեցուց յերկու-յերեք հարյուր քայլաչափ հեռու, յեկեղեցի տանող ճանապարհի վրա հիմա յել կանգնած կա կիսավեր մի տնակ։ Պատերը կանգնած են դեռ, բայց կտուրը փուլ ե յեկել. հողակույտ ե հիմա այդ տնակը, անդուռ ավերակ։

Ընդամենը քսան-քսաներկու տարի առաջ այդ տնակը թե դուռ ուներ և թե լուսամուտներ և նրա խոնավ, ցածլիկ սենյակներում ապրում եր մի գաղթական նայիրցի՝ հիմա ամենքին անունով հայտնի Մշեցի Թաթոն։ Այդ մարդը դժբախտ ե յեղել. նայիրյան հեռու մի քաղաքում ջարդի ժամանակ կորցրել ե իր ընտանիքը և մերկ, բոբիկ, հասել ե այդ քաղաքը և բախտի բերումով բնակություն գտել յեկեղեցուն մոտիկ այդ խարխուլ տընակում։ Ապրել ե Մշեցի Թաթոն այդ խարխուլ տնակում մի քանի տարի. վոչինչ չի նկատել։ Յեվ ահա մի որ շուկայում հանդիպում ե նա իր հայրենակիցներից մեկին. նոր ե յեկած լինում հեռու հայրենիքից։ Պատմում ե այնտեղի մասին քստմնելի բաներ։ Յեվ պատմությունը նույնն ե լինում՝ կոտորած, կոտորած, կոտորած։—Բռնաբարված կին, կորած յերեխաներ։ Ու փախուստ—տառապանք՝ մուրացկանի վիճակ։ Լսում ե Մշեցի Թաթոն և հիշում ե իրը. հիշում ե կնոջը, յերեխաներին։ Մտնում են միասին գինետուն և սկսում են խմել—դառն, արնահամ, նայիրյան ողի։ Յեվ ահա Թաթոն սկսում ե պատմել ընկերոջը քաղաքի մասին. դուրս են գալիս որորվելով. տեսնում են բերդը, Վարդանի կամուրջը, Առաքելոց յեկեղեցին։ Ասում ե ընկերը՝ որը կգա և նորից կելնե, կհառնե Մշուշից—Նայիրյան վոգին։ Հաղթ, հաստատ, կիջնի թշնամու գլխին յերկաթե վրեժ։ Այսպես զրուցելով գալիս են Թաթոյի տնակը. պառկում են քնելու։ Յեվ ահա կես գիշերին թվում ե Թաթոյին՝ մեկը, անուշ ձայնով, կանչում ե իրեն։ Ներքևից, տան ներքնահարկից, կանչում ե մեկը, ծանոթ, կանչում ե վար։ Յելնում ե վեր և ասում ե ընկերոջը՝ արի։ Յեվ նրանք միասին վերցնում են ճրագը՝ իջնում են վար։ Իջնում են ներքնատուն։ Խոնավ, գաղջ ոդով լցված, զարհուրելի։ Մի վայրկյան մնում են շվարած. պարզ, լսելի՝ կանչում ե տխուր մի ձայն հատակից, ներքևից։ Աչքերը գետնին են հառում—տեսնում են՝ գետնի մեջ, ծանր, թաղված ե մի ջրաղացքար։ Մտածում են՝ դուռ ե։ Դնում ե Թաթոն վոտքը ջրաղացքարի վրա. շարժվում ե։ Կռանում, բարձրացնում են քարը. բացվում ե նրանց առաջ մի մութ ներքնահարկ։ Մութ, խոնավ՝ փչում ե դեմքերին թավ,

խոնավ մի քամի։ Նայում են ճրագով —ատրճաններ։ Վերցնում են ճրագը և իջնում են վար։ Ահա վերջանում են ատրճանները և դիմը խավար մի անցք տանում է — մութ։ Գնում են անցքով — գալիս, գալիս — լայնանում է անցքը։ Յեվ ահա նորից — ատրճաններ։ Յելնում են վեր — և դուրս են գալիս հանկարծ... Կանգնած են Առաքելոց յեկեղեցում։ Բեմը, խորանը ահա, վարագույրն ահա — մութ կապույտ վարագույր՝ վրան վոսկե մի խաչ։ Ավազանը ահա, վորտեղ յերեխաներ են «կնքում»... Մնում են շվարած։ Մոտենում են դռներին, ուզում են դուրս յելնել — փակ է։ Զարհուրած փախչում են յետ։ Միևնույն անցքերով քայլում, քայլում են յերկար և ահա նորից — ատրճաններ։ Յեվ հանկարծ, գլխների վերևում, վերը, ներքևում, իրենց շուրջը, չորս կողմը լսում են — խուլ, հեռու ջրերի խշշոց։ Յելնում են ատրճաններով և դուրս են գալիս... Քիչ է մնում հովից ու խոնավությունից ճրագը մարի։ Ո՞ւր են — չեն հասկանում։ Զգում են միայն, վոր կանգնած են բարձր մի տեղ, ինչ վոր զարհուրելի խոնավության վրա։ Ներքևում, վարը — գետ է, հեղհեղուկ հոսանք։ Ջրերի խշշոց։ Ու հորդ, հեղհեղուկ հոսանքի վրա, վերը — յերկինք է. մութ, խոնավ գիշեր։ Յեվ Թաթոն հիշում է հանկարծ՝ կանգնած են ճիշտ այն բլուրանման պարսպի մնացորդի վրա, գետի մեջտեղում։ — Կամուրջն է. տեղացիք ասում են՝ Վարդանի կամուրջ։ Ահա ջրերի միջից, վարը, յերգում են պառավները. յե՞րգ է, թե ջրերի խշշոց։ Ու հորդ, հեղհեղուկ խավարում շողշողում է վարը, ծփում է պսպղուն — ոձը՝ Կամուրջի բարի վոգին։ Յեվ ահա խոնավ, խշշացող ջրերի միջից յելնում են, ահավոր, բառաչում խուլ — ջրային գոմեշները. — ահ է, զարհուրելի զարմանք... Արագ իջնում են վար, փախչում են անցքերով. ու էլի ահա — ատրճաններ։ Շատ են, ինչքա՜ն են շատ... Յելնում են, յելնում են, յելնում են. և ահա — դուրսն են նորից։ Շուրջը — յերկինք է. աստղային մշուշ։ Վարը — քաղաքն է յերևի. առկայծում են դեղին, տարտամ կրակներ։ Հեռուն, շատ հեռուն, լսվում է խուլ, տխուր — խշշոցը գետի. վոտքերի տակ իրենց — բերդն է. քարե սնդուկները ծանր շնթակել են, քնել են ահավոր։ Կանգնած են իրենք բերդի ամենաբարձր աշտարակի վրա. փչում է սուր, սար-

սուռ, սառը մի քամի։ Ու մոտիկ-մոտիկ ծածանվում է լաթի մի կտոր. դրոշակն է բերդի։ Մութ է ափսոս։ Յեթե ցերեկ լիներ՝ կտեսնեյին դեղին կտավի վրա — յերկգլխանի մի արծիվ՝ վոսկենկար զարդանդ։ Մութ է, գիշեր է, չի յերևում։ Փչում է կատաղի — հրում է քամին. հիմա կընկնեն։ Ինչո՞ւ յեն այստեղ — ինչ են ուզում։ Սարսափից խելագար՝ ատրճաններով կրկին իջնում են վար, ընկնում են գետնափոր անցքերը. վազում են շնչակտուր։ Յեվ քրտինք կորած՝ հանկարծ, յերևի պատահմամբ — յելնում են իրենց ներքնահարկը նորից. բարձրանում են Թաթոյի սենյակը և քնում են մեռելանման։ Քնում են դառը, աներազ, ծանր մի քնով, բայց առավոտը զարթնում են կայտառ, վոգևորված։ Պատմում են բոլորին անցքերի մասին — և բոլորը մնում են ապշած ու շվարած։ Լինում են մարդիկ, վոր այդ պատահական գյուտը համարում են խորհրդավոր նշան, զարթնումի սկզբնավորում։ Մոտ է — ասելիս են յեղել նրանք — վայրկյանը վերածնության։ Յեվ կանչել են նրանք Թաթոյին ու ընկերոջը. խստիվ արգելել են այդ մասին գրուցել ու խոսել։ Բայց հիմա, այդ նշանավոր անցքից քսան-քսանհինգ տարի հետո, բերդի, Առաքելոց յեկեղեցու և Վարդանի կամուրջի մեջ գտնվող այդ անցքերի և ատրճանների մասին — բոլորը, նույնիսկ յերեխաները գիտեն։ Բայց այդ մասին, ի հարկե, չեն խոսում յերբեք. այդ մասին խստիվ արգելված է խոսել։ Այն էլ մոռացա ասեմ, վոր յերբ Թաթոյի և ընկերոջ անուշադիր լինելու շնորհիվ կառավարությունը իմանում է Առաքելոց յեկեղեցու գաղտնիքը — խլում է Առաքելոց յեկեղեցին նայիրցիների ձեռքից, իսկ Թաթոն ու ընկերն աքսորվում են Սիբիր և փտում են այնտեղի խոնավ զնդաններում։ Ահա թե ինչ է իրենից ներկայացնում Առաքելոց յեկեղեցին... Յեվ դեռ յես այն էլ մոռացա ասեմ, վոր բացի վերոհիշյալ հրաշքներից՝ նայիրյան արքաներ կան թաղված Առաքելոց յեկեղեցում և յերբ, յեկեղեցին գրավելուց հետո, սոխերը քանդել են յեկեղեցու հատակը — վեմ-քարի ներքևում գտել են անթիվ-անհամար գանձեր ու անգընություններ... Եհ. հին ու մութ պատմություն է, ընթերցող, — վո՞րը թվեմ։ Գիտուն, խորամանկ, հարուստ ու հպարտ են

յեղել Նայիրյան արքաները. այդպիսի արքաներ հիմա չկան: Գիտուն, խորամանկ, հարուստ ու հպարտ են յեղել, բայց դժբախտաբար, յեսական ու անմիաբան. յեթե վոչ... ինչու պիտի կորչեր արքայությունը նրանց և ավերակի վերածվեր յերկիրը Նայիրի... Ո՞ւր են հրաշագործ նայիրցիները հիմա—ո՞ւր է հողաբաժյա Նայիրին... Չկա, վոչինչ չկա հիմա: Անգամ հնուց մնացած այդպիսի զարմանք—հրաշալիքներ ունեցող Նայիրյան այդ քաղաքը, վոր առաջ արքայանիստ է յեղել, մայր-քաղաք, հնամենի կենտրոն—այդ քաղաքն անգամ դարձել է հիմա, ս ո խ ե ր ի տիրապետության օրով—գավառական հետամնաց մի վորջ, ուր պատժվելու համար մայրաքաղաքներից աքսոր են ուղարկվում զանազան զեղծումների մեջ բռնված ավազակ պաշտոնյաներ...

Քաղաքի այդ յերեք հին հրաշալիքները նկարագրելուց հետո անցնենք հիմա քաղաքի նոր հրաշալիքներին: Այդպիսով մենք կամաց-կամաց կմոտենանք քաղաքի առօրյա կենցաղին և հետզհետե մեր դեմ կելնեն հնամյա այդ քաղաքում այժմ ապրող բոլոր նշանավոր ու աննշան նայիրցիները—քաղաքի հիմիկվա բնակիչները:

Ամենամեծ նորությունը, վոր Նայիրյան չէ և նույնիսկ անընտել, անհասկանալի յե թվացել սկզբում տեղացիների աչքին—յերկաթուղագիծն է՝ ձգված ս ո խ ե ր ի տիրապետության օրով՝ քսան տարի առաջ: Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա յել հիշում է անմոռանալի այն օրը, յերբ անհայտ հեռուներից մինչև այդ քաղաք ձգված յերկաթե գծերի վրայով առաջին անգամ մոտեցել է գնացքը նորակառույց կայարանին: Յեղել է—խնդուն խրախճանք՝ զարմանալի զարմանք: Յեղել են մարդիկ, վոր զարմանքից ու հիացմունքից չեն կարողացել խոսել. առնվել է լեզուները զարմանքից ու հիացմունքից: Շատերը հիշում են այն հետաքրքիր մանրամասնությունն անգամ, վոր

գնացքի շուքեկառքը զարդարված է յեղել ծառերով ու ծաղիկներով: Իսկ շուքեկառքի ճակատին, ճիշտ լապտերի վերևը, ծածանվելիս է յեղել կապույտ մի դրոշակ՝ վրան վոսկենկար յ ե ր կ գ լ խ ա ն ի մ ի ա ր ծ ի վ: Այդպիսի ահա շուքով ու ցնծությամբ է մոտեցել գնացքը քաղաքի կայարանին, վորտեղ քաղաքի համարյա ամբողջ բնակչությունը հավաքված է յեղել—ուրախ, տոնական զգեստներով—գնացքին դիմավորելու: Կայարանի առաջ նվագելիս է յեղել զինվորական յերաժշտախումբը և նրա մոտ կանգնած դիմավորել են գնացքը մի շարք պատկառելի նայիրցիներ և բարձրաստիճան պաշտոնյաներ. գավառապետը, ոստիկանը, զինվորական ատյանի պետը, գ ե ն ե ր ա լ—Ա լ յ ո շ ը, Մ ա զ ո ւ թ ի Հ ա մ ո յ ի հ ա յ ր ը՝ Ա ռ ա ք ե լ ա ղ ա ն—վո՞րը հիշես... Չնայած, սակայն, նրան, վոր այդ զարմանահիշատակ օրվանից քսան քսաներկու տարի յե անցել, չնայած, ասում ենք, այդ յերկար ու ձիգ քսան-քսանյերկու տարիներին—մինչև օրս էլ կան այդ քաղաքում շատ և շատ պատկառելի ու անպատկառ նայիրցիներ, վորոնք, յերևակայում եք, վոչ միայն գնացք չեն նստել, այլ և նայում են շուքեկառքին, վորպես մի զարմանալի հրաշքի: Օրինակ քաղաքում ամենից հայտնի դագաղագործ Մ ե ռ ե լ ի Յ ե ն ո ք ի ն մինչև օրս էլ զարմանալի յե թվում, թե ինչպես են մարդիկ, անշունչ յերկաթների վրայով, ա ն ձ ի - ա ն գ ո մ ե շ վագոնների մեջ նստած՝ տեղից-տեղ ճանապարհվում: Դեռ մինչև օրս էլ կյուրակի օրերը շատ անգամ կարելի յե հանդիպել յերկու պատկառելի նայիրցիների, վորոնք կիրակնօրյա պտույտի յելած (յերկաթուղու կայարանը քաղաքային այգուց հետո յերկրորդ զբոսավայրն է Նայիրյան այդ քաղաքում)—կանգնել են յերկաթուղագծի առաջ և զբաղված են այսպիսի մի զրույցով.

—Ես տնաքանդի ս ո խ ը տես մի ինչեր արաց...—ասում է մեկը, վոտքով ծուլորեն խփելով յերկաթուղագծին և յուղոտ մի ժպիտ յերեսին՝ լսելով յերկաթուղագծի ախորժ զնգոցը:

—Եսպես վոր նստես—գեյի ո՞ւր կերթաս...

«Ուր որ կուզես»,—պատասխանում է մյուսը:

—Մոսկով կերթա՞ս:

«Հըլբըթ կերթաս»:

—Կի՞վ...
«Կիվ եւ կերթաս...»:
Ու տիրում է լռութիւն՝ ակնածանք ու զարմանք:

Յերկրորդ նորութիւնը, վոր նույնպես Նայիրյան չէ և դեպի վորը հատուկ մի ակնածանք են զգում բոլոր քաղաքացիներն անխտիր և վորով այնքան հիանում է միշտ ծխական դպրոցի ուսուցիչ պ. Դրաստամատյանը—հինգհարկանի այն հսկա շինութիւնն է, վոր կանգնած է քաղաքի մեջտեղում, վորպես ահռելի մի վեհութիւն, քարե ակնածանք: Այո, քարե մի ակնածանք, վորովհետև այդ շենքը, բացի իր վիթխարի լինելը, նշանակալից է և մի ուրիշ, ավելի կարևոր—ամենակարևոր հանգամանքի շնորհիվ.—այդտեղ, այդ միակ շենքումն են կենտրոնացած քաղաքի և նույնիսկ գավառի ամենաազդեցիկ հիմնարկութիւնները: Այդտեղ են նստում՝ գավառապետը, վոստիկանապետը,—այդտեղ է զորակոչային գավառական ատյանը և այդ շենքում են, վերջապես, գտնվում՝ փոստ-հեռագիրը և պետական գանձարանը: Յեվ էլի բոլորը չկարողացա թվել: Մոռացա ամենակարևոր հիմնարկութիւնը—այն, առանց վորի այդ առասպելական շինութիւնը իր հմայքի և մանավանդ սարսափելի ակնածանքի կեսից ավելին կը կորցներ.. Բանն այն է, որ այդ հինգհարկանի շենքի առաջին հարկում, միջանցքի ամենածայրը, կարելի յե ասել՝ շենքի ամենահետընկած անկյունում կա մի փոքրիկ սենյակ... Աստված չանի, ընթերցող, այդ սենյակն ընկնես. վոր ընկար—ազատվելիք չկա: «Մութ տեղը»—այսպես են անվանում քաղաքացիք այդ սենյակը, թեկուզ սենյակը բոլորովին լույս է՝ յերկու պատուհան ունի և յերեք ելեքտրական լամպ: Իսկի յել լուսավորութիւն չունենալը չէ, վոր դարձրել է սենյակը այդ խորհրդավոր ակնարկին արժանի, այլ թերևս այն, վոր այդտեղ մտնողի աչքերը... մթնում են սարսափից. ահա թե ինչ հատկութիւն ունի այդ խորհրդավոր սենյակը, սիրելի ընթերցող... Յեվ մեծ չափով այդ սենյակին պետք է վերագրել այն խորհրդավոր հարգանքը, վոր զգում է ամեն մի քաղաքացի այդ

շենքի մոտով անցնելիս: Յեվ նա չէ՞ արդյոք պատճառը, վոր այդ հինգհարկանի տունը դարձել է մի ամենակարող կենտրոն, կամ, ավելի լավ է ասել՝ առանցք, վորի շուրջն են դառնում քաղաքն ու գավառը—և չեն կարող չդառնալ: Այն միանգամայն ճշմարիտ ակսիոման, վոր տիեզերքում ամեն մի կետ կարող է կենտրոն համարվել—ամենայն հեշտութեամբ հերքվում է այս դեպքում, ինչպես և բոլոր նման դեպքերում, յերբ խոսքը վերաբերում է վարչական և վոչ թե աստղային համակարգութիւններին: Այդ հինգհարկանի շենքն է, այո, քաղաքի կենտրոնը և միակ կենտրոնը—և նա, այդ քաղաքը, միևնույն ժամանակ ուրիշ վոչ մի կենտրոն չի կարող ունենալ: Թող վորքան կուզե ծխական դպրոցի ուսուցիչ ընկեր Վառոդյանը համոզե որխորդներին, վոր տիեզերքի նկատմամբ կենտրոն կարող է համարվել Բոչկա Նիկոլայի պանդոկը թեկուզ.

—Թող ինչ ուզում է ընկ. Վառոդյանն ասե—մենք չենք փոխի մեր կարծիքը և հաստատ կպնդենք, վոր հինգհարկանի այդ տունն է, այո, միակ կենտրոնը Նայիրյան այդ քաղաքի և ամբողջ գավառի և այնտեղից է, այո, վոր յելնում են, ելեքտրական կապույտ կայծերի նման և տարածվում ամեն ուղղութեամբ—վճիռներ ու ճակատագրեր: Ընկ. Վառոդյանն այդ բանը, իհարկե, մեզանից լավ գիտե, բայց նա որխորդներին հաճելի, հանդուգն, խիզախ յերևալու համար սոփեստութիւններ է անում: Յեվ ինչպես կարող է ընկ. Վառոդյանն այդ չիմանալ, յերբ իր կաշվի վրա յե զգացել այդ ամենակարող կենտրոնի անմիջական ազդեցութիւնը: Հարկավոր է ասել, վոր «կաշվի վրա» դարձվածքը պետք է բառացի հասկանալ. ամենքին լավ հայտնի սըրճարանատեր Տելեֆոն Սեթոն—նա, վոր սրճարան ունի Լորիս-Մելիքյան կոչվող փողոցի վրա,—յերդվում է Հիսուսի անունով, վոր բաղնիքում պատահմամբ տեսել է ընկեր Վառոդյանի կռնակի վրա... հետաքրքիր հետքեր: Վ՞որտեղ, ասացեք խնդրեմ, յեթե վոչ այդ ամենակարող կենտրոնում, կարող եր ընկ. Վառոդյանի կռնակը այդպիսի հետաքրքիր դրոշմներ ստանալ՝ կապույտ-կապույտ գծեր: Իսկ յեթե ընկ. Վառոդյանը այդ էլ չի ընդունում և խորհրդավոր կերպով ակնարկում է իր «Ընկե-

րության» անգամ լինելու հանգամանքը... դժվար է այդ դեպքում փորձել հակաճառություն անել ընկ. Վառոդյանին: Նույնիսկ յերեխաները գիտեն, վոր «Ընկերությունը» կենտրոն է, մի ավելի ամենակարող և ահռելի կենտրոն, վոր սուլթաններ, շահեր և կայսրներ ղլտ տապալե—այդ անգո, ավելի լավ է ասել՝ մաթեմատիկական այդ «Կենտրոնը»... Ասում ենք «մաթեմատիկական», վորովհետև ընկ. Վառոդյանի ասելով՝ ի նկատի ունենալով այն միանգամայն անհերքելի հանգամանքը: վոր հինգհարկանի «կենտրոնը» կառուցված է վախի, բռնության, արյան ու թյուրիմացության վրա,—«Ընկերության» կենտրոնը քարե՛ չէ, գրանիտե՝ կառուցված գիտական սոցիալիզմի անհողդողդ հիմունքների վրա:—Ուրեմն յերկու անգամ յերկու հավասար է չորսի պես պարզ պետք է լինի, վոր վոչինչ է հինգհարկանի կենտրոնը, իսկ «Ընկերությունը»—փաստ, անողոք ճշմարտություն—մերկ ճշմարտություն: Այսպես է տրամաբանում ընկ. Վառոդյանը—և նա իրավունք ունի. հարցրեք ամեն մի յերեխայի, այո, նույնիսկ յերեխայի, և նա անվրեպ կերպով տեղն անգամ ցույց կտա այդ «Գեր-Կենտրոնի»,—այո. —Վարդանի կամուրջը: Այսինքն վոչ թե կամուրջը բառացի, այլ նրա դիմացը, գետափին շինված է մի տնակ, վոր կիսաքանդ է հիմա, ավերակ, և վորի քանդելու խորհրդավոր պատմության հետ է կապված ընկեր Վառոդյանի կռնակի պատմությունը...

Ահա այդ պատմությունը, սիրելի ընթերցող:

Մի օր, այսինքն մի գիշեր, ժամը մոտավորապես յերեքին, քաղաքի բոլոր տների պատուհանների ապակիները հանկարծ զրնգում են թափով և նույն վայրկյանին լսվում է մի ահռեցուցիչ, ահռելի մի պայթյուն: Սարսափած քաղաքացիք դուրս են թափվում տներից և սկսում են դեպի դաշտը, դեպի գերեզմանոցը փախչել. կարծում են յերկրաշարժ է, ժաժք՝ Աստծու պատիժ: Բայց այդ լուրը հերքվել է շուտով և տարածվել է մի ուրիշ սարսափելի կարծիք, վոր պայթել է բերդը՝ ամբողջ բերդը մի րոպեյում թռել է յերկինք: Շատերն էլ այն կարծիքին են յեղել, վոր պայթել է Առաքելոց յեկեղեցին. ամեն վոք գիտե, վոր նրա վեմ-քարի ներքևում Նայիրցի վարպետները պահած են յեղել հազար փութ դինամիտ... Իսկ հայտնի պանդոկապետ Բոչկա Նիկոլայը, նա, վոր հանրամատչելի դուքան է պահում Լորիս-Մելիքյան փողոցի վրա, ասել է իր հարևան Մեռելի Ցենոքին, վոր, յերևի, պատերազմ է սկսվել, բայց իրենք չգիտեն. հասարակ մարդիկ են—ինչ իմանան: Բայց շուտով պարզվել է, վոր վո՛չ բերդն է պայթել, վոչ Առաքելոց յեկեղեցին, և վոչ էլ պատերազմ է սկսվել:—Յերանի այդ լիներ,—ինքն իրեն տղայաբար հերքելով ասում է մինչև օրս ընկ. Վառոդյանը,—բայց, մեր կարծիքով, բարեբախտաբար այդ չի յեղել, այլ պայթել է, յերևակայեք էք... Վարդանի կամուրջը, այսինքն վոչ թե ինքը կամուրջը, այլ նրա դիմաց գտնվող այն հողե խրճիթը, վորի մասին քիչ վերը խորհրդավոր կերպով հիշատակեցինք:—Խրճիթում պայթել է յերեք փութ... դինամիտ... ահա թե ինչ.. Յեվ հետևյալ օրը այդ խրճիթի տակից զինվորներն ու վոստիկանները հանել են չորս կիսավառ դիակներ, ավելի ճիշտ՝ դիերի մնացորդները: Յեղել են՝ բոլորին ծանոթ Ղարաբաղցի Նիկոլը, ուսուցիչ,—Մշեցի Մարգարը, սրճարանատեր,—Ռուս Աբրահամը,գաղտնի վոստիկանության պաշտոնյա,—և Վարժապետ Կարոն,—նա, վորի մասին խոսելիս ընկ. Վառոդյանը միշտ ակնածանքով ասում է ընկեր Կարոն:—Ահա թե ինչու յե Ընկերությունը կենտրոն և նույնիսկ — Գեր-Կենտրոն, սիրելի ընթերցող: Յեվ ինչ նշանակություն կարող է ունենալ, բացի դրականից, այն հանգամանքը, վոր հողե այդ խրճիթում պայթած դինամիտի ազդեցությունը կողմնակի կերպով արտահայտվել է ընկ. Վառոդյանի կռնակի վրա, վորպես կապույտ գծերի նրբահյուս մի նկար: Այն մյուս, սոխի գլխի չափ անգամ ընկ. Վառոդյանի աչքին նշանակություն չունեցող «Դատության կենտրոնում» (ինչպես անվանում է ինքը ընկ. Վառոդյանը հինգհարկանի շենքը),—յեղել է—հերոսական պայքար, անպարտ ընդվզում—մի կողմից (կարդա ընկ. Վառոդյանի կողմից),—իսկ մյուս (սոխերի) կողմից—բռնություն, մղձավանջ, դեղին սարկություն: Իջել է, իջել է, վորպես կարմիր ա-

մոթ, «շոմպոլը» ընկ. Վառոդյանի կոնակին,—և նա յելել է
վեր՝ գռված, կարծրացած,—վորպես սրբած դաշույն յելել է դառ-
նությամբ, զզրանքի կենտրոնից,—հառնել է, հաղթական, նա-
յերյան ըմբոստ վոգին... Այսպես է յեղել։

Բայց մի բան դեռ մինչև որս էլ ընկ. Վառոդյանը չի կա-
րող մոռանալ և իրեն ներել. այն, վոր այնտեղ, «Դառնու-
թյան կենտրոնում», կամ ինչպես ժողովուրդն է ակնա-
ծանքով ասում—«մութ տեղը»—ինքը, ընկ. Վառոդյանը, ինչ-
պես ծեծից առաջ, նույնպես և, մանավանդ, ծեծի ընթացքում,
յերևակայում եք—զղջացել է յերեխայաբար, վոր ինքը խառնվել
է, միանգամայն պատահական կերպով, այդ հիմար պատմությա-
նը։ Ցեվ ինչ է արել վերջ ի վերջո. մի միամիտ յերկրորդ է գրել
ընկեր Կարոյին և խնդրել է նրանից «Ամբողջային տրա-
մաբանությունը»—ահա և ամբողջը։ Ցերկրորդը գտել են կա-
բոյի գրպանում և ինքը պետք է տուժե. ինչ թյուրիմացություն։
«Հիմար հեղափոխականի անզգուշություն»,—մը-
տածել է զայրացած ընկ. Վառոդյանը փորձության վայրկյանին։
—Ցեվ նա յերկար ժամանակ չի ների իրեն վոչխարային այդ վա-
խը, այդ ամոթաբեր թուլությունը, վոր սև բիծ կարող է գնել
ամեն մի իսկական հեղափոխականի անկաշառ խղճին։
Փառք աստծու, վոր այդ մասին գոնե վոչ վոք չգիտե. ընկ. Վա-
ռոդյանը խոսք է տվել իրեն, վոր այդ սև արատը մի օր լվանա
իր խղճից մի իսկական հեղափոխական գործով,—բայց մենք ար-
դեն չափազանց յերկարացրինք ընկ. Վառոդյանի խղճի պատմու-
թյունը. անցնենք քաղաքին։

Բացի հինգհարկանի շենքից—այդ այսպես թե այնպես ա-
մենակարող կենտրոնից—քաղաքում կան, այստեղ ու այն-
տեղ հաստատված մի շարք ուրիշ, քիչ թե շատ նշանավոր և ան-
նշան կենտրոններ, ինչպիսիք են՝ հիվանդանոցը, քաղաքային
ակումբը, տղայոց գիմնազը, իգական գիմնազը, քաղաքային և

յերկու ծխական դպրոցները. մոռացանք հաշտարար դատավորի
ատյանը, բանտը և «հասարակաց տունը», վորի մասին
խորապես խնդրում ենք ներողամիտ լինեք։ Զորանոցները քա-
ղաքին չեն վերաբերվում. նրանք գտնվում են յերկաթուղագծի
այն կողմը, գերեզմանատան մոտ, այնպես վոր այդ յերկու «հիմ-
նարկությունները» թողնում ենք, միանգամայն հասկանալի պատ-
ճառով, անուշադիր։ Քաղաքային հիվանդանոցն էլ, ասենք, հա-
մարյա թե քաղաքից դուրս է գտնվում. միհարկանի ցածլիկ մի
տնակ է այդ, վոր գտնվում է քաղաքի ծայրում, մի ցեխոտ ու
նեղլիկ փողոցի անկյունը՝ ինքն էլ ցեխոտ ու խոնավ, ինչպես
այդ փողոցը։ Հիվանդանոցի բժիշկ պ. Սերգեյ Կասպարիչը
քանիցս մտադիր է յեղել հիվանդանոցը տեղափոխել քաղաք, բայց
դժբախտաբար միշտ այնպես է պատահել, վոր վորևե կարևոր մի
հանգամանք խանգարել է նրան։—Կամ ինքն է հիվանդացել, կամ
գավառապետի կինը, իսկ վերջին անգամ, յերբ թե շենքն էր
պատրաստ և թե սկսված էյին բանակցությունններ ինչպես շեն-
քի տիրոջ, այնպես էլ հինգհարկանի կենտրոնի հետ,—յերբ,վոր-
տեղից-վորտեղ, բժշկի համար միանգամայն,անսպասելի, իսկ քա-
ղաքացիների համար չափազանց սպասելի կերպով՝ պայթեց բժըշ-
կի գլխին աներևակայելի մի դժբախտություն. բժշկի Լեդայի
գեղեցկություն ունեցող մանկահասակ կինը ինքնասպանություն
գործեց... յերևակայո՞ւմ եք՝ իրենց տան... արտաքնոցում։
Մեռել, բոլորովին մեռել, ինչպես ասում են՝ Ադամի (Ցեվայի) ըզ-
գեստներով մտել էր արտաքնոցը և ինքնասպանություն էր գոր-
ծել վոչ թե ատրճանակի, կամ, ինչպես նման դեպքերում ըն-
դունված է, վորևե թույնի օգնությամբ, այլ... շշմեցնող, ան-
հասկանալի մի բան. քանդել էր արտաքնոցի հատակի տախտա-
կը և նետել էր իրեն... հասկանո՞ւմ եք, թե ո՞ւր։ Այսզար-
հուրելի, քստմնելի, ալլանդակ, անհասկանալի, համարյա դիվա-
յին դժբախտությունից հետո բժիշկը ընդմիշտ ձեռք քաշեց իր
մարդասիրական տրամադրություններից և սկսեց ակումբում,
վորտեղ նա դժբախտությունից առաջ միայն «պրաֆերանս»
էր խաղում ժամանցի և ջղերի հանգստության համար,—սկսեց
դժբախտությունից հետո «բակարա», «մակաո» կամ տեղա-

կան «ցխրա» խաղը խաղալ, վորով բավականին հանգստացնել կարողացավ իր այնքան քաշքաշված ջղերը։ Յեվ յերբ այդ դեպքից հետո բժշկի կառապանը, վոր լիովին վարձատրվում եր հիվանդանոցի կողմից, սկսեց բժշկին տուն հրավիրող պացիենտներից «կառքի փող» վերցնել—հիսունական կոպեկ—վոչ մի քաղաքացի սիրտ չունեցավ բարկանալու կառապանի վրա։ Յեվ ինչու՞ բարկանար. չափազանց եր մեծ բժշկի գլխին պայթած ընտանեկան դժբախտությունը, վորից հետո, հարկավոր ե ասել, վոչ միայն այդ փոփոխությունն եր, վոր առաջ յեկավ բժշկի գործերում, այլ պատահեց և այն, վոր հիվանդանոցում մինչ այդ հասարակ ծառայի պարտականություններ կատարող բիթլիսացի Արշակը ստանձնեց նույն հիվանդանոցի պատասխանատու կամ, ինչպես ասում են՝ հերթապահ ֆելդշերի պաշտոնը, վորով հնարավորություն ստեղծվեց բժշկական oգնություն հասցնելու ամեն գիշերի և ամեն ժամանակ։—Մի հանգամանք, վորի գոյություն չունենալուց առաջ շատ և շատ չքավոր հիվանդներ որերով սպասում եյին հիվանդանոցի պատերի տակ ընկած՝ իզուր յերազելով oգնություն և կարեկցություն։ Չիք չարիք առանց բարույ-ասում ե իմաստությունը, և այս դեպքը մի անգամ ևս հաստատեց այդ դարավոր իմաստության անքննելի ճշմարտությունը։ Մանավանդ չպետք ե մոռանալ, վոր այդ մարդասիրական քայլը անելով (բիթլիսցի Արշակին ֆելդշեր նշանակելով) բժիշկը եապես de jure հաստատեց այն, ինչ վոր de facto վաղուց արդեն գոյություն ուներ և անխափանգար կերպով ծավալում եր իր գործունեությունը հիվանդանոցում ու քաղաքում։ Բանն այն ե, վոր Բիթլիսցի Արշակը վաղուց հետե զբաղվում եր բժշկական պրակտիկայով և նույնիսկ բավականին հռչակ եր վայելում վոչ միայն քաղաքի հեռավոր թաղերում, դեպի վորոնք հաճախ բժշկական տուրնեներ եր կատարում բիթլիսցի Արշակը, կամ, ինչպես գյուղացիներն եյին նրան հորջորջում՝ «դոխտուր Արշակը»։ Պարբերաբար ամեն տարի Մեծ Պասի յերրորդ շաբթվա յերկուշաբթի օրը կարելի յեր տեսնել բիթլիսցի Արշակին՝ գյուղական յերկանիվ սայլի վրա նստած դեպի մոտակա գյուղերը տուրնեյի գնալիս, վորից նա միշտ վերադառնում եր ավագ յերեքշաբթի օրը՝ նույն յերկանիվ սայլի վրա յուղ, պանիր, ձու և մի քանի սպիտակահեր գառնուկներ բարձած, վորոնցից բավականին պատկառելի մասը բժշկի տունն եր ուղարկվում, վորպես նրա յերախտապարտ ծառայի կողմից խոնարհաբար մատուցած զատկական «ռուշվաթ» (նվիրաբերություն)։ Այնպես վոր բժիշկը իր այդ մարդասիրական քայլն անելու համար ամենայն բարոյական և իրավական իրավունք ունենալուց բացի՝ ի դեպս իր ամենավերջին պաշտոնյային ըստ արժանվույն վարձատրելով հանդերձ՝ ազատեց իր վոտի ուսերը քաղաքային բժշկի չափազանց ծանր ու պատասխանատու պարտականությունների մի փոքրիկ մասից՝ ուսերի ազատ մնացած մասը տրամադրելով ընտանեկան վերոհիշյալ դժբախտության ահռելի ծանրությանը, վորը կրել կարողանալու համար ճիշտ վոր հարկավոր եյին այդպիսի քիչ թե շատ թեթևացնող միջոցներ։ Յեվ այդ միջոցները գտնելու գործում, ասում են, մեծ բարոյական oգնություն ե ցույց տվել բժիշկ Սերգեյ Կասպարովիչին նրա վաղեմի բարեկամ և թղթախաղային պարտնյոր՝ քաղաքի հաշտարար դատավոր պ. Ռոսեփ Նարիմանովը, նա, վոր մոտիկ բարեկամն ե մի անգամ արդեն պատմությանս սկզբում հիշված, քաղաքի ամենահարգելի հարուստ գեներալ Ալոշի, վորի ասելով Ռոսեփ Նարիմանովը «հոգի յե, իսկական հոգի»...։

Նրա տունը գտնվում ե քաղաքի ամենամեծ—Ալեքսանդրյան փողոցի վրա։ Մի թիթեղե ցուցանակ ունի, վորի վրա գրված ե ռուսերեն՝ «Հաշտարար դատավոր»։ Ռոսեփ Նարիմանովը նստում ե այդտեղ։ Նրա տանը կից յերեքհարկանի շենքը ռեալական դպրոցն ե, նրանից յերկու տուն այնկողմը—որիորդաց գիմնազը, իսկ որիորդաց գիմնազից յերեք տուն այնկողմը—այն պալատ-շինությունն ե, վոր պատկանում ե մեզ արդեն բավականին ծանոթ գեներալ Ալոշին։ Քաղաքի ամենամեծ հարուստն ե գեներալ Ալոշը, վոր թեկուզ և գեներալ չե և վոչ ել զինվորական, բայց քաղաքում ունեցած իր դիրքի և ազդեցության շնորհիվ ստացել ե այդ պատվավոր հորջորջումը։

Իսկ գեներալ Ալոշի դիրքի մասին մոտավոր գաղափար տալու համար բավական ե ասել, վոր նրա բնակարանում և իջևանում նահանգապետը՝ ամեն անգամ այդ քաղաքն այցելելիս.—ահա թե ով ե գ ե ն ե ր ա լ Ա լ ո շ ը:—Հաշտարար դատավոր Ոսեփ Նարիմանովը, վոր ապրում ե գեներալ Ալոշի պալատ-բնակարանի ներքևի հարկում, սիրում ե պատմել ակումբում—նրա, գեներալ Ալոշի ներկայությամբ, թե ինչպես նահանգապետը. առաջին անգամ գեներալ Ալոշի բնակարանը մտնելիս բարեհաճել ե այն կարծիքը հայտնել, վոր այդպիսի մի ճաշակավոր բնակարան պատիվ կարող եր բերել... նույնիսկ Պետերբուրգին, այո. անգամ Պետերբուրգին...Յեվ այս պատմությունն անելիս հաճույքով չփչփացնում ե շրթունքները հաշտարար դատավոր Ոսեփ Նարիմանովը, իսկ ներկա գտնվող գեներալ Ալոշը հաճույքից թարթում ե աչքերը ու նայում ե հատակին, համեստությամբ ասես ուզում ե գետինը մտնի: «Հոգի մարդ ե այդ Ոսեփ Նարիմանովը»—մտածում ե նա:

Յեվ ճիշտ վոր՝ հաշտարար դատավոր Ոսեփ Նարիմանովը, ինչպես ռուսներն են ասում, հոգի յե, կատարյալ հոգի: Չնայած, վոր նա ծնվել ե Հաշտարխանում, բայց, յերևակայում եք, այնպես ե ընտելացել նայիրյան այդ քաղաքին, վոր ասես այդտեղացի լինի: Ահա սա յե պատճառը, վոր նա շատ գործեր՝ վեճեր, ընտանեկան կռիվներ, ամուսնական անախորժություններ և նման այլ և այլ փոքրիկ դատեր սիրում ե հարթել վոչ վորպես պաշտոնյա, այլ, այսպես ասած՝ ընտանեբար, կամ, ավելի ճիշտ՝ հայրաբար—վորի համար և նա ամենաիրավացի կերպով վայելում ե բոլոր քաղաքացիների հարգանքը, իսկ շրջակայքում բնակվող գյուղացիների կողմից այդ հանգամանքն արտահայտվում ե, վորպես խորին ակնածանքով նվիրաբերած մի քանի տասնյակ ձու, տաս-տասներկու փունտ «ա ն ք ա շ» պանիր, կամ, յերբեմն ել, յեթե գործը քննվում ե դատական տների նախորյակին՝ մի-յերկու գառ կամ ուլ: Նա չի սիրում գործերը ձգձգել՝ զզվում ե պաշտոնական յեռուզեռից: Ոսեփ Նարիմանովը

այդպիսի մարդ չե և չի յել ուզում լինի: Յեթե նա հնարավորություն ունենար և մի քիչ ել ֆիզիքականը ներեր—ամենամեծ ուրախությամբ կթողներ քաղաքն ել, հաշտարար դատավորի պաշտոնն ել և վորևե մի գյուղ կտեղափոխվեր՝ յերկրագործությամբ զբաղվելու: Ոսեփ Նարիմանովը շատ ե սիրում յերկրագործությունը, մանավանդ այդ աստվածային զբաղմունքի կենարար բարիքները և հողային հարցի մասին սիրում ե հայտնել բավականին ազատամիտ կարծիքներ: Հետաքրքիր անձնավորություն ե Ոսեփ Նարիմանովը—Ոսեփ Նարիմանովին հարկավոր ե հասկանալ:

Հաշտարար դատավորի ատյանին կից շենքը, ինչպես ասացինք, ռեյալական դպրոցն ե, իսկ յերկու տուն այնկողմը—որիորդաց գիմնազը: Հարկավոր ե ասել, վոր քաղաքի այդ մասը ներկայացնում ե իրենից—իսկական մի «կ ր թ ա կ ա ն կ ե ն տ ր ո ն»: Յերկու դպրոցի յել շենքերը պատկանում են մեզ արդեն հայտնի գեներալ Ալոշին և ամեն առավոտ, յերբ նա հաշտարար դատավոր Ոսեփ Նանիմանովի հետ անցնում ե դպրոցների առաջից—ռեյալական դպրոցի տեսուչ Ա ր ա մ Ա ն տ ո ն ի չ—«Փ ո ւ ք ս ը» (այսպես են անվանում դպրոցի տեսուչ Արամ Անտոնիչին չարաճճի աշակերտները՝ նրա փորի բավականին պատկառելի մեծության պատճառով)—բացագանչում ե վերից՝ տեսչանոցի պատուհանից.—Խ ո ր ի ն հ ա ր գ ա ն ք ն ե ր ս Ա լ ո շ ա Ն ի կ ի տ ի չ ի ն. Ո ս ե փ Կ ա ր պ ի չ ի ն—ն ո ւ յ ն պ ե ս»: Դպրոցի աշակերտները շատ անգամ են լսել իրենց խոժոռ տեսչի սիրալիր այս բացագանչությունը վերոհիշյալների հասցեյին—և թերևս մի քիչ ել այն ե պատճառը, վոր նրանք, դպրոցի աշակերտները, մի առանձին հարգանք են տածում դեպի գեներալ Ալոշը և Ոսեփ Նարիմանովը: Ասում եմ «մի քիչ», վորովհետև հիշյալ պատկառելի քաղաքացիներին հարգելու ուրիշ պատճառներ և միանգամայն արդարացի հիմքեր ևս ունեն ռեյալական դպրոցի չափահաս աշակերտները: Յերբ, Զատկին կամ Ծննդին, դպրոցական յերեկույթներ են լինում դպրոցի սրահում—ծվքեր են բազմում առա-

ջին կարգի նստարանների վրա, գավառապետի կողքին.— Գեներալ Ալոշը և Ոսեփ Նարիմանովը։ Յեվ յերբ տոնածառի լուսազարդ ճյուղերից կախված շաքարե թիթեռնիկներն ու գույնզգույն կանֆետները բաժանելուց հետո աշակերտները գնում են տուն և միայն հյուրերն ու ուսուցիչներն են մնում ընթրիքի—ովքեր են բացակայում միշտ՝ յելնում են սեղանի վրայից ու քչփչալով շրջում մութ դասարաններում.—տեսչի կին Օլգա Վասիլևնա—Շիկահեր Դդումը (ինչպես անվանում եյին նրան աշակերտները) և Ոսեփ Նարիմանովը—մեկ,—և հետո՝ Ալյոշա Նիկիտիչը՝ մերթ որիորդաց գիմնազիայի վարժուհի Վալյա-Հոգյակի հետ թևանցուկ, մերթ ել՝ թվաբանության ուսուցիչ Բարսեղ Աբգարիչի կնոջ—«Ձուտ»-ի իրանը գրկած։ Այս ամենը իր սեփական աչքերով տեսել ե հինգերորդ դասարանի աշակերտ Վարդանյան Սերգուշը և պատմել ե ընկերներին ամենայն մանրամասնությամբ։ Իսկ նման դեպքերից մի շաբաթ անց սովորաբար ռեալական դպրոցի և օրիորդաց գիմնազի արտաքնոցի պատերին լույս են տեսնում վերոհիշյալ անցքերին վերաբերյալ բավականին հետաքրքիր հանգավոր և անհանգ գրություններ, վորոնք շատ շուտով տարածվում են բերանից-բերան և անցնում վոչ միայն հիշյալ դպրոցի պատերում, այլ այդ պատերից բավականին հեռու գտնվող շատ և շատ ընտանեկան հարկերի ներքո, նույնպես Տելեֆոն Սեթոյի սրճարանում։ Յեվ արդյոք նրանք չեն մեղավոր (գեներալ Ալոշը և Ոսեփ Նարիմանովը), վոր մինչև օրս ել «պսակի չարժանացած» ծխական դպրոցի ուսուցչուհի օր. Սաթոն ունի ընդամենը հինգդասյան կրթություն և վորպես վոչ միջնակարգավարտ ստանում ե պակաս ռոճիկ.—Նրանք են, նրանք են միշտ՝ գեներալ Ալոշը և Ոսեփ Նարիմանովը։—Հետաքրքիր քաղաք ե Նայիրյան այդ քաղաքը և բազում խորհրդավոր ու հետաքրքիր դեմքեր ու պատմություններ ունի...

Սակայն վերոհիշյալ պաշտոնական կենտրոններից ավելի հետաքրքիր և ուշագրավ են քաղաքի, յեթե կարելի ե այսպես

արտահայտվել՝ «անպաշտոն» կենտրոնները, թեպետև նրանք, ըստ մեծի մասի, չեն վայելում հանրության կողմից այն խորհրդավոր հարգանքը, վոր վիճակվել ե պաշտոնական կենտրոններին։ Բայց ինչո՞վ, ինչո՞վ ե պակաս և ինչու համար հասարակական հիմնարկություն չպետք ե համարվի թեկուզ հենց, օրինակի համար, յեկեղեցական մոմավաճառքի խանութը, վորտեղից դուրս յելած բոլոր մոմերը կնքված են լինում, այո,—իսկական նայիրյան կնիքով։ Կրկնում եմ՝ ի զուր են միամիտ քաղաքացիք յեկեղեցական մոմավաճառքի խանութի վրա աչքի ծայրով նայում. նա կենտրոն ե, և վորքան ել ասածս չափազանցություն թվա—կարևոր կենտրոն։ Յեկեղեցիներին և ծխական դպրոցներին վերաբերյալ բոլոր խնդիրները այդտեղ են արծարծվում և սանկցիա ստանում։ Մոմավաճառքի, արտաքինից այդ քոսոտ խանութը, վոր այնպես համեստ պահվել ե փողոցի ամենախուլ անկյունում—եյապես այն նշանակալից դերն ե խաղում քաղաքի հասարակական կյանքում, ինչ դեր վոր խաղում են քաղաքակրթված յերկրներում քաղաքական ակումբները և սալոնները։ Յեվ այդպիսի մի դեր խաղալու համար ամեն հարմարություններ ունի մոմավաճառքի խանութը. տաք ե, քաղաքի կենտրոնում ե գտնվում և, վոր ամենակարևորն ե՝ ազատ ե կողմնակի այցելուներից. շաբաթը մի, կամ շատ-շատ յերկու այցելու հազիվ ե մտնում այդ խանութը մոմ գնելու նպատակով, այնպես վոր վոչ մի կողմնակի անձնավորություն չի խանգարում այդտեղ հավաքված վարժապետներին և հոգաբարձուներին։ Յեվ նրանք ել, լիովին օգտվելով խանութի այդ հարմարություններից՝ հաճախ նարդի, կամ թուղթ են խաղում վորևե ուտելիքի, կամ մի յերկու շիշ գինու վրա. ով վոր տարվեց—գնի։ Բայց գիտե՞ք, թե ինչու, ի միջի այլոց, մոմավաճառքի խանութը կողմնակի այցելուներ չունի. այդ մասին կարող ե տեղեկացնել քաղաքում շատ հայտնի սրճարանատեր Սեթոն, վոր ամեն ինչից տեղեկություններ ունենալու շնորհիվ քաղաքացիների կողմից արժանացել ե «Տելեֆոն Սեթո» հորջորջման։ Այդ հարգելի քաղաքացին պատմում ե, վոր յերբ կոշկակար Սիմոնի յերեխան կնքելիս ինքը, վորպես

կնքահայր, ուզեցել է մտնել մոմավաճառքի խանութը մի զույգ կերոն գնելու—ս. Գևորգ յեկեղեցու քահանա տեր Հուսիկ—Խաչատուրը զգույշ քաշել է նրա փեշից, մոմավաճառքից կերոն գնելու վոչ մի կարիք չկա,—ասել է տեր Հուսիկ խաչագողը Տելեֆոն Սեթոյին,—կարող է յեկեղեցուց վերցնել. թե եժան կը նստի և թե յեկեղեցին կոգտվի, ասել է Տելեֆոն Սեթոյին տեր Հուսիկ քահանան: Ահա թե ինչու ազգային այդ հիմնարկությունը—յեկեղեցական մոմավաճառքի խանութը—այցելուներ չունի:

Բայց վորպես մի խական «քաղաքական ակումբ»—և այն էլ վոչ միայն վարժապետների և հոգաբարձուների, այլ և ազգային գործերով բոլոր հետաքրքրվողների համար,—վորպես այդպիսի ահա մի հասարակական կենտրոն հայտնի յե քաղաքում «Լույս» նավթարդյունաբերության ընկերության այդտեղի ներկայացուցչի գրասենյակը,—մի հիմնարկություն, վոր ամենայն իրավունքով կարող եր անվանվել—«Նայիրյան գործերի կենտրոն»: Յեվ այդ էլ՝ «Լույս» ընկերության ներկայացուցիչ Համո Ասատուրովի շնորհիվ, այն Համո Ասատուրովի, վորին, նավթի հետ գործ ունենալու պատճառով, քաղաքում կարճ անվանում են—«Մազութի Համո»: Չնայած այն հանգամանքին, վոր «Լույսի» ներկայացուցիչ Համո Ասատուրովը—Մազութի Համոն—գավառապետի ամենամոտիկ բարեկամն է և նրա տարիքավոր կնոջ՝ Ագրիպպինա Վլադիսլավովնայի միակ մխիթարանքը այդ «տաղտուկ, զզվելի, հիմար քաղաքում»—մյուս կողմից՝ չնայած վոր գավառապետը իր հերթին մշտական հյուրն է Համո Համբարձումովիչի հյուրընկալ ընտանիքում՝ մանավանդ յերբ տանն է լինում վոչ թե ինքը Մազութի Համոն, կամ նրա կինը՝ Անգինա Բարսեղովնան, այլ նրանց աղջիկը՝ տասնութ տարեկան «սևաչյա պրիմադոննան»,—չնայած, կրկնում ենք, Մազութի Համոյի ընտանեկան այս բարդ հանգամանքներին—գուցե և շնորհիվ հենց այդ հանգամանքների—Մազութի Համոն է և կմնա միակ կենտրոնական անձնավորությունը նայիրյան այդ քաղաքի—և վոչ մի ազգային, կամ հասարակական խնդիր չի կարող արծարծվել կամ ընթացք ստանալ առանց նրա, Մազու-

թի Համոյի, սանկցիայի: Վորովհետև, բացի վերոհիշյալ հանգամանքները, Մազութի Համոն ամենախելացի և գործունյա անձնավորությունն է ամբողջ քաղաքում, դիրքի տեր է, ռոճիկավոր պաշտոնյա յե թեկուզ՝ բայց սեփական տուն ունի և մի քիչ էլ հող,—մի խոսքով՝ հարուստ է, խելացի, հասարակական լայն կապեր ունի, և, վոր ամենագլխավորն է՝ Մազութի Համոն անդամ է... «Ընկերության»—և այն էլ՝ ազդեցիկ անդամ... Չե՞ք հավատում, բայց յես այդ ամենահաստատ աղբյուրից գիտեմ: Հայտնի յե և այն, վոր նա, Մազութի Համոն, արտասահմանից «Դրոշակ» է ստանում և գաղտնի կերպով տարածում ժողովրդի ստորին խավերում: Յեվ այս հանգամանքը վոչ միայն ինձ, հասարակ մահկանացուիս, է հայտնի, այլ և նույնիսկ իրան—գավառապետին,—և այս է ահա ամենազարմանալին: Գավառապետը Համո Համբարձումովիչի հեղափոխական գործունեյության վրա մատների արանքից է նայում և, հայտնի չե թե ինչու, նրա հեղափոխական գործունեյությունը համարում է «միամիտ չարաճճիություն»: Համո Համբարձումովիչը կրակ էլ լինի—հոգի յե և միանգամայն անվնաս անձնավորություն,—ասում է գավառապետը: «Դուր է յեկել մարդուն» —մտածում են քաղաքացիք.—«Ի՞նչ ասես»: Բայց թե իրոք վորքա՞ն է դուր յեկել գավառապետին Մազութի Համոն—դժվար է մի քիչ պատկերացնել. քանի վոր հայտնի յե բոլորին, վոր Վարդանի կամուրջի դիմացը գտնվող այն հողե խրճիթը պայթելու ժամանակ, յերբ գործը պետական քննության հանձնվեց՝ վարժապետ Կարոյի գրպանում գտնվեցին... Մազութի Համոյի ձեռքով գրված մի շարք նամակներ... Յեվ յեթե գավառապետը չլիներ և չծածկեր այդ գործը—Համո Համբարձումովիչը հիմա Սիբիրում կլիներ, Մազութի Համոյի վոսկորներն անգամ հիմա փտած կլինեյին...

Բայց արի տես վոր՝ չնայած Մազութի Համոյի այդքան մեծ դիրքին ու հռչակին, մի ժամանակ քիչ մնաց, վոր նրա գրասենյակը, վորպես «Նայիրյան գործերի կենտրոն», իր ա-

ուշնությունը գրքեր—յերևակայում եք՝ Ալեքսանդրյան կոչված փողոցում գտնվող չնչին մի խանութի, վորի ցուցանակի վրա նկարված կային յերկու հրացան, յերկու փախչող նապաստակներ, մի ձիու պայտ և մի հատ էլ չգիտես—ձիու թե շան գլուխ՝ պայտի մեջ մտցրած։ Այսպիսի մի նշանավոր ցուցանակ ուներ այդ խանութը և ցուցանակի վրա, վերոհիշյալ նկարների մեջտեղը, գրված եր ռուսերեն՝ Магазин “Охота„ Ншан Маранкозян։ Այս նշանավոր ցուցանակը կպցրած եր խանութի ճակատին, սակայն խանութի լայն վիտրինի աջ և ձախ կողմը կպցրած կային յերկու ուրիշ ցուցանակներ, վորոնց վրա թեկուզ նկարներ չկային, բայց գրությունը հայերեն եր. «Ծախում եմ վորսորդական զանազան»—գրված եր մեկի, և «Ապրանքներ Նշան Մառանկոզյան»—մյուսի վրա։ Վորսորդական ապրանքներ վաճառող Մառանկոզ Նշանի այս չնչին խանութն եր ահա, վոր մի ժամանակ մրցել եր ուզում Մազութի Համոյի գրասենյակի հետ և կամենում եր դառնալ... «Նայիրյան գործերի կենտրոն».—ծիծաղելի չե, չե՞։ Բայց Մառանկոզ Նշանի այդ անխոհեմ վարմունքը, ինչպես և կարելի յեր յենթադրել, վերջացավ կատարյալ անհաջողությամբ և գործի նման վախճանը Մառանկոզ Նշանի համար ունեցավ բավականին վողբերգական նշանակություն... Գործիչ ընկերների մշտական յել ու մուտը և գործնական հավաքույթներն ի վերջո հիմնովին քայքայեցին Մառանկոզ Նշանի տնտեսական-ֆինանսականը, վորովհետև հո չե՞ր կարելի հավաքել մարդկանց և դատարկ գլուխներով կերակրել, հարկավոր եր և վորոշ հյուրասիրություն, ինչպես այդ ընդունված է բոլոր քաղաքակիրթ յերկիրների քաղաքական ակումբներում մի բաժակ թեյ, մի-յերկու փունտ խաղող, մի թաս արաղ կամ գինի, իսկ յերբեմն էլ, փոփոխության համար—մի յերկու ռյումկա կոնյակ։ Մի ամիս միայն Մառանկոզ Նշանի տնտեսականը կարողացավ դիմանալ գործիչ-ընկերների բարձրապատիվ գրոհին. մի ամիս միայն նրա խղճուկ խանութը կարողացավ «Նայիրյան գործերի կենտրոն» հանդիսանալու բարձր պատվին արժանանալ։ Մի ամիս հետո, ցավոք իր սրտի և ի մեծ հաճույք Մազութի Համոյի—Մառանկոզ Նշանը ստիպված յեղավ ծախել իր խանութը, թեկուզ, բան էլ չեր մնացել, ինչպես ասում են, ծախելու,—և գնաց Պուլկարիա՝ ամբողջովին հեղափոխական գործին նվիրվելու։ Յեվ հիմա նրա խանութը, թեկուզ ցուցանակները դեռ մնացել են անփոփոխ, միայն հիասթափություն կարող է առաջացնել, յեթե մեկը՝ ցուցանակներին նայելով, ներս մտնի վորսորդական պիտույքներ գնելու։ Ներս մտնողը հիմա այդ նշանավոր խանութում կը տեսնի—նախ՝ խանութի մի պատից մյուսը ձգվող փայտե մի նեղ դազգահ, վոր խանութը բաժանում է յերկու անհավասար մասերի, իսկ դազգահի այն կողմը՝ դեմը, կողք-կողքի շարված՝ թիթեղե մի Զինացի, ձեռքին կլոր մի վահան,—ավստրիական, նույնպես թիթեղե, կանաչագույն մի զինվոր, նույնպես վահանը ձեռին,—ֆեսավոր մի ասկյար, նա յել թիթեղե ու վահանավոր,—և մի շարք ուրիշ նման արարածներ—բոլորը թիթեղե, բոլորը վահանավոր։ Իսկ խանութի առաստաղներից այդ թիթեղե արարածների գլխին բարակ թելերով կախված գույնզգույն ձվերն ու լուցկիները, խորքում, դիմացի պատին հենված կարտոնե դեկորացիան, վոր իբր թե անտառ է ներկայացնում, դազգահի վրա դրված հսկա գրամաֆոնը և բախտախաղի կլոր սեղանը՝ վրան եժանագին սապոններ, ադամանդներ և մի քանի հատ թղթադրամներ շարած—այս բոլոր հեքյաթային յերևույթները հասկանալու համար հարկավոր է գիտենալ, վոր Նշան Մառանկոզյանի այնքան նշանավոր, պատմական անցյալ ունեցող հեղափոխական խանութում հիմա մեզ արդեն հայտնի Բիթլիսցի Արշակի յեղբայրը՝ Ամերիկայից վերադարձած Բիթլիսցի Մանուկը հիմնել է «Տիր» կոչված հիմնարկությունը, վոր վերջին նորությունն է, Նայիրյան այդ քաղաքի վերջին ամերիկական նորությունը, ուր կիրակի որերը շատ պատկառելի քաղաքացիներ զբաղվում են հոգեշահ բախտախաղով, իսկ գիշերները ծխական դպրոցի ուսուցիչներից մի քանիսը, կոշկակար Սիմոնը, Մեռելի Յենոքը, Տելեֆոն Սեթոն և ռեալական դպրոցի բարձր դասարանի աշակերտներից շատերը հավաքվում են գաղտնի թղթախաղի։

Հիմա ամեն անգամ այդ խանութի մոտից անցնելիս Համո

Համբարձումովիչ—Մազութի Համոյի սիրտը լցվում է մարդասիրական տխուր զգացմունքով. Նա հիշում է Մառանկոզ Նշանին և խղճում է մարդկանց։ Յեվ այդ խեղճ, անճարակ, գռեհիկ Վանեցին ուզում եր իր Համո Համբարձումովիչի հետ, մրցության յելնել... Ո՞վ եր նա և ո՞վ է ինքը, «Լույսի» ներկայացուցիչ Մազութի Համոն... Այս համեմատությունն անելիս Համո Համբարձումովիչը հիշում է միշտ, ինքն էլ չգիտե ինչու, գավառապետի կնոջը—Ագրիպպինա Վլադիսլավովնային և. Նրա սիրտը հալչում է մի անուշ ջերմությունից, ինչպես թեյի մեջ գցած ռաֆինադ—շաքար։ «Դժվար է Մազութի Համոյի հետ մրցել, շատ է դժվար» —մտածում է նա։

Յեվ ճիշտ վոր՝ ինչո՞ւ մրցել։ Ինքը ամենամոտիկ բարեկամն է—գավառապետի, բժշկի, Ոսեփ Նարիմանովի, գեներալ Ալոշի և այլն, և այլն, և այլն—քաղաքի բոլոր ազդեցիկ և գիրքի տեր մարդկանց։ Վերջապես ինքը—այո—նախագահն է տեղական «Կոմիտեյի», և նույն իսկ, յերեվակայո՞ւմ եք—«Կենտրոնական Կոմիտեյի», թեկուզ այս մասին գավառապետը չգիտե և չի յել յենթադրում... Գիտենա յել—ի՞նչ պիտի անե. դժվար է, դժվար է Համո Համբարձումովիչի հետ մրցելը՝ խելացի մարդ է գավառապետը, նա հո չի՞ կարող այդ բանը չհասկանալ... Իսկ այն, վոր նա ներկայացուցիչն է «Լույս» նավթարդյունաբերական ընկերության. Նավթը հո «վորսորդական ապրանք» չէ, վոր իսկույն սպառվի. քանի դեռ ապրում է ինքը և կանգուն է Բագուն, Համո Համբարձումովիչի գրասենյակը կա և կմնա իսկական «Նայիրյան գործերի կենտրոն» և ո՞վ գիտե նրա,—Համո Համբարձումովիչի գրասենյակից չէ՞, վոր պիտի յելնե խանդավառ առաջին «վողջույնը ազատ Նայիրցիներին»—յերբ ցրվի մի օր մութը, մշուշը դարավոր Նայիրիյի դեմքից և զվարթ ու խնդուն, վորպես ինքնակալ մի արքա—ժողովուրդ, յելնե դարերի փոշուց ազա՛տ Նայիրին...

Այսպիսի մտքեր է ահա ունենում ամեն անգամ Նշան Մառանկոզյանի նախկին խանութի առաջից անցնելիս Համո Համբարձումովիչը—Մազութի Համոն։

Բայց բավական է կարծեմ, վորքան խոսեցինք Նայիրյան քաղաքի զանազան նշանավոր ու աննշան կենտրոնների մասին. յեթե այդ քաղաքի բոլոր քիչ թե շատ աչքի ընկնող կենտրոնների մասին խոսելու լինեյինք՝ նախ յերբեք չեյինք վերջացնի, և, յերկրորդ՝ ընկեր Սուրեն Վառոդյանի նման դեմ կառնեյինք այն թյուրիմաց հարցին, թե ինչո՞ւ, վերջապես, կենտրոն չի՞ կարող համարվել թեկուզ Յեգոր Արզումանովի գինետունը, կամ Տելեֆոն Սեթոյի հայտնի սրճարանը, վոր ունի հայերեն գրված այսպիսի մի ցուցանակ.

Դ.ԱՀՎԵ· ԶԱՅ· ՃԱՇԱՐԱՆ
ՍԵԹՐԱԿ ՖԱԼԻԱՆ

Թողնենք, ուրեմն, բոլոր այդ կենտրոնները և անցնենք քաղաքի առորյա կենցաղին։

Ինչպես ամեն տեղ աշխարհիս յերեսին, այնպես էլ Նայիրյան այդ փոքրիկ քաղաքում—կանուխ, մութլուսուն յելնում է նայիրցի խանութպանը, վոմն Կարապետյան կամ Մարտիրոսյան, իր տնից, և գնում է գործի։ Քաղաքի առևտրական մասը Լորիս-Մելիքյան կոչված փողոցն է, ուր յերկու շարք, կողք-կողքի ձգված են ցածլիկ, միհարկանի խանութները՝ յերկար-յերկար—մինչև կայարան։ Քաղաքի ամենաբանուկ փողոցն է այդ և վորպես այդպիսին՝ ամենափոշոտն ու ամենացեխոտը։ Յեթե անձրևային է լինում յեղանակը՝ փողոցի մի մայթից մյուսն անցնելու համար հարկավոր է ձեռք քաշել կրկնակոշիկից կամ կոշիկից, յեթե մեծ է այն վոտքից՝ անպայման ցեխում կմնա։—Այդ փոշոտ, ցեխոտ, նեղլիկ փողոցում են կենտրոնացած քաղաքի առևտրական հիմնարկությունները և ուրիշ վոչ մի տեղ, յեթե, իհարկե, չհաշվենք թաղերում գտնվող այն մի յերկու տուն-խա-

նութները, վորոնցում առևտուրը տեղի չի ունենում նահապետական ձևով՝ ապրանքների փոխանակությամբ։ Մի ձուն—մի ասեղ՝ ահա այդ խանութների առևտուրը։

Ինչպես ասացինք՝ առավոտ կանուխ, համարյա մութլուսուն, յելնում ե Նայիրցի խանութպանը տնից և գնում ե գործի։ Նա—ահա—անցնում ե առավոտվա մշուշի միջով, յելնում ե մշուշից՝ միջահասակ, ծուռ, աջ ուսը միշտ մի քիչ բարձր ձախից. մոխիրե ուրվական։ Լուրջ ե՝ դեմքը թուխս նստած հավի յե նման. հոգսեր, հոգսեր, հոգսեր—աշխարքի հանելուկ։ Յելնում են, յելնում են տներից ու քայլում են դանդաղ, անշտապ, ու բացվում են խանութներն իրար յետևից. հացագործ, մանրավաճառ, կոշկակար. կողքին՝ մրգեղենի խանութ, կողքին՝ կտորեղեն, խալիներ, բրինձ։ Համարյա վոչ մի խանութ չկա, վոր մի գործով զբաղվի. հացթուխի խանութում միևնույն ժամանակ նավթ ել ե ծախվում՝ Մազութի Համոյից մի փութ նավթ ե գնել և գրվանքաներով ծախում ե ուզողին։ Կտորեղեն ծախողը—հակերով բրինձ ե վաճառում, կամ շաքար, կամ լուցկի։ Խանութը կոշկակարի յե, բայց խանութի անկյունում դրված ե մի սեղան, վորի դեմը կանգնած յեկվոր մի Նայիրցի վարսավիրությամբ ե զբաղվում։ Կամ մտնում ես ներս—վարսավիր ե, բայց պատուհանի առաջ, անկյունում, ակնոցավոր մի մարդ սեղանի դեմը նստած ժամացույցներ ե նորոգում. ժամագործ ե։

Կամ այստեղ, նպարավաճառի կողքին, աղյուսե բավականին ընդարձակ խանութ ե ահա. մեծ, ապակեպատ դռներով, նույնիսկ վիտրին ունի, ուր շարված են՝ տղամարդու և կանացի պատրաստի կոստյումներ, սանրեր, մկրատներ, արտասահմանյան օծանելիքներ։ Իսկ ցուցանակը. Փարիզից ե բերված.—սև ֆոնի վրա վոսկեզօծ տառերով գրված ե ֆրանսերեն՝ «A bon marche»։ Տերը՝ յերեսունն անց սափրված յեվրոպացի յե՝ պենսնեն Նայիրյան քթին, անբեխ-անմորուք. դերասան ե ասես, վոր զբաղվում ե առևտուրով։ Նրան անվանում են քաղաքում—պ. Արոմարշ։

Արոմարշի հարևանը սափրիչ ե. չե. յեվրոպական վարսավիր, ինչպես հայտարարված ե նրա ցուցանակի վրա։ Անունն ե պ. Վասիլ։ Միջահասակ ե, լայնաթիկունք. չիլ այտեր ունի, դեղին մորուք։ Սիրում ե ածիլելիս շրթունքներն այնքան մոտեցնել սափրվողի դեմքին, վոր նրա մասին քաղաքում պատմում են մանազան առասպելներ։

Նրա հարևանը—կոշկակար ե, հայտնի յե քաղաքում, վորպես սքանչելի «կինտաուրի» պարող։ Բարեկենդանի հինգշաբթի յերեկոները, յերբ քաղաքի ակումբում, վոր մի փոքր բեմանման հարմարություն ունի, վորևե յեկվոր մի դերասան տեղական սիրողների հետ խաղում ե «Վարդանանց Պատերազմը»—բոլորը գնում են ակումբ վոչ այնքան «Վարդանանց Պատերազմը», վորքան կոշկարար Սիմոնի «կինտաուրին» տեսնելու։ Բոլորը սիրում են նրան, բացի վարսավիր Վասիլից, վոր չարախնդաբար անվանում ե նրան կամ «կինտաուրի-Սիմոն», վոր դեռ ելի վոչինչ,—կամ... «Կլուբի մեյմուն».—կատարյալ խայտառակություն։

Բայց ամենից հետաքրքիրը կոշկակարի հարևանն ե՝ պարսկաստանցի մի վաճառական, վոր զբաղվում ե գորգի, քիշմիշի, մորթեղենի և շաքարի առևտուրով։ Յեթե խանութը մտնեք՝ կը տեսնեք.—գորգեր, գորգեր, գորգեր՝ հին, փոշոտ, զանազան։ Աղվեսի, սանսարի, վագրի ու արջի մորթիներ։ Պարկերով իրար վրա դարսած շաքար։ Արկղներով քիշմիշ։ Մեծ խանութ ե. Պարսկաստանի և Յեվրոպայի հետ առևտրական կապեր ունի։

Հարևան խանութը—մեզ արդեն բավականին ծանոթ Ղահվեճի Սեթոյի խանութն ե, ուր նա չոր սուրճ ե ծախում։ Ինչպես այս խանութը, այնպես ել իրան՝ ղահվեճի Սեթոյին չպետք ե շփոթել Տելեֆոն Սեթոյի և նրա այնհայտնի սըրճարանի հետ, և վորը գտնվում ե մի քանի խանութ այն կողմը, վորի ցուցանակի վրա, ինչպես ասված ե արդեն, գրված ե՝ «Չայ, Ղահվե, Ճաշարան, Սեթրակ Ֆալյան»։ Չնայած վոր յերկուսի յել անունը Սեթո յե և յերկուսն ել գործունեն սուրճի հետ, սակայն մեկը չոր սուրճ ծախող ե, իսկ մյուսը—սրճարանատեր։ Բացի այս.—չհաշված յերկու այս արգո

նայիրցիների հիշյալ զուտ-պրոֆեսիոնալ տարբերությանը՝ նրանց մեջ կա և, յեթե կարելի յե այսպես ասել, անձնական տարբերություն.—դահվեճի Սեթոն միջահասակ է, գիրուկ, անբեխ-անմորուք, թորշոմած դեմք ունի, ներքինու կերպարանք.—այն ինչ Տելեֆոն Սեթոն չոր է, բարձրահասակ, գլուխը ֆեսի յե նման, չոր բեխեր ունի, ցանցառ միրուք. այծի կերպարանք։ Յեվ, վերջապես, տարբեր է այս յերկուսի, այսպես ասած՝ հասարակական դիրքը.—դահվեճի Սեթոյի խանութը—աննշան մի վորջ է, մի վողորմելի անկյուն, ուր մկները միայն կարող են հավաքվել, յեթե միայն նրանք, այսինքն մկները, ընդհանրապես կարող են հետաքրքրվել չոր սուրճով,—այնինչ Տելեֆոն Սեթոյի սրճարան-ճաշարանը, թեկուզ և «ճաշարան» բառը զուր տեղն է տեղ գրավել նրա ցուցանակի վրա, քանի վոր այդ տեղ վոչինչ էլ չի տրվում, բացի սուրճից ու թեյից,—բայց, չընայած դրան, այդ սրճարանը նույնն է քաղաքի ցածր խավերի համար, ինչ վոր է վերին խավերի համար Մազութի Համոյի գրասենյակը.—քաղաքական ակումբ է, կատարյալ ակումբ։—

Հաջորդ խանութը... Այդտեղ Հաջի եֆենդի Մանուկոֆը մանուֆակտուրա յե ծախում, այսինքն Սամարղանդի փուշիներ, զանազան կերպասեղեն (չիթ, չաղմա, չլվարի). «բըրոցկի» շաքար, «լապշինի» լուցկի։ Միևնույն ժամանակ սարաֆություն էլ է անում. անգլերեն գիտե և վորպես միակը քաղաքում՝ վայելում է քաղաքացիների առանձին հարգանքը։ Կատաղի հայասեր է Հաճի Ոննիկ Մանուկոֆ եֆենդին, ինչպես իրեն սիրում է հորջորջել հենց ինքը՝ այդ հայտնի հայասերը։

Խանութները շատ են, բոլորը հո չի՞ կարելի թվել. մենք պատահմամբ մի քանիսի մասին միայն յերկու խոսք ասացինք։ Մնացածների մասին թող նրանց ցուցանակներն ասեն՝ ճիշտ այն հերթով, ինչ հերթով վոր շարված են նրանք Լորիս-Մելիքյան փողոցի մի ծայրից մյուս ծայրը՝ մինչև կայարան։

«Մանրուքի խանութ. Պողոս Կոլոպոտյան»—

«Գինի, արաղ, կոնյակ. Համբարձումով Նիկոլայ» (սա իր բավականին ընդարձակ փորի պատճառով քաղաքում կոչվում է բոչկա-Նիկոլայ)—«Դագաղագործ. ընդունում եմ պատվերներ. Յենոք Կարապետյան» (սա հենց ինքն է՝ Մեռելի Յենոքը)—«Ճաշարան Յեվրոպա». Յեգոր Արզումանով—և էլի մանրավաճառ, կոշկակար, մանրավաճառ, վարսավիր, մանրավաճառ, մանրավաճառ և հանկարծ—«Դեղատուն Ժգենտի»—ու էլի՝ մանրավաճառ, ու էլի՝ մանր, մունր խանութներ—մինչև կայարան։

Կանուխ, մութլուսուն, բացվում են խանութներն իրար յետևից—ու ծույլ, դանդաղ, միապաղաղ՝ սկսվում է քաղաքի գործնական յեռուզեռը՝ գործնական առօրյան։

Սովորաբար առավոտվա այդ վաղ պահերին մայթերը բավականին դատարկ են լինում, այն ինչ փողոցի մեջտեղով, խուռն ու բազմերանգ, հոսում են բավականին ստվար բազմություններ։ Անցնում են փողոցի մեջտեղով՝ սայլեր, վոչխարի և տնային այլ անասունների բազմագլուխ նախիրներ, մշակներ, վոր մեծ խմբերով գնում են քաղաքից դուրս՝ յերկաթուղագծի վրա աշխատելու, գյուղացիներ, վոր գյուղական այլ և այլ բարիքներ են բերում քաղաքում վաճառելու։ Սայլերի, նախիրների և գյուղացիների այդ խուռներամ հոսանքը հոսում է Լորիս-Մելիքյան փողոցի մեջտեղով դեպի մեյդանը, այսինքն՝ շուկան, վոր գտնվում է փողոցի և կայարանի մեջտեղն ընկնող այդ դաշտանման տեղում, վոր տեղացիների լեզվով կոչվում է «գյոլ», կամ «լիճ», վորովհետև գարնան սկզբին այդտեղ է հավաքվում բլուրներից հոսող ջուրը, վորը և մնում է այդտեղ լճացած, մինչև վոր չորանա։ Անցնում են-անցնում են. առավոտները հաճախ մշուշ է լինում,—ու մշուշի միջից դանդաղ առաջացող, կարծես մշուշից ցելնող սայլերից, նախիրներից ու գյուղացիներից կազմված հորդածուփ այդ հոսանքը արժանանում է իրենց խանութների առաջ նստած կամ կանգնած գնորդի սպասող խանութպանների զանազան նկատողություններին։ Պետք է ասել, վոր առավոտվա այդ կանուխ պա-

հերին, երբ գյուղերից յեկած հոսանքը դեպի մեյդան է շտապում, փողոցի յերկու կողմը շարված խանութները շատ չնչին ուշադրության են արժանանում դեպի մեյդան շտապող գյուղացիների կողմից. վերջը, կեսօրից հետո, երբ իր բարիքը ծախած գյուղացին՝ յետ դեպի գյուղ է շտապում նույն Լորիս-Մելիքյան փողոցով—այս անգամ վոչ թե մեջտեղով, ինչպես այդ վայել է սայլերին ու նախիրներին, այլ մայթերի վրայով,—այդ ժամանակ միայն յեռում, կատաղի ճակատամարտի տեսք է ստանում մանրուքի խանութների առևտուրը: Իսկ մինչ այդ, մանավանդ առավոտյան այդ վաղ պահերին, յերբ նոր է սկսվում գյուղացիների հոսանքը դեպի մեյդան,—Նայիրցի խանութպանները խաղաղ նստած են լինում իրենց խանութների առաջ և փողոցի մեջտեղով զանգազ առաջացող յեռուզեռին նայելով՝ հաղորդում են իրար իրենց պատահական մտքերն ու տպավորությունները: Օրինակ.—«Ան ոչխարը, նայե. մեկ փութ դմակ կախված է յետևեն»—ասում է Հաջի Օնիկ եֆենդի Մանուկոֆը ղանվեճի Սեթոյին:«—Յես յաղլու մը կլլած իմ առուս»—տեղի-անտեղի պատասխանում է ղանվեճին, ինչպես յերևում է, բոլորովին տարբեր տրամադրություններով տարված: Յեվ Հաջի Օնիկ եֆենդին, միանգամայն բավարարված այդպիսի մի պատասխանով, լռում է խորհրդավոր և շարունակում է նայել փողոցով անցնող սպիտակ վոչխարների ծանր դմակներին: Ղանվեճին, վոր ընդհանրապես սիրում է խոսակցությունը, ուզում է զրույց սկսել քաղաքի նորությունների մասին, բայց Հաջին, նկատելով փողոցի ծայրից առաջացող իր յերեխային, վոր ամեն առավոտ իր համար հաց ու պանիր է բերում տնից (շաքար խանութում կա)—մտնում է իր խանութը թեյելու: Ղանվեճին մենակ մնալով՝ մտածում է ինքն էլ մտնի իր խանութը թեյելու, բայց այդ պահուն կոշկակար Սիմոնը դուրս է յելնում խանութից և ձեռքը մեկնելով նրան՝ «Բարի լույս պ. Սեդրակ»—ասում է քաղաքավարի: «—Գիշերս լա՞վ ես քնե»—հարցնում է կոշկակար Սիմոնը, և միակն է քաղաքում, վոր «պ. Սեդրակ» է անվանում ղանվեճի Սեթոյին: Ուստի և այս վերջին հանգամանքից չափազանց զգացված՝ «Աղեկ եմ»—պատասխանում է ժպ-

տալով ղանվեճի Սեթոն «—առավոտ յաղլու մը կլլած եմ, ըստ սովորության»: «—Անուշներ» կտրուկ կտրում է Սիմոնը և նորից մտնում է խանութը՝ թողնելով անուշ հիացմունքի մեջ ղանվեճի Սեթոյին: «Ի՞նչ կըսեր ելի կլուբի մեյմունը»—յուղոտ ժպիտը դեմքին, զանգազ մոտենալով, հարցնում է վարսավիր Վասիլը: «—Գործ չկա»—պատասխանում է հորջանելով ղանվեճի Սեթոն և յերկուսը միասին, տխուր-տխուր աչքերով, սկսում են նայել փողոցի մեջտեղով անցնող անասուններին ու գյուղացիներին: «Յես չեմ հասկանար թե դուն ինչո՞ւ չես հարգեր սապոժնիկ Սիմոնը»—ասում է ղանվեճին. «—յես անոր վոտքերը ունենայի նե—հիմա սանկ թխլիկ կնիկ մը տունս նստած կըլլար. սատանայի պես կպարե շանո՛րդին...:» Զի ըսե—մեյմունի պէս, կըսե սատանայի»—լինում է վարսավիրի կտրուկ պատասխանը: Ղանվեճին վիրավորվում է իր մեջ, բայց վախենում է վարսավիրի հեգնող լեզվից և վոչ մի բառով կամ ակնարկով չի արտահայտում իր դժգոհությունը: «Ի՞նչ կըհասկնա այդ աղտոտ «ուշադրաղը»—հահոյում է մտքում վիրավորված ղանվեճին և մի վախլուկ ժպիտ սահեցնելով դեմքին՝ մտնում է խանութը: Յեվ այս պատմությունը կրկնվում է ամեն որ համարյա, ամեն առավոտ: «Վատ, չարախոս լեզու ունի ուշադրաղ պերպերը»—մտածում է, խանութի մի անկյունը նստած, ղանվեճի Սեթոն:

Արևը կամաց-կամաց սկսում է բարձրանալ և ահա մյուս, վոչ խանութպան, քաղաքացիները ևս յելնում են տներից և մայթերի վրայով գնում են՝ մի մասը «պրովիզ» գնելու, մի մասը—գործի: Պաշտոնյաները շտապում են պաշտոնատեղի, պ. Մարուբեն շտապում է դպրոց: Խանութներում գործը հետզհետե սկսում է յեռալ և զուգե միայն գագաղագործը և «Յեվրոպա» ճաշարանի տնօրեն Յեգոռ Արզումանովն են հիմա, անգործ նստած իրենց խանութների առաջ, ձանձրույթից հորանջում: Սակայն նրանք էլ կամաց-կամաց սկսում են զբաղվել. գագաղա-

գործը ձանձրույթից ձանձրացած՝ սկսում է թղթե արծաթազօծ հրեշտակներ կպցնել դագաղների վրա, իսկ դուքանչի Յեգոռը իր բավականին մաքուր սրբիչը վերցնելով՝ սկսում է ճաշարանի սեղանները սրբել: Սրբում, սրբում է դուքանչի Յեգոռը և շվվացնելով «Վասսադուլի» ռուսական յերգը, մտածում է, որ հարկավոր է մի մեծ քաղաք տեղափոխվել—Ռոստով կամ Կատինդար—և այնտեղ կարգին «սալավո» պահել: Յեվ հանկարծ, ինքն էլ չգիտե ինչու, հիշում է, որ դահվեճի Սեթոն մի անգամ բարեկենդանին մի փունտ լվացքի սապոն մի անգամից կերավ՝ տասը ռուբլի գրազի համար: «Թյու քու գալած ճամփեն...» զզվանքով հայհոյում է Յեգոռ Արզումանովը և սրբիչը մի կողմ նետելով՝ յելնում է փողոց:

Այդ նույն վայրկյանին պ. Մարուքեն մտնում է վարսավիր Վասիլի վարսավիրանոցը՝ ածիլվելու: Ամեն որ դպրոց գնալուց առաջ անպայման ածիլվում է պ. Մարուքեն: Ահա թե ինչու վարսավիր Վասիլը մի առանձին հարգանք է տածում դեպի պ. Մարուքեն. ածիլելիս այնքան է մոտեցնում իր արաղահոտ շրթունքները պ. Մարուքեյի այտերին, որ միանգամայն հավանական է դարձնում դահվեճի Սեթոյի կասկածները վարսավիրի բարոյականի նկատմամբ: Պ. Մարուքեն, ի հարկե, յերիտասարդ չէ, յերեսուն—յերեսուներկու տարեկան կլինի—թեպետ, մյուս կողմից՝ դեմքը թուխ է, հաճախ սափրվելուց և պուդրա գործածելուց այտերը հաճելի քրքշություն են ստացել, իսկ քթի ծայրը համարյա միշտ կարմրած է լինում հարբուխից կամ ողուց:

«Խորին հարգանքներս պ. Մարուքեյին» ասում է վարսավիր Վասիլը, գլուխ տալով, յերբ պ. Մարուքեն մտնում է ներս: Պ. Մարուքեն թեթև գլխով է անում և լուրջ, սփրթնած դեմքով նստում է հայելու առաջ: Աչքերը փակում ու, ծույլ, փափկաթոռի մեջ ընկղմած, սպասում է, մինչև տաք, կակուղ խողանակը, սապոնոտ սահելով՝ քսվի դեմքին և իր այտերի վրա շոգ, տաք՝ զգա վարսավիր Վասիլի արաղահամ շնչառությունը: «Զգույշ»—բարկացած վեր է թռչում պ. Մարուքեն, յերբ վարսավիրի տաք շրթունքները համարյա քսվում են նրա դեմքին:

«Ինչ գոեհիկ են այստեղի վարսավիրները» —տխուր մտածում է պ. Մարուքեն: «Ուրիշ բան է, որինակ, յեվրոպական քաղաքներում, կամ, թեկուզ, Ռուսաստանում. այնտեղ մարդիկ քաղաքավարի, մաքուր են ավելի, այնպես են ածիլում, որ հաճույք ես զգում: Իսկ պ. Վասիլը... Նու, քիչ է մնում բերանդ մտնի. հիմար, գոեհիկ նայիրցի...»

«Անուշներ»—ասում է պ. Վասիլը, յերբ մազերը սանրելուց հետո, սպիտակ սրբիչով մաքրում է պ. Մարուքեյի դեմքի պուդրան և խոզանակով սկսում է նրա ոձիքը մաքրել: «Եսոր աչքիս քիչ տխուր կերևաս, ինչ է պատահե»—հարցնում է վարսավիր Վասիլը խորամանկ ժպտալով:—«Առանձին բան չկա»,—խոպոտ, լուրջ ձայնով պատասխանում է պ. Մարուքեն և գլխարկը վերցնելով շտապում է դպրոց:

Մարդիկ անցնում են դանդաղ, անշտապ անցնում են մարդիկ, կանայք, յերեխաներ—յելել են փողոց, որ գնան՝ պաշտոնի, գնումներ անելու, բաղնիք, գործի: Բաղնիք, ասենք, առավոտվա վաղ ժամերին միայն կանայք են գնում Նայիրյան այդ փոքրիկ քաղաքում. քաղաքում կա՝ միայն յերկու բաղնիք, յերկուսն էլ ասիական, թեկուզ մեկի անունն է «Ճերմակ», որովհետև նրա պատերը սպիտակացրած են կիրով,—իսկ մյուսը, որ մեչեթի նման ձմերուկաձև գմբեթ ունի, կոչվում է «Ֆանտազիա բաղնիք—առանձին համարներով»: Ընդամենը յերկու համար ունի այդ յեվրոպականացրած բաղնիքը, բայց դրությունը դրանից, ի հարկե, չի փոխվում. համարներում գնում են լողանալու քաղաքացիներից միմիայն՝—առաջին քաղաքամասի պրիստավը, նրա կինը, աղջիկները, ելի մի քանի պաշտոնյա ռուսներ և մեկ էլ հայտնի մանուֆակտուրիստ Հաջի Ոնիկ աղա Մանուկոֆը. նա յել, լինելով հմուտ անգլիագետ, համարները գերադասում է ընդհանուր լողարանից:—«Ինչ կընես ըրե—մարդ չի տեսնար»—ասում է նա այդ առթիվ, թեկուզ մեզ արդեն ծանոթ դահվեճի Սիմոնը նրա մասին էլ, ինչպես և վարսավիր Վասիլի մասին, ունի առանձին կար-

ծիք՝ «Հաջի Ոնիկ աղան չի ուզեր հարևանները տեսնեն, վոր ինքը դեղին սապոնով կլողանա»—ասում է նա։

Առավոտվա այդ վաղ պահերին բաղնիք են գնում, ինչպես ասացինք, բացառապես կանայք, վորովհետև քաղաքում գտնվող յերկու բաղնիքներն էլ, առանց բացառության, մինչև ցերեկվա ժամը չորսը բաց են կանանց, իսկ չորսից հետո—տղամարդկանց համար։ Բաղնիք այդ քաղաքում կանայք գնում են առանձին մի շուքով, կարծես գնում են ծիսակատարության։ Գնում են՝ ընդհանրապես մի քանի ազգական—կանայք, աղջիկներ և յերեխաներ միասին. մենակ ընդունված չե բաղնիք գնալ Նայիրյան այդ քաղաքում։ Առջևից, գնացքի ավանգարդը կազմելով, գնում է սովորաբար գզգզված մի մշակ՝ շալակին պղնձե մի մեծ ջրաման, վորի մեջ դրված են լինում պղնձե կլոր թասեր, փայտե նալններ, սանր, սապոն—մի խոսքով՝ լողանալու զանազան պարագաներ։ Յեթե ընտանիքում ծծկեր յերեխա չե լինում—նրան էլ սովորաբար գրկում է նույն մշակը, վորի յերկու կողքից հաղթական քայլերով արշավում են յերեխաները, տղաներ ու աղջիկներ, տղաները—մինչև յոթը տարեկան, իսկ աղջիկների համար տարիքը նշանակություն չունի։ Յերեխաների համար առանձին օրենք է ընդունված Նայիրյան բաղնիքներում. ընդունված է կանանց հետ բաղնիք թողնել մինչև յոթը տարեկան տղաներին, բայց յեթե ընտանիքում, վոր բաղնիք է գնում, հիվանդ է տասնմեկ տարեկան մի տղա—նրան էլ մայրը իրավունք ունի հետը բաղնիք տանելու. հո՞ չի կարող հիվանդ յերեխան տանը սպասել և անլվա մնալ։ Այսպիսի բաղնիքային կարգեր կան, հնուց մնացած, Նայիրյան այդ քաղաքում։

Յեթե ամառ է, աշուն, մի խոսքով—մրգի ժամանակ՝ բաղնիք գնացող ընտանիքի հայրը, լինի նա վարսավիր Վասիլը թե Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆը, կամ դուքանչի Յեգոռը—ցերեկվա տասներկուսին մոտիկ պետք է բաղնիք ուղարկե. լողացող ընտանիքին նվեր՝ ձմերուկ, սեխ, խաղող կամ խնձոր, և

դա սովորաբար արվում է հրապարակավ, բոլորին ի տես, մանավանդ յերբ բաղնիք է գնացած լինում Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆի հանըմը յերեխաներով հանդերձ։ «Եսօր էլի Հաջին բաղնիք է ղրկե Նունուֆար հանըմին»——ասում են հարևանները քմծիծաղ։ «Խեյր եղնի» ասում է այդպիսի օրերին Յեգոռ Համբարձումովը, «Յերոպա» ճաշարանի տերը, Հաջի Ոնիկին. «—Եսօր Հաջին մեզ մոտ պիտի ճաշե. լավ բոզբաշ եմ շինել տվե, իսկական դամաշնի՝ պամիդորով ու սոխով»։ Բայց Հաջին չի սիրում ընտանիքից դուրս—ճաշարաններում ճաշել. յերբ տնից ճաշ չեն ուղարկում, նա յոլա յե գնում հացով ու պանիրով, իսկ յեթե մրգի ժամանակ է՝ սիրում է ձմերուկ կամ սեխ ունենալ մսի փոխարեն։ «Շատ բան պետք չե մարդումը կշտացնելու համար» մտածում է Հաջին. «—Անգլեթերում լորտերը սև հացով կբավականանան. սակայն այդ հանգամանքը չի խանգարեր անոնց, վոր անոնք ըլլան ազնիվ ու հայրենասեր։»—Յեվ հարևանները, չնայած վոր բընավ չեն էլ մտածում հավատալ, վոր լորտերը Անգլեթերում սև հաց են ուտում,—այնուամենայնիվ հավանություն են տալիս Հաջու խոսքերին։—«Մարդս ինչով ասես կարող է կշտանալ, մանավանդ Հաջի Ոնիկ եֆենդին»—մտածում են նրանք։

Յերբ արևը բավականին բարձրանում է վեր և կեսօրից ընկնում է դեպի արևմուտք թեքվել՝ Լորիս-Մելիքյան փողոցի վրա գտնվող խանութներում գործնական յեռուզեռը հասնում է իր գագաթնակետին. Հաջին շուկայից վերադարձող գյուղացիներին մանուֆակտուրա, շաքար, փուշիներ է ծախում, վարսավիր Վասիլը սափրում է ու խուզում, Յերոպա ճաշարանում բորշչ են սկսում ուտել զինվորներն ու գյուղացիները, իսկ մանրավաճառները շունչ քաշելու անգամ ժամանակ չեն ունենում։ Ասեղ, թել, կողպեք, քառորդ ֆ. սպիտակ հալվա, փորգունի մազութ, Լապշինի լուցկի,—գնում են, գնում են, ում ինչ հարկավոր է օրվա համար և ծախում ու հարստանում են—Կոլոպոտյանը, Զարգար Հովհաննեսի տղան, վոր հիմա մանրուքի խանութ ունի, քաչալ

Թաթոսը, կաթոլիկ Սիմոն աղան և մնացած չարչիները ու խանութպանները.—խեղճ Աբոմարշն է միայն, վոր անգործ, աչքը խանութի պատերից կախած յեվրոպական գույնզգույն հագուստներին հառած, սպասում է գնորդի։ Յերևի նայիրցիները չեն հասկանում, վոր ինչպես իր ցուցանակի վրա գրված, այնպես էլ իրեն կպցրած ֆրանսերեն «Աբոն մարշե»-ն վոչ այլ ինչ է նշանակում, յեթե վոչ—բարի գալուստ,—մտածում է նա։—Յեթե այդ հասկանային, գոնե ներս կմտնեյին, գնելը դեռ մի կողմ։ Պետք է ցուցանակները ռուսերենի վերածել—վորոշում է նա մտքում և ընկնում է իր նոր ցուցանակի համար մի հարմար անուն մտածել։

Տասերկուսից տաս անց՝ յերկրորդ դասն արդեն վերջացրած լինելով՝ քաղաքի ծխական դպրոցի ուսուցչանոցում, մեծ դասամիջոցից օգտվելով, նախաճաշ են անում ուսուցիչ-ուսուցչուհիները։ Ուսուցիչներից մեկի անունն է Բյուզանդ Վարդերեսյան, յերեսունին մոտիկ ճեմարանավարտ փորձված ուսուցիչ. Մանուկ Աբեղյանից է սովորել հայերենը և պարծենում է դրանով։ Մազերը պահում է յերկար, սանրում է մեծ խնամքով. Թողնում է կարճ մորուք։ Դպրոցում պարապում է հայերեն և յերգ։ Միևնույն ժամանակ դպրոցի տեսուչն է, ավագ ուսուցիչը։ Յերկրորդ ուսուցիչը—մեզ արդեն ծանոթ պ. Մարուքեն է, դպրոցում նա ավանդում է թվաբանություն և ռուսաց լեզու։ Յերրորդը նույնպես ճեմարանցի յե, բայց ավելի յե յերիտասարդ. սիրում է հասարակական գործունեյությամբ զբաղվել և միտք ունի հաջորդ ամառվա ընթացքում մեզ արդեն բավականին ծանոթ՝ յերկրորդ ծխականի ուսուցիչ ընկ. Վառոդյանի ընկերակցությամբ մի շարք դասախոսություններ կարդալ հայոց պատմության մի քանի հետաքրքիր և դաստիարակիչ գլուխների մասին, կազմակերպել յերիտասարդական միություն, վորի գլխավոր նպատակներից մեկը պիտի լինի «Հայոց լեզուն տարածելու խնդիրը»—ռուսախոս նայիրցիների շրջանում։ Լավ յերիտասարդ է պ. Աշոտը և լավ մտքեր ունի, բայց դժբախտաբար անտարբեր չէ դեպի իր պաշտոնակցուհի օր. Նվարդ Լուսպարոնյանը, վոր Թիֆլիսի հովնանյանավարտներից է և պահում է կարճ մազեր։ Չորրորդը նույնպես ուսուցչուհի յե, յերեսունին մոտիկ մի օրիորդ, օր. Վարդուհի Զատիկյան. վերջացրել է Յերևանի Գայանյան դպրոցը, չի սիրում օր. Նվարդին և ֆիզիքական ատելություն է զգում դեպի նրա կարճ մազերն ու թեթևամիտ հանաքները։ «Կինը պետք է իրեն պահել իմանա»—ասում է նա հաճախ՝ ակնարկելով օր. Նվարդի հանաքները պ. Մարուքեյի հետ, դեպի վորը, ասում են, այնքան էլ անտարբեր չէ... ինքը՝ օր. Վարդուհին։

Նրանք նստած են հիմա ուսուցչանոցում, վորը շատ լվանալուց խունացած հատակով և դեղնած առաստաղով յերկպատուհան մի սենյակ է. մեջտեղում՝ կանաչ ծածկոցով, թանաքոտած մի սեղան, պատից կախված է մի մեծ, կայարանների ժամացույցներին նման, կլոր ժամացույց, իսկ յերկու պատուհանների մեջտեղում—մի մեծ փայտյա պահարան։ Պատուհանները փողոց են նայում. իսկ դուռը միջանցք է դուրս գալիս. բակը, վորտեղ խաղում են յերեխաները, մնում է հեռու—այդպիսով նրանք այստեղ բավականին ապահովված են իրենց զգում յերեխաների աղմուկ-աղաղակներից. մի հանգամանք, վորից շատ դժգոհ յե պ. Մարուքեն և ավելի քան գոհ է օր. Նվարդը։

Թեյը, դեղին, պաղ, հորջանում է ապակյա բաժակներում. ձանձրալի յե. հավաս չկա. թեյ, թեյ, թեյ,—ամեն օր նույնը։ Ձանձրալի յեն օր. Վարդուհու զրույցները կանացի առաքինության մասին—օր. Նվարդին, իսկ օր. Նվարդի տափակ հանաքները օր. Վարդուհու—ականջներն ու հոգին տանջում են, բռնաբարում են համարյա. վոչ խոսքն է օգնում, վոչ վրդովմունքը։ Պ. Մարուքեն թերթ է կարդում և քթի տակ ծիծաղում է օր. Վարդուհու վրա, իսկ յերբ լսում է պ. Աշոտի դողդոջուն ձայնը, վորով նա խնդրում է օր. Նվարդին մի բաժակ թեյ ևս լցնել—աչքերը բարձրացնում է թերթից և պաղ նայում է պաշտոնակցի դեմքին։ Իսկ պ. Բյուզանդ Վարդերեսյանը համարյա ամեն օր մեծ դասամիջոցին հաճույքով վիճում է օր. Վարդուհի Զատիկյանի հետ բարոյախոսության մասին և գոհ է թե իր հայացքներից, թե իր խռպոտ ձայնից և թե, մանավանդ, օր. Վարդուհուց,

վոր միշտ համաձայնվում է նրա հետ և միշտ ասում է, հայացքը որ. Նվարդին դարձնելով. «Ճիշտ է Պ. Բյուզանդ. մարդիկ, մանավանդ կանայք, պետք է առաքինի լինեն։ Յես միանգամայն համաձայն եմ Ձեզ հետ, պ. Բյուզանդ»։ Յեվ պ. Բյուզանդը, գոհ, ժպտադեմ՝ սրբում է իր նայիրյան մեծ քիթը կամիր թաշկինակով։

Տալիս է զանգը և ուսուցիչ-ուսուցչուհիները, զանգազ, տեղերից հազիվ բարձրանալով, նորից գնում են դասարանները պարապմունքները շարունակելու։

Յերբ որ. Նվարդը մտնում է դասարան, աշակերտներից ամենաչարը և ամենահերոսը, վոր ընկերների կողմից հարգվում է վորպես կատարյալ տղամարդ—չէր, դեղնած աչքերով Միսակ Հովհաննիսյանը, կամ, ինչպես ընկերներն են ասում՝ Շլդոն կանգնած է լինում գրասեղանի կամ նույնիսկ ուսուցչի սեղանի վրա. դասարանում աղմուկ է, փոշի, վայրենի, բայց ուրախ հրհռոց։ «Ելի դու սեղանի վրա ես բարձրացել»—սուր, խզվող ձայնով ճըչում է որ. Նվարդը և վրա յէ վազում Շլդոյին բռնելու։ Շլդոն սեղանից-սեղան թռչելով հասնում է դասարանի վերին անկյունը և մտնում է գրասեղանի տակ։ «Ներողություն, որիորդ, ներողություն»—ճչում է այնտեղից Շլդոն։ Յերեխաները ավելի յեն հռհռում, աղմուկը դառնում է անտանելի։ «Հանգիստ»—ձեռքն աթոռին և վոտքը հատակին խփելով ճչում էր որ. Նվարդը սուր, խեղդվողի ձայնով. դասարանում մի վայրկյան տիրում է բացարձակ լռություն։ Որ. Նվարդը մոտենում է ուսուցչական սեղանին և վերցնում է քանոնը։—«Դո՛ւրս արի գրասեղանի տակից»—քանոնը սպառնալի կերպով բարձրացնելով վեր և արագ մոտենալով Շլդոյի գրասեղանին—ասում է որիորդը։ Բայց դուրս է գալիս այնպես, վոր Շլդոն այլևս այն նստարանի տակից տեղափոխված է լինում արդեն դասարանի հակառակ անկյունում դրած նստարանի տակ։ Աշակերտներն ավելի ազատ և ավելի ուրախ են սկսում հռհռալ, որ. Նվարդը հուզմունքից քիչ է մնում ուշաթափվի և յերբ լացակումած աչքերը բնազդով դռանն է հա-

ռում և տեսնում է գրասեղանի վրա մեծ, ծուռ տառերով գրված «Քաչալ Նվարդ» բառերը—այլևս չի կարողանում իրան զսպել և արագ մոտենալով ուսուցչական սեղանին՝ թուլացած ընկնում է նրա մոտ դրված նստարանի վրա և գլուխը սեղանին դնելով՝ մի փոքրիկ աղջկա նման սկսում է աղիողորմ հեծկլտալ։

Դասարանում տիրում է մեռելային լռություն, վորի մեջ, որ. Նվարդի խուլ, դառն հեկեկանքները հնչում են ավելի խուլ և ավելի աղի, այնպես վոր նույնիսկ Շլդոն, ազդվելով վայրկյանի լրջությունից, նստում է իր տեղը։ Յեվ բոլոր աշակերտները մի տեսակ միստիքական դրության մեջ ընկած՝ կամ նայում են վար, իրենց գրասեղանի սև տախտակներին, կամ պաղ, անսովորական ահով լցված մանկական աչքերը որիորդի ցնցվող արմունկներին և կարճ մազերին հառած՝ սպասում են ստեղծված կացության վախճանին։

Մի յերկու վայրկյան հեծկլտալուց հետո որ. Նվարդը հանկարծ վեր է թռչում տեղից և թեթև քայլով, գլուխն ու ամբողջ մարմինը տարորինակ ցնցելով, վազում է դասարանից դուրս։ Աշակերտները հասկանում են, վոր որ. Նվարդը գնում է ուսուցչանոց, տեսչին կանչելու։ Շլդոյի գլխին տվեք թող քռանա»—ասում է մի աշակերտ լռությունը խզելով «—Տեսուչը վոր յեկավ, բոլորիս կպատժե» շարունակում է նրա մոտ նստած ընկերը—նա, վոր ամենից շատ էր հռհռում և մտքի մեջ նախանձում էր Շլդոյին։ Յեվ ահա Շլդոյի մոտ նստած աշակերտը, տասերկու-տասներեք տարեկան չիլ Մուկուչը ձեռքն արդեն բարձրացնում է վեր, վոր իջեցնի Շլդոյի գլխին—բայց դուռը բացվում է հանկարծ և ներս է մտնում պ. Բյուզանդը՝ զայրացած, ահռելի դեմքով, իսկ նրա յետևից, աչքերը սրբելով, մտնում է որ. Նվարդը—հոգնած ու գունատ։

«—Մկրտիչ Կարապետյա՛ն, դո՛ւրս արի»—ավելի բարձր ձայնով, քան կարելի յէ յենթադրել, վոր ունի պ. Բյուզանդը,—բղավում է պ. Բյուզանդը դեռ ներս չմտած. Նա տեսավ չիլ Մուկուչի բարձրացրած ձեռքը, վոր, յեթե ինքը մի վայրկյան էլ ուշանար՝ ծանր, պիտի իջներ Շլդոյի գլխին։ Գլուխը կախ, խոնարհ՝ վախից դողացող մարմնով յելնում է չիլ Մուկուչը դուրս։ «—Մի-

սակ Հովհաննիսյան»—ավելի անուշ ձայնով կանչում է պ. Բյուզանդը. «—Դու ես դուրս արի»։ Յեվ ահա Շլդոն էս, գլուխը հոռետեսորեն քորելով, դալիս կանգնում է գրատախտակի մոտ։ Դասարանը սարսափ կտրած, չռած աչքերով սպասում է դրության վախճանին։

«Սա՞ յէր»—ցույց տալով Շլդոյին՝ հարցնում է պ. Բյուզանդը։ Որբորդը, հուզված, գլխով է անում. չի կարողանում խոսել։ «Արջ»—վրա պրծնելով բղավում է պ. Բյուզանդը. «—յես քեզ ցույց կտամ. աչքերդ կհանեմ»։ Ու փայտե քանոնի ազդեցիկ հարվածներ իջնելով Շլդոյի գլխին՝ արագ շարում է իրար յետևից գունեղ ածականներ.—«Շաշ, հիմար, իշուկ, փողոցի Թափթփուկ, լիրբ,—ինչ ասեմ, ինչ ասեմ, ինչ ասեմ»—էլի ու էլի. մի զարկը—մի ածական։ Հետո հերթը հասնում է չիլ Մուկուչին. Նա էլ, իր հերթին զանազան գեղարվեստական ածականներ ստանալով և գլխի վրա նրանց քանակը հաշվելով՝ սկսում է լաց լինել բարձրաձայն, այնպիսի անուշ մի լացով, վոր ձայնը հասնում է մինչև մոտակա փողոցը։ «—Յես դուրս կանեմ սրանց, որ. Նվարդ»—ասում է պ. Բյուզանդը՝ պարտականության առաջին մասը վերջացնելով.—«Ներողություն եմ խնդրում, վոր մինչև հիմա մնացել են դպրոցում».—«—Թող էլի մնան, պ. Բյուզանդ»—վողբերգական ձայնով ու պսպղուն, գոհ աչքերը տեսչի դեմքին հառած—խնդրում է որ. Նվարդը. «—Ի՞նչպես կարելի յէ դուրս անել յերեխաներին. դա հակամանկավարժական է և անվայել քաղաքակիրթ ուսուցչին»—մտքում մտածում է նա, բայց վախենում է իր այդ միտքը բարձրաձայն արտահայտել պ. Բյուզանդին։ Բայց անընկճելի պ. Բյուզանդը, հրամայելով պատժված աշակերտներին իսկույն տուն գնալ և ծնողներին կանչել,—առանց պատասխանելու յելնում է դուրս։ Աշակերտները վոտքի յեն կանգնում և մնում են կանգնած, մինչև որ. Նվարդը դրամատիքական ձայնով ասում է.—«Նստեցեք»։ —«Բաց արեք գրքերդ»—ասում է մի վայրկյան հետո, ճակատը շփելով, որ. Նվարդը։ «—Մարտիրոսյան, կարդա»—ասում է նա։ Յեվ դասն սկսում է նայիրյան դպրոցում՝ տխուր, անհետաքրք-

քիր, իսկ որ. Նվարդի գլուխը սկսում է նվալ և մտքերը նրա փոքրիկ գլխում սկսում են պար, միապաղաղ հորանջել։

Արևը զենիթից սկսում է իջնել, ժամը մոտենում է յերեքին, իսկ ղահվեճի Սեթոն դեռ վոչ մի մախալ սուրճ չի կարողացել ծախել։ «Թարս որ է, գիշերը ձախ եմ քնացեր»—մտածում է նա խանութի առաջը նստած և ծխախոտ է վոլորում, վոր քունը չտանի։ Որորվելով, ուսը տարօրինակ ցնցելով մոտենում է նրան Արամարշը, վոր ձանձրությունից փակել է խանութը և դռան ապակուն, ինչպես այդ ընդունված է Յեվրոպայում, փակցրել է սպիտակ մի թուղթ՝ վրան գրված «փակ է. գնացել եմ ճաշի»։ Այդ քաղաքավարի արարքով նա միանգամից կարողացել է հասնել յերկու նպատակի. Նախ, վոր իր խանութը յեվրոպական խանութ է իր բոլոր կողմերով, յերկրորդ՝ վոր ինքը, վորպես իսկական յեվրոպացի, ճաշում է ժամը չորսին։ Թեկուզ վոչ մի կոպեկի ապրանք չի կարողացել ծախել պ. Արամարշը, բայց գոհ է, վոր հնարավորություն ունի և գիտե յեվրոպացի լինել։ «—Տո, գռեհիկ գոմեշ, ինչ ես արևի տակ նստե. երթանք թուղթ խաղանք»—ասում է նա, մոտենալով ղահվեճի Սեթոյին։ «—Նարդի կուզես նե—կխաղամ, թուղթ չեմ խաղար» պատասխանում է ղահվեճին և քանի վոր Արամարշը չի հակաճառում՝ նա նույնպես փակում է խանութը, բայց թուղթ չի փակցնում դռանը, վոր գնում է ճաշի—և յերկուսով միասին գնում են Տելեֆոն Սեթոյի սրճարանը—նարդի խաղալու։

Յերբ նրանք թե-թևի տված, ձանձրույթից փրկվածների գոհունակությամբ մտնում են Տելեֆոն Սեթոյի սրճարանը՝ այնտեղ հանդիպում են մի շարք հարևանների, վորոնք նույնպես թուղթ, դոմինո կամ նարդի յեն խաղում՝ նայած տրամադրության։ Դագաղագործ Յենոքը և Կինտաուրի Սիմոնը նախընտրել են թուղթը և յերկուսով «փաստոն» են խաղում ձմերուկի վրա. ով վոր տարվի—մի ձմերուկ գնի։ Նրանց գլխին հա-

վաքվել են՝ Հաջի Ռնիկ Մանուկոֆ եֆենդին, մանրավաճառ Գոգոս Կոլոպոտյանը, կաթոլիկ Սիմոնը, գինեվաճառ Նիկոլ Արզումանովը և իրենց տաք բացականչություններով մասնակցում են նրանց խաղին ու մի առանձին հետաքրքրությամբ մթնոլորտ են ստեղծում Յեզոոի սրճարանում։ Նրանց այդ վոգեվորված համաքույթը տեսնելով դաhվեճի Սեթոն և պ. Արոմարշը էս, մոռանալով իրենց նարդի խաղալու ցանկությունը՝ միանում են նրանց։

Յերբ որը սկսում է կամաց-կամաց մթնել՝ հերթով, իրար յետևից, սկսում են փակվել Լորիս-Մելիքյան փողոցի ցածլիկ խանութները։ Ամենից առաջ դագաղագործ Յենոք Կարապետյանն է փակում իր խանութը ներսից և ինքը մնում է խանութում։ Այդ հարգելի նայիրցին տուն չունենալու պատճառով քնում է իր գործատեղում, իր շինած դ ա գ ա ղ ն ե ր ի ց մ ե կ ո ւ մ. այդ բանը ամբողջ քաղաքը գիտե և անա հենց այդ է պատճառը, վոր նրան քաղաքում անվանում են մ ե ռ ե լ ի Յենոք, իսկ յերեխաները վախենում են նրանից և չեն սիրում անցնել դագաղագործի խանութի առաջից։ Յերկրորդ խանութպանը դահվեճի Սեթոն է, վոր փակում է իր խանութը և նույնպես ընտանիք չունենալու պատճառով՝ գնում է քաղաքային այգի՝ զբոսնելու և հարսնացու ընտրելու։ Հետո Հաջի Ռնիկ եֆենդի Մանուկոֆն է իր խանութը փակում—և ահա նրանից հետո բոլորը, իրար յետևից խանութները փակելով. գնում են՝ վորը տուն, վորը քաղաքային այգի, վորն էլ նորից Յեզոո Համբարձումովի սրճարանն է գնում, վոր յերեկոյան հանգիստը այնտեղ վայելե—թղթախաղով, կամ ուրիշի խաղին նայելով։ Յեվ այսպես կամաց-կամաց սկսում է բոլորովին ամայանալ. մութն էլ, անդեմ ու անխորհուրդ, ծույլ, հորանջող պառավի մի նման, իջնում է ու նստում փողոցների վրա և տեղ-տեղ տարտամ, վախկոտի աչքերի պես թարթող կրակներ են միայն յենթադրել տալիս, վոր այդտեղ դարերից ի վեր ապրում է ու գվալաճանում նայիրյան մի քաղաք։

Վերջ առաջին մասի

ՄԱՍՆ ՅԵՐԿՐՈՐԴ

ԴԵՊԻ ՆԱՅԻՐԻ

Հնամյա, հին մի յերազ,
յերկիր մի՝ դարերի ուրու…

Յե. Չարենց, *«Ամենապոեմ»*

Սույն այս վեպիս առաջին մասում յես փորձեցի պատկերել Նայիրյան այդ քաղաքն իր բոլոր հին ու նոր հրաշալիքներով, ջանացի տալ նրա բնակիչների կենցաղը, կամ, ավելի լավ է ասել — կ ե ն ց ա ղ ա յ ի ն կ ո լ ո ր ի տ ը, ընդհանուր գույնը միայն, և ո՛չ թե մանրամասնը — այնպես, ինչպես տեսել եմ Նայիրյան այդ քաղաքը յես, ինչպես պատկերացել է նա ինձ, այդ քաղաքը ճանաչողիս։ Սրտի անհուն թրթիռով յես ձեռնամուխ յեղա նրա նկարագրությանը, սիրելի ընթերցող, վորովհետև սիրելի յե նա ինձ, վորպես մանկության որորան, և ծանոթ են նրա բնակիչներն ինձ, ինչպես հինգ մատս, կամ այս գրիչս, վորով գրում եմ հիմա։ Կրկնում եմ՝ սրտի բուռն տրոփով սկսեցի գրել Նայիրյան այդ քաղաքի պատմությունը, բայց հիմա, յերբ ուզում եմ անցնել նրա հետագա որերին ու դեպքերին, պատկերել նրա որերն ու վաստակները — դառն, ծանր մի մորմոք թանձրանում է սրտիս, ուռում է սիրտս։ Մի անգամ չգիտեմ շուկա՞ եյի գնում, թե վերադառնում եյի շուկայից, յերբ անհեթեթ մի պատկեր գրավեց ուշադրությունս։ Փողոցի մեջտեղով գնում եր բավականին տարիքոտ, միջահասակ մի մարդ, վոր արտաքինով նման եր գավառցի վարժապետի, կամ փոստ-հեռագրային ցրիչի, և, գլխի վրա դրած, տանում եր — յերևակայո՞ւմ եք — դեղնավուն մի դագաղ։ Անձրև եր, ցեխոտ փողոց. ցեխը հ ա ր ի ս ա յ ի նման ճպճպում, կպչում եր վոտքերին. և այդ մարդը ահա, գավառցի այդ վարժապետը կամ ցրիչը, տանում եր, գլխի վրա դրած, իրենից շատ ավելի ծանր և մեծ մի դագաղ։ Դեմքը չեր յերևում, բայց մեջքի և ծնկների լարված կորությունը խիստ արտահայտիչ կերպով ցուցադրում եյին, վոր նա դժվարությամբ է տանում այդ բեռը, բայց ինչ գնով էլ լինի ուզում է տեղ հասցնի,

միայն թե հասցնի։ Յերևի մայրն եր մահացել, կամ կինը, կամ որդին—ով իմանա։ Նա լարել եր ուժերը. դագաղի ծանրությունից կզակը կպել եր կրծքին. մեջքը չեր կարողանում միևնույն կորությամբ պահել, այնպես վոր դագաղը, մերթ առաջ, մերթ յետ կշռվելով, քսվում եր ցեխերին։ Ինչի՞ համար եր այդպես նա չարչարվում, ինչի՞ պիտի հանդիպեր այդ խեղճ վարժապետը տեղ հասնելիս...—Մի սիրած—դե՛, յեթե վոչ սիրած, գոնե հարազատ մեռելի, վորին նույն այդ դագաղը դրած պիտի հանձներ հողին—ահա թե ինչու չեր այդպես անմխիթար, այդպես անողնական ջանքերով, դագաղը նվացող վողնաշարին հպած, դեպի տուն շտապում այդ տխուր վարժապետը... Այդպես էլ յես, ընթերցող, ճիշտ այդ վարժապետի նման. ու՞ր եմ գնում։ Ինչու՞ յեմ հպել—բայց վո՛չ թե վողնաշարիս, այլ գանգիս ուղեղին դագաղանման այս բեռը, և ուզում եմ տեղ հասցնեմ... ու՞ր։ Յեվ մի՞թե այնտեղ, տքնությանս վերջում, վորպես նվիրական, սիրելի մի մեռել—չպիտի՞ պատկերանա ինձ Յերկիրը Նայիրի, վորին դամբանելու համար տանում եմ յես ահա խոհերիս տաղաշար դագաղը—տանում եմ կամքիս հակառակ, վորովհետև, այո, հարկավոր է տանել։ Չե՞ վոր, այո՛—թաղել է հարկավոր բոլոր մեռելներին, վորքան էլ նրանք սիրելի և հարազատ լինեն. չե՞ վոր, միևնույն է, հակառակ դեպքում կքայքայվեն նոքա՝ գազրելի և ախտաբույր, այնպես վոր անգամ սիրահարը կզզվի պաշտելի աճյունից։ Թողնենք, ուրեմն, մի կողմ լիրիկական զեղումը, սիրելի ընթերցող, և անցնենք Նայիրյան այդ քաղաքի որերին և դեպքերին։ Յեվ թող բացվի մեր դեմ որերի և մարդկանց «վաստակոց և մեծագործությանց» խորհուրդում «յերկիրը հազարամյա»—հնամյա Նայիրին...

Վորպես առաջին մասում, ինչպես ասացի, յես ձգտեցի պատկերել կենցաղային այն բնույթը, յերանգը, վոր ուներ Նայիրյան այդ քաղաքը «խաղաղ ժամանակ»։ Ուժերս ներածի համեմատ՝ յես նախ նկարագրեցի քաղաքը՝ հին ու նոր հրաշալիքներով, և ապա անցա բնակիչներին, վորոնց ամեն մեկի մասին

այնքանը միայն կարողացա ասել, վորքանի վոր, գուցե, արժանի յեն նրանք։ Գուցե դու կուզեյիր, սիրելի ընթերցող, վոր յես յեվրոպական անվանի հեղինակներին հետևելով, մանրամասն վերլուծության յենթարկեյի «հերոսներիս» հոգեբանությունը, մանրազննին պատմեյի, թե ինչպիսի նրբին «ապրումներ» եր ունենում, ասենք, գեներալ Ալոշը, յերբ նահանգապետը իջևանում եր նրա հոյակապ բնակարանը, կամ, ասենք, հոգեկան ինչ ալեկոծումներ ունեցավ քաղաքային բժիշկ Սերգեյ Կասպարիչը կնոջը թաղելիս... Բայց այս առթիվ յես, մի անգամ ընդ միշտ, հարկադրված եմ ասել, վոր սույն իմ այս վեպում չկա և յերևի չի յել լինելու և վոչ մի «հերոս»—և այս տխուր հանգամանքում, կարծում եմ, վոչ թե յես եմ մեղավոր, այլ Նայիրյան այդ քաղաքը, վորովհետև—ինչ, ինչ «հերոսներ» կարող են դուրս գալ, ասենք, գեներալ Ալոշից, կամ Համո Համբարձումովիչից—Մազութի Համոյից... Գուցե Մեռելի Յեննո՞քը հարմար «հերոս» լիներ, կամ Կինտաուրի Սիմո՞նը, կամ, վերջապես—Տելեֆոն Սեթո՞ն... Է, թողնենք այս հարցը, սիրելի ընթերցող, և անցնենք, քանի շուտ է, մեր ընտրած քաղաքի «որերին ու վաստակներին» և, ով գիտե, կարող է պատահի, վոր դեպքերի բերումով այդ աննշան քաղաքի աննշան բնակիչներից շատ շատերը հանկարծ դուրս գան հերոսապանծ հերոսներ—դժբախտ ու հերոսական որերի բերումով՝ դժբախտանան ու հերոսանան...

... Իսկ դժբախտ որեր շատ անցան հետագայում ինչպես այդ քաղաքի, նմանապես և ամբողջ Նայիրիի գլխից—և չեյին, չեյին կարող, այո՛ այդ դժբախտ որերը չծնել անձնավորություններ՝ դժբախտ ու հերոսական։ Չե՞ր կարող, ո, վո՛չ, այդ դժբախտ որերի, տարիների հրից, չելնել, հերոսական, չհառնել, պայծառ ու սրբացած—Նայիրյան Վոգին. . . . .

. . . .

Ինչպես այսորվա ճաշս, սիրելի ընթերցող, յես հիմա ամենայն մանրամասնությամբ հիշում եմ պատմական այն որը—1914

թվականի հուլիսյան կիրակիներից մեկը—Նայիրյան այդ քաղաքում։ Սույն այս վայրկյանիս, յերբ յես մտադրություն ունեմ մանրամասն նկարագրել այդ նշանավոր օրվա ամբողջ անցուդարձը—տարիների մշուշից, կամ, ինչպես բանաստեղծը կասեր, տարիների մռայլ մոխիրների տակից յելնում են ահա և նկարվում են աչքերիս առաջ այն նշանավոր օրվա դեպքերն ու պատկերները։ Պարզ՝ վորոշ, կարծես այդ ամբողջը յերեկ, կամ մի ժամ առաջ կատարված լինի—յես տեսնում եմ ահա Մազութի Համոյին՝ քաղաքային այգու ակումբի առաջ, թղթախաղի կանաչ սեղանի վրայից, ճառ ասելիս... Պարզ, վորոշ, կարծես թե հիմա, սույն այս վայրկյանիս կատարվելիս լինի—յես լըսում եմ ահա Մազութի Համոյի հատու ձայնը, Մազութի Համոյի հզոր առոգանությունը։ Խավարի, այո, սենյակիս գիշերային խավարի միջից նայում են ահա ինձ Համո Համբարձումովիչի կայծկլտող աչքերը և սիրտս թպրտալ ե սկսում անորոշ մի հուզմունքից, սիրտս, տագնապալից, զարկել ե սկսում, ինչպես ելեքտրական զանգի արծաթազօծ լեզվակ։ Յեվ յերևակայությունըս, առաջ վազելով, արդեն նկարում ե, անողոք դահիճի մի նըման, Մազութի Համոյին՝ փայտե մի մանեկենի նման կախաղանից կախված... «Խեղճ, խեղճ Համո...» փսփսում ե սիրտս, լացակումած—և յես գրիչս ցած եմ դնում, վոր սիրտս հանգստանա և յես հնարավորություն ունենամ պատմությունս շարունակելու։

Ծույլ, խաղաղ, կիրակնօրյա իր հանգիստն եր վայելում Նայիրյան այդ քաղաքն այդ առավոտ։ Ծլնգում եր Առաքելոց յեկեղեցու զանգը՝ խաղաղ ու անվրդով։ Ով սիրում եր աղոթքը—գնացել եր յեկեղեցի, բայց քաղաքացիների մեծ մասը այգում եր գտնվում, կամ նստած փակ խանութների առաջ՝ զբաղված եր առօրյա զրույցով։ Կային ել մարդիկ, վոր հավաքվել եյին Տելեֆոն Սեթոյի կամ Յեգոռ Արզումանովի սըրճարաններում։ Կային ել, վոր հավաքվել եյին այգու ակումբում։ Ակումբում այդ օրը հավաքվել եյին՝ քաղաքային բժիշկ

Սերգե Կասպարիչը, Ոսեփ Նարիմանովը—հաշտարար դատավորը—Արամ Անտոնիչը—դպրոցի տեսուչը, պ. Մարուքեն, Կինտաուրի Սիմոնը, վորը սիրում եր «մեծերի հետ նստել», անգլիագետ վաճառական Հաջի Ոննիկ Մանուկոֆ Ըֆենդին և ելի մի քանի քաղաքացիներ—թուղթ եյին խաղում։ Խաղում եյին—«պրաֆերանս», «մակաո», «բակարա»—սիրում եյին խաղալ։ Խաղում եյին, ըստ սովորության, լուռ ու հանդիսավոր, մերթ ընդ մերթ միայն «փաս», «28», «տալիա» և նման բացականչություններով խզելով լռությունը։ Բայց, չնայած խաղի մեջ գլխովին ընկղմված լինելուն, խաղընկերներից շատերը, ինչպես, մանավանդ, Սերգե Կասպարիչը և Ոսեփ Նարիմանովը, լավ չեյին զգում իրենց. նրանց թվում եր, վոր «փչում ե», չնայած հուլիսյան հաճելի յեղանակին։ Շուտ-շուտ դռանն եյին նայում, կամ պատուհանին։ Բանը նրանումն ե, վոր պակասում եր սովորական մի «բան», վորին ընտելացել եյին բոլորը—յեթե միայն «բան» կարելի յե ասել կենդանի և այն ել պատկառելի մարդուն։—Պակասում եր գեներալ Ալոշը։ Առանց նրան կյանք չկար ակումբում, մանավանդ վոր, նրա հետ մեկտեղ,պակասում եր նաև ակումբի «յերկրորդ հոգին»—ակումբի կենտրոնը — Մազութի Համոն։ Դեռ խաղն սկսելուց առաջ Ոսեփ Նարիմանովը հարցրեց, այսինքն վոչ.—ակումբ մտնելով, ըստ իր մշտական սովորության, Ոսեփ Նարիմանոֆն ուրախ բացականչեց –«Խորին հարգանքներս Ալոշա Նիկիտիչին...»—բայց պատասխան չստացավ այն հասարակ պատճառով, վոր Ալոշա Նիկիտիչը չկար։ Ոսեփ Նարիմանովը շվարեց։ Գլխում, մի վայրկյանում, զարթնեցին միշարք կասկածներ։ Նախ՝ դեռ յերեկ, գիշերվա ժամի չորսին ակումբից յելնելիս, գեներալ Ալոշը խոսք եր տվել առավոտյան տասին ակումբում լինել և շարունակել ընդհատված «մակաոն»։ Յերկրորդ՝ վերջերս գեներալ Ալոշը մի տեսակ «ծուռ» աչքով եր նայում Ոլգա Վասիլևնայի—Շիկահեր Դդումին. իսկ Ոլգա Վասիլևնան իրն ե, իրը, Ոսեփ Նարիմանովինը և միևնույն ժամանակ ուրիշ վոչ վոքինը չի կարող լինել։ Գեներալ Ալոշը թող այս լավ իմանա, գեներալ Ալոշը...։ Հազիվ եյին այս մտքե-

ը զարթնել Ոսեփ Նարիմանովի գլխում, յերբ Արամ Անտոնիչը, վորի կնոջ համար այնքան անհանգստանում եր նրա լավ բարեկամ հաշտարար դատավորը—ներս մտավ հեհեհե և նկատելով, վոր բոլորն արդեն անցնում են գործի—բռնեց, յետևից մոտենալով, Ոսեփ Նարիմանովի թևից և առաջարկեց նրան «մի ձեռք մակաո կամ պրաֆերանս»։—«Խորին հարգանքներս»—բացականչեց Ոսեփ Նարիմանովը սրտանց ուրախացած. —«Ի՞նչպես է Ոլգա Վասիլևնայի առողջությունը, Արամ Անտոնիչ»։ Ոսեփ Նարիմանովը նոր կարծես մտաբերեց, վոր յերեք որ է արդեն, ինչ չի տեսել Ոլգա Վասիլևնային. Իսկ յերեկ, ժամը յերեկոյան վեցին, յերբ, ըստ հին սովորության նա գնաց «այցելության» (ժամը վեցին Արամ Անտոնիչը սովորաբար դպրոցում եր լինում)—աղախինը հայտնեց, վոր Ոլգա Վասիլևնան հրամայել է վոչ վոքի չընդունել։ Այս դեպքը հիշելով արդեն մթնել եյին սկսում Ոսեփ Նարիմանովի աչքերը, արդեն ցանկանում եր հեռացնել Արամ Անտոնիչի պղպղուն աչքերից իր մշուշած աչքերը, Ոսեփ Նարիմանովը, յերբ... —«Ոլգա Վասիլևնայից ջերմագին բարևներ»—ասաց Արամ Անտոնիչը խորհրդավոր ժպտալով. և ապա, շրթունքները մոտեցնելով Ոսեփ Նարիմանովի ականջին՝ ինտիմ շշնջաց.—«Մաշան»—քաղաքի մանկաբարձուհի Ակսյոնա Մանուկովնան—«յերեկ յերդվեց, վոր այս անգամ անպայման—անպայման տղա կլինի...»։ Ոսեփ Նարիմանովի սրտից ծանրությունը, քար, ընկավ։—Իզուր չե, ուրեմն, իր յերկարամյա մտերմությունը Ոլգա Վասիլևնայի հետ—մտածեց նա զվարթացած և հայտնեց, բարեկամաբար սեղմելով Արամ Անտոնիչի ձեռքը.—«Պատիվ ունիմ կոլեչկի կնքահայրը լինելու...—հասկանում եք, Արամ Անտոնիչ, —անպայման «կոլեչկի»... —Յեվ բոլորովին հանգստացած՝ նստեցին խաղի։—«Իսկ ո՞ւր է Ալյոշա Նիկիտիչը»—հարցրեց, թուղթը բաժանել սկսելով, Արամ Անտոնիչը, մի վայրկյան անց։ Բայց բոլորն արդեն զբաղվել եյին խաղով, այնպես վոր վոչ վոք, չընայած վոր ամենքն ել զգում եյին նրա բացակայությունը, չըպատասխանեց նրան։ Բժիշկ Սերգեի Կասպարիչը միայն աչքերը կըկին դեպի պատուհանը հառեց, ուզեց ասել կարծես, վոր «փը-

չում է» այնտեղից, բայց գլխի ընկավ, վոր այդ չե անհանգստության պատճառը, և լուռ, շարունակեց խաղալ։

Յեվ ահա, ցերեկվա ժամը մոտավորապես տասներկուսին, շընչասպառ ներս ընկան գեներալ Ալոշը և Համո Համբարձումովիչը—Մագութի Համոն։ Ռումբի պես ներս ընկան գեներալ Ալոշը և Մագութի Համոն, արագ մոտեցան սեղաններին, խառնեցին թղթերը—թափեցին հատակին...։ Բոլորը վեր թռան տեղերից զարմացած ու ապշած։ Իսկ կինտաուրի Սիմոնը, չնայած վոր բոլորից շատ եր տարվել և ավելի մեծ առիթ ուներ բարկանալու—ինքը ես, անակնկալի յեկած, կարծելով, յերևի, վոր հարբած են «տղերքը»—վեր նետեց թղթերը, վոտքի թըռչելով, և բացականչեց, հիմարացած.—Ուոոմ, Ուոմմ, Ուոմմմ...

—Ի՞նչ է, ցնդե՞լ եք, գասպադա—զայրացած բացականչեց բժիշկը՝ ձեռքը սեղանին խփելով.—Ի՞նչ է պատահել։

Յեվ դեռ չեյին կարողացել ուշքի գալ մյուսները, յերբ Համո Համբարձումովիչը ձեռքը վեր բարձրացրեց, նշան անելով, վոր լսեն, և —

—Պատերազմ։—Հայտարարեց Համո Համբարձումովիչը կիսաձայն—ու տիրեց լռություն՝ ակնածանք ու զարմանք։

Գեներալ Ալոշը ես ցանկանում եր ինչ վոր բան ասել. ձեռքը վեր բարձրացրեց, բայց տիրած լռությունից ազդված՝ լռեց ու մնաց։ Արամ Անտոնիչի աչքերը հառած մնացին գեներալ Ալոշի վեր տնկած ձեռքին։ Հիմարային մի ժպիտ վախեցած քարացավ կինտաուրի Սիմոնի—Կլուբի Մեյմունի դեմքին։ Սերգեի Կասպարիչը ձեռքը շրթունքներին տարավ և, մեքենայաբար, ինչպես այդ պատահում եր բժշկի հետ ընդունելության պահերին՝ չոր, պաշտոնական հազաց։ Հետո գեներալ Ալոշը և Մագութի Համոն պատմեցին յեղելությունը, ինչպես վոր գիտեյին։ Բանից դուրս յեկավ, վոր առավոտյան ժամը յոթին-ութին յերբ Համո Համբարձումովիչը դեռ քնած է լինում, վոչինչից տեղեկություն չունենալով—գալիս հայտնում են, վոր գավառապետը խընդրում է իսկույն իր մոտ անցնել մի չափազանց կարևոր գործով։ Խնդրում է, վոր Ալոշա Նիկիտիչին ես

վերցնի։ Իսկույն հագնվում և Ալոշա Նիկիտիչի բնակարանն է վազում Մազութի Համոն։ Միասին գնում են գավառապետի բնակարանը։ Վերջինս, առավոտյան այդ անսովոր պահուն, չափազանց սիրալիր ընդունելով հյուրերին,—հայտնում է նրանց, վոր «կամոքն Աստծո և Ողոստափառ Կայսեր՝ Ռուսաստանը, հարկադրված, պատերազմ է հայտնել... այսինքն գերմանական ստոր կայսր Վիլհելմ II-ը պատերազմ է հայտնել Ռուսաստանին։ Հարկավոր է այսօր ցույցեր կազմակերպել, ասել է գավառապետը Ալոշա Նիկիտիչին և Մազութի Համոյին,—և հասկացնել ժողովրդին դեպքի մեծ նշանակությունը—դեպքի խոշորագույն նշանակությունը։

Համո Համբարձումովիչի պատմածը ունկնդիրների վրա թողեց վորոտի տպավորություն։ Բոլորը ձեռք քաշեցին թղթախաղից և, Ալոշա Նիկիտիչի առաջնորդությամբ, դուրս յեկան ակումբից։ «Պարոնայք, հարկավոր է սկսել»—ասաց Համո Համբարձումովիչը ակումբի դուռը կանգնելով։ «Ի՞նչը»—հարցրեց Կինտաուրի Սիմոնը անհանգստացած. Նրան թվաց, թե հարկավոր է... պատերազմ սկսել։ —«Այ, հիմա կտեսնես»—պատասխանեց Համո Համբարձումովիչը խորհրդավոր և կրկին մտավ ակումբ՝ Կինտաուրի Սիմոնը նրա յետևից։ Ակումբից դուրս յեկան նրանք՝ կայսեր մեծադիր նկարը բռնած, իսկ նրանց յետևից դուրս յեկավ ակումբի ծառայողը և դրեց ակումբի առաջ թղթախաղային կանաչ մի սեղան։ Կայսեր նկարը բռնեցին գեներալ Ալոշը և Ոսեփ Նարիմանովը. Մազութի Համոն բարձրացավ ու կանգնեց թղթախաղային կանաչ սեղանի վրա. Ժողովուրդը հավաքվեց։ «Պարոնա՛յք»—բացականչեց, ձեռքը վեր բարձրացնելով, Մազութի Համոն. բոլորը քար կտրեցին, մնացին բերանբաց. հրաշք էր, զարմանալի զարմանք այդ Համո Համբարձումովիչը—Մազութի Համոն...։

Հայտնեց, հայտնեց՝ թղթախաղային այդ կանաչ սեղանը պատվանդան արած՝ թղթախաղային կանաչ սեղանի անհելի բարձունքից Համո Համբարձումովիչը ներքևում խռնված նայիրցիներին պատերազմի լուրը։ Հայհոյեց՝ աչքերը կայծկլտուք

թափեցին. շանթեց իր բարձունքից գերմանական ստոր կայսր Վիլհելմ II-ին Մազութի Համոն։ Ամբոխի մեջ կանգնած մանրածախս Կոլոպոտյանին թվաց, վոր Մազութի Համոյի վոխերիմ թշնամին է, անձնական «պարտքնտերը»—գերմանական ստոր կայսրը—Վիլհելմը։ Իսկ քիչ դենը կանգնած վարսավիր Վասիլին Վիլհելմ կայսրը պատկերացավ վորպես արյունարբու մի հրեշ։ Զմռացավ հայտնել նաև Մազութի Համոն գավառապետի պատմած այն կարևոր հանգամանքը, վոր մեր ամենակարող թագավոր-կայսրը քանիցս անգամներ հեռագիր է խփել Վիլհելմին՝ առաջարկելով հաշտ-խաղաղ վերջացնել ծագած թյուրիմացությունը, բայց նրա հեռագիրները, ցավոք սրտի, մնացել են անհետևանք։ Վերջում կոչ արավ Մազութի Համոն ոգնության հասնել ընդհանուր հայրենիքին այդ աղետալի ժամին՝ հոժարակամ զոհել, չխնայել անձնական փոքրիկ զոհաբերությունները մեծ Հայրենիքին։ «Կեցցե, ուրեմն, մեր թագավոր կայսրը և պանծալի բանակը. կորչի ստոր կայսր Վիլհելմ II-ը ուռա՜՜՜,»—վերջացրեց իր պատմական այդ ճառը Մազութի Համոն և, ի մեծ զարմանս նրա—տիրեց լռություն։ Զկարծեք սակայն, վոր ժողովուրդը դիտմամբ չձայնակցեց. ի հարկե, վոչ. ժողովուրդը չգիտեր, դեռ չէր սովորել, վոր նման դեպքերում հարկավոր է արձագանքել։ Բայց ահա ոգնության յեկավ իր բացառիկ դիրքով գեներալ Ալոշը. իր նման չաղ ծերուկից բավականին անսպասելի ճարպիկությամբ՝ ցատկեց կանգնեց Մազութի Համոյի կողքին, կանաչ սեղանի վրա, գեներալ Ալոշը. «ուռա՜՜՜»—բացականչեց Գեներալ Ալոշը գլխարկը թափահարելով. Սերգեյ Կասպարիչը, Ոսեփ Նարիմանովը և Կինտաուրի Սիմոնը ահաձայն կրկնեցին—և արդեն ծայրե ի ծայր այգին թնդում էր բացականչությունից, այնպես վոր նույնիսկ պ. Մարուքեն, վոր արդեն բաժանվել էր խաղընկերներից և խառնվել էր ժողովրդին, մի վայրկյան շփոթվեց՝ քիչ մնաց ինքն էլ գլխարկը հաներ և գազանանման մռնչար։ Բայց պ. Մարուքեն, ի հարկե, այդ բանը չարավ. առաջին իսկ որից ինքնուրույն դիրք բռնեց պ. Մարուքեն դեպի կատարվող անցքերը— բայց այս մասին հետո։

Դեռ թնդում էր այգին ուրախ բացականչություններից, յերբ հնչեց գավառապետի ուղարկած զինվորական յերաժշտախումբը. զինվորական յերաժշտախումբը նվագում է «Բոժե ցարյա»։ Բոլորը գլխարկներն հանեցին. յերաժշտախումբը լռեց։ «Կեցցե մեր սիրելի կայսր Նիկոլա II-ը.—ուռա՜ա՜ա՜»—նետեց Ոսեփ Նարիմանովը դեպի հասարակությունը և նորից, կանաչ սեղանի վրայից, չափ տալին, ձեռքերը թափահարելով, գեներալ Ալոշը և Մազութի Համոն։ Ապա, բավականին չափ տալուց և բղավելուց հետո, ցած իջան գեներալ Ալոշը և Մազութի Համոն, և ահա, յերկու այդ պատկառելի նայիրցիների առաջնորդությամբ, քաղաքացիների թափորը դուրս յեկավ այգուց և շարժվեց դեպի մեծ փողոցը՝ գավառապետի բնակարանը։

Յերբ թափորը, զինվորական յերաժշտախմբի նվագակցությամբ, անցնում էր Տելեֆոն Սեթոյի և Յեզոռ Արզումանովի սրճարանների մոտով—նրանցում հավաքված նայիրցիները, վոր զբաղված էին թուղթ, դոմինո, կամ նարդի խաղալով, դուրս թափվեցին և, մինչև թափորի հեռանալը, մնացին կանգնած սրճարանների առաջ։ «Ե՞ս ի՞նչ զալաբալըղ է էլի»—հարցրեց Մեռելի Յենոքը՝ դինների աղջիկը ձեռին։ «Ելի հացը պիտի թանգըն ա»—պատասխանեց կտրուկ Տելեֆոն Սեթոն և ներս մտավ սրճարանը գլուխն օրորելով։ «Հե՜չ չեմ հասկընա, թե յանի ընչի յե ես զուռնա-նաղարեն» —ասաց նա սրճարանում՝ վոչ թե մասնավորապես մեկին, այլ ընդհանուրին դիմելով, բայց պատասխան չստացավ, վորովհետև դեռ դուրսն էին բոլորը, նայում էին թափորին։ «Ելի հացը պիտի թանգընա, էդ զուռնենե կփչեն» կրկնեց նա իր խոսքը, յերբ ներս մտան նորից այցելուները՝ ընդհատված խաղը շարունակելու։—«Ըրը ի՞նչ պտի էղնի»—պատասխանեց նրան Քոռ Արութը,—և նայիրցիները, խորհրդավոր, գլուխներն օրորեցին։ Սրճարանում յեղածներից մի քանիսը սակայն, ինչպես պ. Արոմարշը, ժանրավաճառ «Ֆռանգը», Կաթոլիկ Դանելը և ուրիշները, տեսնելով, վոր թափորն առաջնորդում են այնպիսի պատկառելի նայիրցիներ, ինչպիսիք են գեներալ Ալոշը և Մազութի Համոն,—իրենք էլ խառ-

նըվեցին թափորին, գնացին հոսանքով։ Շուտով հայտնի յեղավ ամենքին, վոր գնում են գավառապետին իրենց քաղաքացիական պատրաստակամությունը հայտնելու, իրենց հպատակությունը,—և պ. Արոմարշը գտավ, վոր դա միանգամայն անհրաժեշտ է, անհրաժեշտ ու ցանկալի։ «Աշես մինչև քանի՞ տարեկանը պիտի կանչեն»—հարցրեց Կաթոլիկ Դանելը մտահոգված. «Վո՞վ գիտե, նայած հանգամանքին» —խորհրդավոր պատասխանեց Արոմարշը և յերկու խոսակիցներն էլ, կարծես թե, տխրեցին. լուռ քայլում էին՝ աչքերը սեփական կոշիկներին հառած։

Կիրակի, շոգ օր էր. արևը փայլում էր վոսկեգույն. յերկինքը, պարզ, անամպ՝ կործվել էր քաղաքի վրա, վորպես կապույտ ափսե։ Նվագում էր յերաժշտախումբը, մարդիկ, կիրակնորյա գույնզգույն շորերով, հետևում էին նրան. և ամբոխի մեջ խռնված, մեծ մասամբ յերաժշտախմբի առաջն ընկած յերեխաներին զվարթ խրախճան էր թվում անհասկանալի այդ յերթը։ Տաս-տասներկու տարեկան մի տղա, Հաջի Ոննիկ եֆենդի Մանուկոֆի «պզտիկը», վոր հայտնի յեր բոլորին իր չար բնավորությամբ—քայլում էր, հաղթական, թմբկահարի կողքից և, իրեն զինվորականի նմանեցնելով, չափ էր տալիս՝ «Մե՛կ-յերկո՛ւ, մե՛կ-յերկո՛ւ, մե՛կ-յերկո՛ւ»։ Թափորը վերջապես մոտեցավ գավառապետի բնակարանին։ Յերաժշտախումբը նվագեց «Բոժե ցարյա», գավառապետը յելավ պատշգամբ։ «Ուռա՜» բացականչեց ամբոխը՝ գեներալ Ալոշի ղեկավարությամբ։ Ապա տիրեց լռություն՝ մեռելային սարսափ։ Բոլորի աչքերը մեխվեցին գավառապետին։ Նա նիհար, բարձրահասակ, բարակ ձեռնափայտ է կարծես՝ ծայրին սոխի գլուխ։ Մի-յերկու վայրկյան նայում է վերևից, պատշգամբից, ներքևում հավաքված ամբոխին բարձրահասակ գավառապետը։ Ձեռքը բերանին է տանում՝ հազում է յերևի, և ապա— չոր, կտրուկ, զինվորականին վայել հատու, հաստատ ձայնով սկսում է խոսել։ Պատերազմ։ Կայսր։ Վիլհելմ II։ Մեր պարտքն է ծառայել Հայրենիքին ու գահին։ Կեցցե։ Կորչի։ Ուռա՜։

Նորից արձագանքում է ամբոխը, նորից նվագում է յերա-

ժլշտախումբը «Բոժե ցարյա»։ Յեվ ահա—Նորից դուրս է գալիս... Մագութի Համոն։ Քաղաքացիների դեմքը փայլում է պարծանքից, փթթում է նայիրցիների դեմքը, վորպես բացված մի վարդ։ Ի՞նչ պիտի աներ, ասացեք խնդրեմ, Նայիրյան այդ քաղաքը, յեթե չլիներ Համո Համբարձումովիչը, այդ «Լույսի» կառավարիչ Մագութի Համոն։ Կկորչեր, վոտնատակ կլիներ՝ կթաղվեր ազատության անսահման խավարում։ Ամեն տեղ նա յեր, ամեն դժվարին դեպքերում նա պիտի, միայն նա, սայլը ցեխից հաներ։ Այդպես ել այժմ։ Քաղաքացիների կողմից նա, Մագութի Համոն, ամենայն պատրաստակամություն հայտնեց մինչև վերջին կաթիլ արյունը կռվելու՝ հանուն Գահի և Հայրենյաց։ Գիտեր, հասկանում եր Համո Համբարձումովիչը, թե վորտեղ ինչ լեզվով է հարկավոր խոսել։ Ուժի լեզու ուներ Համո Համբարձումովիչը—Մագութի Համոն։

Մագութի Համոյից հետո շնորհակալություն հայտնեց յերախտապարտ քաղաքացիներին գավառապետը և ապա առաջարկեց ցրվել տները և զբաղվել առօրյա գործերով։ Գեներալ Ալոշը, Համո Համբարձումովիչը, Ոսեփ Նարիմանովը և բժիշկը հրավիրվեցին վեր՝ ճաշի։ Ժողովուրդը ցրվեց. գնացին՝ վո՛րը տուն, ճաշի, վո՛րը Յեգոր Արզումանովի, կամ Տելեֆոն Սեթոյի սրճարանը, վոմանք ել կրկին քաղաքային այգին վերադարձան՝ օրվա մնացած մասը այնտեղ անցկացնելու։

Այսպիսի ահա շուքով ու հանդիսավորությամբ դիմավորեց նայիրյան այդ քաղաքը հետագայում Համաշխարհային Պատերազմ կոչված արյունալի հյուրին, դիմավորեց, ինչպես այդ վայել եր ամեն մի իսկական քաղաքի, խորին աչալրջությամբ,—և այդ հանգամանքում քաղաքը պարտական եր կրկին նրան, իր արժանի զավակին—Համո Համբարձումովիչ Աստատուրովին—Մագութի Համոյին։

Հաջորդ օրը, յերկուշաբթի, բոլորը, ինչպես միշտ, արթնացան առավոտ մութլուսուն և գնացին գործի։ Վոչինչ չեր փոխվել, վոչինչ չեր կատարվել, յեթե միայն փոփոխություն չհամարենք այն հասարակ հանգամանքը, վոր գեներալ Ալոշը, Մագութի Համոն և ընկերները այդ առավոտ մի փոքր հոգնած եյին զգում իրենց, մի փոքր կոտրված, ինչպես այդ լինում է սովորաբար լավ քեֆերից հետո։ Իսկ քաղաքացիների մեծ տոկոսին, մանավանդ առևտրական փողոցի գործնական ներկայացուցիչներին, այնպես եր թվում, թե պատերազմի մասին յերեկ, կիրակի օրը յեղած բոլոր զրույցները վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ—կիրակնօրյա ներելի հանաքներ. անցավ կիրակին, յեկավ յերկուշաբթին՝ բավական է. թույլ տվեք զբաղվենք հոգսերով։ Ի հարկե, խոսում եյին մեկ-մեկ և պատերազմի առթիվ, բայց խոսում եյին այնպես, ի միջի այլոց, վորպես իրենց չվերաբերող մի բանի մասին։ Այդպես եր—առաջին, յերկրորդ, յերրորդ օրը, այդպես եր առաջին շաբաթվա ընթացքում, բայց կամաց կամաց հեռու պատերազմը սկսեց նկատելի դառնալ նույնիսկ Նայիրյան հեռու այդ քաղաքի, այո, ամեն ինչում—և նույնիսկ մանրածախս Կոլոպոտյանը և Մեռելի Յենոքը սկսեցին զգալ իրենց շրջապատում անսովոր մի մթնոլորտ, անհասկանալի մի փոփոխություն։ Բայց որերում ու ժամանակներում պատերազմը հայտարարվելու առաջին իսկ վայրկյանից կատարված փոփոխությունը բոլորից առաջ պ. Մարուքեն զգաց Նայիրյան այդ քաղաքում և այն ել հենց յերկրորդ օրը, յերկուշաբթի առավոտ—և ահա թե վոնց։

Յերբ, ըստ իր ամենօրյա սովորության (իսկ պ. Մարուքեն բացի իր այս միակ սովորությունից չուներ, ընդհանրապես, և վոչ մի սովորություն)—վարսավիր Վասիլի վարսավիրանոցը մտավ և, նստելով դեղնավուն հայելու առաջ, դեմքը, հլու, հանձնեց վարսավիրի թավ, կակուղ խոզանակին պ. Մարուքեն—վարսավիր Վասիլը, սապոնոտ խոզանակը թեթև սահեցնելով պ. Մարուքեյի այտի վրա՝ հարցրեց. «Երեկ եդ ի՞նչ եր, պ. Մարուքե. տեսա՞ր Մագութի Համոյին... Ուժի պես կխոսեր անիծածը»։ Պ. Մարուքեն չպատասխանեց։ Տրամադրությունը վատ եր՝ գիշերը չեր քնել։ Յերեկոյան յոթից մինչև գիշերվա յերեքը պրաֆերանս եր խաղացել այգու ակումբում Արամ Անտոնիչի, Կինտաուրի Սիմոնի և ելի սատանան գիտե, թե ում հետ («շեֆերը» չկային. Նրանք, ինչպես գիտենք, ճա-

չի էին հրավիրվել գավառապետի բնակարանը և այդ ճաշը, անհասկանալի պատճառով, տևել էր մինչև գիշերվա տասնըմեկը...)։ Բայց բանը նրանց ճաշը չէր, ինարկե, պ. Մարուքեն թքել կը կամենար նրանց ճաշի վրա, պ. Մարուքեն հասկանում էր, ինարկե, այդ ճաշի իմաստը. գավառապետի «տ ա կ լ ի զ ա տ ո ր ն ե ր ի» լ ա կ ա ծ «Մ ա դ ի ր ը» չէր նրա մռայլության պատճառը, այլ այն, վոր նա յերեկոյան խաղում տարվել էր Արամ Անտոնիչին մի խոշոր գումար և չէր կարողացել վճարել, վորովհետև չէր ունեցել մոտը։ Պ. Մարուքեն ինքը առաջինը չէր սիրում «ն ի ս ի ա» խաղալ, բայց ավելի ևս դեմ էր դրան Արամ Անտոնիչը, բայց յերեկոյան դեպքը կատարվեց թյուրիմացաբար, առանց իր իմանալուն. ինքն էլ չհասկացավ, թե ինչպես «տ ա լ ի ա յ ի» վերջում ինքը տարված դուրս յեկավ չորս հարյուր յոթը ռուբլի, այն ինչ մոտը կար ընդամենը հարյուր իննսուն յերկու ռուբլի։ «Յ ո ր ղ ա ն ի դ չ ա փ ը գ ի տ ե ն ա ս»—ասել էր, բարկացած. Արամ Անտոնիչը պ. Մարուքեյին, յերբ տեսել էր, վոր վերջինս իր տարված գումարը չունի։ «Ն ե ր ո ղ ո ւ թ յ ո ւ ն, վ ա ղ ը կ վ ճ ա ր ե մ» պատասխանել էր պ. Մարուքեն քաղաքավարի և շտապ դուրս էր յեկել ակումբից՝ յետևից լսելով Արամ Անտոնիչի հեհոցը և կինտաուրի Սիմոնի, այդ կ լ ո ւ բ ի Մ ե յ մ ո ւ ն ի սարկական արձագանքը...։ Մեծ ինքնասիրություն ուներ պ. Մարուքեն և սիրում էր ամեն ինչում «գերմանացի» լինել, այնպես վոր այդ դեպքը թողել էր նրա վրա անուելի տպավորություն, վոչնչացրել էր նրան, հավասարել էր գետնին։ Գունաթափ յեկել էր տուն և յերեսն ի վայր ընկել էր անկողնու վրա. մինչև առավոտվա ծեգը մնացել էր այդպես։ Բորբոքված ուղեղում մինչև առավոտվա ծեգը զանազան զուգորդությամբ ու կարգերով շարվել էին—թ վ ե ր, թ վ ե ր, գ ո ւ յ ն զ գ ո ւ յ ն թ ղ թ ա դ ր ա մ ն ե ր. խ ա ղ ա թ ղ թ ե ր։ Գլուխը ցավում էր հոգնությունից. ուղեղը մշուշի յեր նման, ծփում էր, ծանր, մութ, ծփում էր ուղեղը. և, տարբեր ձևերով ու կարգով, շարվում էին ուղեղի միջով—թ վ ե ր, թ վ ե ր, թ վ ե ր. գ ո ւ յ ն զ գ ո ւ յ ն թ ղ թ ա դ ր ա մ ն ե ր. խ ա ղ ա թ ղ թ ե ր։ Պ. Մարուքեն վոչ մի ձեռք չունի. պ. Մարուքեն յերբեք չի յերկարել իր վոտքերը վերմակից ավելի. կգտնի, այսոր և եթ կգտնի

պ. Մարուքեն այդ խղճուկ կոպեկները և կշպրտի այդ չ տ ե ս ի դեմքին։ Յեվ այժմ էլ, դեմքը դեմ արած վարսավիր Վասիլի թավ, կակուղ ածելուն՝ հենց այդ էր մտածում, իր հոգնած ուղեղի չը հնազանդվող ճիգերով, պ. Մարուքեն. ծ ո ւ մ ն ի ց վ ե ր ց ն ի։ Դեմքը դեղնել էր, այրվել, աչքերը՝ բութ, անիմաստ՝ նայում էին—ինքն էլ չգիտեր, թե ուր. աչքերը տեսնում էին—գ ո ւ յ ն զ գ ո ւ յ ն թ ղ թ ա դ ր ա մ ն ե ր։

Վարսավիր Վասիլը—ի ն չ շ ո ւ ն ն է ր, վ ո ր չ ի մ ա ն ա ր...։ Ինարկե գիտեր, դեռ յերեկոյան լսել էր բանի յեղելությունը, բայց չէր ուզում այդ առթիվ խոսել. Նույնիսկ պ. Մարուքեյի, ըստ սովորության, «տ ր ա մ ա դ ր ո ւ թ յ ո ւ ն ը» չհարցրեց. գիտեր, վոր «վ ա տ» է—ինչ հարցներ։ Մոտեցրել էր շրթունքները, վորքան վոր կարող էր, պ. Մարուքեյի դեմքին, սահում էր—թավ, թեթև քսվելով՝ սահում էր ածելին նրա դեմքն ի վար։ Լուռ էր, տոթ ու հանգիստ. լսվում էր վարսավիրի դանդաղ շնչառությունը—ու գոլ, կպչող, բաղանիքի շոգիի նման խեղդող ալիքներով քսվում էր Վասիլի շնչառությունը պ. Մարուքեյի դեմքին։ Բայց պ. Մարուքեն վոչինչ չէր նկատում, պ. Մարուքեյի հոգնած ուղեղում, ինչպես բաղանիքի մառախուղում, ոլորվում, ոլորվում էին, շոգիի գույնզգույն կաթիլների նման—գ ո ւ յ ն զ գ ո ւ յ ն թ ղ թ ա դ ր ա մ ն ե ր...

Դուռը բացվեց և ներս ընկավ—մանր, չոր, հաստատ քայլերով, կարծես յերկու ձեռնափայտ էին հատակին խփում—Հաջի Մանուկոֆ եֆենդին։ —«Հը, բ ա ր ի լ ո ւ յ ս, ե ֆ ե ն դ ի ա ղ ա ն ե ր ս, բ ա ր ա ջ ո ղ ո ւ մ»—ուրախ բացագանչեց Մանուկոֆ եֆենդին.—«Գ ո ր ծ դ ա ղ ե կ է, Վ ա ս ի՛ լ, վ ո վ չ գ ա - չ գ ա—պ. Մ ա ր ո ւ ք ե ն հ ո ս է ո ւ հ ո ս...»։

«Հ ա մ ե ց ե ք ն ս տ ի, ե ս է, կ վ ե ր ջ ա ց ն ե մ»—շրթունքները հեռացնելով պ. Մարուքեյի դեմքից, ժպտալով պատասխանեց վարսավիրը.—«Ք ե ֆ ե ր դ տ ե ղ ը կ ե ր և ա, փ ա ռ ք Ա լ լ ա հ ի ն»։

—«Ի ն չ ո՞ ւ չ ե ր և ա, տ ղ ա ս»,—բացագանչեց Հաջին բարկացած.

—«Տ ղ ա մ ը ն ա լ ա վ ե լ ց ա վ Հ ա յ ա ս տ ա ն ի ն. ս ա ան-

գամ մանչ ե, յա՜...»: Հերիք եր. Հաջի Մանուկոֆ եֆենդու կնիկը—Նունուֆար հանըմը—տղա չեր բերել:

Հաջի Մանուկոֆ եֆենդու այդ ուրախ տրամադրությունը հույսի պես վառվեց պ. Մարուքեյի ուղեղում. բութ, քնկոտ աչքերում վայրկենապես բռնկվեց սուր, հուսալից մի իմաստ:

—«Դե, շո՛ւտ»—խռպոտ շտապեցրեց պ. Մարուքեն ձախ ուսը ցնցելով.—«ուշանում եմ»:

Վարսավիր Վասիլը վերջացրել եր արդեն: «Շնորհավորում եմ, պ. Հաջաղա»—վեր կենալով տեղից՝ պարզեց ժպիտն ու ձեռքը Մանուկոֆ եֆենդուն պ. Մարուքեն: Հաջի Մանուկոֆ եֆենդին յերկու մատը դրեց պ. Մարուքեյի ձեռքը. ձեռք սեղմել չգիտեր: Պ. Մարուքեն պինդ, սրտագին սեղմեց Հաջու յերկու մատը և... չգիտեր, վո՞նց սկսեր: Բարեբախտաբար Մանուկոֆ եֆենդին հանեց նրան դժվարին դրությունից:

—«Ժամանակ ունես նե—քալե դահվե մը խըմենք»—ասաց Մանուկոֆ եֆենդին և մատները խլեց պ. Մարուքեյի ձեռքից:—«Հետո կուգամ»—նետեց վարսավիրին Հաջին, շուռ յեկավ. առանց յետ նայելու և պ. Մարուքեյի համաձայնությունն առնելու դուրս յեկավ վարսավիրից: Պ. Մարուքեն, առանց յերկար մտածելու, հետևեց նրան, իսկ վարսավիր Վասիլը զայրացած, զարմացած հայացքը նրանց կռնակներին հառած՝ մնաց մի-յերկու վայրկյան սապոնոտ խոզանակը ձեռքին. ապա՝ յերբ նրանք անհետացան,—«Թյու, նալլա՛թ կարոդությանդ, մա՛րդ»—թքեց, ի խորոց սրտից, վարսավիր Վասիլը Հաջու հասցեյին. հետո մոտեցավ լվացարանին. լվանալով սապոնոտ խոզանակը, սկսեց շվվացնել «Ախ զաչեմ եթա նոչ» «մոդնի» յերգը:

Մանր, չոր, հատու քայլերով, կարծես յերկու ձեռնափայտ եյին խփում մայթին—գնում եր առաջից, առանց յետ նայելու, Հաջի Մանուկոֆ եֆենդին: Ուրախ մտածում եր Մանուկոֆ եֆենդին, վոր լավ ազատվեց «ուշադրավ պերպեր»-ից: Վոչ թե սափրվելու նպատակով մտավ վարսավիր Վասիլի խանութը

Հաջի Օնիկ եֆենդին, ո, վո՛չ. նա շաբաթը մի անգամ եր ածիլվում և այն էլ շաբաթ օրերը,—նրա նպատակն եր իր նորելուկի մասին վարսավիրին հայտնելը. «Պերպերի լեզու—բաղնիքի դուռ»—մտածում եր Հաջին և նա, իհարկե, իրավունք ուներ: Պ. Մարուքեյի մասին, վորին հրավիրել եր ինքը մի բաժակ սուրճի, մոռացել եր բոլորովին: Բայց պ. Մարուքեն նրան չեր մոռացել: Մտածում եր, նրա յետևից հազիվ հասնելով, պ. Մարուքեն, վոր յեթե բարեհաճի Հաջին փոխարինաբար տալու հարկավոր գումարը—փրկված կլինի. հակառակ դեպքում...: Պ. Մարուքեն չգիտեր, թե ի՞նչ կարող և լինել հակառակ դեպքում:

Հաջի Մանուկոֆ եֆենդին, խանութը հասնելով, կանգնեց. կտրուկ շուռ յեկավ դեպի պ. Մարուքեն: Պ. Մարուքեն, վոր, մըտազբաղ, դեռ փոխում եր քայլը առանց դեմը նայելու—գլուխը թափով խփեց Հաջի Մանուկոֆի դեմքին. ռեզինե գնդակի նման յետ ցատկեց, շփոթված, պ. Մարուքեն:

—«Յո՛վաշ, ե, յավրում, ի՞նչ եղավ քեզի»—բացագանչեց Հաջին, բարկացած. ապա.—«Գնա՛ Սիմոնին ըսե դահվե մը հրամցնե հաշվուս, յես ժամանակ չունիմ, ներող կըլլաս»—ասաց նա, Հաջի Օնիկ եֆենդի Մանուկոֆը. դուռը բաց արավ արագ, մտավ և դուռը յետ խփեց պ. Մարուքեյի քթին:

Հասկացավ պ. Մարուքեն, վոր հույս չկա: «Թո՛ւ» թքեց պ. Մարուքեն, վարսավիր Վասիլի նման, եֆենդու հասցեյին: Յեվ քայլեց... ո՞ւր: Մթնեց, մթնեց աշխարհը պ. Մարուքեյի աչքին, հուսահատությունը հասավ բարձրագույն կետի: Կպատմե, ծաղրելով, կպատմե յերևի իր բոլոր ծանոթներին Արամ Անտոնիչը հիմա այդ «վերջին խայտառակությունը»: Կպատմե—պ. Մարուքեյի մթնած ուղեղում յերևացին գունատ, գազրելի դեմքերը Ոսեփ Նարիմանովի, Գեներալ Ալոշի, Մագութի Համոյի: Յեվ հանկարծ, այդ վայրկյանին ահա, հուսահատության այդ ծայրահեղ վայրկյանին—հիշեց յերեկվա յեռուգեռը պ. Մարուքեն. կանգնեց, պատկերացավ հանկարծ պ. Մարուքեյի բորբոքված ուղեղում կանաչ սեղանի վրա կանգ-

նած Մազութի Համոն։ Յեվ Մազութի Համոն, այդ ամենասովորական «Լույսի» կառավարիչ Համո Համբարձումովի՛չը, յերևաց նրան—ուրիշ. յերևաց անծանոթ։ Ինչպես հեռո՜ւ հեռո՜ւ պատմական մի անձնավորություն, կանգնից նրա գլխում Մազութի Համոն...։ Ինչպես պատմության դասագրքից հանած գրավյուր՝ պատմության դասագրքից սահեց Մազութի Համոն դեպի պ. Մարուքեյի բորբոքված ուղեղը։ «Պատերազմ»—ասաց, յերեկվա ձայնով, պ. Մարուքեյի բորբոքված ուղեղին Մազութի Համոն։ Յեվ պ. Մարուքեյի սրտում ինչ վոր անհայտ մի ձեռք շարժեց, ժամացույցի սլաքի նման, ինչ վոր ծանր մի բան սովորական տեղից. պ. Մարուքեն հասկացավ, վերին մի հրաշքով գլխի ընկավ հանկարծ, վոր այդ վայրկյանից սկսած ուրիշ է աշխարքն արդեն.—վոր, այդ վայրկյանից սկսած, սկըսվում է որերում և ժամանակներում և ուրիշ մի բան.—այն, վոր փոխելու յե աշխարքը հիմնովին, ցնցելու, տակն ու վրա յե անելու—յեթե միայն կարելի յե այսպես ասել—դարավոր հիմերը...։ Յերկի մեյմունի նման, ինչպես կասեր այդ մասին վարսավիր Վասիլը,—գլխիվայր մի ցատկյուն կատարեց կանաչ սեղանի վրայից, ինչպես դարավոր մի պատվանդանի վրայից, պ. Մարուքեյի ուղեղում Մազութի Համոն. գլխիվայր մի ցատկյուն կատարելով՝ Մազութի Համոն թռավ դեպի պատմության դասագիրքը...։ Նորից, ինչպես ամբողջ գիշերը, սահեցին, դանդաղ, շարժվեցին մի վայրկյան նրա ուղեղում—գույնըզգույն թղթադրամներ։ Բայց, ի մեծ զարմանք իրա, սիրտը չպաղեց, չխոցվից, չճմլվեց։ «Յեռուընդա!»—դուրս թըռավ, լսելի ձայնով, պ. Մարուքեյի շրթունքներից. քարե մի ծանրություն սրտից ընկավ։ Արագացրից քայլերը պ. Մարուքեն. պ. Մարուքեն գնաց տուն՝ քնելու։

Հետագայում, հիշելով այդ վայրկյանը, քթի տակ ժպտում եր իր այդ զարմանալի, համարյա մարգարեյական տեսողական կարողության վրա պ. Մարուքեն. բայց հետագայում իր այդ համարյա մարգարեյական տեսողական կարողությունը այլ բանի յեր վերագրում պ. Մարուքեն.—պ. Մարուքեյի կարծիքով՝ իր այդ համարյա մարգարեյական տեսողական կարողությու-

նը հետևանք եր վոչ թե ուղեղի բորբոքման, ինչպես կարող է մտածել միամիտ ընթերցողը, այլ, յեթե միայն գեղարվեստական գրվածքում կարելի յե այսպես արտահայտվել—քաղաքական հեռատեսության...

Արդեն սկսվել եր «կռիվը» ինչ վոր անհայտ տեղերում. մի, յերկու ամիս եր արդեն, ինչ սկսվել եր պատերազմը։ Վաղուց արդեն ծայր եյին առել շշուկներ, վոր շուտով, այսօր չէ—վաղը, ինչպես Տելեֆոն Սեթոն եր ասում՝ «ռուսը կռվի կը կանչե անորենին»։ Ասում եր՝ արդեն ասում եր քաղաքային այգում ընկ. Վառոդյանը ծանոթ օրիորդներին, վոր կա, արդեն «կենտրոնում» ստացված են ստույգ տեղեկություններ, վոր շուտով, շատ շուտով կռիվ կհայտարարվի նաև «վոսսոխին» և այն ժամանակ արդեն ամեն ինչ կփոխվի...։ Լայն հորիզոններ կբացվեն այն ժամանակ Նայիրիի համար,—խորհրդավոր ձայնով, վորպես պետական մի գաղտնիք, ասում եր ընկ. Վառոդյանը ծանոթ օրիորդներին։ Չգիտեմ այդ ինչ փոփոխություններ և, վոր դեռ նոր պիտի տեղի ունենային այդ քաղաքի կյանքում և ինչ հորիզոններ պիտի բացվեյին Նայիրիի առաջ այդ խորհրդավոր փոփոխություններից. չգիտեմ, ասում եմ, վո՞րտեղից եր ստանում «կենտրոնը» նման տեղեկություններ. բայց մի բան հաստատ կարող եմ ասել, վոր վորոշ փոփոխություններ արդեն իսկ տեղի եյին ունեցել շատերի գործերում, բայց այդ բանը, դժբախտաբար, չեր կարողացել տեսնել ընկ. Վառոդյանը։ Այդ «տեղեկությունները» նա կարող եր ինքը, առանց «կենտրոնին» դիմելու, հենց տեղում ստանալ ամեն մի ամենահասարակ նայիրցուց, թեկուզ հենց մանրավաճառ Կոլոպոտյանից, վորի առաջ, այո, արդեն իսկ բացվել եյին վորոշ հորիզոններ...։ Նրա, մանրածախ Կոլոպոտյանի կյանքում, արդեն իսկ տեղի յեր ունեցել այն աչքի ընկնող, կենսական փոփոխությունը, վոր, մի-յերկու ամսվա ընթացքում, ռաֆինադ շաքարի գինը 14 կոպեկից թռել եր 17-ի։ Ավելացրել եր գինը - Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆը, վոր ըս-

տանում էր շաքարը տեղից, տանում էր վագոնով և, իր հերթին, պարկերով ծախում էր մանրավաճառներին: Բայց այդ դեռ չնչին փոփոխություն էր, համեմատած այն ավելի քան շոշափելի փոփոխության հետ, որ տեղի չէր ունեցել հենց այդ նույն Կոլոպոտյանի հարևան՝ Կաթոլիկ Սիմոնի խանութում: Յեվ ուրիշ խանութներում էլ, վորոնցում պակասել էր արդեն, կամ պիտի պակասեր, կամ պակասելու վրա էր—օգնող ձեռքը. վորի վորդին, յեղբայրը, վորը հենց ինքը: Գնացել, տարել էին արդեն—Կաթոլիկի վորդուն, նրա հարևան Կարապետյանի, Մարտիրոսյանի ու հազար ու մի անհայտ «յան»-երի վորդիներին, յեղբորը, իրան: Հերթի էին հենց իրենք—պ. Աբոմարշը, Կինտաուրի Սիմոնը, սա, նա, մյուսը. վ՞որը թվես: Արդեն, ամեն առավոտ յերևում էին պատերի վրա—պատերի վրա փակցնում էին արդեն ինչ-վոր անհայտ ձեռքեր սպիտակ հրամաններ: Կանչում էին թղթերի վրայից, պատերի վրայից, կանչում էին սպիտակ հրամանները—սրան, յերկրորդին, հարյուրին. կանչում էին դեպի Հինգհարկանի Շենքը: Գալիս, թափվում էին արդեն ամեն առավոտ, լցնում էին փողոցներն ու մեյդանը—պատանի, յերիտասարդ, տարիքոտ տրեխավորներ. շրջանի գյուղերից գալիս հավաքվում էին Հինգհարկանի Շինության առաջ: Գնում էին այդտեղից—կայարան. խմբերով, գնում էին կայարան: Կանգնում էր, յերկար ու կարմիր, ապրանքատար գնացքը. կանգնում էր կայարանից բավականին հեռու, դեպոյի մոտերքը: Տրեխավոր մարդիկ լցվում էին մեջը. թափվում էին մեկը մեկի վրա, ինչպես ձկները տակառում: Սուլում էր շոգեմեքենան. սուր, խեղդամահ արվող անասունի նման, սուլում էր սուլոցը շոգեկառքի: Տրեխավոր մարդիկ բոռում էին անիմաստ. տրեխավոր յերիտասարդները յերգում էին պառավաձայն.—

«Տա՜—նը՜ը՜ը՜—մե՜ն—ադե՜ ջա՜ն—տա՜ա՜—նը՜ը՜ը՜—մե՜ե՜ե՜ն...»

Իսկ, մյուս կողմից, գալիս էին գնացքներ, ամեն օր, ամեն գիշեր գալիս էին գնացքներ անհայտ հեռուներից դեպի Նայիրյան այդ քաղաքը: Ու լցվում էր քաղաքը «սոխ» զինվորներով.

լցվում էր քաղաքը օր-օրի վրա, վայրկյան վայրկյանի յետևից: Ուրախ էին Ցեզոռ Համբարձումովը, Բոչկա Նիկալայը, մանրավաճառ Կոլոպոտյանը: Ուրախ էր, ընդհանուր առումով, ամբողջ Լորիս-Մելիքյանը՝ կայարանից—մեյդան: Եվ, իհարկե, առավոտ կանուխ, մշուշի միջից իր խանութը վազող Նայիրցի վաճառականը, մանրավաճառը, չարչին, Հաջի Մանուկոֆն ու Կոլոպոտյանը չէին մտածում, վոր մինչև ինը—տասը, ինչպես այդ տեղի չէր ունենում առաջ, պետք է իրենց խանութների դուռը անգործ կանգնած, ձանձրությունից հորանջեն: Ո, վոչ, իհարկե վոչ: Առավոտվա ծեգից մինչև յերեկոյան մութը լիքն էր, լիքն էր լինում փողոցը հիմա «սոխով ու սխտորով», վորպես անվանում էին խանութպանները ռուս զինվորներին և գյուղացի նորահավաքներին: Յեվ ինչ. վատ չէր: Վորը մի քառորդ շաքար, վորը հինգ կոպեկի հալվա, վորն էլ ուրիշ մի բան—ամենքից մի կոպեկ, հաշիվը—հարյուր՝ մանեթը կա: Այդ դեռ մանր-մունրը: Սրա հետ համեմատած—թալան էր, ինչպես, նախանձելով, ասում էր Կոլոպոտյանը,—Հաջի Մանուկոֆինը, պարսիկինը և ուրիշ մեծ մագազաներինը՝ փոդրաթչիներինը: «Տասը վագոն սապոն, 10 խոզի ճարպ, տասն էլ չգիտեմ ինչ զահրումար»—ահա, Կոլոպոտյանի հաշվով, նրանց «տոմարը»: Մենակ Մեսելի Ցենոքն էր, խեղճը, հին օրերի որը. սկզբում նա կարծեց, վոր իր գործը էլ աջողակ կգնա, բայց չարաչար սխալվեց. մեռնողները, ճիշտ է, շատացան աշխարհում, բայց վոչ այնպիսիքը, վորոնք պետք ունեին դագաղի. «սոխերին», ինչպես նա յեր ասում, «կազյոնի» էին թաղում, այսինքն՝ առանց դագաղի, իսկ «սխտորները»...: Դե՛, յե՞րբ էին այդ տրեխավոր «ռուսները» մարդավարի ապրել: Այնպես վոր նա, ինչպես առաջ, օրվա մեծ մասն անգործ, ձանձրությունից ձանձրացած՝ թիթեղե սպիտակ հրեշտակներ էր փակցնում պատրաստի դագաղների վրա, իսկ յերբ դրանից էլ էր ձանձրանում Մեսելի Ցենոքը—գնում էր Տալեֆոն Սեթոյի սրճարանը՝ վերջինիս յեղբոր, հիսունն անց Քոռ Արութի հետ դոմինո խաղալու: Վերջինս ճիշտ որ կույր էր. բայց, բարեբախտաբար, մի աչքից

միայն. այդ մի աչքը Քոռ Արութը կորցրել էր յերիտասարդ ժամանակ՝ բարեկենդանի որը մեյդանում «դոչի» հետ մենամարտելիս: Նրա մոտ էր գնում Մեռելի Յենոքը իր ձանձրույթը փարատելու, վորովհետև իր նման անգործ էր լինում Քոռ Արութը. յեղբոր սրճանանում Քոռ Արութը, յեթե կարելի յե այսպես արտահայտվել՝ վարում էր մշտական խաղակցի պաշտոն: Մեկ-մեկ էլ կայարան էր գնում Մեռելի Յենոքը յեկող-գնացողին նայելու, վորտեղից նա վերադառնում էր տխրած կամ ուրախացած. տխրած, վոր ինքը վոչ մի շահ, վոչ մի հասույթ չունի գնացող յեկողներից, և ուրախացած, վոր ինքը չկա և, յերևի, յերբեք էլ չի լինի ուղարկվողների շարքերում: Բայց Մեռելի Յենոքի այդ յեթերային ուրախությունը տեղի յեր տալիս ծայրահեղ տխրության, յերբ նա, քաղաք վերադառնալով, տեսնում էր խանութներում տիրող գործնական յեռուզեռը:—Բոլորը աշխատում եյին, բոլորը շահում—բացի իրանից միայն և մեկ էլ իր միակ սրտակից՝ Քոռ Արութից: Բայց նրան վիճակված էր զրկվել և իր այդ միակ սրտակցից—մի հանգամանք, վոր խորը տպավորություն թողեց նրա ինքնասիրության վրա և մտցրեց նրա կյանքում ևս վորոշ փոփոխություններ...:

Մի անգամ իր անպետք գագաղներից ու հրեշտակներից ձանձրացած, Տելեֆոն Սեթոյի սրճարանը գնաց, ըստ սովորության մի ձեռք դոմինո խաղալու, Մեռելի Յենոքը, բայց մեծ յեղավ զարմանքը, յերբ տեսավ, վոր Քոռ Արութը սրճարանում չկա: Կարծեց թե դուրս է գնացել, սպասեց, սպասեց—բան դուրս չեկավ: Քոռ Արութը չկար: Տելեֆոն Սեթոն էլ, դե, առաջվանը չէր, նրա սրճարանը ավելի քան լիքն էր լինում հիմա «սոխերով ու սխտորներով». դժվարանում էր հարցնել: Վատ զգաց իրեն Մեռելի Յենոքը, սիրտը պայթում էր սրտմտությունից, այնպես վոր չկարողացավ համբերել, մոտեցավ հարցրեց: «Գործի յեմ դրե վակզըլի մեյդանը»—յեղավ Տելեֆոն Սեթոյի պատասխանը.—«սոխերին չայ կծախե»: Չհասկացավ առաջին վայրկյանին Մեռելի Յենոքը, բայց մտաբերեց կայարանը, հիշեց. հիշեց վակզալի մեյդանը: Սուս ու փուս դուրս յեկավ Սեթոյի սրճարանից ու շտապ քայլերով դիմեց կա-

յարան: Գնում էր խոշոր քայլերով. հևիհև վազում էր փողոցի մեջտեղից Մեռելի Յենոքը. սոխերը հրում եյին նրան, հայհոյում եյին յերբեմն, յերբ դիպչում էր նրանց, բայց ուշադրություն չէր դարձնում. գնում էր գլուխը կախ և ձեռքերը թափահարելով: Յերկար, սև, խունացած չուխի առանց այդ էլ բորբոսնած փեշերը քսվում եյին փողոցի փոշուն, ավլում եյին փողոցը. Նա գնում էր անկանգ, Լիր Արքայի նման սրտում դառնություն ու կսկիծ՝ Մեռելի Յենոքը գնում էր կայարան: Վերջապես նա հասավ կայարան և նոր գլխի ընկավ կարծես, վոր նրա դիմացը գտնվող նախկին ամայի տարածությունը դարձել է արդեն—բազար, դարձել է, ինչպես Տելեֆոն Սեթոն հորջորջեց—«Վակզըլի մեյդան»: Նույն խոշոր քայլերով մտավ վակզալի մեյդանը Մեռելի Յենոքը և այն է, դեռ նոր էր սկսել, դեռ նոր էր ուզում փնտրել իր ընկերոջը՝ Քոռ Արութին, յերբ մեկը քաշեց նրա փեշից:—«Պաշո՛լ, սո՛խ-հայվարա»—կարծելով, վոր ռուս զինվորներն են չուխիցը քաշում, հայհոյեց Մեռելի Յենոքը բարկացած, բայց.. «Յե՛ս եմ, ճո՛րդ Ասսու, հաչք չունի՞ս»—լսեց Քոռ Արութի ձայնը—և շուռ յեկավ դեպի նա: Ու մնաց, արձան կտրից՝ տեղնուտեղը քարացավ Մեռելի Յենոքը տեսած տեսարանից: Փոքրիկ մի սեղան, առաջին կանգնած թեյ էր լցնում թիթեղե թեյամանից Քոռ Արութը. կողքին ռուս մի զինվոր պարզել էր ձեռքը, վոր վերցնի: «Յա՛. տա՛. գործի յես եղե, Հարո՛ւթ...»—բացականչեց Մեռելի Յենոքը՝ հայացքը, պուշ, Քոռ Արութին հառած:—«Հա՛, ի՞նչ էնենք, Յենոք ջան. յավաշ-յավաշ փարա կաշխատինք, ի՞նչ կա որ...»—կարծես արդարանալով, կարծես պարծենալով պատասխանեց Արութը. սկսեց դեմը դրած բաժակները մաքրել: Նայեց-նայեց, կտրած ժպիտը դեմքին, իր նախկին խաղընկերոջը Մեռելի Յենոքը, մի յերկու կցկտուր հարց ու փորձ արավ առևտրի մասին.—«Է, երթա՛մ»—ասաց ապա. առանց ընկերոջը նայելու, Մեռելի Յենոքը:—Յեվ շուռ յեկավ անսպասելի կերպով. խոշորագույն քայլերով վերադարձավ քաղաք:

Հաջորդ օրվանից, փոքրիկ սեղանի դեմը կանգնած, հաց ու կալբաս էր ծախում վակզալի մեյդանում Մեռելի Յենո-

քը, իսկ մի շաբաթ անց այլևս չեյին վախենում, նրա խանութի առաջով անցնելիս, քաղաքի չերեխաները. Մեռելի Յենոքը լիկվիդացիայի չեր յենթարկել դուպաղագործությունը և զբաղված եր այժմ «ձեռքի առևտուրով»:

Ահա թե ինչ փոփոխություններ եյին արդեն տեղի ունեցել, մի-յերկու ամսվա ընթացքում, քաղաքի կյանքում. իսկ ընկ. Վառոդյանը դեռ սպասում եր, հիմարը, վոր «Կենտրոնը» տեղեկացնի իրեն ինչ վոր խորհրդավոր վորոշումների մասին, վորից հետո միայն, ընկ. Վառոդյանի կարծիքով, պիտի տեղի ունենային վորոշ փոփոխություններ...:

Յեվ ահա... Հիշում եմ, ինչպես որս, սիրելի ընթերցող, նորից, նորից, և ամեն ինչի սկզբում. ամեն ինչ սկսողը, ամենհասարակական քիչ թե շատ աչքի ընկնող յերևույթի մասին առաջին շեփորողը—նա ինքն եր, Համո Համբարձումովիչ—Մազութի Համոն եր Նայիրյան այդ քաղաքում: Յեվ այս անգամ էլ ելի նա չեր, ելի նա ինքը, քաղաքի ամենաազդեցիկ մարդը, «Լույսի» կառավարիչը և «Ընկերության» տեղական կոմիտեյի նախագահը—Մազութի Համոն: Իհարկե «Ընկերության» ազդեցիկ անդամ լինելուն եր հարկավոր վերագրել այն հանգամանքը, վոր Մազութի Համոն ամեն ինչ գիտեր, ամեն ինչ իմանում եր ժամանակին և ժամանակին էլ հայտնում եր, ում վոր հարկն եր, ում վոր հարկավոր եր հայտնել: Բայց այս դեպքում հարկավոր եր հայտնել ի լուր բոլորի. «Հայտնիր բոլորին»—այսպես եր գրված, ասում եր ընկ. Վառոդյանը, այն գրության վրա, վոր ստացվել եր, ավելի ճիշտ կլինի ասել՝ վոր ստացել եյին «Կենտրոնից»: Ընկ. Վառոդյանը իր սեփական աչքերով տեսել եր այդ գրությունը Մազութի Համոյի գրասենյակում, Համո Համբարձումովիչն ինքն եր ցույց տվել այդ հետաքրքիր գրությունը ընկ. Վառոդյանին: Ընկ. Վառոդյանն էլ, չգիտենք թե ինչու, հարկ եր համարել հայտնել ամենից առաջ պ. Մարուքեյին—բայց վոչ թե «Կենտրոնից» ստացած այդ գրության, այլ այն «ըղձալի

տեղեկության» մասին, վոր բերել եր գրությունը: Պ. Մարուքեն այնքան էլ չեր սիրում ընկ. Վառոդյանին, այդ, ինչպես արտահայտվում եր նա—«Նայիրյան վարժապետին», վորի կոնակի վրա, ինչպես հայտնի յե արդեն քեզ, սիրելի ընթերցող, «Դառնության կենտրոնից» հիշատակ եյին մնացել հետաքրքիր հետքեր: Ընկ. Վառոդյանն էլ, իր հերթին, վերևից եր նայում այդ «յեվրոպացի ավանակ Գրաստամատյանին», վորի պատմական ազգանվան սկզբնատառը այդպես անբարեխղճաբար փոխելով՝ բավականին զվարճություն եր պատճառում ընկ. Վառոդյանը ծանոթ որխորդներին: Բայց ընկ. Վառոդյանի նման, վոչ այնքան էլ բարյացակամ, վերաբերմունքը դեպի պ. Մարուքեն բղխում եր վո՛չ թե անձնական, այլ ավելի քան օբյեկտիվ, հասարակակա՛ն պատճառներից. բանն այն ե, վոր պ. Մարուքեն յերբեմն թույլ եր տալիս իրեն բավականին յերկիմաստ հայտարարություններ անել «Ընկերության» հասցեյին. ահա թե ինչ. . Այս բանը նրան վոչ միայն ընկ. Վառոդյանը, այլև Կլուբի Մեյմունն անգամ չեր կարողանում ներել, թեկուզ նա, այդ կոշկակար Սիմոնը, վոչ թե անդամ եր «Ընկերության», այլ սոսկական համակրող: Յեվ ինչպես եր համարձակվում պ. Մարուքեն—ահա զարմանալին. ո՜վ, ո՜վ չգիտեր, վոր ավելի հեշտ եր «Մութ սենյակում» հայհոյանք շպրտել «Նիկոլի» հասցեյին, քան, անգամ յերազում, անբարյացակամ վերաբերմունք ցուցահանել դեպի «Ընկերությունը»: «Ընկերությունը», ինչպես առաջին մասում առիթ ունեցանք ասելու, «Կենտրոն» եր, և այն էլ—«Գեր-Կենտրոն»: Յեթե դու ցանկություն ունես, սիրելի ընթերցող, թեկուզ ամենահեռավոր, ամենանսեմ կերպով պատկերացնել այդ «Կենտրոնը»—յերևակայիր հետևյալը:—Ինչ վոր անհայտ մի տեղ, մի տեղ, վորի ուր լինելը վոչ վոք, նույնիսկ ընկ. Վառոդյանը չգիտե. Նայիրյան, չինական, կամ, ո՜վ գիտե, կարող ե պատահել, վոր ասորա-բաբելական Իքս, Իգրեկ, Զեթ—Անհայտ քաղաքում, քաղաքի ծայրամասում, կենտրոնում, կարող ե՝ գերեզմանատանը—մի խոսքով այնպիսի մի տեղում, վորի գոյությունն անգամ կասկածի յե յենթարկ-

վում—կա, գոյություն ունի—չգիտեմ, ինչպես ասեմ, վոր գլխի ընկնես —նա, անհայտ մի սենյակ. կամ խցիկ. կամ ներքնահարկ։ Այդտեղ, այդ ներքնահարկում ահա, վորի ուր լինելը, ինչպես ասացինք, վո՛չ մի մարդ չգիտե,—ապրում է հսկայական մի սարդ, աներևույթ մի սարդ. սարդանման ուղեղ։ Յեվ այդ սարդը ահա, սարդանման այդ ուղեղը, իր անհայտ տեղից, իր այդ անվորոնելի բնակարանից պարզում է իր ճանկերը. այնտեղից սկսած՝ հյուսում է իր վոստայնը, կուռ, հյուսում է անողոք։ Պարզում է իր ճանկերը, թելավոր, դեպի քաղաքները Նայիրյան, դեպի ուղեղները, սրտերը, կամքերը նայիրյան. պարզում է—Մուշ, Բիթլիս, Դիարբեքիր. պարզում է—Թիֆլիս, Թեոդոսիա, Ենգելի. պարզում է—Յերուսաղեմ... Մի խոսքով՝ ամեն, ամեն անկյուն, ուր կա մի, գոնե մի նայիրցի։ Նյու-Յորք, Ժընեվ, Կալկաթա, Պերու, Ռիո-Ժանեյրո, Աննամ. ի՞նչ, ի՞նչ քաղաք, կամ յերկիր հիշատակեմ, ուր չկա, ուր չեն հասել թելերը, յերկաթյա թելիկները Ուղեղասարդի։ Հյուսում է, հյուսում է իր վոստայնը նա. կուռ, յերկաթե՝ հյուսում է քաղաքից-քաղաք, յերկրից-յերկիր. իսկ ինքը չի յերևում, անխուսափելի, անշոշափելի է ինքը, վորպես հրաշք. հրաշք է, չես հասկանում. սարսափելի գաղտնիք. զարմանալի զարմանք...։ Ահա թե ինչ է «Ընկերությունը» վորպես «Կենտրոն», վորպես, ինչպես ընկ. Վառոդյանն է շատ հաջող բնորոշում՝ «Գեր-Կենտրոն», սիրելի ընթերցող։ Բայց յես դեռ ամենազարմանալին, ամենագլխավորը չասի. վախեցա չհավատաս։ Բայց ինչ կասես փաստերին. աչքի առաջ են փաստերը. փաստերը պերճախոս։ Բանն այն է, սիրելի ընթերցող, վոր Ուղեղասարդը վո՛ր վայրկյանին ուզենա՝ կարող է քաշել դեպի ինքը, գործողության դնել, շարժել, ինչպես վոր կուզե, տիեզերական իր վոստայնը, վոստայնի թե՛լը ամեն մի, ամեն մի ամենահեռավոր թելիկը, թելիկի ծայրը, ծայրի ծայրածիրը... Ահա թե ինչ։ Յերևակայեցե՛ք՝ այնտեղ, իր անհայտ տեղում, սենյակում իր նստած՝ սարդային այդ ուղեղը, կամ ուղեղային այդ սարդը կարող է շարժել, մի փոքր ձգել, տատանել հազարերորդ իր ճանկը, ճանկի ամենածայրը,—և ահա Նյու-

Յորքում այսինչ-այնինչ թելիկները, թելիկային մարդիկ, կանեն, ինչ վոր ինքը, Կենտրոնը կամենա, Կենտրոնաուղեղասարդը ուզե... Կշարժե նա, Կենտրոնաուղեղասարդը, իր հազար և մեկերորդ թելիկը—և ահա Ժընևում, Յեվրոպի մեջտեղում, Նայիրատառ «Դրոշակի» վրա կշարվեն, ահեղամռունչ, գահակործան կոչեր...։ Բայց դա չէ դեռ վոչինչ. դեռ ամենաաներևակայելին կա, ամենահրաշանմանը։ Ընտանեկան հարկում, կնոջդ, յերեխաներիդ, քրոջդ կամ մորդ հետ նստած քեզ համար թեյ եյիր խմում, կամ ճաշում, կամ ընթրում եյիր դու, սիրելի ընթերցող, յերբ քսանհինգ տարի առաջ, գեղեցիկ մի օր շարժեց իր ամենաբարակ ճանկը, ճանկի ամենածայրը Կենտրոնաուղեղասարդը աներևույթ իր տեղից—և ահա, յերևակայե՛մ ես,—այնտեղ, Վոսփորի ղալարապեղ ափերին, սուլթանների լպիրշ մայրաքաղաքում, լիմոնադի խցանի մի նման՝ թռավ, թեթև թռավ՝ անսիրտ դիվանագետների ժանգոտած ուղեղներում, վորպես Նայիրյան, այսինքն «Ընկերության» վոգու ցասումալից մի ցույց, արդարության բողոք—պայթեց, ոդը ցնդեց Բանկը Օտտոման... Յեվ ինչն էր, ինչն էր, յեթե վոչ նույն Կենտրոնասարդի ամենաանշան թելերի ամենաանշան շարժման ամենաչնչին հետևանքը—այն, վոր թռավ, գահընկեց, Յելդզի մեծաշուք պալատներից Յելդզի ձիվաղը—նա, վորի արյունարբու հայրենիքի մասին գրել էր, իր հեռու թելիկների միջոցով, գրել էր Կենտրոնասարդը, աշխարհիս առաջին մարդու և անկաշառ Նայիրասերի բերանը «Հիվանդ մարդը պետք է մեռնի» ճակատագրական պատգամը։ Ո, վո՛րը, վո՛րը պատմեմ, քանի վոր բազում են մեծագործությունները նրա, բազում ու անհատնում։ Յեվ ինչքա՜ն, ինչքա՜ն, ինչքա՜ն պիտի ծիծաղալի թվա այս ամենից հետո այն, միանգամայն ճիշտ վոր անհանդուրժելի, հանգամանքը, վոր այնպիսի մի մեծամիտ վոչնչություն, ինչպիսին էր պ. Մարուքեն, այդ վողորմելի «Գրասատամատյանը» հանդգնում էր զանազան յերկմիտ, անթույլատրելի ակնարկներ անել, թղթե սլաքներ թողնել «Ընկերության» հասցեյին...։ Գիտեր, իհարկե, վաղո՜ւց շոշափել էր

արդեն տեղական իր շնորհալի թելիկների միջոցով, այդ հանգամանքի մասին՝ կենտրոնաուղեղասարդը. բայց շատ եր չնչին, շատ եր անարժան մժեղը, վորպեսզի ճանկերը շարժվեյին և թռներ, հոգս ցնդեր պ. Գրաստամատյանը Բանկ Ոտտոմանի նման... այո։ Ավելի քան ճշմարիտ կլինի կարծել, վոր պ. Մարութեյի հենց այդ չնչինությանը, այդ վոչնչությանը պետք է վերագրել այն, այլապես միանգամայն անհասկանալի, հանգամանքը, վոր նա մնում եր անպատիժ, և նույնիսկ շարունակում եր Նայիրյան այդ քաղաքում իր աննշան ծանրությամբ աննշան տատանումներ պատճառել կենտրոնաուղեղասարդի թելիկներից ամենաթելիկին—ընկ. Վառոդյանին։ Բայց ընկ. Վառոդյանն ել հո գիտեր իր գործը. ո, նա շատ սքանչելի յեր տիրապետել թելիկատատանման նրբագույն արվեստին. այդ բանում խրատական նշանակություն եր ունեցել ընկ. Վառոդյանի համար իր կարճատև մտերմությունը հանգուցյալ ընկ. Կարոյի հետ, այն տարաբախտ ընկ. Կարոյի, վոր այնպես վաղաժամ, ինչպես ընթերցողին հայտնի յե արդեն վեպիս առաջին մասից, գնաց Վարդանի կամուրջի, այսինքն նրա դիմացը գտնվող աննշան խրճիթի պայթման դեպքերին։ Նրանից, այո, ընկ. Կարոյից եր առաջին անգամ, իր հեղափոխական գործունեյության վաղ արշալույսին, առաջին հրահանգներն ըստացել ընկեր Վառոդյանը։ Նրանից եր ստացել առաջին անգամ ընկ. Վառոդյանը և հեղափոխական ընդվզումի կարմիր ավետարանը—«Ամբոխային տրամաբանությունը»։ Կարծում ենք, ավելորդ է վերստին հիշատակել և այն ճակատագրական դասը, վոր իր հերոսական կռնակի վրա, «շոմպոլի» կապույտ—կապույտ հետքերի ձևով, ստացել եր ընկ. Վառոդյանը «Դաշնության կենտրոնից»։ Այսպիսի պատկառելի հեղափոխական անցյալից հետո դժվար եր, իհարկե, գործ ունենալ ընկ. Վառոդյանի հետ, մանավանդ վոր վերջերս նա կամաց-կամաց ավելի և ավելի խոշոր ուշադրության եր սկսում արժանանալ կենտրոնաուղեղասարդի տեղական գլխավորաթելի—Համո Համբարձումովիչի—Մազութի Համոյի կողմից։

Յեվ, այստեղ ևեթ հարկավոր է ասել, վոր հենց այդ որերից է, վոր սկսեց սարն ի վեր բարձրանալ ընկ. Վառոդյանը, հետագայում Նայիրյան այդ քաղաքի կյանքում այնքան խոշոր դեր խաղացող այն ընկ. Վառոդյանը, վորը, վերջ ի վերջո, վոչ այլ ինչ եր, յեթե վոչ խղճուկ մի վարժապետ, «Նայիրյան մի բթամտություն», ինչպես ասում եր պ. Մարութեն։ Ինչո՞վ, ինչո՞վ նա Մազութի Համոյի աչքը մտավ—աստված ինքը գիտե, բայց փաստը մնում է փաստ, վոր, այս որերից սկսած, նա ավելի խոշոր մասնակցություն ունեցավ քաղաքի անցուդարձում, քան ինքը Սերգեյ Կասպարիչը, բժիշկը—այդ յերկրորդ, կամ ավելի լավ է ասել—աջ ձեռքը Մազութի Համոյի։ Յես ել չեմ խոսում Ոսեփ Նարիմանովի—Համո Համբարձումովիչի ձախ ձեռքի մասին, վորը կամաց-կամաց, դեպքերի զարգացման ընթացքում, համարյա թե կորցրեց իր ամբողջ նշանակությունը։ Այս հանգամանքը ավելի զարմանալի կթվա, յեթե ասեմ, վոր նախ քան այդ, ինչպես Սերգեյ Կասպարիչը, այնպես ել Ոսեփ Նարիմանովը «կենտրոնի» նշանակված անդամներ եյին Տեղական Կոմիտեյում, վորի նախագահն եր, ինչպես արդեն գիտենք, և մինչև վերջը մնաց—Մազութի Համոն։ Սա նշանակում է, վոր, ինչպես բժիշկը, այնպես ել հաշտարար դատավորը, յերկուսն ել՝ Մազութի Համոյի հետ հավասարապես յենթակա եյին կենտրոնասարդի անմիջական, այո, տատանումներին՝ ուղեղա-հրահանգներին. իսկ ընկ. Վառոդյանը...։ Նա ինչ եր վոր. նա իսկի յել կարծես գոյություն ունենալիս չը լիներ առաջներում։ Ինչքա՞ն, ինչքա՞ն եր պատահել, յերբ նա, ընկ. Վառոդյանը, կարծես թե պատահմամբ, մտել եր Մազութի Համոյի գրասենյակը, յերբ այնտեղ «նիստ» յեն նստած յեղել Տեղական Կոմիտեյի «Յերեքը». և ի՞նչ պատահում եր հետևյալը։ Նա, ընկ. Վառոդյանը, հազիվ եր կարողանում գլուխը ներս խոթել, յերբ բժիշկը, և միշտ այդ մեծամիտ բժիշկը, բարձրացնում եր քիթը վեր, հոտոտում եր ոդը՝ նայելով ընկ. Վառոդյանի դեմքին, և—«ներողություն»—ասում եր բժիշկը կիսաժպիտ, վորից հետո զսպանակի նման դռնից դուրս եր ձգվում ընկ. Վառոդյանի գլուխը ու մնում իր դռան, փակ դռան յետևում վորսորդական բարակի նման ներսի շշուկներին ուն-

կընդիր: Այդպես եր, այո, առաջներում. բայց հետո... Հետո ընկ. Վառոդյանը դարձավ նշանավոր գործիչ, պատկառելի անձնավորություն և շատ, շատ անգամներ առիթ ունեցան բժիշկ Սերգե Կասպարիչը և հաշտարար դատավոր Ոսեփ Նարիմանովը նրա ընդունարանի առաջ հերթի սպասելու...:

Բայց ներիր, ընթերցող, վոր յես պատմության թելը բավականին խճճեցի, թեկուզ, գիտես, նայիրյան այդ քաղաքի այն նշանավոր օրերի պատմությունը գրողը հիմա, ուզած-չուզած, պիտի զգա իրեն այն դժբախտ յերեխայի դերում, վորը, ինչպես այդ հաճախ տեղի յեր ունենում հենց նույն այդ քաղաքի յերեխաների կենցաղում, գետում լողանալուց հետո ուզում է հագնվել, բայց գտնում է շապիկի թևերը թրջած և այնպես պինդ հանգուցած, վոր սատանան ինքը կդժվարանա արձակել. Նա գիտե, նա հասկանում է, վոր իր շուրջը հռհռացող յերեխաներն են այդ արել. Նրա սիրտը պայթում է վոխից ու բարկությունից, բայց նույնպես ավելի քան լավ հասկանում է նա, վոր յեթե ընկնի ընկերների յետևից—շատ են, մի յերկուսը յետ կմնան և մնացած շորերն էլ կթրջեն ու կհանգուցեն. ուստի մնում է նրան հանգուցած շապիկը մի կողմ թողնել և հագնել շորերը առանց սպիտակեղենի—ինչպես և մեզ, ընթերցող, գոնե անհանգույց դեպքերն ու իրողությունները մոռացության չտալու նպատակով մնում է մի կողմ թողնել բոլոր խճճվածներն ու հանգույցները և անցնել վեպի շարունակությանը:

Ինչպես ասացի՝ ընկ. Վառոդյանը սեփական աչքերով տեսել եր Մազութի Համոյի գրասենյակում «Կենտրոնից» ստացած գրությունը, վորի մեջ գրված եր, ի միջի այլոց, «Հայտնիր բոլորին» հրահանգը: Յեվ ահա, Մազութի Համոյի գրասենյակից յելնելով, հանդիպեց, պատահմամբ, պ. Մարուքեյին ընկ. Վառոդյանը և մտածեց, վոր առաջին հերթին հենց այդ հաստամիտ Դրաստամատյանին է հարկավոր հայտնել

հետաքրքիր նորությունը: Այդ միտքն հղացավ ընկ. Վառոդյանի գլխում յերկու պատճառով. նախ՝ ինքը ցույց կտա այդ հաստամիտ պարոնին, վոր այնքան էլ հասարակ անձնավորություն չե ընկ. Վառոդյանը, վոր, այո, ինքը կապեր ունի այնպիսի կենտրոնների հետ, վոր կարող ե ամեն նորություն իսկական աղբյուրից իմանալ,—և ապա՝ ինչպես հրահանգել եր նրան Մազութի Համոն, «կշոշափե հողը»... Իսկ պ. Մարուքեն, այսպես թե այնպես, վորպես հակառակորդ, բավականին հետաքրքիր «հող» եր՝ հասարակական տրամադրություններ շոշափելու համար...:

«Հետաքրքիր նորություններ»—ասաց ընկ. Վառոդյանը, այնպես, ի միջի այլոց, պ. Մարուքեյին:—«Բավականին հետաքրքիր...»:

«Հ՞ը—ակնոցների տակից վեր, ընկ. Վառոդյանին նայեց պ. Մարուքեն.—«Ի՞նչ կա»:

Ընկ. Վառոդյանը ժպտաց: Ու հազաց հետո, ձեռքը շրթունքներին տանելով. «Ըհը՛, ըհը՛, ըհը՛», ճիշտ և ճիշտ Սերգե Կասպարիչի նման:

Պ. Մարուքեն բարկացավ.

«Մի բան գիտես—ասա՝ ինչ ես պոչդ գետնովը տալիս»:

Ընկ. Վառոդյանը շիկնեց. աչքերից արյուն կաթեց ընկեր Վառոդյանի.—

—«Յոթ որից Երզրում կլինենք!»—պայթեց ռումբի նման, կրկնելով Մազութի Համոյի խոսքերը, ընկ. Վառոդյանը պ. Դրաստամատյանի գլխին, ու նայեց նրան, հաղթական:

Նայեց, նայեց նրան, արհամարհանքը ակնոցների տակից դուրս պսպղացնելով, պ. Մարուքեն.—«Իդիոտ!»—կարծես թքեց, կարծես ձգեց, ծանր մահակի նման, ընկ. Վառոդյանի դեմքին պ. Մարուքեն. ու շուռ տվեց դեմքը. աջ ուսը ցնցելով հեռացավ:

Նա գիտեր, քչերից մեկն եր պ. Մարուքեն նայիրյան այդ քաղաքում, վոր թերթեր եր կարդում,—կարդացել եր արդեն պ. Մարուքեն, վոր արդեն, արդեն՝ պատերազմ ե հայտարարված

Տաճկաստանին։ Յեվ, յերեվակայեցեք—դժգոհ եր դրանից։ Տարորինակ, այո, զարմանալի մարդ եր այդ պ. Դրաստամատյանը և ինչքան ել նրան, խորին արհամարհանքով, պ. Գրաստամատյան անվաներ ընկ. Վառոդյանը, ինչքան ել նրա, առանց այն ել բավականին աչքի ընկնող քթի ծայրը, համարյա թե միշտ ավելի ես աչքի զարկեր իր անհաճո կարմրությամբ, վոր, ինչպես ասում եյին, հետեվանք եր վոգելից ազդեցություններին,— չնայած, կրկնում ենք, այն բոլոր տարորինակություններին—պ. Մարուքեն եր և արժանի յեր ամենայն ուշադրության։ Յերեվակայեցեք. նա, այդ հարբեցող «Յեվրոպացին» այդ յերեկո հանդգնություն ունեցավ կատարելու այնպիսի մի մեծագործություն, վորի համար արժե վոր նա համարվի իմ միակ հերոսը, այդ կարմրաքիթ Դրաստամատյանը...

Նա գիտեր, այո—կարդացել եր արդեն պ. Դրաստամատյանը, վոր պատերազմ ե հայտարարված Տաճկաստանին, և միակ մա[illegible] եր գուցե, վոր, իրեն միայն հայտնի պատճառներով, դըժգոհ եր դրանից։ Կային ասողներ—ինչպես, որինակ, Հաջի Մանուկոֆ եֆենդին,—վոր «անարխիստ» ե պ. Մարուքեն, այսինքն «անիշխանական». այնինչ ընկ. Վառոդյանն այն կարծիքն ուներ, վոր նա, այսինքն պ. Մարուքեն, վոչ «անարխիստ» ե, վոչ բան, այլ, պարզապես մի «մխի գլուխ», վորին հարկավոր ե «խփել»։ Չգիտենք, վորքա՞ն եր համապատասխանում իրականության ընկ. Վառոդյանի այն կարծիքը պ. Մարուքեյի մասին, բայց, հարկավոր ե ասել, վոր ընկ. Վառոդյանի այդ որիգինալ կարծիքում կար, յեթե վոչ ուղղակի, գոնե կողմնակի ճշմարտության վորոշ տոկոս. գուցե, այո, ընկ. Վառոդյանի տեսակետից, այդ «մխի գլխին» հարկավոր եր «խփել», քանի վոր, այո,—մենք չգիտենք, թե ուրիշ ինչ պատճառներ կային պ. Մարուքեյի համար, իրեն չվերաբերող մի խնդրի,—Տաճկաստանին հայտնած պատերազմից դժգոհելու, բայց մի բան պարզ եր ինքնըստինքյան, այդ այն ե, վոր պ. Մարուքեն նկատել եր, վոր արդեն շարժվում ե «Ընկերությունը»,—և սա յեր, ամենից առաջ, նրա դժգոհելու պատճառներից մեկը։ Վո՛չ անարխիստ, վո՛չ բան։ Նա, պ. Մա-

րուքեն, իրեն միայն հայտնի պատճառներից դրդված, դեմ եր «Ընկերությանը», այսինքն, կոնկրետ ասած՝ տեղական «յերեքին» ու նրա արբանյակներին. Նրանք սև ասեյին, պ. Մարուքեն կասեր՝ սպիտակ. Նրանք հա ասեյին, պ. Մարուքեն կասեր՝ չե։ Յեվ այսպես—ամեն ինչում. այսպես ել հիմա։ Արդեն խոսում եյին քաղաքում, արդեն շշնջում եյին, խորհրդավոր, զանազան բերաններ։ Արդեն տալիս եյին հայտնի անուններ... Անհամբերությամբ սպասում եյին այդ ըղձալի որվան. այս ըղձալի որը, ինչպես ընկ. Վառոդյանն եր ասում քաղաքային այգում ծանոթ որիորդներին, պիտի բանար իրենց՝ Նայիրի առաջ ըղձալի հորիզոններ։ Դեռ յերեկ, դեռ առաջի որը, այգու ակումբում պարծենում եր, «ագռավի աղջիկը» սեղանին խփելով, Կինտաուրի Սիմոնը, վոր «կամավոր կը գնա»։ Հասկանում եր, իհարկե, զգում եր արդեն պ. Մարուքեն, վոր շուտով «պարը կսկսվի» և գլխապտույտ կգնա. հասկանում եր և, դժգոհելով, սպասում։ Իսկ հիմա ահա, ընկ. Վ[illegible]դյանին հանդիպելուց հետո, հասկացավ, զգաց պ. Դրաստամատյանը, վոր արդեն գլորվել ե քարը—և քթի տակ, դժգոհ, փնթփնթալով՝ քաղաքային այգու ակումբը գնաց պ. Մարուքեն, մտածելով, վոր այնտեղ, յերեվի, ամեն ինչ կիմանա։

Իրիկուն եր արդեն. արդեն վառվում եյին լույսերը քաղաքային այգում։ Նվագում եր զինվորական յերաժշտախումբը. նըվագում եր «Բոժե ցարյա»։ Հասկացավ պ. Մարուքեն, վոր «սկսվել ե պարը»։ Հենց այն մյուս կիրակին. կանգնեց, կանգնեց նորից պ. Մարուքեյի ուղեղում—կանգնեց, այծագլուխ, Մագութի Համոն։ Լիքը, խիտ կանգնած հասարակության միջով մոտեցավ ակումբին պ. Մարուքեն—և, հրաշքի մի նման, չլինելով կարծես թե իրա, պ. Մարուքեյի ուղեղից—կանգնեց. կանգնած դեմը նույն թղթախաղային կանաչ ու քառակուսի սեղանի վրա—Մագութի Համոն։ Ներքեվում, այսինքն սեղանի կողքին, գլխաբաց կանգնած եյին՝ բժիշկը, Ռսեփ Նարիմանովը, Արամ Անտոնիչը, Գեներալ Ալոշը, ընկ. Վառոդյանը և Կինտաուրի Սիմոնը—կոշկակարը։ Բերանները բաց՝ բղավում եյին «ուռա»։ Դեռ չեր ուշքի յեկել պ. Մարուքեն, յերբ մեկը յետեվից հրեց նը-

րա կողին և ականջին բղավեց. «Գլխարկդ հանի՛, տո՛, չե՞ս հասկընա»։ Նայեց—Արոմարշն էր. ակնոցը քթին, այծամորուք։ Դեմքին—պատկառանք էր խորհրդավոր, ակնոցը թեքվել էր մի կողմ. գլուխը նման էր «Խաթաբալայից» հանած ծաղրանկարի։ Հանեց գլխարկը, առանց բան հասկանալու, պ. Մարուքեն. բայց մինչ այդ նվագը դադարեց, բոլորը ծածկեցին գլխարկները և այս անգամ պ. Մարուքեն ինքը մնաց՝ քիթը վեր, գլխարկը ձեռին։ «Հայրենակիցներ»—սկսեց, յերևի ընդհատված ճառը շարունակելով, Մազութի Համոն. և տիրեց լռություն՝ լսողություն տիրեց։ «Մոտ է, մոտենում է օրը»—շարունակեց ապա Մազութի Համոն,—«յերբ, յելած մոխիրից, դարերի քնից—հառնե՛ պիտի, ազատ, յերկիրը հազարամյա—ազատ Նայիրին»։ Այս իմաստով ահա, խոսում էր, բավականին հուզված, Մազութի Համոն. բայց ահա նրա ձայնը բարձրացավ, ձեռքը վեր մեկնվեց և աչքերը վառվեցին. նա, ինչպես յերևում էր, վերջացնում էր ճառը.—«Ամեն վոք մեզանից պարտավոր է օգնել, ինչով վոր կարող է, այսօր. յես չեմ կասկածում»,—վերջացրեց խոսքը Մազութի Համոն,—«վոր մեր հաղթապանծ զորքերը մի շաբաթից հետո Երզրում կմտնեն»։ Այսպես վերջացրեց իր ճառը Մազութի Համոն—և նորից թնդաց յերաժշտությունը՝ հասարակությունը վռնաց։ Վոգևորության հենց այս ծայրահեղ վայրկյանից հետո չէր ահա, վոր տեղի ունեցավ անսպասելի, աներևակայելի, անթույլատրելի մի բան. յերևակայո՞ւմ եք՝ պ. Մարուքեն, այդ «ախմախ անասունը», վորպիսի հորջորջում տվեց նրան, դեպքը կատարվելուց հետո, Գեներալ Ալոշը,—այդ վողորմելի պ. Մարուքեն ահա, իր կանգնած տեղից, հենց վոր Մազութի Համոն իր խոսքը վերջացրեց—«Իդիոտ!»—բացականչեց, ինչքան վոր ձայն ուներ, Համո Համբարձումովիչի հասցեյին. տիրեց մեռելային լռություն՝ ապշանք, ելեքտրական լարում։—«Բո՞յց» -իջավ, չոր, հնչուն՝ շխկալով ընկավ ընկ. Վառոդյանի ապտակը պ. Մարուքեյի այտին։ Պ. Արոմարշն շտապեց վոտքի մի խրատական, ազդեցիկ հարվածով օգնության հասնել ընկ. Վառոդյանին։ Պ. Մարուքեն, յերեսնիվայր, ընկավ.

ակնոցը, պապղուն, թռավ մի կողմ։ «Հարբած է»—հայտնեց Սերգե Կասպարիչը, դեպքի տեղը հասնելով։ «Հարբած է»—հաստատեց ընկ. Վառոդյանը.—«պետք է վոստիկանություն ուղարկել, վոր ուշքի բերեն»։ Ու պատմեց, վորպես ապացույց, ընկ. Վառոդյանը, վոր նույնը, բառացի, կես ժամ առաջ ասաց իրեն, փողոցում, առանց վորևէ առիթի, պ. Մարուքեն։

Պ. Մարուքեյին տարան վոստիկանատուն։

Չգիտեմ, հարբած էր թե չէ պ. Մարուքեն, բայց մի բավականին հավաստի աղբյուրից յես հետո տեղեկացա, վոր, ճիշտ վոր, ինչպես այդ հավաստի աղբյուրն էր ինձ տեղեկացնում—պ. Մարուքեն հարբած էր յեղել։ Նույնն էր հաստատում և Բոչկա Նիկալայը հետո, պատմելով, վոր այդ օրը, դեպքը պատահելուց յերկու ժամ, մոտավորապես, առաջ պ. Մարուքեն իրա, Բոչկա Նիկալայի դուխլի դիմացը կանգնած՝ գլուխն է քաշել «մի բոթիլ սմիրնովկա»—զառնահամ օղի։ Բայց այս դեպքում արժեքավոր է, իհարկե, վոչ այնքան Բոչկա Նիկալայի ցուցմունքը, մանավանդ վոր օղու նրա հիշատակած քանակը դժվար թե ընդունակ լիներ «խելքից հանելու» պ. Մարուքեյին,—վորքան, այո, վերևում հիշածս «հավաստի աղբյուրի» ցուցմունքը, վորովհետև.... Բայց այս ենթադրությունս հիմնավորելու համար նախ և առաջ հարկավոր է ասել, թե ինչ «աղբյուր» էր այդ, վորին կարելի չէր հավատ ընծայել և այն էլ այնպիսի մի նուրբ և անհասկանալի հարցում, վորպիսին էր պ. Մարուքեյի վարմունքը պատմական այն ահավոր. այն նշանակալից վայրկյանին։ Այդ «աղբյուրը», դե, մի մարդ էր, յերեսունին մոտիկ մի յերիտասարդ նայիրցի, վորը վերջին օրերս էր միայն յերևացել նայիրյան այդ քաղաքում, բայց վորին ճանաչում եյին տեղացիք նրա մանկությունից. ռեալական դպրոցի տեսուչ Արամ Անտոնիչի մորեղբոր վորդին էր դա—Կարո Դարայանը, վորին յոթ-ութ տարեկան հասակից Մոսկվա, Լազարյան ճեմարանն էր ուղարկել Արամ Անտոնիչը.

սրա խնամքին էր մնացել, ծնողների մահվանից հետո, դեռ մանուկ հասակից Կարո Դարայանը։ Արամ Անտոնիչը նրան Մոսկվա ուղարկելով հասել էր յերկու նպատակի մի անգամից. նախ՝ ազատվել էր նրա հոգսից, յերկրորդ՝ իր վերջին պարտքը դրանով հատուցած էր համարել իր ազգակցի հիշատակին։ Ինչպես վոր գնացել էր Մոսկվա Կարո Դարայանը—այնպես էլ մնացել էր այնտեղ մինչև ավարտելը, վորից հետո ևս, թեկուզ տեղափոխվել էր Կովկաս—Բագու, բայց չէր յերևացել հայրենի քաղաքում, չնայած Արամ Անտոնիչի հաճախակի խնդրանքներին։ Արամ Անտոնիչը մանավանդ Դարայանի դպրոց վերջացնելուց հետո, յերբ արդեն վերացված էր համարում ամեն մի հոգատարության խնդիր մորեղբորվորդու նկատմամբ, շատ էր ցանկանում նրան իր մոտ տեսնել, գուցե հենց նրա համար միայն, վոր, ինչպես ասում էր նա հաճախ Գեներալ Ալոշին, «ցանկանում էր իր ազնվության պտուղը մոտիկից ճաշակել»։ Բայց հետո, Կարո Դարայանի Բագու գալուց մի քանի ժամանակ անց, Արամ Անտոնիչը դադարեց հանկարծ իր «ազնվության պտուղի» մասին առհասարակ խոսելուց, իսկ յերբ, լինում էր, հիշեցնում էին նրան իր «սանիկի» մասին—Արամ Անտոնիչը թթու դեմք էր շինում. Արամ Անտոնիչը ծամծմում էր զրույցը։ Գեներալ Ալոշը սկզբում չէր հասկանում, ավելի շուտ՝ չէր իմանում բանի յեղելությունը. բայց հետո նա իմացավ, և ահա բանը մինչև այնտեղ հասավ, վոր Արամ Անտոնիչը մի գեղեցիկ օր էլ վերցրեց գրեց իր սանիկին, վորը, ի դեպս, համարյա թե չէր էլ պատասխանում իր «բարերարի» նամակներին և վոչ մի նշան չէր էլ ցույց տալիս այդ կողմերը յերևալու,—Արամ Անտոնիչը. ինչպես ասացինք, վերցրեց գրեց Կարո Դարայանին, վոր չլինի թե վերջինս իր աչքին յերևա. իսկ յեթե պատահի գալու լինի հայրենի քաղաքը—չլինի թե մտաբերե իր քեռու բնակարանը. քեռու բնակարանը «փուչ» սանիկի համար փակված կլինի։ Այսպես էր գրել իր մորեղբորվորդուն Արամ Անտոնիչը իր վերջին նամակում—և ահա, այդ նամակը գրելուց յերկու ամիս անց, վորտեղից-վորտեղ, մեր պատմած դեպքերի նախօրյակին, մի գեղեցիկ առավոտ յեկավ Կարո Դարայանը Նայիրյան

այդ քաղաքը և կառքը կանգնեցրեց... ճիշտ պ. Մարուքեյի բնակարանի առաջ։ Այս վերջին հանգամանքը խիստ զարմանալի թվաց վոչ այնքան քաղաքացիների, վորքան իրա—Արամ Անտոնիչի աչքին. բանն այն է, վոր, ճիշտ է, Մոսկվա գնալուց առաջ յերկու յերեխաներ, ավելի լավ է ասել՝ յերկու փողոցային խաղընկերներ, թեպետ և ճանաչելիս լինեյին իրար պ. Մարուքեն և Կարո Դարայանը, բայց չէ վոր դրանից հետո այնքան էր ջուր հոսել, և այն էլ տարբեր հուներով, վոր վոչ մի հնարավորություն, թվում է թե, չպիտի մնար նրանց մտերմանալու։ Դրանից հետո պ. Մարուքեն, ինչպես գիտենք, տեղական քաղաքային յոթնամյա դպրոցն էր ընկել, վորից հետո, չգիտենք թե ինչ զարմանալի հրաշքով, յեղել էր Բեռլինում, այնինչ Կարո Դարայանը գնացել էր Մոսկվա, ապա Բագու, այնպես վոր վոչ մի առիթ, վոչ մի հնարավորություն, թվում է թե, չէին ունեցել իրար հանդիպելու—և հանկարծ... Կարո Դարայանը վերադառնում է այդ քաղաքը և կայարանից քշում է ուղիղ պ. Մարուքեյի բնակարանը, ամենայն ճշտությամբ ասում է կառապանին պ. Մարուքեյի հասցեն...։ Հասկանում եք՝ Կարո Դարայանը, ամբողջ քսան տարի վոչ հայրենի քաղաքի և վոչ էլ պ. Մարուքեյի դեմքը տեսնելուց հետո—ասում է կառապանին պ. Մարուքեյի հասցեն և հին բարեկամի նման իջնում է նրա տունը, նախքան վերջինիս սենյակ մտնելը—դուրսը, հենց դռան առաջ, կառապանի կողքին մի պինդ համբուրվելով իրեն միանգամայն անծանոթ, բայց հրաշքով մտերմացած պ. Մարուքեյի հետ...։ Այս բանն իր սեփական աչքերով տեսել է Կինտաուրի Սիմոնը, կոշկակարը և ամենայն մանրամասնությամբ պատմել է ընկ. Վառոդյանին։ Յեվ ահա—հենց այդ Դարայանը, նա ինքը. ինչպես այս բոլորից կարող եք յեզրակացնել՝ պ. Մարուքեյի այդ հոգեկից ընկերն ահա, վերջինիս հետ քաղաքային այգում տեղի ունեցած այն ցավալի դեպքի յերկրորդ օրը հավատացնում էր բոլորին, վոր պ. Մարուքեն, ճիշտ է, հարբած է յեղել։ Կարծում եմ, վոր յես իրավունք ունեմ Կարո Դարայանին, այդ, իմ կարծիքով ամենահավաստի աղբյուրին, լիովին հավատալու, նախ նրա համար, վոր նա հետագայում հայտնի դար-

ձավ քաղաքին, վորպես միանգամայն մաքուր, անկաշառ մի անձնավորություն, և ապա՝ նրան, պ. Մարուքեյի այդ սրտակից ընկերոջը, իսկի յել ձեռնտու չեր հարբեցողի դիպլոմ կպցնելը իր «հոգեկցի» ճակատին, մանավանդ վոր այդ չարաբաստիկ «դիպլոմը» շատ շուտով պատճառ դարձավ պ. Մարուքեյի ուսուցչական դիպլոմից զրկվելուն։ Մի հանգամանք, վորի մեջ խառն եր—և նա ինքն ել չեր թագցնում—Մազութի Համոյի մատը։ Նա, Մազութի Համոն, վորպես ծխական դպրոցների ավագ հոգաբարձու, ասել եր հոգաբարձական ժողովին, վոր շտապ կարգով, վորպես բացառություն, տեղի յեր ունեցել վոչ թե Համո Համբարձումովիչի գրասենյակում, այլ յեկեղեցու ժամավաճառքի խանութում, վորտեղ միշտ պատրաստ եր լինում ծխական դպրոցների հոգաբարձական կազմը,—այդ կազմին ահա ասել եր, զայրույթի փրփուրը բերանին, Մազութի Համոն, վոր «Նայիրյան դպրոցում, ուր կրթվում, հասունանում և թևեառնում մեր մատաղ սերունդը, վորի ուսերի վրա, վորի վտիտ ուսերի վրա վաղը պետք ե ծանրանա Նայիրյան—ո, յես հավատում եմ դրան,—պայծառ ապագան դարբնելու գործը,—հարգելի ժողովականներ, յես ասում եմ, այո, վոր նման մի սրբազան վայրում, և այն ել ուսուցչի բարձր կոչումով, տեղ չպետք ե ունենան պ. Դրաստամատյանի նման հարբեցող ավարաները...»։ Այսպես եր ասել ծխական դպրոցների հոգաբարձական կազմին, միանգամայն արդարացի լինելով, Մազութի Համոն,—և նրան. այդ կազմին, վոչինչ ուրիշ չեր մնա անելու, քան հաստատելու նրա կարծիքը և հեռացնելու պաշտոնից պ. Մարուքեյին, վորը և տեղի ունեցավ, ի մեծ անտարբերություն պ. Մարուքեյի և ի մեծ ուրախություն ամբողջ քաղաքի—յերկու որ անց։

Բժիշկ Սերգեյ Կասպարիչը այլևս նստում եր զորակոչային ատյանում։ Իսկ յերեկոները, ըստ սովորության, նորից զբաղվում եր քաղաքային ակումբում մխիթարիչ թղթախաղով, բայց

այն տարբերությամբ, վոր այժմ հետզհետե խոշորանում եյին գումարները, խաղամիջի գումարները. «տասը», «հիսուն». «հարյուր»-ի տեղ կանաչ սեղանների շուրջը այժմ լսվում եյին «յերեք ու կես», «հինգ», «հավասար» բացականչությունները, վորոնք, փոխաբերաբար, հասկացվում եյին, վորպես հարյուրի ու հազարի հետ առնչություն ունեցող գումարներ։ Յերկրորդ աչքի ընկնող փոփոխությունը, վոր առանձնապես դուր եր գալիս Սերգեյ Կասպարիչին, այն եր, վոր նոր, միանգամայն «թարմ» մարդիկ եյին սկսել հաճախել քաղաքային ակումբը, ըստ մեծի մասի յերիտասարդ սպաներ, վորոնք շատ շուտ ընտելանում եյին բժշկին և, նրանից հետո, մնացած շրջանին՝ Ոսեփ Նարիմանովին, Գեներալ Ալոշին, Արամ Անտոնիչին և մյուսներին. յես դիտմամբ առաջին հերթին չտվի Համո Համբարձումովիչի անունը, վորովհետև նա թեկուզ և չեր դադարել ակումբ հաճախել, բայց յերևում եր կանաչ սեղանի շուրջը վոչ պարբերաբար, ինչպես առաջ, այլ յերբեմն-յերբեմն, և այն ել յերեկոյան ուշ ժամերին, տասնըմեկից հետո. ով, ով չգիտեր, վոր որըստորե մեծանում, վիթխարի ծավալ եր ստանում Մազութի Համոյի հասարակական գործունեությունը, վորով, իհարկե, քիչ տեղ եր մնում անձնական հաճույքներին՝ աննշան տեղ։ Արդեն խոսում եյին, արդեն շատ վորոշակի շշուկներ եյին շրջում քաղաքում—և այդ շշուկները ինչ-վոր առնչություն ունեյին ընկ. Վառոդյանի հետ. արդեն տալիս եյին հայտնի անուններ։ «Անդրանիկ», «Դրո», «Քեռի»,—խոսում եյին արդեն տներում ու փողոցներում։ Յեվ այդ անունները կապվում եյին ինչ վոր անհայտ թելերով կապվում եյին այդ անունները Մազութի Համոյի գրասենյակին. ինչ վոր անհայտ կողմերից յերկարվում եյին, ասես, աներևույթ թելեր և փաթաթվում եյին «Լույսի» կառավարիչ Մազութի Համոյի շուրջը, նրա հետ առնթեր մեջ առնելով նաև ընկ. Վառոդյանին, այո, նախ և առաջ ընկ. Վառոդյանին և ապա բժշկին և Ոսեփ Նարիմանովին։ Չգիտենք՝ կապ ունեյին արդյոք այդ շշուկներին, թե վոչ, բայց այդ որերին եր հենց, վոր Հինգհարկանի Շենքի հրամանների կողքին մի առավոտ քաղաքացիք փակցրած գտան—ուրիշ, նայիրատառ հրամաններ,

ճիշտն ասած՝ հայտարարություններ, վորոնց ներքևում, սպիտակի վրա սևով, ստորագրված եր՝ տպված եր նայիրատառ՝ Համազասպ Աստվածատրյան.—դա հենց ինքն եր՝ «Լույսի» կառավարիչ Համո Համբարձումովիչ Ասատուրովը—Մազութի Համոն...:

Այդ հայտարարությունները կանչում եյին քաղաքացիներին, կանչում եյին, ինչպես ասված եր նրանցում—կիրակի, ցերեկվա ժամը 12-ին, ամառային ակումբի դահլիճը—«Հասարակական ժողովի»: Գրված եր, նույնպես ասված եր նրանցում, վոր—«Ներկա մոմենտի մասին կբանախոսե Համազասպ Աստվածատրյանը»—(կարդա Մազութի Համոն)—և ապա «բանախոսությունից հետո տեղի կունենա մտքերի փոխանակություն մի շարք կարևոր հարցերի մասին. մուտքը ազատ ե բոլորի համար. պատասխանատու կարգադրիչ՝ Համազասպ Աստվածատրյան»—ահա այդ հայտարարությունների բովանդակությունը:

Կարդաց—կարդաց այդ հայտարարությունը վարսավիր Վասիլը և նրա դեմքը, չգիտեմ ինչու, գարնան տատասկի նըման, զվարթ, բացվեց. կարծես յուղ քսեցին վարսավիրի դեմքին: Ձեռքերը իրար շփելով՝ մոտավ Կինտաուրի Սիմոնի կոշկակարանոցը վարսավիր Վասիլը և զվարթ բացագանչեց.«Մազութի Համոն ելի կանչել ե քեզի, տո, Կլուբի Մեյմուն, բանե խաբա՞ր ես հեչ...»: Կոշկակար Սիմոնը կարծեց, թե ճիշտ վոր կանչում ե իրեն Մազութի Համոն. դանակը վար դրեց Կինտաուրի Սիմոնը և ելավ վոտքի: «Ո՞ւրա, ո՞ւրտեղ ե»—թեկուզ խոցված վարսավիրի կողմից հորջորջումից, բայց ներքուստ հպարտացած, վոր. այ. ինքն ել առնչություն ունի այնպիսի անձնավորության հետ, ինչպիսին ե Համո Համբարձումովիչը—Մազութի Համոն: «Ո՞ւրա» շողոքորթ ժպտալով հարցրեց Կինտաուրի Սիմոնը վարսավիր Վասիլին, կարծելով, վոր դուրը, դռան մոտ, ցերեկ, կանգնած սպասում ե իրեն Մազութի Համոն:—«Ա՛յ»—պատասխանեց, մեջքը թեքելով և կռնակը

դեպի Կլուբի Մեյմունը դարձնելով, վարսավիր Վասիլը. ու ցուցամատը տարավ, ցույց տվեց. իր այն տեղը, վորի վրա ծնընդյան օրից նստում եր նա: Հասկացավ Կլուբի Մեյմունը, գըլխի ընկավ նա, վոր «ձեռ ե առել» իրեն վարսավիր Վասիլը.—«Թյո՛ւ, մա՛րդ, նամուսիդ»—թքեց Կինտաուրի Սիմոնը վարսավիրի յետևից, բայց նա, խոպոտ հռհռալով, ցատկել եր արդեն դուրս: Վարսավիր Վասիլը արդեն չկար:

Բայց յես մոռացա ասեմ, վոր Մազութի Համոյի նույն այդ հայտարարությունների կողքին, նույն այդ օրը, փակցրած կային ևս ուրիշ հայտարարություններ, վորոնց ճակատին տպված եր թեկուզ «Լույս» Նավթարդյունաբերական Ընկերության կողմից» ծանուցումը, սակայն նրանց ներքևում ևս տպված եր նորից նրա, անխուսափելիորեն նրա—Մազութի Համոյի ստորագրությունը: Նրանցում, այդ մյուս հայտարարություններում, ծանուցում եր ի լուր հանրության, վոր—Ապրանքատեղափոխության պայմանների դժվարանալու պատճառով՝ «Լույսի» վարչությունը պատիվ ունի հայտնելու արգո հասարակությանը, վոր սույն թվից սկսյալ նաֆթը վաճառվելու յե փութը մի ռուբլի հինգ կոպեկով»—այսինքն նախկին գնից փըթին 15 կոպեկ ավելով: Չնայած Համազասպ Աստվածատրյանի առաջին հայտարարության առանձին խորհրդավորությանը և անհասկանալի վոճին՝ Մազութի Համոյի այս յերկրորդ հայտարարությունն ավելի հուզեց քաղաքացիների միտքը, քան առաջինը: Մանավանդ վոր չար լեզուներն սկսեցին խոսել,—և այս լեզուների շարքում իր առանձնահատուկ տեղն ուներ. Մարութեցի լեզուն,—վոր նավթի գինը բարձրացնելու խընդրում մատ չունի «Կենտրոնը», այսինքն «Լույսի» կենտրոնական՝ Բաքվի վարչությունը, այլ վոր այդ հետևանք ե իրա—Մազութի Համոյի սեփական ձեռներեցության, մի բարեմասնություն, վորով այնքան հարուստ եր Մազութի Համոն և վորի շնորհիվ նա քանիցս արժանացել եր կենտրոնական վարչության առանձին ուշադրությանը, հատուկ հարգանքին: Չգիտենք, վորքան հիմք ունեյին այդ զրույցները, բայց մենք, աչքի առաջ ու-

նենալով ռուսական հայտնի առածը, տրամադիր ենք կարծելու, վոր այդ «ծուխը» ևս պիտի նախապայման ունենար յեթե վոչ խակական մի «կրակ», գոնե կրականման մի բան։ Սիրելի ընթերցող, քո աչքից թող չխուսափե իմ այս միանգամայն «նուրբ», միանգամայն զգուշավոր վերաբերմունքը դեպի Մազութի Համոյի անձնականին ուղղված գունազան «ասեկոսեները»․ վո՞ր, վո՞ր, ասացեք խնդրեմ, քիչ թե շատ համարում ունեցող հեղինակը կարող է ցանկանալ, վոր իրեն մեղադրեն բամբասանքի մեջ դեպի իր հերոսը—նու, յեթե վոչ «հերոսը», գոնե իր վեպի նշանավոր, այո, կենտրոնական անձնավորություն-ներից մեկը։ Իսկ ինձ համար, մանավանդ, վոչ միայն վորպես հեղինակի, այլև վորպես մարդու—ուրիշ կրկնակի կերպով անհաճելի պիտի լիներ նման մեղադրանքը, վորովհետև, զգում եմ, վոր յեթե չես թույլ տալի ինձ գոնե մի, թեկուզ ամենաչնչին, անբարեխղճություն գրությանս տարրկա անձնավորության հասցեին—ապա հետևեյին, խղճի խայթի նման հսկեյին պիտի անքուն գիշերներս Մազութի Համոյի կայծկլտող աչքերը՝ ուտեյին պիտի սիրտս։ Պիտի նայեյին նրանք, հսկեյին պիտի խղճմտանքս—կախաղանի բարձունքից պարզեյին պիտի դեպի խիղճս Մազութի Համոյի տառապյալ աչքերը—նախատինքի, այո, մորմոքի ասեղներ...։

Կիրակի, ինչպես գրված եր հայտարարության մեջ՝ ցերեկվա ժամը 12-ին արդեն կանգնած եր Մազութի Համոն ակումբի դահլիճի դեռ չբարձրացրած վարագույրի յետևը և պատրաստվում եր սկսելու։ Նայում եր վարագույրի արանքից դահլիճում հավաքված հասարակությանը և սրտմտում եր կարծես. կողքին կանգնած եր ընկ. Վառոդյանը և նույնպես ցույց եր տալիս դժգոհության նշաններ։ Բանն այն եր, վոր այնքան էլ, կարծես, դահլիճը լիքը չեր։ Առաջին շարքում, կողք-կողքի, նստած եյին՝ Գեներալ Ալոշը, Ոսեփ Նարիմանովը, բժիշկը։ Արամ Անտոնիչը յերկրորդ կարգի առաջին նստարանն եր ընտրել և քիթը վեր տնկած, հոտոտում եր ոդը. փնտրում եր ոդի ալիքներում ինչ

վոր ծանոթ մի բան, բայց. կարծես, չեր գտնում։ Նրանից յերկու նստարան այն կողմը նստել եր կոշկակար Սիմոնը—Կլուբի Մեյմունը։ Վարսավիր Վասիլը նրա յետևում դրված նըստարանն եր ընտրել և, նայելով կոշկակարի ծոծրակին, շոյում եր մորուքը։ Բացի այս հարգելի նայիրցիներից յեթե Հաջի Մանուկոֆին, ռեալական և որիորդաց գիմնազի մի քանի ուսուցիչ-ուսուցչուհիներին, ծխականի վարժապետ-վարժուհիներին, տեր-Հուսիկ քահանա-Խաչագողին և պ. Արոմարշին էլ թըվենք—սրանով համարյա թե սպառած կլինենք չափահաս քաղաքացիների կոնտինգենտը. յեթե, իհարկե, այդպիսիների շարքին չդասենք մի քանի ուսանող-ուսանողուհիներին և մի շարք աշակերտներին (մեծ մասը Գևորգյան Ճեմարանից), վորոնք կարծես թե իրենք էլ զգալով իրենց անչափահաս լինելը՝ շարվել եյին պատերի յերկայնքին և բռնել եյին մուտքը՝ չնայած վոր դահլիճում դեռ, բավականին թվով, մնացել եյին չբռնված նստարաններ։

Տասներկուսից տաս անց Մազութի Համոն անհանգստացավ. նայեց ժամացույցին, նայեց ընկ. Վառոդյանին. «Հարկավոր է սկսել»—ասաց ընկ. Վառոդյանին Մազութի Համոն։ Ընկեր Վառոդյանը դուրս յեկավ մի վայրկյան, ծառային կարգադրեց—և ահա, յերբ կրկին վերադարձավ և հայտնեց. Համո Համբարձումովիչին, վոր իսկույն կսկսեն—դրսից, ակումբի դռնից, լսվեց զանգի ձայնը, վորից հետո դահլիճ մտնել սկսեցին մի քանի նոր անձնավորություններ, մի յերկու ուսանող, մի յերկու յեկվոր սպաներ. վերջին մտնողը պ. Մարուքեն եր՝ յետևից Կարո Դարայանը, վոր տեղավորվեցին վերջին շարքի նստարաններին. ապա դուռը փակվեց և վարագույրը բարձրացավ...։

Յեվ ահա այստեղ եր, վոր հանդիսականների աչքին ներկայացավ մի բավականին տարօրինակ, անսպասելի տեսարան, բեմի աջ անկյունում դրված եր ամբիոնանման մի հարմարություն, վորի կողքին կանգնած եր Մազութի Համոն, իսկ բեմի կենտրոնում, նույն ճակատագրական կանաչ սեղանի առաջ (ուրիշ սեղան յերևի չեր ճարվել ակումբում) նախագահական աթոռի վրա նստած եր, վորպես նախագահ,—յերևակայո՞ւմ եք—ընկ.

Վառոդյանը...։ Վա՜տ, վա՜տ հոտ էր փչում, ինչպես հետագայում ասում էր պ. Մարուքեն, Նայիրյան այդ ժողովից—ասում էր, ինչպես ասացինք, հետագայում, յերբ արդեն պատմության գիրկն էր անցել այդ ժողովը և արդեն ակնբախ էին դարձել, նույնիսկ Մեռելի Ցենոքի աչքին, նրա աղետավոր հետևանքները... Բայց այն, այն ժամանակ վո՞նց հասկանար այդ «վատ հոտը»—չասենք Մեռելի Ցենոքը, վորն ընդհանրապես քիչ բան էր հասկանում, այլ, ասենք, հենց մանրավաճառ Կոլոպոտյանը, վոր իսկի չէր էլ յեկել ժողովի. կամ Նայիրցի արհեստավորը, վոր չէր էլ լսել այդ ժողովի մասին և յեթե լսեր էլ—քիչ բան պիտի հասկանար։ Վո՞նց, վո՞նց իմանար նեխած ձկան նման վագոնները լցված Նայիրցի տրեխավորը, վո՞նց հասկանար այդ «վատ հոտը» նա, վոր առաջին անգամն էր, յելած իր մութը խուղից, յերկաթագիծ տեսնում, և նրա անհայտ հեռուներից սարսափահար՝ լալիս էր պառավանըման և յերգում էր, պառավաձայն, վայրենի իր «Տանըմը»—փակ, անդուռ վշտի հանճարեղ այդ վոռնոցը, վոր պատիվ կարող էր բերել ամեն մի, ձմռան կես գիշերին դունչը լուսնին տնկած, սարսափահար գայլի...։

Տասերկուսից տասնհինգ անց այդ ժողովը բացվեց։

«Ըհը՛, ըհը՛,»—յերկու մատը շրթունքներին տանելով, չոր հազաց ընկ. Վառոդյանը. և ասաց բացման խոսքը՝ կարճ և ազդու։ «Տիկիններ և պարոններ», սկսեց իր խոսքը ընկ. Վառոդյանը, թեկուզ. կարծեմ, վոչ մի տիկին չկար դահլիճում, յեթե, իհարկե չհաշվենք ծխականի վարժուհի որ. Սաթոյին, վորին փոխաբերական մտքով միայն, թերևս, կարելի յեր «տիկին» անվանել, և այն էլ յեթե նման մի անքաղաքավարություն թույլատրելի լիներ Նայիրյան ժողովներում։ Ընկ. Վառոդյանը իր բացման խոսքում, մոտավորապես, ասեց, վոր «մեծ որեր» են յեկել, նշանակալից որեր ամեն մեկի համար, բոլոր ժողովուրդների համար և, մոտավորապես, Նայիրյան ժողովրդի համար։ Նա հայտնեց, վոր պ. Համազասպը կզեկուցե այդ նշանակալից որերի

ամբողջ կարևորության մասին և համոզված է, վոր արդո հասարակությունը միանգամայն հասուն, աչալուրջ վերաբերմունք կը ցուցահանե դեպի դրված խնդիրները։ «Խոսքը, զեկուցման համար, տրվում է պ. Համազասպին»—ասաց ընկ. Վառոդյանը և նստեց։ Յեվ մինչև կմոտենար ամբիոնին պ. Համազասպը, մինչև կխմեր ջուրը - դահլիճում, Գեներալ Ալոշի առաջնորդությամբ, ներկաներն հազալ սկսեցին և կոկորդները մաքրել, կարծես իրենք պիտի, բոլորը մեկ, ատենախոսեյին։ Բայց շուտով տիրեց լիակատար լռություն և Համո Համբարձումովիչը —Մազութի Համոն, վերջապես, սկսեց...։

Յես չեմ կարող, իհարկե, արագագրական ճշտությամբ վերարտադրել այստեղ Մազութի Համոյի այդ պատմական, այդ նշանավոր ճառը։ Բայց ձևականը, այսինքն նրա շարժումները, ձայնի, առոգանության և այլ նրբությանց նկարագրությունը մի կողմ թողնելով, վորովհետև, սիրելի ընթերցող. դա վեր է իմ ուժերից,—յես կաշխատեմ պատմել, ամենայն ճշտությամբ, նրա այդ պատմական ճառի բովանդակությունը, կամ, ավելի ճիշտ կը լինի ասել՝ կորիզը,—և թող ների ինձ Համո Համբարձումովիչի տառապյալ ստվերը, յեթե չես, ինձնից անկախ պատճառներով, թույլ տամ թեկուզ ամենաննշան, մազաչափ անճշտություններ։

«Խաչատուր Աբովյանը, «Վերք Հայաստանի, վողբ հայրենասիրի» իր հայտնի վեպում պատմում է, թե ինչպես Լիդիացվոց Կրեսոս թագավորի համր լեզուն բացվում է մայրենի լեզվի հրաշալի հրաշքով»։—Այսպես մանվածապատ, այսպես բանաստեղծական սկըսեց իր այդ նշանավոր ճառը Մազութի Համոն։ Իմաստն այն է, պարզաբանեց նա հետո, վոր հայրենազուրկ մարդու գոյությունը մի վերք է, մի յարա, իսկ մայրենի լեզուն—հրաշարար բալզամ։ Դուք գիտեք, թե ինչպիսի՜ մեծ սիրով, ինչպիսի մեծ վոգևորությամբ քնարերգել են բոլոր մեծ բանաստեղծները, ինչպես մեր Ալիշանը և Գամառ Քաթիպան—շա-

ռունակեց հետո Մազութի Համոն,--իրենց հայրենի յերկիրը, իրենց հայրենի աշխարհը—իրենց հայրենիքը։ Ինչու,—հարցը, շեշտակի, դրեց Մազութի Համոն,—վորովհետև, ինչպես հայտնի յե բոլորին և ինչպես համոզված է ինքը—այդ յերկու գաղափարը, այդ յերկու հասկացողությունները են—մայրենի լեզու և հարենի յերկիր—վոր, հարմոնիկ կերպով շաղկապվելով իրար, ստեղծում են այն մեծ, այն, ամեն մի ժողովրդի զարգացման պսակը կազմող, հոյակապ շենքը, վոր կոչվում է ազգություն։ Հայրենի յերկիր և մայրենի լեզու. ահա այն յերկու հզորագույն ազդակները, վոր շաղապելով իրար, ամեն մի զարգացած ժողովրդից, ամեն մի ցաք ու ցրիվ ցեղից կազմում են անքակտելի մի միավոր,—կազմում են, ինչպես ասաց, կենդանի մի որգանիզմ—մի ամբողջական ազգություն։ Բայց հարց տանք, հարց տանք մեզ ամենից առաջ, թե ինչ է կոնկրետ կերպով իրենից ներկայացնում ազգությու՞ն միավորը կազմող իր առաջադրած անդամներից առաջինը—հայրենի յերկիրը. Յեվ, իհարկե, վոչ վոքի համար նորություն չի լինի, յեթե նա ասի, վոր դա այն հողն է, վորի վրա ապրել են տվյալ ժողովրդի նախորդները, այն հողն ու ջուրն են, վորով սնվել են, դարերի ընթացքում կյանք են ստացել տվյալ ժողովրդի պապերը, պապերի պապերը, և նրանց էլ պապերն ու պապերի պապերը։ Ինքը նրա համար է այնքան անգամ կրկնում «պապերը», վորովհետև ցանկություն ունի արգո հասարակության առանձնակի ուշադրությունը հրավիրել այն, ավելի քան կարևոր և տվյալ դեպքում հիմնական հանգամանքի վրա, վոր «հայրենիք» գաղափարը կապված է վո՛չ միայն այն հողի, այն յերկրամասի հետ, վորի վրա ապրում է հիմա տվյալ ժողովուրդը. ո, վոչ, իհարկե վոչ, հարգելի հանդիսականներ։ Այստեղ ինքը, Մազութի Համոն, հարկադրված է կիրառել Ազգային հարցի շուրջը գոյություն ունեցող գիտական գրականության այն հիմնական տեսակետը, վոր կոչվում է «պատմական տեսակետ»։ Բանը նրանումն է, հարգելի հանդիսականներ, վոր հայենիք կոչվածը մի որում չի շինվում, մի

որում չի կազմակերպվում. հայրենիքը կազմվում է դարերի ընթացքում և ժառանգություն է մնում դարերի ժառանգներին։ Յեթե որինակով խոսելու լիներ, միթե՞ միայն սա՞, միթե միայն փոքրիկ այդ քաղաքն է իրենց հայրենիքը… Ծիծաղելի կլիներ, յեթե այդպե՞ս մտածեյին։ Ո, նա գիտե, Մազութի Համոն համոզված է միանգամայն, վոր վո՛չ վոք արգո հանդիսականներից այդպես չի մտածում։ Բայց ինչո՞վ, ինչո՞վ պիտի հաստատեն իրենք, վոր այսինչ կամ այնինչ յերկրամասը, վորի վրա ապրում են այսոր բոլորովին տարբեր, օտար ցեղեր—ինչի՞ հիման վրա կարելի յե պնդել, վոր այդ յերկրամասը ևս կազմում է այսինչ ժողովրդի հայրենիքը,նրա որինական սեփականությունը։ Վո՛չ այլ ինչով, յեթե վոչ կենդանի պատմությամբ, այսինքն գոյություն ունեցող այն պատմական հետքերով, վոր թողել է տվյալ ժողովուրդը տվյալ յերկրամասերում. ահա թե ինչ, ահա թե վո՞րտեղ է հարցի կենտրոնը, հարգելի հանդիսականներ։ Ուրեմն, պարզ ասած, հայրենիք գաղափարի հիմքն է կազմում տվյալ ժողովրդի կուլտուրան, կուլտուրական անցյալը—ահա ամենաեյականը։

Ուրեմն, հիմնական այս տեսակետը պարզաբանելուց հետո, պարզ պիտի լինի ամեն մեկի համար, վոր այսինչ ցեղը, կամ ժողովուրդը, վոր, դեպքերի բերումով դարեր շարունակ տիրել է տվյալ յերկրամասին և իր ապրած վայրում վոչ մի հետք, վոչ մի կուլտուրական արձան չթողնելուց բացի՝ քանդել է այդ միևնույն տեղում ապրած ու վաստակած ժողովրդի հնագույն հետքերը,—պարզ է, հարգելի հանդիսականներ, վոր նման մի ցեղ վո՛չ մի իրավունք չունի խոսելու իր այդ ժամանակավոր ապաստանի մասին, վորպես «հայրենիքի»։ Յերկա՛ր-յերկա՛ր խոսեց այս ուղղությամբ Մազութի Համոն, բերեց կոնկրետ որինակներ, ինչպես «մենք և վոսոխը», և ապա անցավ իր առաջադրած «յերկու հիմնական հասկացողություններից» յերկրորդին—մայրենի լեզվին։ Ինչպես հոգին է՝ մարմնի մեջ, ինչպես հոգին է շնչավորում չոր մարմինը և կենդա-

նի կապակցություն ստեղծում մարմնի բոլոր մասերի, բոլոր անդամների. բոլոր բջիջների մեջ—այնպես էլ լեզուն, մայրենի լեզուն, այն հոգին, այն, ավելի լավ է ասել՝ ցեմենտն է, վոր միացնում է տվյալ ժողովրդին իր, դարերից ժառանգություն մնացած, հայրենիքում, կապում է այդ ժողովրդի անհատներին իրար, կերտում է նրանցից այն անքակտելի միավորը, վոր կոչվում է «ազգություն»: Ահա թե ինչպես է լուծում լեզվի և հայրենիքի, այսինքն, մի խոսքով ասած՝ ազգության պրոբլեմը ժամանակակից գիտությունը, հարգելի հանդիսականներ: Ուրեմն, պարզ ասած, «հայրենիքը» տվյալ ազգության մարմինն է, իսկ «լեզուն»—հոգին: Ուրեմն, հարգելի հանդիսականներ, յեթե մենք հարցը կոնկրետացնենք և կիրառել ուզենանք մեր հայրենի իրականությանը, պիտի ասենք.—ահա մեր հոգին, ահա մեր մարմինը: Վաղուց, վաղուց է արդեն, վոր բաժանված է մեր հոգին մեր մարմնից, բայց, հարգելի հանդիսականներ, քանի դեռ կենդանի չէ հոգին—կենդանի չէ և մարմինը: Ինչքան էլ «լեզուն» և «հայրենիքը» անքակտելի ողակներ կազմեն «ազգություն» կոչված կենդանի միավորի, բայց պատմության մեջ շատ անգամ պատահել են դեպքեր, յերբ վորևէ ազգություն, դեպքերի դժբախտ բերումով զըրկվելով մեկից՝ կառչել է մյուսին և այդպիսով հնարավորություն է ունեցել չձուլվել ոտարներին, պահել իր ազգային դեմքը, ինչպես մենք, արդո հանդիսականներ, ինչպես նայիրցիներս: Յեվ այսոր, բայց ավելի լավ է ասել մինչև որս, վորովհետև նո՛ր, նո՛ր է պայծառ հեռանըկարներ են բացվում այսորվանից մեր առաջ, հարգելի հանդիսականներ,—ի՞նչ, ի՞նչ եյինք մենք մեզանից ներկայացնում, վորպես ազգություն. յես կասեյի՝ հոգի առանց մարմնի. հոգևոր ազգություն: Վորովհետև, այո, մայրենի լեզո՛ւն էր միայն, վոր դեռ պահում էր մեզ, պաշտպանում էր ձուլման վտանգից—և նրա՛, նրա՛ շնորհիվ էր միայն, վոր դեռ պահում էր մեզ, պաշտպանում էր ձուլման վտանգից—և նրա՛, նրա՛ շնորհիվ էր միայն, վոր մենք, ուրիշ շատ և

շատ ազգերի, ինչպես, որինակ, Ասորեստանի և Բաբելոնի նման կորստյան չմատնվեցինք...: Վո՞րն էր, վո՞րն էր Նայիրին մինչև որս, հարգելի հանդիսականներ. վո՞րն էր, այո,—կենդանի Նայիրին:—Նայիրին յե՛ս եյի, հարգելի հանդիսականներ, Նայիրին դո՛ւք եյիք և բոլոր նրանք, վորոնք մեզ նման խոսում եյին նայիրյան քաղցր լեզվով, վորի մասին այնպիսի հրաշքներ է պատմում Խաչատուր Աբովյանը...: Յես հիմա խոսում եմ,—հիշում եմ, ձայնը բարձրացնելով՝ մարգարեյական հուզմամբ բացագանչեց, վոգևորված, Մազութի Համոն.- յես խոսում եմ հիմա Հոգևո՛ր Նայիրիի մասին, հարգելի հանդիսականներ,—և այս իմաստով յես կարող եմ ասել, վոր Նայիրին այնտեղ է, վորտեղ կա գոնե մի նայիրցի: Առաջին՝ մարմնավորի, հայրենիքի իմաստով Նայիրին այնտեղ է, վորտեղ ապրել են մեր պապերը, մեր պապերի պապերը և նրանց էլ պապերի պապերը, հարգելի հանդիսականներ,—այնտեղ է, ասենք—Վանում, Բիթլիսում, Դիարբեքիրում. այնտեղ է—Կիլիկիայում, Դերսիմում, Գարահիսարում. իսկ յերկրորդ՝ լեզվի, հոգևորի իմաստով—Նայիրին, կրկնում եմ, այնտեղ է, վորտեղ կա, վորտեղ ապրում է այսոր գոնե մի նայիրցի: Իսկ վորտե՞ղ, վորտե՞ղ, ասացեք խնդրեմ, չկա, չի ապրում հիմա մեր յեղբայր նայիրցին...: Վորտե՞ղ, աշխարհի վո՞ր, թեկուզ և ամենահեռավոր անկյունում, չկա, վոտք չի դրել հայրենադուրկ նայիրցին...: Տարել է, տարել է իր հալածված ստվերը, տարել է աշխարհից—աշխարհ թափառական նայիրցին: Յելել է նա, նայիրցին—հինգ դար առաջ յելել է հայրենի աշխարհից ու թողել է հնամյա իր անունը աշխարհի բոլոր կողմերի վրա թափառական նայիրցին: Յեվ այսոր ահա արդեն հնչում է ժամը, հարգելի հանդիսականներ. ժամանակ է արդեն, վոր գա, յետ դառնա նորից հնամյա իր յերկիրը աստանդական նայիրցին: Յեվ արդեն—արդեն՝ աշխարհի հեռու, ամենախուլ անկյուններից պարզում է իր ձեռքը դեպի իր հայրենիքը, պարզում է դեպի հայրենի Նայիրին—աստանդական զավակը. մարմինը կորցրած ուրվակա-

նի նման՝ մարմնանալ է ուզում հազարամյա Նայիրին...: Բայց ինչպես, ինչպես, ինչպես մարմնանա...»— Այստեղից եր ահա, վոր անցավ Մազութի Համոն «ներկա մոմենտին»:

Պետք է, սակայն, նկատել, վոր Մազութի Համոյի այդ պատմական բանախոսության առաջին, տեսական մասը բավականին քիչ, համարյա աննկատելի ուշադրության արժանացավ հանդիսականների կողմից: Հանդիսականները, ճիշտ է, չեյին աղմըկում, չեյին էլ հազում, կամ անհանգստանում տեղերում, այլ այնպես, կարծես թե չկային, կարծես թե, ինչ-վոր մի անխուսափելի պարտականություն կատարած լինելու համար՝ ականջները դեմ եյին արել սատանի ջրաղացի. վոչ ջուր եր լցվում ականջները, վոչ մոքի հատիկ: Բանախոսության յերկրորդ մասը, սակայն, բավականին հետաքրքրեց և նույնիսկ այն աստիճանի հուզեց հանդիսականներին, վոր մինչև անգամ Կինտաուրի Սիմոնը -Կլուբի Մեյմունը ձայն առավ և... համարյա թե խոսեց:

Դուք գիտեք,—ասաց Մազութի Համոն հարցի գործնականին անցնելով,—վոր, յերկրորդ շաբաթն է արդեն, ինչ պատերազմ է հայտարարված մեր դարավոր թշնամուն—Վոսոխին: Մեր հաղթապանծ զորքերն արդեն մոտ են թշնամու սահմանները,—մոտ է, մոտ է արդեն փառավոր այն որը, յերբ մեր փառավոր զորքերը Երզրում կմտնեն: Ծանրության կենտրոնը հիմա նրանումն է, վոր մենք, Նայիրցիներս, հարկ յեղած լրջությամբ գիտակցենք, հասկանանք լիովին այն խոշոր նշանակությունը, վոր ունեն այդ անցքերը և կարող են ունենալ մեր հարցի համար: Բավական է գիտակցել այս հանգամանքը միայն, վորպեսզի հասկանանք, վոր չի կարելի այսոր, այո, չի կարելի ձեռքերը ծալած նստել. հարկավոր է ցույց տալ մեզ բոլորիս համար նվիրական գործին ամենայն աջակցություն, լիակատար աջակցություն: Թե՛ բարոյական, և թե, մանավանդ, նյութական: Դուք գիտե՞ք,—ձայնը բարձրացնելով և խորին հուզմունքով բացականչեց հանկարծ Մազութի Համոն,—վոր չես հայտնեմ

պիտի հիմա մի ուրախալի, մի, բացառիկ նշանակություն ունեցող, խոշոր նորություն.—թագավոր կայսեր ստորագրությամբ գրություն է ստացվել փոխարքայի հասցեյով, վորով թույլատրվում է մեզ կամավորական բանակներ կազմակերպել—ուրիշ խոսքով ասած՝ մեր սեփական, այո—նայիրյան զորքն ունենալ՝ մեր հին հայրենիքի գրավված վայրերը պաշտպանելու համար...»:

Դեռ չեր վերջացրել իր այս նախադասությունը Մազութի Համոն, յերբ, կարծես բժիշկ Սերգե Կասպարիչի նշանով, դահլիճում ծայր առավ մի կատաղի ծափահարություն: Հանդիսականներից շատերը, ինչպես Կինտաուրի Սիմոնը և Վարսավիր Վասիլը վոգեվորության այն աստիճանին հասան, վոր սկսեցին վոտքերը գետնին խփել և բացականչություններ անել: Բայց հնչեց նախագահի—չոր, հաստ—հնչեց ընկ. Վասոդյանի զանգը նախագահական տեղից. դահլիճում տիրեց լռություն: Բաժակից ջուր խմեց, առիթից ոգտվելով, Մազութի Համոն և շարունակեց.—«Սա նշանակում է, վոր կայուն, իրական հողի վրա յե դրվում այսորվանից մեր հարցը—և մեզ մնում է գրկաբաց առաջ գնալ ստեղծված հնարավորություններին՝ աճապարել կազմակերպված դիմավորել մեր տառապյալ հայրենիքի վերջնական ազատագրմանը»:—Այստեղ նորից, չնայած մի վայրկյան առաջ եր խմել—բաժակից ջուր խմեց Մազութի Համոն և—«բայց դեռ յես չեմ հայտնել, հարգելի հանդիսականներ, ամենաեյականը»—ասաց Մազութի Համոն խորհրդավոր ձայնով. յերևում եր, վոր ուզում եր հայտնել չափազանց կարևոր, նշանակալից մի նորություն, բայց դժվարանում եր ձևավորել: «Յես պիտի հայտնեմ ձեզ, հարգելի հանդիսականներ»—ասաց, շրթունքները սրբելով, նա վերջապես—«վոր նույն այդ բարձրագույն գրությամբ—ամենահավաստի աղբյուրից մենք տեղեկություն ենք ստացել—բավականին, այո, բավականին վորոշ խոստումներ են տրվում մեզ ապագայի նկատմամբ

—և մենք ամենայն վճռականությամբ կարող ենք ասել, վոր բացի ընդհանուր բարեյացակամ վերաբերմունքից դեպի մեր «Հարցը» —մենք արդեն ունենք և իրական, ապա ուրեմն պաշտոնական յերաշխիքներ ամենաբարձր ինստանցիաներից գրավոր տրված....»։

Այստեղ նորից, նորից գլորվեց դահլիճը հախուռն ծափահարություններից, ապա, անցնելով բանախոսության վերջաբանին, դեպի հասարակությունն յեկավ, ամբիոնի մոտից հեռանալով, Մազութի Համոն և ասաց, մոտավորապես, հետևյալը. «Մեծ, վճռական, պատմական օրեր ենք ապրում, հարգելի հանդիսականներ.—և հարկավոր է, վոր մենք, պարզ ու վորոշ կերպով, ցույցահանենք մեր կազմակերպված վերաբերմունքը դեպի կատարվող անցքերը։ Պետք է գիտենանք օգտվել առիթից—շեշտեց, խրատական շեշտով, Մազութի Համոն։ Հարկավոր է գործով, այո, և վոչ թե խոսքերով, օգնության գալ այսոր հայրենիքի ազատագրման նվիրական գործին, պարզ ասած՝ պետք է ժողովրդական ամենալայն խավերի սեփականություն դարձնենք կամավորության գաղափարը։ Թող գրվի, ով վոր կարող է, ով վոր ընդունակ է զենք վերցնելու—թող գրվի նա կամավոր,—և այն ժամանակ գալիք սերունդների առաջ մենք, հպարտությամբ, այո, իրավունք կունենանք ասելու, վոր արինք, ինչ վոր պահանջվում եր մեզանից պատմական այս ծանր վայրկյանին,—կատարեցինք, այո, վորդիական մեր պարտքը դեպի մեր թանգագին հայրենիքը, դեպի, յես համառում եմ, այո, ո՛, յես չեմ կասկածում—վերածնվող Նայիրին...»։

Այսպես, մոտավորապես, վերջացրեց իր պատմական այդ բանախոսությունը Մազութի Համոն և հանդիսականների կողմից, ինչպես և կարելի յեր սպասել, արժանացավ բուռն, անսահման ծափահարությանց։ Ո՞վ եր, ո՛վ եր, չգիտեմ, սկսողը, բայց, մի վայրկյան չանցած, ամբողջ դահլիճը, վոտքի յելնելով, յերգում եր Նայիրյան հիմնը. դահլիճը, մի մարդու նման, Սերգե Կասպարիչի ղեկավարությամբ, յերգում եր «Մեր Հայրենիքը»։

Հետո—սկսվեց մտքերի փոխանակությունը։ Մտքերի փոխանակությունն սկսեց Սերգե Կասպարիչը, բժիշկը։ Ապա խոսեցին՝ Ոսիփ Նարիմանովը, Արամ Անտոնիչը, պ. Աբոմարշը, տեր Հուսիկ քահանան—Խաչագողը։ Բոլորն էլ համամիտ եյին պ. Համազասպին. բոլորն էլ ցանկություն եյին հայտնում, ուժերը ներածին համեմատ, օգնության գալ «ընդհանուր գործին»։ Ամեն ինչ լավ եր գնում մինչ այդ, ամեն ինչ գնում եր, ինչպես հալած յուղ, և արդեն պատրաստվում եր իր գործնական առաջարկը մտցնել ընկ. Վառոդյանը, յերբ, հանկարծ, միանգամայն անսպասելի, աննախագուշակելի կերպով, պատահեց բավականին անախորժ, աներևակայելի մի թյուրիմացություն։ «Կարելի՞ յե մի խոսք»—հնչեց հանկարծ ներկաների 90, գուցե և 99 տոկոսին անծանոթ մի ձայն դահլիճի ամենածայրից. բոլորը յետ նայեցին, իսկ Մազութի Համոն և ընկ. Վառոդյանը—առաջ. անտեղի չեր այդ ձայնը և անսպասելի։ Նայեց, ճարպոտ վիզը հազիվ յետ շրջելով—նայեց դեպի ձայնը և Արամ Անտոնիչը. նա միակն եր, գուցե, դահլիճում, վոր ճանաչում եր այդ ձայնը։ Ձայն խնդրող ձայնը Արամ Անտոնիչի «սանիկինն» եր—Կարո Դարբայանինը։ Գուշակեց Արամ Անտոնիչի սիրտը, վոր լավ բան չի կարող պատահել, և դեմքը հանկարծակիի յեկավ—Արամ Անտոնիչի դեմքը անհամբերությունից ծավեց։ «Դուք..ինչի՞ մասին եք ուզում խոսել»—հարցրեց, վոտքի կանգնելով, ընկ. Վառոդյանը։—«Յես մի հարց միայն կուզեյի տալ պ. Աստվածատրյանին»—պատասխանեց Դարբայանը.—«կարելի՞ յե։»—Նայեց, հարցական հայացք գցեց Համո Համբարձումովիչի դեմքին ընկ. Վառոդյանը։ Համո Համբարձումովիչի հայացքը անհասկանալի թվաց ընկ. Վառոդյանին։ «Խնդրեմ»—ասաց ընկ. Վառոդյանը, զանգը վերցնելով.—«Միայն թե կարճ»։ Դահլիճը, անհամբերություն կտրած, սպասում եր Դարբայանին։ Կիսազարմացական, կիսահեգնական ժպիտը դեմքին՝ նայում եր Դարբայանին Համո Համբարձումովիչը. «Ո՞վ է այս լուսնից ընկածը»—ասում եր կարծես հեգնախառն հայացքը Մազութի Համոյի։ «Յես մի հարց միայն կուզեյի տված լինել պ. Աստվածա-

տըյանինչ—ասաց Դարայանը,—«Ձե՞ր կարող արդյոք պ. Աստվածատրյանն ասել, թե ո՞վ է տեսել այն գրությունը, վորի մեջ, իբր թե, «իրավական խոստումներ կան տրված ամենաբարձր ինստանցիաներից» և, յեթե այդպիսին, այսինքն գրությունը կա՝ ինչպե՞ս են ձեվավորված այդ խոստումները—բառացի...»:

Ինչպես քարը, այո, սարից գլորվելով և ընկնելով գետը՝ առաջ է բերում շառաչուն ջրհուզում - ինչպես ֆուտբոլի գընդակը, խաղընկերներից մեկի անշնորհք հարվածից խաղի ամենատաք վայրկյանին պայթելով՝ առաջ է բերում ընդհանուր անհաճություն և ընդհանուր ցասում—այդպես էլ Կարո Դարայանի անտեղի այդ հարցը, որահի ընդհանուր, լարված վոգևորության մթնոլորտում պայթելով՝ առաջ բերեց—բարկություն ու հեգնանք ասեմ, չգիտեմ, թե՞—հեգնանք ու բարկություն: Սերգե Կասպարիչը և Ոսեփ Նարիմանովը վեր թռան տեղերից, զարմանքը դեմքերին՝ հասարակությանը նայեցին Սերգե Կասպարիչը և Ոսեփ Նարիմանովը: «Ո՞վ է այդ յերեխան, վոր նման մի տհաս, յերեխայական հարց կարող է տալ նման մի ժողովում»—ահա այս էր գրված բժիշկ Սերգե Կասպարիչի և հաշտարար դատավոր Ոսեփ Նարիմանովի հայացքներում: Նրանց հետևելով՝ նույնպես վոտքի կանգնեցին Գեներալ Ալոշը, պ. Աբոմարշը, կինոտատերի Սիմոնը և Արամ Անտոնիչը. վերջինիս դեմքը մի այնպիսի արտահայտություն էր ստացել, կարծես ասելիս լիներ.—«Ներեցեք անարժանիս՝ յես եմ մեղավորը...»: Մեկը, Համո Համբարձումովիչը կարծեմ, հեգնական ծիծաղեց. և ամբողջ դահլիճը, մի մարդու, այո, մի բերանի նման՝ հեգնախառն փռթկաց: «Ծ՜նգ, ծն՜գ, ծն՜գ»,—հնչեց նախագահի զանգը, մեղմ ու զիջող.—«ծիծաղեցեք, բայց—լռել էլ է հարկավոր»—ասում էր այդ զանգը կարծես ընկ. Վառոդյանի ձեռքում: «Լռեցե՛ք, պարոններ»—բացագանչեց ընկ. Վառոդյանը, մի քայլ առաջ գալով, —և, ինքն էլ, կարծես չկարողանալով զսպել ծիծաղը՝ փռթկաց: —«Լռությո՛ւն, լռությո՛ւն»—օգնության չեկավ նրան, ար-

դեն բոլորովին լըջացած, Մազութի Համոն. «Նստեցեք, պարոններ»—ու ցույց տվեց ձեռքով, թե ինչպես հարկավոր է նըստել, Համո Համբարձումովիչը: Բոլորը, աղմուկով ու հրհռոցով, վերջապես նստեցին: Ապա առաջ յեկավ, ծանր ու լըջացած, Մազութի Համոն—և տվեց արժանի պատասխանը.—«Յես պիտի ասեմ հարցասեր չերիտասարդին, վոր նման հարցեր կարող են տալ միայն—թող ներե ինձ հարցասեր պարոնը—դպրոցական աշակերտները...»: Յեվ դահլիճը թնդաց, վորոտաց ծափահարություններից: «Թույլ տվեք»—ինչքան վոր ձայն ուներ, բղավեց, շփոթված, Կարո Դարայանը. «Չի կարելի, հասկանո՞ւմ եք, մարդկանց խաբել!...»: Յեվ այստեղ էր ահա, վոր, ինչպես ներքևում ասացինք, ձայն առավ—չերևակայո՞ւմ եք—Կլուբի Մեյմունը,—այսինքն, վեր թռչելով տեղից՝ ձայն տվեց ինքն իրեն Կլուբի Մեյմունը և —«Դո՛ւրս արեք էդ էշու հայվանին!»—բացագանչեց, հոգու խորին վրդովմունքով, կոշկակարը ու առաջ պրծավ, ուզեց նետվել դեպի Դարայանը, բայց... վարսավիր Վասիլը, օգտվելով հանգամանքից, իբր թե պատահմամբ, դեմ տվեց վոտքը Կլուբի Մեյմունին. Կլուբի Մեյմունը, գերանի նման, տարածվեց հատակին: Տիրեց ընդհանուր իրարանցում, աղմուկ ու հրհռոց: Հետո ինչ պատահեց—հետաքրքիր չէ, ընթերցո՛ղ, վորովհետև, այո, պատահեց անխուսափելին. Ոսեփ Նարիմանովի առաջարկով քվեարկության դրվեց, դահլիճը բավականին հանդարտվելուց հետո, օրինական առաջարկը Կլուբի Մեյմունի. Համո Համբարձումովիչը յերկու հակիրճ խոսքով խայտառակության սյանը գամեց, Դարայանին հասարակության միաձայն վորոշումով դահլիճից հեռացնելուց հետո, Դարայանի նման «տխմար յերիտասարդներին». ընկ. Վառոդյանը հայտնեց ի լուր հանրության, վոր մոտ օրերում յեկեղեցու մոմավաճառքի խանութում կսկսվի կամավորների ցուցակագրություն. հետո ժողովը փակված հայտարարվեց և հասարակությունը ցրվեց: Բայց վոչ. մոռացա մի հանգամանք ևս: Ժողովը փակված հայտարարվելուց առաջ Մազութի Համոն, չնայած վոր այդ մասին արդեն քաղաքում փակցված կային հայտարարու-

թյուններ,—Մազութի Համոն, չնայած այդ հանգամանքին, հարկ համարեց իր կողմից ևս հիշեցնել հարգելի հանդիսականներին, վոր յերեկոյան ժամը 9-ին, այդ միևնույն դահլիճում, մայրաքաղաքից նոր յեկած հայտնի զինվորական, գեներալ-պրոֆեսոր Այսինչ—Այսինչը կարդալու յե դասախոսություն «Նայիրյան հարցի ապագայի» մասին. խնդրում յե ներկա լինել և հարգել նրա, հատկապես այդ նպատակով մեր քաղաքը յեկած այդ ոտարազգի բարեկամի, այդ գեներալ-դիվա-նականի բարյացակամ վերաբերմունքը դեպի Նայիրյան դատը:

Ժամը չորսը կլիներ, յերբ ժողովը վերջացավ:

Պ. Մարութեն և Կարո Դարայանը. լավ գտել եյին իրար այդ «եշի գլուխները», ինչպես կոչել եր նրանց Արամ Անտոնիչը—դպրոցի տեսուչը: «Մի մատ յուղ» եյին դարձել վերջին որերում Նայիրյան այդ քաղաքում այդ յերկու պարոնները: «Խուփը գլորվել—գտել եր պուտուկը»—ասում եր նրանց մասին տեր Հուսիկ քահանան—Խաչագողը: Բայց պ. Մարութեն, այսպես թե այնպես, ելի «իրենց շունն» եր—վերջին հոջորջումը պատկանում եր իրան՝ վարսավիր Վասիլին,—իսկ ո՞վ եր այդ նոր «կապից կտրածը», այդ, ինչպես ասում եր նրա մասին Արամ Անտոնիչը—«Մոսկովներում փչացած անասունը»: Ո՞վ եր, այո, այդ հիմար պարոնը, վորին հասարակ քաղաքացիներն եյին միայն հիշում փողոցներում վեգ խաղալիս և վորը վերադարձել եր անհա իր հայրենի քաղաքը, վորպես ոտարական, վորպես անառակ վորդի: Ո՞վ եր նա, ինչո՞վ եր զբաղվում, ո՞ւմ հացին եր յուղ քսում—անհա հարցեր, վորոնցով հետաքրքրվում եյին գեներալ Ալոշից սկսած մինչև վարսավիր Վասիլը: Վարժապե՞տ եր նա, բժի՞շկ, ինժինե՞ր. չե.—աբլակա՞տ եր, չարչի՞, «լամպի շուշա՞»—ո՞վ իմանար: Անհա բնական հարցեր, վոր, մանավանդ վերջին հետաքրքիր թյուրիմացությունից հետո, տալիս եյին իրենց հետաքրքիր քաղաքացիները: Հարցեր, սակայն, վոր մնում եյին մութ,

մնում եյին անպատասխան: Մնում եյին անպատասխան այն հասարակ իմաստով, վոր հազար ու մի պատասխան եյին գտնում զանազան ուղեղներում՝ նայած տվյալ ուղեղի ցանկության ու խառնվածքին: Որինակ, վարսավիր Վասիլի ուղեղում այն կարծիքն եր նստել, վոր Կարո Դարայանը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ—«քամի թռցնող», իսկ թե ինչ ե նշանակում «քամի թռցնել»,—հարկավոր եր իրենից իմանալ: Այնինչ Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆը տրամադիր եր հակառակը կարծելու.—վոչ թե «քամի թռցնող» ե Կարո Դարայանը, ասում եր նա, այլ «քամի ուտող», կամ, բառացի՝ «քամի կուլ տվող», իսկ թե ինչ քամիներ եր ուտում, կամ կուլ տալիս Կարո Դարայանը.—այդ ել հարկավոր ե Հաջուց հարցնել: Յեվ յեթե հարցնող լիներ—նա, Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆը, այդ պատկառելի նայիրցին, շատ պատկերավոր կերպով կբացատրեր, թե ինչ ե հասկանում ինքը «քամի» ասելով: «Ատ քամիները ստամոքսի մեջ կշինվին. Ռուսիո անուշահոտություն կբուեն ատոնց յերդրումցիք...»—կասեր, քահ-քահ ծիծաղելով, հայտնի անգլիագետը: Բայց հարցը, ինարկե, հիմնովին փոխվում ե միանգամայն «իրական» հողի վրա չեր դրվում, յերբ վարսավիր Վասիլի և Հաջի Ոնիկ եֆենդու շնական ուղեղներից տեղափոխվում եր Գեներալ Ալոշի, Մազութի Համոյի, բժշկի, Ոսեփ Նարիմանովի, կամ ընկ. Վառոդյանի «գործնական» ուղեղները: Այս հարցը միանգամայն տարբեր բնույթ եր ստանում վերջիններիս ուղեղներում: Ամենից առաջ շատ բան ուներ ասելու Արամ Անտոնիչի, դպրոցի տեսչի ուղեղը այն պարզ պատճառով, վոր նա, Արամ Անտոնիչը, նախ՝ հարազատ «քեռին» եր Կարո Դարայանի, և ապա՝ նա, Արամ Անտոնիչը միայն գիտեր, տեղեկություններ ուներ ստացած, թե ինչո՞վ եր զբաղվում իր «յեգանը», այսինքն մորյեղբորորդին, Մոսկվայում ու Բագվում: Այո՝ նախ Արամ Անտոնիչը և ապա Մազութի Համոն: Գրել եր, ամենից առաջ Արամ Անտոնիչին եր գրել իր աներժան սանիկի «տխմար արարքների» մասին Արամ Անտոնիչի հարազատ յեղբայրը—Գարասիմ Անտոնիչը, վոր գլխավոր հաշվապահի պաշտոն եր վարում «Լույս» Նավթար-

դյունաբերական ընկերության կենտրոնական վարչության՝ Բագվի գրասենյակում: Նա, քամի կուլ տվող այդ հաստատըրլուխ էշը յերևակայում եք — թուրք բանվորներին և գրգռելիս յեղել նավթարդյունաբերական նայիրյան այդ ընկերության դեմ. — տես թե ինչով է զբաղվելիս յեղել այդ «անբան անասունը» մինչև այդ քաղաքը գալը, սիրելի ընթերցող: Յեվ այն էլ, ի նկատի ունեցեք, մի ընկերության, վորի կենտրոնական վարչության նախագահն եր այն մյուս, իսկական «Ընկերության» կենտրոնաուղեղասարդի կենտրոնական թելերից մեկը Հայտնի Անունը: Ահա թե ինչպիսի տխուր տեղեկություններ եր ստացել իր «Հոգեժառանգի», իր անարժան «սանիկի» մասին, դժբախտաբար յերկու ամիս միայն առաջ, Արամ Անտոնիչը, և այն էլ այնպիսի մի անձնավորությունից, վորին չեր կարող, իրավունք չուներ չհավատալ: Ստացել եր այդ ցցմեցուցիչ տեղեկությունները իր հոգեզավակի մասին Արամ Անտոնիչը և վորոշել եր վոչ վոքի չհայտնել, բայց մեծ յեղավ նրա զարմանքը, յերբ, այդ տխուր նամակն ստանալուց յերկու օր հետո, յերևաց նրա գրասենյակում Մազութի Համոն և, մի-յերկու սովորական հարց ու փորձից հետո, — «Բավականին հետաքրքիր նորություններ ենք լսում «յեղան»-իդ մասին, Արամ Անտոնիչ» — ցցեց, իր շեղ-հեգնական հայացքի նման, ամոթահար ակնարկը Արամ Անտոնիչի դեմքին Մազութի Համոն. Արամ Անտոնիչի դեմքը, գաճած պատի նման, սպիտակեց: Յեվ գրեց, այդ նույն յերեկո, Մազութի Համոյի հեռանալուց հետո գրեց իր վերջին նամակը, առանց ստորագրության, Արամ Անտոնիչը, նախատեց, անարգանքի սյանը գամեց իր այդ վերջին նամակում Կարո Դարայանին Արամ Անտոնիչը. Յեվ պատվիրեց, խստիվ պատվիրեց այդ վերջին նամակում, վոր չլինի թե յերբևիցե հիշե իր քեռուն այդ փուչ գավառճանը. չլինի թե յերբևիցե իր աչքին յերևա: Յեվ ահա — արդեն լսել եր, արդեն, մոռացած, էլ չեր խոսում անհաճո այդ նյութի մասին Արամ Անտոնիչին հանդիպելիս Համո Համբարձումովիչը, յերբ, ինչպես գիտենք, անամոթաբար բուսնեց, յերևաց հանկարծ իր հայրենի քաղաքում Կարո Դարայանը... բայց

այս մասին մենք, բավականին մանրամասն, արդեն պատմել ենք վերևում, պ. Մարուքելի հետ քաղաքային այգում տեղի ունեցած այն անպատվաբեր դեպքը նկարագրելիս: Բայց հիմա, յերբ տենդոտ գործունեյություն եր սկսել, հանձինս Մազութի Համոյի և ընկ. Վառոդյանի, Տեղական Կոմիտեն — ինչ, ինչ մխիթարանք կարող եյին պատճառել այդ թշվառ սանիկի, մեզ ասած՝ տղայական արարքները Արամ Անտոնիչին՝ նրա քեռուն, «հոգեհորը»: Նա, Կարո Դարայանը, հասկանում եք՝ համարձակվում եր ինչ-վոր փայտիկներ խրել «Ընկերության» անիվը, — այդ վողորմելի ձիձուն, այդ «Կարո Փարայանը»: Դարայանի անվան սկզբնատառը այդպիսի մի յերկմիտ կերպարանափոխության յենթարկողը նույն անձնավորությունն եր էլի, նույն ընկ. Վառոդյանը, վոր առանձին մի շնորհք, մի փոքրիկ թուլություն ուներ դեպի նման, այո, «յերկմիտ» հանաքները. Նա չե՞ր, նա չե՞ր միթե, վոր «Գ»-ի յեր վերածել պ. Մարուքելի պատմական ազգանվան սկզբնատառը՝ «Գրաստամատի» փոխելով արքայական «Դրաստամատը». Նա, նա չեր էլի, ինչպես առիթ ունեցանք վերևում հիշելու — գավառցի շնչին վարժապետից արդեն «անձնավորություն» դարձած այդ ընկ. Վառոդյանը...:

Յերեկոյան ժամը դեռևս ութ և կեսին լիքն եր, ծայրե ի ծայր լիքն եր արդեն ամառային ակումբի դահլիճն այդ յերեկո:

Առաջին շարքի նստարանները բռնված եյին արդեն քաղաքի վերին, այո՝ ամենավերին խավերով: Այդպիսի հասարակություն շատ սակավ եր հավաքվում, տարենը մի յերկու անգամ հազիվ եր հավաքվում քաղաքի ակումբներում: Բայց, ասենք քաղաքի ակումբներում (Նայիրյան այդ քաղաքը բացի ամառային ակումբից ուներ և ձմեռայինը) — յերբեք էլ չեր հավաքվում նման հասարակություն. Նման հասարակություն, լինում եր, վոր տարին մի անգամ, և այն էլ Մազութի Համոյի բնակարանում, հավաքվում եր, այո, նրա անդուգական դստեր՝ Սևաչյա Պրիմադոննայի ծննդյան օրը, յերբ ներկա յեր լինում ինքը գավառապետը և համարյա թե քաղաքի ամբողջ «վերին խավը», ընտրովի հասարակությունը: Այդ օրերին, իհարկե, տեղ չունեյին նրա, Մազութի Համոյի, ընտանեկան սեղանի շուրջը

կինտաուրի Սիմոնը և փարսավիր Վասիլը, վորոնք ներկա եյին հիմա ակումբի դահլիճում. ընկ. Վառոդյանն անգամ չեր համարձակվի գլուխը ներս խոթելու Համո Համբարձումովիչի բնակարանը այդ բացառիկ օրերին, թեկուզ հետագայում, նկարագրածս դեպքերից հետո, ընկ. Վառոդյանը ևս սկսել եր տեղ ունենալ Մազութի Համոյի սեղանի շուրջը այդ բացառիկ օրերում և նույնիսկ, յերևակայեցեք՝ ասում են, բժիշկ Սերգեյ Կասպարիչից, յերևի, օրինակ վերցնելով, սովորել եր համբուրել Սևաչյա Պրիմադոննայի ձեռքը վերջինիս շնորհավորելիս.—չափից, այո՝ չափից արդեն անցնել եր սկսել այդ «սատկած վարժապետը» վերջին ժամանակներում...։

Յերեկոյան, ինչպես ասացինք, դեռ ինքը չկար, յերբ արդեն նստած եյին, առաջին շարքում նստած եյին արդեն—Գեներալ Ալոշը, քաղաքի պարետը՝ բարձրահասակ մի սպա, վոր վերջին ժամանակներս մի առանձին ուշադրության եր ըսկսել արժանանալ Համո Համբարձումովիչի դասեր—Սևաչյա Պրիմադոննայի կողմից,— բժիշկը, Արամ Անտոնիչը՝ իր կնոջ- Շիկահեր Դդումի կողքին, Ոսեփ Նարիմանովը, Հինգ հարկանի Շենքի համարյա թե բոլոր աչքի ընկնող պաշտոնյաները—վորը թվեմ։ Սպասում եյին Գավառապետին և կնոջը, վորոնց բերելու համար անձամբ, Սևաչյա Պրիմադոննայի ուղեկցությամբ, գնացել եր ինքը Մազութի Համոն։ Այստեղ եր նաև Անգինա Բարսեղովնան, Համո Համբարձումովիչի հարգելի ամուսինը, վորին զբաղեցնում եր, Մազութի Համոյի բացակայության պատճառով, պարետը՝ բարձրահասակ սպան. անտարբեր չեր, այո, ասում եյին չար լեզուները, վերջին ժամանակներում դեպի այդ բարձրահասակ յերիտասարդը Անգինա Բարսեղովնան, վորը, իր հերթին, հատուկ ուշադրության եր սկսել արժանանալ, չնայած իր պատկառելի տարիքին, սպայի կողմից։ «Զվանեդի սիրուն՝ թավի պոչը կիդե»—ահա վարսավիր Վասիլի չարամիտ կարծիքը այդ նուրբ հանգամանքի մասին. չոր չոր, օձի լեզու ուներ այդ «ուշադրավ պերպերը»— ինչպես բնորոշում եր նրան, վարսավիր Վասիլին, դահլիճի Սեթոն։

Ո՞վ, ո՞վ ասեմ, վոր չեր յեկել, Գեներալ պրոֆեսորին ընկերակցությամբ, այդ յերեկո. նույնիսկ Բարսեղ Արգարինը, թվաբանության ուսուցիչը, վոր, թոքերի պատճառով, բավականին «ծույլ» եր հասարակության մեջ յերևալու խնդրում—նաև, նրա կինը՝ «Ճուտը», կնոջ ընկերուհին՝ Վառյա Հոգյակը—բոլորը կային, բոլորն էլ, անխտիր, վերին խավից։ Նրանց մեջ եյին, խառնված նրանց՝ նստել եյին դահլիճի միջին կարգերում—Հաջի Ոննիկ եֆենդի Մանուկոֆը, ու Արտամարշը, տեր Հուսիկ քահանան—Խաչագողը,—և նույնիսկ, թեկուզ արդեն մուտքին բավականին մոտիկ, բայց և այնպես այդ բարձր հասարակությունից վոչ այնքան էլ հեռու—բազմել եյին... ծխականի վարժապետ — վարժուհիները.—Բյուզանդ Վարդերեսյանը, հայերենի դասատուն, վոր աշակերտել եր Մանուկ Աբեղյանին և պարծենում եր դրանով,—օր. Վարդուհի Զատիկյանը, վոր չեր կարող «տանել» օր. Նվարդին,—նույն այդ օր. Նըվարդ Լուսպարոնյանը՝ «մազը կտրածը»—պ. Աշոտի կողքին, այն ճեմարանավարտ պ. Աշոտի, վոր արդեն սկսել եր դեպքերի բերումից ավելի ևս վոգևորվելով, «Նայիրյան լեզվի պրոպագանդը ուսումնոս յերիտասարդների շրջանում» և արդեն իսկ ուներ, մանավանդ վերջերս, բավականին հաջողություն։ Սրանց հետ խառն և սրանցից հետո—դահլիճը ծայրե ի ծայր լցրած տեղավորվել եյին արդեն այլևայլ հասարակ քաղաքացիներ. ինչպես մանր խանութպաններից շատերը՝ Կարապետյանը, Հովհաննեսյանը, Պողոսյանը, Պողոսյան յերկրորդը, Կարապետյան յերրորդը—ուսանողներ, աշակերտներ, ճեմարանցիներ, (վերջիններս ուսանողների և աշակերտների մեջտեղ գտնվող մի ուրույն կաթեգորիյա եյին կազմում Նայիրյան այդ քաղաքում—ինչպես, յերևի, և բոլոր քաղաքներում,—և հատուկ ատելության եյին յենթակա ռուսական դպրոցների սաների կողմից, դեպի վորոնք իրենք ևս առիթ չեյին կորցնում իրենց ծայրահեղ զզվանքը հայտնելու)—մի խոսքով՝ մարդ չկար, վոր այնտեղ չլիներ. պակասում եյին, թերևս, Մեռելի Յենոքը և Թոռ Արութը միայն, բայց նրանք էլ, գե, յերևի դեռ զբաղված եյին իրենց յեռանդուն առևտրով—Վակզալի մեյդանում։

Ժամը ինից հինգ րոպե պակաս դահլիճը, վորպես ծխուն մի արտ, ծփաց ու որորվեց. բոլորը շուռ տվեցին գլուխները դեպի մուտքը. արդեն մտնում եյին, զուգված ու շողշողուն, գավառապետը, նրա կինը՝ Ագրիպպինա Վլադիսլավովնան, Սևաչյա Պրիմադոննան և Մազութի Համոն...: Մինչև նշանակված տեղերը ուղղեկցեց նրանց, հասարակության հիասառսուռ հայացքների ներքո, Մազութի Համոն և դուրս չեկավ նորից դահլիճից, չգիտեն թե ինչու՝ նորից անհետացավ...:

Ժամը ճիշտ իննին վարագույրը բացվեց: Բեմը դատարկ էր՝ վոչ-վոք չկար: Նույն թղթախաղի սեղանը, բայց այս անգամ արդեն կարմիր մահուդով ծածկած, դրված էր բեմի մեջտեղում. մոտը յերկու աթոռ. իսկ բեմի աջ կողմը — նույն ամբիոնանման հարմարությունն էր, վորի կողքին կանգնած բանախոսում էր, չորս ժամ առաջ, Մազութի Համոն: Յեվ ահա, վարագույրը բացվելուց անմիջապես հետո, ձախ կողմից յերևացին՝ Մազութի Համոն — Գեներալ-պրոֆեսորի թևը բռնած... «Ահ» — հառաչեց դահլիճը հիացքից ու ահից. ծափահարություն էր, չգիտեմ, թե բերդը պայթեց...: Չտեսնված, այո, աներևակայելի ովացիա յէր, վորին արժանացան Գեներալ-պրոֆեսորը և Մազութի Համոն: Յեվ ահա — թռավ, Գեներալ-Պրոֆեսորի վոտքերի մոտ ընկավ թարմ ծաղիկների փարթամ մի փունջ. Սևաչյա Պրիմադոննան էր, վոր դեպի պրոֆեսորը նետեց ծաղիկների այդ փունջը իր նազելի ձեռքով. վերցրեց, վերցրեց գետեր գցած փունջը Մազութի Համոն և, խոնարհ գլուխ տալով, մատուցեց թանկագին հյուրին: — Այսպիսի ահա չտեսնված մի փառքի արժանացավ Գեներալ-պրոֆեսորը դեռ բանախոսությունը չսկսած: Յեվ դղրդում էր դահլիճը հախուռն ծափահարությունից, վորին, գլխի «տազը» սոխափայլ պսպղացնելով, պատասխանում էր Գեներալ պրոֆեսորը խորապես հուզված: Գեներալ-պրոֆեսորին յերկու հակիրճ խոսքերով հասարակությանը ներկայացնելուց հետո-մոտեցավ, նստեց նախագահական աթոռին Մազութի Համոն՝ ձեռքը զանգին և աչքը, ծուռ, դեպի նստարանների շարքը հառած, դեպի Անգինա Բարսեղովնայի լիքը թևը, վոր հպվել էր, յերկնային մի անմեղությամբ, բարձ-

րահասակ սպայի մահուդե թևին: «Ծընգ—ծընգ—ծընգ» — հնչեց Մազութի Համոյի-նախագահի զանգը. ծափահարությունը դադարեց. դահլիճը պապանձվեց՝ ուշադրություն կտրեց: Բայց հենց այդ վայրկյանին պատահեց մի փոքրիկ թյուրիմացություն, վորի վրա թեկուզ ուշադրություն չկարողացան դարձնել առաջին կարգերը, բայց դրան մոտ նստածները նկատեցին և հաջորդ որը քաղաքում ամենայն մանրամասնությամբ պատմում եյին իրար: Դեպքը, կամ թյուրիմացությունը վոչինչ, առանձնապես, չէր ներկայացնում իրենից. նրա կատարման ընթացքում, առանց այն նկատելու, սկսել էր արդեն Գեներալ-պրոֆեսորը իր հետաքրքիր բանախոսությունը, բայց և այնպես թեր և դեմ զրույցների բավականին նյութ տվեց այդ «դեպքը» հետագայում, նույնիսկ գրված գտան հետագայում, Հինգհարկանի Շենքի «մութ սենյակում», ընկ. Վառոդյանի պատվի հետ ինչ վոր առնչություն ունեցող հետաքրքիր գրություններ՝ այդ «դեպքին» վերաբերյալ... բայց այդ մասին հետո: Բանն այն է, վոր վարագույրը բացվելուց անմիջապես հետո, յերբ դահլիճը թնդում էր ծափահարությունից, դահլիճի դուռը, վոր փակվել էր արդեն, բացվեց և ներս, կամացուկ, այնպես վոր դրան մոտ նստածներից մի յերկուսը միայն նկատեցին նրանց — Կարո Դարայանը և պ. Մարուքեն: Վոչինչ չկար տարորինակ, վոչ-վոք էլ, ինչպես ասացինք, համարյա թե ուշադրություն չդարձրեց այդ սովորական հանգամանքի վրա. բայց նրանց մտնելուց անմիջապես հետո, նույնպես համարյա թե աննկատելի, ներս մտավ նրանց յետևից անծանոթ մի անձնավորություն և առաջարկեց նրանց, այդ անծանոթ անձնավորությունն առաջարկեց պ. Մարուքեյին և Կարո Դարայանին «մի վայրկյանով հետևել իրեն՝ դուրս գալ դահլիճից»: Թե ինչ էր պատճառը, վոր առանց բողոքելու հետևեցին նրան. թե ինչու նույնիսկ չբողոքեցին նրանք, Կարո Դարայանը և պ. Մարուքեն — դժվար է ասել, բայց փաստը մնում է փաստ, վոր դահլիճից դուրս գալուց հետո ես այնպես պատահեց, վոր, առաջ ընկած, քայլեց դեպի քաղաք անծանոթ անձնավորությունը և, — մինչ արդեն, վոգևորված, նայիրյան հնագույն պատմության հնագույն

դրվագներն էր վեր հանում ակումբի դահլիճում Գեներալ-պրոֆեսորը—թոկով կապածների նման այդ նույն վայրկյանին հետևում էին անծանոթ անձնավորությանը, հլու գընում էին նրա յետևից Կարո Դարայանը և պ. Մարուքեն։ Գնում էին—այո, այդ նրանք հասկացել էին արդեն—անծանոթ անձնավորության յետևից «Մութ Տեղն» էին գընում Կարո Դարայանը և պ. Մարուքեն...։

Ընկ. Վառոդյանը գտնվում էր այդ պահուն—Համո Համբարձումովիչի բնակարանում։ Նրա վրա պարտականություն էր դրված պատրաստություն տեսնել «բանկետի» համար. դասախոսությունից հետո ընթրիքի պիտի հրավիրվեր Գեներալ-պրոֆեսորը Մազութի Համոյի բնակարանում։ Յեվ ահա, իր պարտականությունները լիովին իմացող հեղափոխականի նման—տենդոտ, պատրաստություններ էր տեսնում, միանգամայն գիտակցելով գործի մեծագույն նշանակությունը Նայիրյան ցեղի ապագայի համար՝ Մազութի Համոյի պալատ-բնակարանում ընկ. Վառոդյանը։

Հենց այդ ապագայի մասին, Նայիրյան ցեղի պայծառ ապագայի մասին էր խոսում այդ նույն վայրկյանին ակումբի դահլիճում Գեներալ-պրոֆեսորը։ Թափվում էին, այո՝ հեղեղանման հոսում էին վարդագույն խոսքերը դեպի յերջանկացած սրտերը հանդիսականների. Գեներալ-պրոֆեսորի սոխանման գանգից, ուղեղից յելնելով՝ բացվում էր, պայծառ ու լուսավոր, Նայիրյան ապագան։ Յեվ այդ պայծառ ապագայի հոսող ջերմությունից հալչում էր սիրտը Անգինա Բարսեղովնայի. Նայիրյան պայծառ ապագան էլեկտրական բոլոր հոսանքի նման լցվելով սիրտը Անգինա Բարսեղովնայի՝ անցնում էր այնտեղից դեպի մահուդե թևը քաղաքի պարետի։ Ու նույն այդ լուսավոր, նույն այդ Նայիրյան պայծառ ապագայի փայլից բոցկլտուն՝ նայում էին, հրցայտ, նայում էին, այո, գալիք օրերի հույսերով շողշողուն—Նախագահական աթոռի բարձունքից նայում էին Անգինա Բարսեղովնայի և բարձրահասակ սպայի մեղմ հպված թևերին մեծախոհ աչքերը Մազութի Համոյի։

Վաղուց, վաղուց արդեն առավոտյան սովորական ժամերին, ինչպես այդ անում էր նա առաջ—վարսավիր Վասիլի վարսավիրանոցը վոտք չէր դնում այլևս պ. Մարուքեն. զրկվելով մտնելուց զրկվել էր նաև վարսավիրանոց մտնելու սովորությունից պ. Դրաստամատյանը։ Կարո Դարայանի Մոսկվայից բերած բավականին «բութ» ածելին քերում էր արդեն պ. Մարուքեյի այտերն ու կզակը և հարկավոր է ասել, վոր պ. Մարուքեն վաղուց արդեն չէր վայելում այն խոնարհ հարգանքը, վորպիսին տածում էր վարսավիր Վասիլը դեպի նա առաջ։ Այնպես վոր, թող ամենևին զարմանալի չթվա, վոր այդ առավոտ, յերբ, մոտավորապես ժամը 11-ին, դուրս յեկան Կարո Դարայանը և պ. Մարուքեն «Դառնության կենտրոնից» և, տուն վերադառնալով, անցնում էին արդեն վարսավիրանոցի մոտից—«Անուշներ»—հեգնախառն ասաց վարսավիր Վասիլը պ. Մարուքեյին—և դա ծաղր էր, ծաղր էր, չարախինդ ակնարկ էր պ. Մարուքեյի հասցեյին։ Յեվ պ. Մարուքեն, ի հարկե, հասկացավ վարսավիր Վասիլի այդ հեգնանքը. պ. Մարուքեն հասկացավ, բայց լռեց։

Դառնություն, այո, դառնություն ու անակնկալի մի առավոտ էր այդ առավոտը պ. Մարուքեյի և, մասամբ էլ, ի հարկե, Կարո Դարայանի համար։ Դեռ չէյին անցել նրանք վարսավիր Վասիլի վարսավիրանոցից, յերբ դեմից բուսնեց, ուրիշ մի աշխարքից անսպասելի ընկած հրաշքի նման դեմ յելավ նրանց... յերևակայո՞ւմ եք՝ Մարանկոզ Նշանը, այն Նշան Մարանկոզյանը, վոր «վորսորդական ապրանքների» խանութ ուներ առաջ Ալեքսանդրյան փողոցում, բայց, մի գեղեցիկ օր, փակեց իր խանութը և «Պուլկարիա» գնաց «զանազան գործերով»։ Ընթերցողը, անշուշտ, հիշում է սույն այս վեպիս առաջին մասից, թե, իրոք, ինչու փակեց խանութը Մարանկոզ Նշանը. խայտառակ փախուստ էր դա իրոք և ուրիշ վոչինչ, խայտառակ փախուստ էր ու չեզոքացում, վոր հետևանք էր, ինչպես գիտենք, Մազութի Համոյի հզոր ազդեցության, վորից նա, այդ խղճուկ վանեցին, ձգտում էր խլել «Նայիրյան գործերի ղեկավարության» առաջնությունը։ Յեվ

նա հիմա, իր այդ խայտառակ անկման ու փախուստից հետո, վերադարձել էր ահա Նայիրյան այդ քաղաքը և այն էլ—զինված ու փափախավոր...: Հետո էլ յերեքը-չորսը՝ յերեքը-չորսն էլ իրա, Մարանկոզ Նշանի նման, զինված ու փափախավոր:

«Ծանոթացե՛ք»—ասաց Նշան Մարանկոզյանը պ. Մարուքեյին մի լավ համբուրելուց հետո.—«Գուլկարահայ ուսանող, այժմ կամավոր—Հրանտ Կյուլպենկյան, նույնը՝ Ոնոնիկ Ուզունպաճաղյան.—ահա մեր «Գուլկարացին է»—ցույց տվեց, խորհրդավոր ժպիտը դեմքին, յերրորդ փափախավորին Նշան Մարանկոզյանը և ապա—«սա էլ մեր ընկ. Թափառականը»—վերջացրեց այնպիսի մի շեշտով Մարանկոզ Նշանը, վոր նույնիսկ Կարո Դարայանը, վոր չեր ճանաչում վոչ միայն դրանց, այլև իրան՝ Մարանկոզ Նշանին—աչքերը հառեց ընկ. Թափառականի դեմքին: Այդ դեմքը, ի դեպս, շատ քիչ էր նման Թափառականի դեմքի. սափրված, կոկ, ավելի շուտ սալոնային լակեյի դեմք էր դա, քան հեղափոխական Թափառականի: Թող չվիրավորվի ընկ. Թափառականի պայծառ հիշատակը իմ այս վերջին համեմատությունից, քանի վոր դրանով յես վոչ թե նրա ներքինը, այլ արտաքինը միայն նկարել կամեցա. ներելի յեն նման մեղքերը գրչի մշակներին, վորոնք վոչ ներկ ունեն և վոչ էլ ածուխ իրենց տրամադրության ներքո, այլ միայն բառեր, վորոնց տառնյակները չեն կարող, ի հարկե, ընթերցողի աչքին ասել այն, ինչ վոր վրձինի մի շարժումը կաներ, ածուխի մի գիծը: Յերջանիկ են, բյուր անգամ յերջանիկ են այս տեսակետից քանդակագործները, նկարիչները կամ նույն իսկ հասարակ լուսանկարիչները, սիրելի ընթերցող, վորովհետև շատ հաճախ պատահում են դեմքեր, վորոնք բաց են ինչպես գիրքը՝ նայիր ու կարդա, ինչպես գիրքը, այո՝ վերցրու ու կարդա. Այդ դեմքերից էր ահա և ընկ. Թափառականինը. ընկ. Թափառականի դեմքը հարկավոր էր տեսնել: Վայել էր այդ դեմքին յեվրոպական ծղոտե գլխարկը, նուրբ «պանաման»՝ սպիտակ ու լայնեզր, բայց ծածկել էր այդ դեմքը—ահռելի մի փափախ, իսկ կող-

քից կախել էր ընկ. Թափառականը պատկառելի մի զենք, վորը հետագայում խորհրդանիշը դարձավ ամբողջ մի «պետական կազմակերպության»: Չէ՛, հազար ու բյուր անգամ չեր սազում այդ զենքը ընկ. Թափառականին, բայց ընկ. Թափառականը, ինչպես նա ցույց տվեց այդ հետագայում, արժանի չեր, այո, այդ զենքը կրելուն:

Ծանոթացավ, իր հերթին պ. Մարուքեյի կողմից ներկայացվելով նրանց, Մարանկոզ Նշանին ու խմբին և Կարո Դարայանը. հետո նրանք բաժանվեցին: «Ովքե՞ր են դրանք» —հարցրեց Կարո Դարայանը, յերբ մտնում եյին արդեն պ. Մարուքեյի բնակարանը:—«Նացիոնալ-դեմոկրատներ»—պատասխանեց պ. Մարուքեն տեղյակ անձնավորության անփութությամբ և հետո պատկերավոր վոճով պ. Մարուքեն բացատրեց, վոր դրանք նայիրյան հասարակական կյանքի դաշնամուրի վրա «Ընկերության» դաշնակներին հակադրելով նվագում են իրենց հնչակները: Հետո նրանք մտան պ. Մարուքեյի սենյակը:

Սենյակում սպասում էր նրանց, վեպիս առաջին մասից մեզ արդեն հայտնի՝ յերկրորդ ծխականի վարժուհի օր. Սաթոն: Դա այն «պսակի չարժանացած» օր. Սաթոն էր, վոր, մեզ արդեն հայտնի պատճառով, հնարավորություն չեր ունեցել վերջացնելու գիմնազը. ինչպես արդեն գիտենք՝ այս տխուր հանգամանքում մեղավոր եյին նրանք—Ռուբի Նարիմանովը և Գեներալ Ալոշը: Բայց արդեն անցած, մոռացված պատմություն է այդ. այժմ «պսակի չարժանացած» օր. Սաթոն փաստապես արժանացել էր, թեկուզ վոչ պաշտոնական, բայց և այնպես «պսակի». անտարբեր չեր, ասում եյին, դեպի պ. Մարուքեն օր. Սաթոն և պ. Մարուքեն էլ, ժանտավանդ դպրոցից հեռանալուց հետո, չեր խուսափում նրա, օր. Սաթոյի, քնքուշ վերաբերմունքից: Շատ-շատ էր տառապել այդ գիշեր, պ. Մարուքեյի անկողնի վրա ընկած, մինչև առավոտ, մինչև նրա գալը, օր. Սաթոն. բայց, տարօրինակն այն է, վոր, պ. Մարուքեյի վերադառնալուց հետո, քիչ եյին նման սիրային զրույցների օր. Սաթոյի զրույցները. նա նույնիսկ չհարձակվեց, չփաթաթվեց սիրած ապետի պա-

բանոցին, չհամբուրեց նրան։ Այլ... քահ-քահ ծիծաղեց որ. Սաթոն, յերբ մտան պ. Մարուքեն և Կարո Դարայանը. շնորհավորեց նրանց «հարսանիքը»—և ապա, արագ-արագ, սկսեց խոսել... «Ընկերության» մասին։

«Ընկերությունը», ասում եր որ. Սաթոն, վաղուց արդեն սկսել ե գործել։ Արդեն ընկ. Վառոդյանը ամեն որ առավոտյան տասից «կամավորներ» եր գրում մոմավաճառքի խանութում։ Արդեն պատմում եր, շշուկով պատմում եր արդեն ընկ. Վառոդյանը մոմավաճառքի խանութը մտնողներին—բարձրագույն ինստանցիաներից տրված խոստումների մասին հետաքրքիր նորություններ։ Յեվ արդեն, հայտնի նկատառումներով, «Մանր Վարկի ընկերություն» եր կազմակերպում Հասո Համբարձումովիչը — Մազութի Համոն։ Վերջինս, մանավանդ, զբաղված եր տենդային գործունեյությամբ։ Անձամբ յեղել եր կենտրոնում և Նահանգապետից թույլտվություն եր ստացել «Մանր Վարկի Ընկերություն» կազմակերպելու, որով, ինչպես ասել եր հիմնադիրների ժողովին ինքը Մազութի Համոն—նախագահը՝ ձգտում ունեյին ոգնության հասնել շրջանի գյուղացիներին, մանավանդ գյուղացիներին։ Այդ գործը գլուխ բերելում մեծ աջակցություն եր ցույց տվել նրան, Մազութի Համոյին, գավառապետը. Նա գրել եր, այո, Մազութի Համոյի նահանգապետին ուղղված խնդրագրի վրա—«Արգելքներ չեմ գտնում» կտրուկ մակագրությունը։ Իսկ, որ ամենագլխավորն ե—շարժվել եր արդեն, իր անհայտ տեղում, կենտրոնասարդը, իր անհայտ անկյունից պարզել եր ցանցերն արդեն աշխարհից-աշխարհ։ Պարզել եր—Վան, Բիթլիս, Բուքրեշ, Նյու-Յորք. ստացել եր «համաձայնություն»։ Յեվ գալիս եյին արդեն, հավաքվում եյին արդեն սահմանամոտ վայրերում—«ազդեցիկ անունները»։ Ազդեցիկ անունները բերում եյին հետները փախստավոր խմբեր... Նույնիսկ այդ ծիծաղելի ընկ. Մարանկոզյանը, ասում եր որ. Սաթոն, վերադարձել ե արդեն. բերել ե հետը—փախստավոր մարդիկ. ուզում ե շուտով ճակատ մեկնել ընկ. Թափառականի խմբապետությամբ։ «Իսկ մե՞նք»—հարց տվեց, վերջապես, որ. Սաթոն, այդ «պսակի չարժա-

նացածը» հուզված.—«ինչո՞ւ չենք աշխատում...»։ Պ. Մարուքեն և Կարո Դարայանը նայեցին իրար. տխուր մի հարցական կար, մութը մի հարցական նրանց հայացքներում։ Իսկ Կարո Դարայանի աչքերում բացի հարցականից—և հեգնախառն ժպիտ։ Որ. Սաթոն, դե, վոգևորվում եր. յերիտասարդ արյունն եր հուզվողը։

«Յերկու որից յես մեկնում եմ բանակ»—հայտնեց Կարո Դարայանը. հենց այդ նպատակով եր մայրենի քաղաքը յեկել նա.—վորպես զորակոչի յենթակա՝ նա «կանչվում» եր իր ծննդավայրում։

Յերկու որից հետո Կարո Դարայանը մեկնեց բանակ։

Անցավ յերկու, յերեք, չորս որ—անցավ մի շաբաթ, վոչինչ նոր չպատահեց քաղաքում, բացի, թերևս, նրանից, վոր կիրակի, պատարագից առաջ, մի վոգեշունչ քարոզ, մի, յեթե կարելի յե այսպես ասել՝ հայրենաշունչ կոչ կարդաց Ս. Աստվածածին յեկեղեցու ամբիոնից տեր Հուսիկ քահանան—Խաչագողը։ Հիշեց, հիշեցրեց իր հոտին տեր Հուսիկ քահանան այն խորհրդավոր ու նշանակալից «անցքերը» վոր, ինչպես գիտենք, գոյություն ունեյին Բերդի, Առաքելոց յեկեղեցու և Վարդանի Կամուրջի մեջ։ Խորամանկ, հանճարեղ են յեղել Նայիրցի արքաները, ասաց տեր Հուսիկ քահանան,—նրանք իմացել են կապել հոգևորն ու մարմնավորը, սուրը և խաչը, կրոնն ու ռազմական կորովը։ Խորամանկ, հանճարեղ են յեղել նրանք, բայց, դժբախտաբար, յեսական ու անմիաբան, և այդ եր, վոր կործանեց յերկիրը հնամյա—հազարամյա Նայիրին։ Սոոր, նենգ, յեսական դավաճանությունն ե յեղել մեզ կործանողը. անձնամոլ վասակներն են յեղել մեր տունը քանդողը—ասաց, անարդանքի փրփուրը շրթունքներին, տեր Հուսիկ քահանան—Խաչագողը։ Բայց հիշե, թող հիշի իր սիրելի հոտը Վարդան Մամիկոնյանի և Սահակ Պարթևի պայծառ անունները—և թող խրատվի, վոգևորվի և գոտեպնդվի։ Լավ ե մարդ պատվով ընկնի պատերազմի դաշտում իր սրբազան կրոնի և հայ-

րենիքի համար, քան քարշ տա անասնական գերություն, ինչպիսին քարշ ենք տալիս մենք հինգ դարից ավելի։ Բայց ահա հասել է նորից վայրկյանը վերածնության և դեպի Նո՛ր Ավարայր, Նո՛ր Վարդանանց պատերազմ է կանչում իր բոլոր ազնիվ զավակներին մեր տառապյալ հայրենիքը։ Կանչում է այսօր նորից, կանչում է վերջին անգամ, հեծության զընդաններից, դարերով անարգված, դարերով վոտնահարված Նայիրյան վոգին։ Կանչում է կիսավեր վանքերից, պապենական սրբավայրերից, նահատակների մամռապույր շիրիմներից կանչում է ձեզ վերստին բարբարոսների անարգ վոտքերով վոտնակոխ արված ձեր հայրերի կրոնը, ձեր, պապերի հավատքը, ձեր հայրենիքի փառքը։ Կանչում է ձեզ, արիներ ու պարմանիներ, ձեզ, վոր չեք մոռացել դեռ ձեր սուրբ կրոնը և հայրենիքի փառքը. կանչում է քեզ, հասարակ ժողովուրդ, վոր չունես մեծատունների շահասեր սիրտը, վոր ինքդ միայն պատրաստ ես յեղել միշտ կրելու ամենայն զոհողություն՝ հանուն կրոնի և հայրենյաց։ Թո՛ղ որինակ չծառայե այդ փոտող մեծատունների անձնասեր ու յեսական որինակը իմ սիրելի հոտին, քանի վոր նրանք չե, վոր պիտի ժառանգեն յերկնքի արքայությունը։

—Յեվ նրանք չե, այո, սիրելի ժողովուրդ, վոր պիտի ժառանգեն յերկրի արքայությունը, ազատագրված հայրենիքը, վորովհետև դու պետք է վարես, ցանես ու վայելես նրա կենսատու բարիքները և վո՛չ թե այդ յեսական մեծամիտները, վոր փտում են զեղխության դարշահոտ ճահիճներում, վոր ուտում են փուռանաղ հացը՝ թոնրի անուշաբույր լավաշի փոխարեն։—Այսպես ահա խարազանեց իր այդ նշանավոր քարոզում քաղաքի մեծատուններին, այսինքն Լորիս-Մելիքյանի խանութպաններին, տեր Հուսիկ քահանա—Խաչագողը, և նա, իհարկե—իրավունք ուներ. դրանցից և վո՛չ մեկը յեկեղեցում չկար, դրանցից և վո՛չ մեկը մի սև «խաչհամբույր» գցած չուներ դեռևս ս. Աստվածածնի գանձատուփը։ Հասարակ ժողովուրդն եր կազմում նրա «հոտը» և նա փառաբանեց նրան իր նշանավո՛ր այդ քարոզում, դիմեց, նրա սրտին, վոր

անմեղ է, վորպես Աստուծո գառը՝ և մաքուր է, վորպես աղավնի։ Յեվ այդ «սրտով անմեղներին» ահա, և—յես կասեյի՝ վո՛չ միայն «հոգով» աղքատներին, վորոնք, տեր Հուսիկի կարծիքով ժառանգեյին պիտի յերկնքի արքայությունը—կանչեց, կանչեց նրանց դեպի Նոր Ավարայր տեր Հուսիկը։ Յեվ ինչ. կոչը շատ ավելի խորունկ, շատ ավելի իրական արձագանք գտավ ունկնդիրների սրտում, քան, ասենք, հենց իրա՝ Մազութի Համոյի այն պատմական կոչը քաղաքային այգում. բավականին թվով արհեստավորներ և քաղաքի ծայրամասում ապրող կիսագյուղացիներ հաջորդ որը «գրվեցին» ժամավաճառքի խանութում, այնպես վոր՝ «Կեցցե Խաչագո՛ղը» մտածեց ինքն իրեն դրանց ցուցակագրող ընկ. Վառոդյանը։ Թեկուզ, իհարկե, վորոշ հիմք պիտի վոր ունենային նաև այն կարծիքները, վոր այդ «ցուցակագրվելը» մի կողմից, անշուշտ, հետևանք լինելով տեր Հուսիկ քահանա—Խաչագողի քարոզի ազդեցության՝ մյուս կողմից, անշուշտ, պայմանավորվում եր նաև նրանով, վոր «գրվողներից» շատերն այսօր—վաղը, միևնույնն է, զորակոչի պիտի յենթարկվեյին Հինգհարկանի Շենքի կողմից. այնպես վոր նրանք, վորպես պարտաճանաչ Նայիրցիներ, գերադասել եյին «Նայիրյան շտաբը»—սոխականից։ Յեվ ապա՝ կամավոր գրվելով նրանք ազատվում եյին «կարմիր վագոնների» սարսափից. այնպես վոր, գրվելուց հետո, նրանք սրտի ամենայն հանգստությամբ սկսեցին սպասել, ինչպես իրենք եյին ասում՝ «խմբի գալուն»։

«Խմբի գալուն» սակայն, միայն թե ավելի քան անհամբեր; սպասում եյին, մանավանդ,—ընկ. Վառոդյանը և Մազութի Համոն։ Յեվ, թեկուզ վո՛չ, իհարկե, նման անհամբերությամբ, բայց և այնպես բավականին բուռն, սրտատրոփ հետաքրքրությամբ, սպասում եր, այո, ամբողջ քաղաքը. պիտի գար, յերկուցերեք որից Նայիրյան այդ քաղաքը պիտի ժամաներ «Նայիրյան առաջին զորքը»։ Հայտնի խմբապետի առաջնորդությամբ, վերցնելով հետը տեղական կամավորներին, ճակատ պիտի մեկներ Նայիրյան առաջին խումբը մոտակա որերում։

Յեվ ահա—«Խումբը» քաղաք ժամանելուց յերկու օր առաջ, քաղաքում «ժողովրդական ժողովարարություն» սկսեցին, Գեներալ Ալոշի և—յերևակայում եք՝ Համո Համբարձումովիչի ամուսին՝ Անգինա Բարսեղովնայի գլխավորությամբ, «խմբի» պատվին։ Ժողովարարությանը մասնակցում եր համարյա թե քաղաքի ամբողջ «վերին խավը», նույնիսկ գավառապետը, Մազութի Համոյի դստեր—Սեվաչյա Պրիմադոննայի ընկերակցությամբ, մի քանի վայրկյանով յերևացին, մյուս ամենանշանավոր, որ. Հաջի Ոննիկ եֆենդի Մանուկոֆի, պ. Արամարշի, Պարսկաստանցու և այլն—խանութները և վոչինչ, դժգոհ չմնացին։ Հաջի Ոննիկ եֆենդին նվիրեց սիրելի կամավորներին մի պարկ շաքար, իսկ պարսկաստանցին—մի արկղ ծխախոտ և մեկ էլ «Լապշինի» լուցկի։ Պ. Արամարշը ձեռնոցներ նվիրեց կամավորներին, Ժդենտին—դեղորայք, յեղբ. Բալասյանները, վոր զբաղվում եյին սապոնի առևտրով—սապոն, և այսպես շարունակ.— ավեց, ով ինչ վոր ուներ, ով ինչից վոր հարուստ եր, ինչպես ասում են սոխերը։ Բայց և այնպես հարկավոր է հիշատակել, վոր ամենամեծ նվիրատուն—պ. Արամարշն եր, վոր, ինչպես ասում եր հետո—«վառել եր», այսինքն վառվել, վորովհետև ավել եր—մենք քանակը չհաշվեցինք—տասներկու զույգ կաշվե ձեռնոցներ, իսկ դա ավելի շատ արժեր, քան Հաջու մի պարկ շաքարը, կամ յեղբ. Բալասանենց սապոնը։ Բայց, շատ վորոշ նախադասություններով հայտնում եր հետագայում պ. Արամարշը, վոր այդ նվերը նա արել է վոչ այնքան կամավորներին, վորոնց, վերջիվերջո, «հերն ելանիծած»,—այլ...Սեվաչյա Պրիմադոննային։—«Ծիծիկները ուտեմ»—ասել եր նրան այդ գրույցի ժամանակ վարսավիր Վասիլը.—«Իմ մաստերսկոս գար՝ եշից բերած եղնիմ, թե պատի հայլիս չտայի»։ Ահա թե ինչպիսի ահռելի, ինչպիսի հերոսական վոգևորություն եր առաջ բերել Նայիրյան այդ քաղաքում այդ «ժողովրդական ժողովարարությունը»։ Ու ավել եյին՝ վորը փող, վորն ապրանք, Կոլոպոտյանը բաժակներ եր ավել, Բոչկա Նիկալայը—գինի,—մի խոսքով՝ ով ինչ վոր ուներ—չեր խնայել։ Ժողովա-

րարությանը մասնակցել եր նաև տեր Հուսիկ քահանան, բայց նա շրջել եր, իր լուսարարի ուղեկցությամբ, արհեստավորների խանութները, քաղաքի ծայրամասերը—և մարդիկ հետագայում ինչ-վոր առնչություն եյին գտնում Տեր Հուսիկ քահանայի փայլուն կոշիկների և այդ օրվա «ժողովարարության» մեջ. բայց սա բամբասանք եր կարծեմ, սիրելի ընթերցող, վոր առաջ եր յեկել վարսավիր Վասիլի կողմից նրա անվանը կպցրած հայտնի ածականից—և չարժե այսպիսի չնչին անեկդոտներով կասկածանքի ստվեր գցել տեր Հուսիկի նման ազգասեր քահանայի անբասիր քղամիդին։

. . . Առավոտյան ժամը տասնմեկը կլիներ, յերբ այնքան յերազած կամավորական խումբը, առույգ ու առնական շարքերով, վերջապես մտավ քաղաք։ Բայց նախ քան նրա քաղաք մտնելը՝ դիմավորելու եյին գնացել կայարան, Մազութի Համոյի և ընկ. Վառոդյանի գլխավորությամբ, վոգևորված նայիրցիները։ Ո՞վ ասես, վոր չեր գնացել կայարան հերոսներին դիմավորելու. այնտեղ եյին, գեներալ Ալոշից սկսած—մինչև Մեռելի Յենոքը։ Մեռելի Յենոքը, ասենք, ինչպես և Քոռ Արութը, ուզած չուզած այնտեղ եյին ու այնտեղ, այնինչ կինտաուրի Սիմոնը, պ. Արամարշը, Հաջին, վարսավիր Վասիլը և մի շարք ուրիշները «գործը կիսատ թողել»—հատկապես գնացել եյին «դիմավորելու» նպատակով։ Յես էլ չեմ խոսում արհեստավորների և բոլոր «գրվածների» մասին, վորոնք յեկել եյին «խումբը» տեսնելու։ Ամենաանսիրտը Լորիս Մելիքյանն եր.—նա, այդ չարչիների փողոցը, համարյա թե ներկայացուցիչներ չուներ այդ օրը կայարանում. յերևի չարչիներն ավելորդ եյին համարել «գործից եղնելը», վորովհետև միևույնն է, խումբը ուզած-չուզած իրենց փողոցով պիտի անցներ, այնպես վոր նրանք հնարավորություն ունեյին հենց իրենց խանութների առաջից դիմավորելու նրանց, այդ աննման հերոսներին։ Այնինչ, դրա փոխարեն կայարանում եր քաղաքի համարյա «ամբողջ ինտելիգենցիան»—ուսուցիչները, նայիրցի

սպաները, ուսանողները, պաշտոնյաներից շատերը: Ներկա էին նաև մեծ թվով աշակերտներ, որ այդ օրը զոհել էին դասը (պարապմունքները, թեկուզ փոքր ուշացած, բայց արդեն սկսվել էին դպրոցներում)—հայրենիքի գործին, բայց վերջիններիս շարքերում կային և այնպիսիները, վորոնք մտածում էին արդեն վոչ միայն «դասը», այլև իրենց կյանքը զոհաբերել այդ սրբազույն նպատակին:

Գնացքը մոտենալուց դեռ հինգ րոպե առաջ, արդեն կանգնած էին պլատֆորմի վրա՝ Համո Համբարձումովիչը, ընկ. Վառոդյանը, բժիշկը, Ռուբեն Նարիմանովը, Գեներալ Ալոշը և Կինտաուրի Սիմոնը. սա այն կազմակերպված խումբն էր, վոր պաշտոնապես պիտի դիմավորեր կամավորական խմբին: Այստեղ հենց, դրանց կողքին, արդեն պատրաստ կանգնած էր զինվորական յերաժըշտախումբը, վորին արդեն պատվիրել էր ընկ. Վառոդյանը գնացքը մոտենալու վայրկյանին նվագել Նայիրյան հիմնը՝ «Մեր Հայրենիքը»: Ամեն ինչ, մի խոսքով, մտածված էր և պատրաստած, վորպեսզի վորքան հնարավոր է սրտագին դիմավորեն խմբին — և ահա, վերոհիշյալ պատկառելի անձնավորությանց յետևը կենդանի մի պարիսպ կազմած՝ աչքերը յերկաթգըծի հեռուն՝ սրտատրոփ սպասում էին անհամբեր նայիրցիները գնացքի մոտենալուն: «Ուշացավ»—արդեն անհանգստանալով՝ ասաց Գեներալ Ալոշը Մազութի Համոյին այնպիսի մի տոնով, վոր կարծես վերջինս լիներ ուշանալու պատճառը: Բայց հենց այդ վայրկյանին լսվեց շոգեկառքի ավետաբեր սուլոցը—և բոլորը հանկարծ շարժվեցին տեղերում, հրհրեցին իրար՝ հանգստանալու փոխարեն ավելի ևս անհանգստացան: Զինվորական յերաժշտախումբը, ընկ. Վառոդյանի նշանով, հնչեցրեց նայիրյան հիմնը. գնացքը, դանդաղ, մոտեցավ կայարանին:

Դժվար է, սիրելի ընթերցող, իմ անզոր գրչով նկարագրել այն աներևակայելի վոգևորությունը, վորով համակվեցին նայիրցիները պատմական այդ նշանավոր, այդ անկրկնելի վայրկյանին: Հազիվ էր յերևացել առաջին փափախավոր գլուխը, յերբ ամբողջ կայարանը թնդաց բացականչություններից. ամբողջ

կայարանը կարծես հոտս ցնդեց: Իսկ յերբ կանգնեց գնացքը և դուրս յեկավ վագոնից խմբի ղեկավարը—Հայտնի Անունը, —յերբ, հապշտապ, գլխարկները ձեռներին, դեմ վազեցին նրան Մազութի Համոն և ընկ. Վառոդյանը և Հայտնի Անունը, ջերմագին փաթաթվելով համբուրվեց՝ նախ Մազութի Համոյի և ապա... ընկ. Վառոդյանի հետ,—հասկանում եք՝ ընկ. Վառոդյանի և այդ այն ժամանակ, յերբ,—խորին ակնածանքը դեմքերին՝ Հայտնի Անձնավորության ձեռքը սեղմելն էին յերազում բժիշկը, Ռուբեն Նարիմանովը և Գեներալ Ալոշը—էլ յես չեմ խոսում Կոշկակար Սիմոնի—կլուբի Մեյմունի մասին...: Ասում եմ՝ յերբ կատարվել սկսեցին այս շանթահարող, այս շշմեցնող բաները—հախուռն «ուռա»-ների ձայնը մինչև քաղաք հասավ, այնպես վոր՝ «եկան»—ասաց Կոլոպոտյանը գնորդին և նրա դեմքին անգամ շողաց, յերանավետ, նայիրյան մի ժպիտ: Հետո դուրս յեկավ խումբը և խմբապետի նայիրաբառ հրամանով՝ շարք կանգնեց կայարանի առաջ: Յեվ ահա... Մազութի Համոն, այլ նույն անփոխարինելի Մազութի Համոն սկսեց վողջույնի ճառը: «Բարի գալուստ»—այսպես սկսեց իր վողջույնի խոսքը Մազութի Համոն.—«Դուք տեղ ունեք մեր գլխներին»: Յեվ ապա խոսեց այն մեծագույն նշանակության մասին, վոր պիտի ունենա անմոռանալի այդ մեծ օրը նայիրյան կյանքում.—ազգային ամենամեծ, յեկեղեցական տոների շարքը պիտի դասվի պատմական այդ օրը. և, Վարդանանց տոնի, Ծննդյան և Հարության տոների նման տոնն պիտի այդ օրը ապագա Նայիրին: Տոնն պիտի ազատ և անկախ Նայիրին այնտեղ, սահմանի այն կողմը, ուր մեր տառապյալ յեղբայրները սպասում են հիմա ձեր ազատարար խմբերին...: Գնացեք,—վերջացրեց իր խոսքը, համարյա արցունքն աչքերին, Մազութի Համոն,—մեր սիրելի յեղբայրները դեռ տառապում են այնտեղ բռնության ճիրաններում, մեր հայրերի յերկիրը դեռ արյուն է քրտնում բարբարոսի լծից.—գնացեք, մեր քաջ, մեր անխորտակելի, մեր աննահանջ կամքի յերկաթյա զինվորներ.—գնացեք, և ձեզ շնորհակալություն կասի, ինչպես այսօր արդեն ասում ենք մենք—յես համարում եմ, այո՝ ապագա ազատ ու

անկախ, անկաշկանդ Նայիրին...»։ — Բուռն, անհուն «ուռա»-ների ներքո վերջացրեց իր խոսքը Մազութի Համոն և, հուզմունքից ողողվելով, մոտեցավ խմբապետին. — «Թող թույլ տրվի ինձ» — ասաց Մազութի Համոն գրկելով խմբապետին. — «համբուրել այս ճակատը, սիրելի հայրենակիցներ, վորը չի վախեցել յերբեք թշնամու գնդակից, վորն հեգնանքով է դիմադրել թշնամու գնդակին և, յես համոզված եմ միանգամայն, վոր դեռ յերկար-յերկար մինչև հաղթանակի որը, պիտի դիմադրե...»։

Հնչեց, թնդաց աղմկալից Նայիրյան հիմնը կրկին. հընչեց ապստամձայն։ Ներկաներից շատերի, նույնիսկ Միսաելի Յենոքի և Քոռ Արութի, աչքերին յերևացին խնդության արցունքներ։ Հետո խմբապետը, յերկու-յերեք խոսքով, ինչպես վայել է զինվորականին, շնորհակալություն հայտնեց թանկագին հայրենակիցներին, վորոնք չզլացան հանձինս իրենց՝ իրենց հարգանքը բերել Նվիրական գործին։ «Բայց, — ասաց խմբապետը վերջում, — յեթե այդ հարգանքի մի հարյուրերորդը գոնե նրանք արտահայտեյին գործով, գործնական ոգնությամբ Նվիրական գործին — այն ժամանակ, այո, պ. Համազասպի նման ինքը ևս վոչ մի վայրկյան չի կասկածի, վոր հեռու չե այն որը, յերբ ազատագրված կլինի յերկիրը Նայիրի...»։

Այսպես խիստ, այսպես տեղին խոսքերով վերջացրեց իր պատասխան-ճառը հայտնի խմբապետը և ապա, յերբ դադարեց Նայիրյան հիմնը և լռեցին կեցցեները — «Թող միշտ կըտրուկ լինի մեր թագավոր-կայսեր անհաղթելի սուրը» — կարծես վերհիշելով, ավելացրեց խմբապետը. — «վորովհետև նրա արքայական կամոքն է միայն, վոր պիտի ազատագրվի յերկիրը Նայիրի...»։ Այս խոսքերից հետո յերաժշտությունը նվագեց «Բոժե ցարյա» — բոլորը գլխարկները հանեցին, իսկ խմբապետն ու ընկ. Վառոդյանը, վոր արդեն մի քանի որ եր, ինչ կամավորական հագուստներ եր կըրում — ձեռքերը, վորպես զինվորականներ, տարան փափախներին։

«Կեցցե թագավոր կայսրը», — կարծես գլխի ընկնելով, վոր, աններելի թյուրիմացությամբ, մոռացել եր այդ կարևոր

հանգամանքը հիշատակել իր վողջույնի խոսքում — բացականչեց Մազութի Համոն գլխարկը թափահարելով։ Յեվ յերբ յերաժշտությունն ու «ուռան» դադարեց — հանդեսը վերջացավ։ Խմբապետը, Մազութի Համոն և ընկ. Վառոդյանը նստեցին առաջին, թիկնապահը, բժիշկը և Գեներալ Ալոշը — յերկրորդ, իսկ Ոսեփ Նարիմանովը և մյուսները մնացած կառքերում — զմայլված նայիրցիների յերջանիկ հայացքների ուղեկցությամբ դիմեցին քաղաք։

Մի ժամ հետո, հայտնի խմբապետի յերկրորդ ոգնականի հրամանատարությամբ, քաղաք մտավ կամավորական խումբը, ուր ևս նա հանդիպեց ավելի քան բուռն, սրտալի վոգևորության։

Յերեք որից հետո նույն այդ տեղից դեպի ճակատ եյին ճանապարհ դնում, նույն Մազութի Համոյի և ընկ. Վառոդյանի առաջնորդությամբ, այդ խմբի կամավորներին քաղաքի բնակիչները։ Այս անգամ ներկաների բազմությունը շատ ավելի սակավ եր, քան ընդունելության որը, մի հանգամանք, վոր մասամբ կիրակի լինելուն պիտի վերագրել, մասամբ ել նրան, վոր շատ-շատերը, այո, մանավանդ արհեստավորներից և շրջանի գյուղացիներից, յեկել եյին ճանապարհ դնելու — վորը հարազատին, ընկերոջը, վորն ել ծանոթին կամ դրացուն, վորոնք ճակատ եյին մեկնում, ընկ. Վառոդյանի ձեռքով «գրված» լինելու պատճառով, այդ խմբի հետ։ Ասվեցին, ինչպես հարկն եր, ճառեր. նվագեցին, ինչպես հարկն եր, Նայիրյան հիմնը և «Բոժե ցարյան». բարի յերթ մաղթեցին սիրելի կամավորներին վոչ միայն Մազութի Համոն և ընկ. Վառոդյանը, վորոնք խոսում եյին վորպես պաշտոնական անձնավորություններ ամենքին հայտնի հիմնարկության կողմից, — այլև Գեներալ Ալոշը, վոր խոսեց քաղաքացիների անունից։ Հետո կամավորները գնացք նստեցին — և ահա կեցցեների, յերաժշտության, լացի և վոգևորության հախուռն արտահայտությունների ներքո գնացքը հեռացավ։ Սրտառուչ եր տեսարանը, սրտառուչ ու անմոռանալի, բայց այդ տե-

սարանից բյուր անգամ ավելի սրտառուչ և անմոռանալի էյին Մագուլթի Համոյի աչքերը, վորոնցում արցունք կար և, արցունքի միջից, սպասումի ժպիտ: Նրանք, Մագուլթի Համոյի այդ անմոռանալի աչքերը, նայում էյին հեռացող գնացքին, բայց չէյին տեսնում գնացքը. նրանք տեսնում էյին սահմանի «այն կողմը», ուր, ինչպես ասել եր ինքը իր վողջույնի խոսքում, գերության ճիրաններում տառապում եր դեռ յերկիրը Նայիրի: Այնտեղ եր, այն մթամած հեռվում, ուր հեռացավ գնացքը, — Ավետյաց յերկիրը — հնամյա Նայիրին: Յեվ, գնացքն անհետանալուց յերկար դեռ անց— նայում էյին այն կողմը ժպտաթախիծ աչքերը Մագուլթի Համոյի. բայց Մագուլթի Համոյի ժպտաթախիծ աչքերը արդեն տեսնում էյին, գալիքների անհայտ մշուշների միջից — այնտեղ, ուր հեռացավ գնացքը «նայիրյան ուժերով» բեռնավոր — իր նո՛ր, վերածնված հայրենիքը, կամ, ինչպես կասեր նա հետագայում, յեթե կենդանի մնար — միացյալ ու անկախ, ծովից-ծով Նայիրին...:

(Վերջ յերկրորդ մասի)

ՄԱՍՆ ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ՎԵՐՋԻ՛Ն

ՅԵՐԿԻՐԸ ՆԱՅԻՐԻ

Միթե սա՞ յե յերկիրը Նայիրի...

Յե. Չարենց «Ծոգեզալուս»

Մենք արդեն անցնում ենք մեր սույն այս վեպի կարևորագույն մասին—և այստեղ է ահա, սիրելի ընթերցող, վոր, ինչպես ասում են՝ իր ամբողջ հասակով կանգնում է մեր առաջ մեր առաջադրած հիմնական խնդիրը, թե վո՞րն է, վերջապես, երկիրը Նայիրի։ Սույն այս վեպիս առաջաբանում, հիշո՞ւմ ես, յես հարցրել եյի սրտմտությամբ, կասկածով հարցրել եր սիրտս, թե, գուցե, մշուշ է նա, Նայիրին, ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն...։ Յեվ ճիշտ վոր, վո՞րն է այդ Նայիրին։ Ինչո՞ւ չեմ յես, ինչո՞ւ համար եմ սույն այս վեպիս ամեն մի եջում իմ նկարագրած քաղաքն անվանում «Նայիրյան» քաղաք, և մարդկանց, վոր ապրում են այդ քաղաքում—«Նայիրցիներ»։ Միթե՞ կարող եր «ուղեղային մորմոքը» կերպավորվել և իրականություն դառնալ. մի՞թե կարող եր, սիրելի ընթերցող, միս ու մարմին ստանալ «սրտի հիվանդությունը»—և քայլել քաղաքում, հասկանո՞ւմ ես, վո՛չ թե ուղեղում կամ սրտում, այլ իրական քաղաքում, վորպես մի թեկուզ հենց, ասենք, Գեներալ Ալոշ, կամ Մեռելի Յենոք, կամ, լավագույն դեպքում—վորպես մի Համո Համբարձումովիչ—Մազութի Համո...։ Իհարկե վոչ, կասե ամեն մի խելքը գլխին անձնավորություն—չեր կարող։ Զառանցանք չե՛ր այդ քաղաքը, և վոչ ել նրանում ապրողներն եյին զառանցանք. և, այո՛, յես ամենայն վճռականությամբ կարող եմ ասել, վոր վոչ վոք ել դրանցից իրեն չեր համարում «Նայիրցի», և վոչ ել այդ քաղաքը, ուր ապրում եր ինքը—«Նայիրյան» մի քաղաք։ Ուրեմն յե՞ս եմ հնարել այդ լեգենդը, սիրելի ընթերցող, վոր մոլորեցնեմ մարդկանց դատարկ զրույցներով, գուցե յե՞ս եմ հնարել, վորպես թուղթ մրոտող, անբան մի բանաստեղծ, վորին ևս «քամի թռցնող» պիտի անվաներ վարսավիր Վասիլը, յեթե այս

գրությունս կարդար։ Այո՛։ Ի՞նչ «Նայիրի»։ Յեվ ամենից առաջ՝ վո՞րտեղից մեյդան ընկավ այդ անունը, ի՞նչ է նա նշանակում։

Սիրելի ընթերցող։ Յես չեմ հնարել այդ անունը և պարզապես չգիտեմ, թե ի՞նչ է նա նշանակում։ Գուցե «Նայիրի» նշանակում է ցնորք. ո՞վ գիտե։ Գուցե նշանակում է՝ «անքաշ պանիր»—ասված ինքը գիտե։ Կամ, գուցե, «Նայիրի» այն դարին է նշանակում, վոր տեսել է յերկարականջ քեռին իր այն նշանավոր յերազում։ Չգիտեմ։ Յեվ ի՞նչ նշանակություն ունի վերջապես, թե ի՞նչ է նշանակում «Նայիրի»։ «Նայիրին» Նայիրի յե—պրծավ գնաց։ Պայմանավորվենք միայն, վոր դա, մի շարք այլ բաներ նշանակելուց բացի, մի յերկրի անուն է, ինչպես Սողոմոնը—մարդու և... Յեվ նորից կրկնում, սիրելի ընթերցող։ Վո՞րտեղ է, վո՞րն է այդ յերկիրը—կարող ես հարցնել դու հիմա,—և յես նորից կարող եմ մնալ քիթս կախ, այսինքն շվարած։ Շվարած վոչ թե այն պատճառով, վոր չգիտեմ այդ յերկրի տեղը, այլ այն հասարակ պատճառով, վոր իմ հավաքած պատմական և աշխարհագրական սուղ տեղեկությանց նայելով—այդ յերկիրը շատ քիչ է նման գոյություն ունեցող այլ յերկիրներին, ասենք Արգենտինային, Չիլիին, Տաճկաստանին, Ռուսաստանին, կամ թեկուզ Հաբեշստանին կամ Ալբանիային...։ Քիչ է նման վոչ թե իր աշխարհագրական դիրքով, բնակիչների կազմով, պետական սիստեմով և այլն, այլ... հենց այս «այլում» է բանը, սիրելի ընթերցող։ Այս «այլն» է ահա, վոր ձեռնթափ է անում ինձ, քարից-քար խփում, խայտառակում։ Բանն այն է, վոր այդ «յերկիրը», այդ չարաբաստիկ «Նայիրին», ինչպես բանաստեղծներն են հաճախ ասում իրենց գերյերկրային սիրուհիների մասին—«յեվ կա յեվ չկա»։ Կա, ի հարկե, կա, յեթե վոչ ինչպե՞ս պիտի ապրեյին «չեղյալ» այդ յերկրում մի շարք այնպիսի պատկառելի մարդիկ, ինչպիսիք են նույն Գեներալ Ալոշը, Ոսեփ Նարիմանովը, Քոռ Արութը, պ. Մարուքեն,—վո՞րը թվեմ։ Մարդիկ, վորոնց յերկրային գոյությունը, ինչպես տեսնում եք, վոչ մի դեպքում չի կարելի, ի հարկե, կասկածի յենթարկել։ Յեվ, միևնույն ժամա-

նակ, չկա, վորովհետև...։ Յեթե նա լիներ—ապա ուրեմն ինչու՞ նա պիտի անվանվեր «Նայիրի»—այսինքն կրեր մի անուն, վոր դուք չեք գտնի այսոր և վոչ մի աշխարհագրական քարտեզի վրա։ Փորձեցեք մի նամակ գրել և հասցեագրել այսպես՝

«Յերկիր Նայիրի—Գեներալ Ալոշին»—

տեսեք ու՞ր կը հասնի։ Կարծո՞ւմ եք՝ մեր նկարագրած քաղա՞քը։ Սխալվում եք։ Ուրեմն ճանապարհին կը մնա։—Յերեվակայեցեք, վոր վո՛չ։ Յեվ այստեղ է ահա հարցի ամբողջ գաղտնիքը, սիրելի ընթերցող։ Ձեր այդպես հասցեագրած նամակը կը գա և կընկնի ուղիղ—ի՞նչ եք կարծում՝ Կա՞րս, Յերեվա՞ն, Դիարբեքի՞ր, Շապին-Գարահիսա՞ր... Ի հարկե վոչ։

Այդ նամակը կը գա ու կընկնի ուղիղ մեր ամենածանոթ Համո Համբարձումովիչ Ասատուրովի—Մազութի Համոյի... ուղեղը... Ահա և ամբողջը։ Յեվ ահա թե ինչու, վեպի շարունակությանն անցնելով, մենք պետք է դիմենք հնում մանավանդ շատ ընդունված գրական մի պրիոմի, վորից այնքան խուսափում են արդի հեղինակները։ Ռենտգենյան ճառագայթի նման մենք պիտի ձգտենք թափանցել սույն այս վեպի կենտրոնական անձնավորությանց ուղեղները,—առաջին հերթին, ի հարկե, Համո Համբարձումովիչ Ասատուրովի—Մազութի Համոյի ուղեղը։ Այո՛։ Ամենից առաջ Մազութի Համոյի, վորովհետև նա յեր (ուղեղը և վոչ թե Մազութի Համոն) վոր տարիներ շարունակ բոլոր համանման ուղեղների կատարյալ կատարելատիպը լինելով՝ վորպես առասպելական այն ցուլը, կրում եր իր ուղեղի յեղջյուրների վրա... յերկիրը Նայիրի։ Նրան, այո՛,—Համո Համբարձումովիչ Ասատուրովի—Մազութի Համոյի ուղեղին մենք պիտի դիմենք, յեթե ուզում ենք իսկական աղբյուրից հանել մեր այնքան ցանկացյալ ջուրը,—յեթե ուզում ենք իսկական ակունքից խմել կենարար հեղուկը մեր հավաքական, կամ իրա՝ Մազութի Համոյի տերմինոլոգիայով ասած՝ «ազգային» գոյության։

Այդ հանճարեղագույն ուղեղն ուներ հանճարեղագույն հատկություններ։ Ամենից առաջ՝ միթե հանճարեղագույն հատկություն չպիտի համարել այն զարմանալի հանգամանքը, վոր նա, այդ ուղեղը, Մազութի Համոյի այդ տարօրինակ ուղեղը տարիներ, դարեր շարունակ, հնամենի հնուց, կրում եր իր վերոհիշյալ յեղջյուրների վրա մի ամբողջ յերկիր, և այն ել այնպիսի մի տիեզերական յերկիր, ինչպիսին եր յերկիրը Նայիրի։ Հասկանո՞ւմ եք՝ նրա, այդ «Լույսի» կառավարիչ Համո Համբարձումովիչի այդ գերերկրային ուղեղում, ինչպես մեր յեղկ յերկրագնդի վորևե հատվածի վրա, տեղավորված կային—գյուղեր ու քաղաքներ. ապրում եյին մարդիկ այդ գյուղերում ու քաղաքներում, ապրում եյին—ամենից առաջ հենց ինքը, Մազութի Համոն, ապա Գեներալ Ալոշը, բժիշկը, Ոսեփ Նարիմանովը, Անգինա Բարսեղովնան և հազար-հազարավոր ուրիշ-ուրիշները- ազատ, քայլում եյին ուղեղային քաղաքներում, գնում եյին գործի և վերադառնում եյին գործից, ուտում եյին և արտաքնոց եյին գնում.—մի խոսքով անում եյին այն ամենը, ինչ վոր կապված ե մարդկային կյանքին, ինչով վոր կենդանի յե այդ կյանքը։ Այդ նրանց թվում եր միայն, վոր իրենք, ասենք, քայլում են Լորիս Մելիքյանով. եյապես նրանք վոչ այլ ինչ եյին անում, քան յեթերային տատանումներ առաջ բերելը Մազութի Համոյի տիեզերապարփակ ուղեղում. կամ Մազութի Համոյի ուղեղից սահած դեպի Լորիս Մելիքյանը՝ ապրում եյին այնտեղ դարերի խայտառակությանը գամած, ստվերային մի կյանք։ Յեվ վո՛չ միայն նրանք, այլ և հազար-հազարավոր ուրիշ-ուրիշները. պ. Արոմարշը, մանրավաճառ Կոլոպոտյանը, Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկովը, Կլուբի Մեյմունը, Բոռ Արութը, բոլորը, բոլորը,—և ամենից առաջ մեր սույն այս վեպում այնքան մանրամասն նկարագրած բոլոր քաղաքացիք, նրանց կենցաղը, գործնական յեռուզեռը, առտնին առօրյան. մի խոսքով ասած՝ ամենքը և ամեն ինչ նայիրյան այդ քաղաքում վոչ այլ ինչ եր գուցե, յեթե վոչ Մազութի Համոյի տիեզերապարփակ ուղեղի յեղկ արտացոլումը, ուղեղային մորմոքը միայն—ուղեղային խաղը։ Յեվ միթե նրա, Մազութի

Համոյի հանճարեղագույն ուղեղը չե՞ր ծնել այդ քաղաքն իր բոլոր հրաշքներով և հրաշալիքներով, ինչպես ժլել եր հնում հունական Զևսի աստվածային գլխից իմաստության ու գեղեցկության գերագույն դիցուհին՝ Աթենաս-Պալլասը։ Այո՛։ Այլապես վո՞նց, վո՞րտեղից պիտի յելնեյին և քարակերտ վեհությամբ ապրեյին դարեր—թեկուզ հենց Վարդանի կամուրջը, բերդը, Առաքելոց յեկեղեցին...։ Այդպես ել յես ու դու, ընթերցող. մեզ համար քայլել ենք շարունակ փողոցից-փողոց, մըտել ենք վարսավիր Վասիլի վարսավիրանոցը և Տելեֆոն Սեթոյի սրճարան-ճաշարանը, վորի ցուցանակի վրա գրված ե՝ «Զայ-Ղահվե-ճաշարան, Սեթրակ Ցալիան»—ապրել ենք, մի խոսքով, իբր թե յերկրային աշխարհաբնակ կյանքով, և չենք ել իմացել, վոր իլլյուզիա յե այդ բոլորը, ուղեղային մորմոք,—վոր այդ ամենը վոչ թե առասպելական մի ինչ վոր խղճուկ Մայայի շղարշն ե մեր աչքերի վրա, այլ այդ ամենասովորական «Լույսի» կառավարիչ Մազութի Համոյի, այդ Համո Համբարձումովիչ Աստուրովի ուղեղային մշուշը,—վոր մեր ամբողջ կյանքն իր «տակով-վրայով» վոչ այլ ինչ ե յեղել, յեթե վոչ ճիշտ վոր—«ուղեղային մորմոք»—սրտի հիվանդություն...։ Այո՛։ Մազութի Համոյի հանճարեղագույն ուղեղի զառանցանքն եր այդ քաղաքն իր «տակով-վրայով» և մենք, սիրելի ընթերցող, տարիներ շարունակ ապրել ենք Մազութի Համոյի ուղեղից սահած այդ զառանցանք-քաղաքում, ապրել ենք զառանցանքում, վորպես «մեր տանը»—և մենք այդ չենք իմացել, գլխի չենք ընկել, չենք գիտակցել։ Յեվ դո՛ւ, ընթերցո՛ղ, ավելի քան սխալված կլինես, յեթե կարծես, վոր սույն իմ այս պոեմանման վեպում յես ցանկություն եմ ունեցել նկարագրել իրապես գոյություն ունեցող մի քաղաք, պատկերել այդ քաղաքի յերկրային բնակիչներին, վեր հանել ինչ վոր չտեսնված «տիպեր»։

—Այդպիսի բաներ յես յերբե՛ք ել չեմ մտածել, ընթերցո՛ղ, և չեյի յել կարող մտածել։ Իսկ ինչ վերաբերվում ե այն, առաջին հայացքից կարծես թե ինձ մատնող, հանգամանքին, վոր յես քանիցս, սկզբից և յեթ, խոսել եմ այդ քաղաքի և նրա բնակիչների մասին, վորպես շատ սովորական, միանգամայն հաստատ

գոյության մասին,—ինչ վերաբերվում է դրան, սիրելի ընթերցո՛ղ, յես այստեղ հարկադրված եմ ասել, բացե ի բաց խոստովանել, վոր յես խաբել եմ քեզ, յուղել եմ գլուխդ, ինչպես խաբել է ինձ տարիներ շարունակ Մազութի Համոն, ինչպես խաբել է և քեզ, միևնույնն է՝ ապրել ես դու թե վոչ մե՛ր նկարագրած քաղաքում. խաբել է, մշուշ է փռել աչքերիդ—չես իմացել: Այո՛, ընթերցո՛ղ, զառանցանք եր այդ քաղաքը, ուղեղային մորմոք— և կար, գոյություն ուներ, թվում եր, թե ապրում է յերկրային— քանի կար, կենդանի յեր դեռ Մազութի Համոն, քանի փռում եր դեռ որերի և տարիների վրա իր ուղեղային շղարշը Համո Համբարձումովիչ Ասատուրովը—Մազութի Համոն: Եվ ինչ «տիպեր» կամ «հերոսներ»—և յես ես չգիտեմ, թե ել ինչ դահրումար...: Նրան, միայն նրան, այսինքն վո՛չ թե Մազութի Համոյին, այլ նրա հանճարեղագույն ուղեղին եր, այո՛, պարտական Նայիրյան այդ քաղաքն իր յերկրային գոյությամբ—և առանց նրա, այսինքն վոչ թե Մազութի Համոյի, այլ նրա ուղեղի, չեր կարող գոյություն ունենալ, անգամ մի յերկվայրկյան ապրել վոչ միայն Նայիրյան այդ քաղաքը, այլ և ամբողջապես հենց ինքը—յերկիր Նայիրին: Զե՞ս հավատում: Նայիր շուրջդ ապա.—ո՞ւր է մեր նկարագրած քաղաքը, ո՞ւր են նրա բնակիչները: Ո՞ւր են Մեռելի Յենոքը և Տելեֆոն Սեթոն... Ո՞ւր են, ո՞ւր են, վերջապես, Վարդանի կամուրջը և Առաքելոց յեկեղեցին...: Չկան, ծուխ են դարձել, ցնդել են մշուշում. դարձել են մուժ ու հիշատակ: Ինչո՞ւ:—Վորովհետև չկա, այլևս ցնդել է մշուշում Մազութի Համոյի ուղեղը.—չկա. մուժ է դարձել. դարձել է մշուշ ու հիշատակ:

Իսկապես վոր հանճարեղ կարողություններ ուներ այդ ուղեղը, զորավոր կարողություններ: Բավական են, կարծեմ, վերևում ասածներս միայն, վորպեսզի հասկացողություն կազմվի այդ հանճարեղագույն ուղեղի կարողության մասին. բայց արեք տեսեք, վոր յես ամենակարևորը և ամենազարմանալին դեռ չեմ հիշատակել, ամենաանհերևակայելին: Մենք ասացինք, վոր այդ

զարմանալի ուղեղի վրա յեր կանգնած յերկիրը Նայիրի, վորպես հնում աշխարհն՝ առասպելական այն ցուլի յեղջյուրների վրա. բայց ինչի՞ վրա յեր կանգնած ինքը, այդ ուղեղը— ահա ամենաեյականը: Ինչո՞վ եր սնվում հենց ինքը, ինչով եր կենդանի այդ ուղեղն ինքը—ահա հարցը: Յեվ այս հարցին է, ահա, վոր մենք հարկադրված ենք տալ մի ամենաանսպասելի պատասխան, ամենաանհերևակայելի:—

—Նա, Համո Համբարձումովիչի այդ զարմանալի ուղեղը կանգնած եր—յերևակայո՞ւմ եք—հենց ինքն իր վրա... Ուրիշ վոչինչ: Զե՞ս հավատում.—իրենից հարցրու. այսպես եր հավատացնում ինձ ինքը, այսպես եր համոզված Վառոդյանը,—ավելին՝ այսպես եր համոզված և ամբողջ «Ընկերությունը»—ո, սա ամբողջ մի փիլիսոփայություն եր, սիրելի ընթերցող,—ամբո՛ղջ մի, յեթե կարելի յե այսպես ասել՝ տիեզերական ուղեղասիստեմ...: Կանգնած եր, ու բասսա, պրծավ գնաց. ուզում ես զարմացիր, ուզում ես՝ հիացիր: Կար, գոյություն ուներ և սնվում եր—հենց ինքն իրենով—ահա թե ինչ: Կար, գոյություն ուներ և աշխատում եր, անխոնջ ու մշտնջենական, ինչպես ինքը բնությունը, կամ, ավելի լավ է ասել՝ վորպես մի իսկական «պերպետուում-մոբիլե». գերմանական հայտնի գիտնական Հելմհոլցի նշանավոր թեորիան միանգամայն ժխտելով՝ ապացուցում եր իր կենդանի օրինակով, վոր նման մի ինքնաշարժ մեքենա վոչ միայն հնարավոր է սկզբունքորեն, այլ և կա, գոյություն ունի և կարող է աշխատել՝ ինքն իրեն սնելով դարեր ու դարեր, մահանալ ու կյանք առնել նորից իր սեփական աճյունից, վորպես յեգիպտական մի Փենիքս-Թռչուն: Այսպիսի՛ ահա ինքնասնույց մի թռչուն, բայց ավելի լավ է ասել՝ «պերպետուում-մոբիլե» յեր Համո Համբարձումովիչի ուղեղը. ինքնաշարժ մեքենա, վոր, ինչպես ասացինք՝ ինքն իրեն սնելով՝ դուրս եր թողնում, հանում եր շրջանառության անսպառ քանակությամբ—վոնց ասենք... նու, ազգային յեռանդ (եներգիա), վորով, և միմիայն վորով, կանգուն եր դեռ, չեր հավասարվել հողին, Ասորիքի կամ Բաբելոնի նման, յերկիրը հնամյա—հազարամյա Նա-

յիրին: Կարծում ենք, վոր հենց նրա՝ Համո Համբարձումովիչի պերպետուում մոբիլանման այդ ուղեղն էր ահա աչքի առաջ ունեցել մեր սիրելի, այնքան վաղաժամ մահացած պոետը՝ սույն տողերը գրելիս—

«Յեգիպտական բուրգերը փոշի կըդառնան՝
արևի պես, յերկիր իմ, կվառվես վառման...»:

Այսպես ենք կարծում, ընթերցող, և մենք հիմք ունենք այսպես կարծելու, վորովհետև նույնը, ճիշտ նույնը, բառացի նույնն էր մտածում և ինքը, նույն ինքը Մազութի Համոն, վորին մենք վեպիս յերկրորդ մասի վերջում կայարանում կանգնած թողինք՝ հայացքը Նայիրյան հեռուն, ուր հեռացավ գնացքը՝ «Նայիրյան ուժերով» բեռնավոր: Հենց նույն այդ դառն ու ազնվական, տխուր ու ժպտաթախիծ զգացմունքն էր տիրում Համո Համբարձումովիչի սրտում, յերբ նա, վայրկյանի լրջությունից ազդված, կայարանից քաղաք էր վերադառնում՝ վոչ թե, ինչպես կարելի յե կարծել, ընկ. Վառոդյանի ուղեկցությամբ, այլ մենակ, մեն մենակ, տխուր ու մտախոհ՝ սեփական, այսինքն «Լույսի» տեղական գրասենյակին պատկանող կառքում ընկողմանած:

Մենակ, մտախոհ, տխուր ու ժպտաթախիծ զգացմունքներով լեցուն՝ Մազութի Համոն կայարանից վերադառնում էր քաղաք: Յեվ կայարանից մինչև իր բնակարանը նրա, Մազութի Համոյի աչքերը նույն այն ժպտաթախիծ արտահայտությունն ունեյին, ինչպիսին, ինչպես հիշում է ընթերցողը վեպիս յերկրորդ մասի վերջից՝ ունեյին նրանք (Համո Համբարձումովիչի աչքերը) կայարանում: Այդ աչքերի ներսում դեռ գնացքն էր, այդ աչքերի ներսում դեռ հեռուն էր գնացքի՝ սահմանից այն կողմը. Համո Համբարձումովիչի աչքերը չեյին տեսնում Լորիս-Մելիքյանի, այդ չարչիական փողոցի ցածլիկ խանութները: Համո Համբարձումովիչի աչքերում, աչքերի ներսում, նա յեր, ըղձալին ու յերազյալը,—յերկիրը Նայիրի: Գնում էր. փողոցի փոսերից, քարերից ցնցվելով, գնում էր կառքը «Լույսի» գրասենյակի:

Համո Համբարձումովիչն ընկողմանել էր՝ կիսահույզ: Որորվում էր — Համո Համբարձումովիչի նստուկի նման, կառքի ցնցումներից վեր ու վար յելևէջելով, որորվում էր Համո Համբարձումովիչի ուղեղում — յերկիրը Նայիրի: Շինվում էր. Համո Համբարձումովիչի նստուկի նման՝ նստման կետ էր փընտրում, տանելի գոյավիճակ—Համո Համբարձումովիչի ուղեղում յերկիրը Նայիրի: Փնտրում էր, բայց չէր գտնում. որորվում էր, ինչպես աշխարհը յերբեմն առասպելական այն ցուլի յեղջյուրների վրա. որորվում էր, յելևէջում էր անհանգիստ, յելք էր փնտրում.—Համո Համբարձումովիչի ուղեղից սահելով՝ դեպի յերկրայինը, դեպի գոյացման հեռուներն էր ձըգտում դեպի սահմանի այն կողմը—յերկիրը Նայիրի: Մըտածում էր՝ «Վո՞րն է Նայիրին»—ու շինվում էր ուղեղում, յելնում էր դարերի մշուշից, հառնում էր Համո Համբարձումովիչի ուղեղից, վոր նորից իրականանա—ո՞ւր, վո՞րտեղ սակայն—վո՞ր ափերում...: Կանգնում էյին. դարերի մշուշից, պառանցանքից յելած, շինվում էյին Մազութի Համոյի ուղեղում—քաղաքներ ու վոստաններ. յելնում էյին՝ Վանը, Բիթլիսը, Մուշը, Երզերումը, Սվազը, Դիարբեքիրը—վեց վիլայեթ: Նայիրին էր. հին ու հազարամյա. հառնում էր, կյանք էր առնում, շինվում էր Համո Համբարձումովիչի ուղեղում՝ դեպի գալիքի պառանցանքն էր ձգվում: Մի հանգամանք սակայն ստեղծագործական այդ նվիրական ժամին մնում էր անորոշ. մըտնում էր, ավելի լավ է ասել, անուշադիր.—Համո Համբարձումովիչի ուղեղի տեսողության դաշտից կարծես դուրս էր մնում, կարծես թյուրիմացաբար հաշվի չէր առնվում—մի խոշորագույն հանգամանք—յեթե միայն «հանգամանք» կարելի լինի համարել մեր նկարագրած քաղաքը, վորում ապրում էր հենց ինքը, Մազութի Համոն: Նման էր, յեթե անպատվաբեր չե այսպիսի համեմատությունը,—Նասր Եդդին հոջայի հայտնի առակին. Մոլլա-Նասր-Եդդինի նման՝ Համո Համբարձումովիչը մոռացել էր, կամ մոռանում էր հաշվել... իրեն, կամ—իր նստած յերկարականջ քեռուն, այսինքն—Նայիրյան այդ քաղաքը...: Հասկանո՞ւմ եք՝ կյանքի ու

մահու այդ ճակատագրական ժամին Համո Համբարձումովիչի տիեզերապարփակ ուղեղը կարծես մոռացել էր ամենաէականը—մոռացել էր այն, ինչ, ինչպես ասում են՝ իր, Համո Համբարձումովիչի, քթի տակ էր գտնվում։ Գուցե և չէր մոռացել, բայց... Բայց փաստը մնում էր փաստ. և այդ փաստն այն էր, վոր՝ Համո Համբարձումովիչի ուղեղում, ուր շինվում էր, յեփնում էր տարիների փուչուց ու ձգվում էր դեպի յերկրայինը, դեպի աշխարհի յերկրային հեռուն, յերկիրը Նայիրի—այդ ճակատագրական ժամին բացակայում էր վոչ միայն այդ քաղաքը, ուր առաջին հերթին ապրում էր հենց ինքը, Մազութի Համոն—այլև ամբողջ սահմանի այս կողմը. պատկերացնում եք՝ ամբողջ սահմանի այս կողմը, կարծես, ջնջել էր չարաբաստիկ մի ձեռք Համո Համբարձումովիչի տիեզերաշեն ուղեղից։ Յեվ Համո Համբարձումովիչը—վոչինչ. չէր անհանգստանում։ Չնայած, հասկանում եք, բերդին, չնայած Վարդանի կամուրջին և Առաքելոց յեկեղեցուն, չնայած հին ու հնամենի բոլոր այդ Նայիրյան հրաշալիքներին—Համո Համբարձումովիչի տիեզերաշեն ուղեղը մի տարօրինակ համառությամբ անտես էր առնում, ասես համարում էր չեղյալ սահմանի այս կողմը. —ո՛, գիտեք, հասկանում էր Մազութի Համոն, վոր այստեղ չէ, վոր իր հանճարեղագույն ուղեղից սահելով պիտի միս ու մարմին առներ, կերպավորվեր հաստատ, գոյանար յերկրայինը—յերկիրը Նայիրի . . . .

. . . .

Թող չկարծվի սակայն, վոր Համո Համբարձումովիչը միամտաբար էր այդպես մտածում։ Վո՛չ.—այդպես մտածելու համար Համո Համբարձումովիչի ուղեղը, ի՞նչ խոսք, վոր ուներ հարգելի պատճառներ. նման պատճառները փոլիտիկոսների բառբառում կոչվում են՝ քաղաքական պատճառներ . . . .

. . . .

Բայց և այնպես, ընթերցո՛ղ,—ո՛վ իմանա։ Այդպես էլ Համո Համբարձումովիչի ուղեղը և հենց ինքը, Մազութի Համոն. ինչ

իմանար։ Յեվ այն էլ—ճակատագրական այն օրը։ Ասում ենք ճակատագրական, վորովհետև այդ օրը, ի բաց առյալ բոլոր վերոհիշյալ դեպքերը—Համո Համբարձումովիչի կյանքում, ավելի լավ և ասել՝ Մազութի Համոյի ուղեղում կատարվեց և մի այլ, ավելի քան նշանակալից, գեր-ճակատագրական—դեպք ասեմ, չգիտեմ, թե—անսպասելի մի տիյեզերացնցում, վորի հետևանքով տարօրինակ մի տեղափոխություն կատարեց Համո Համբարձումովիչի ուղեղում... յերկիրը Նայիրի։ Բայց այս մասին արդեն հարկավոր է մանրամասն խոսել։

Համո Համբարձումովիչը, ինչպես ասացինք, կայարանից վերադառնում էր տուն։ Ուղեղում—դե յե՞րբ էր Համո Համբարձումովիչի ուղեղն իրը յեղել. ուղեղում, կրկնում ենք վերջին անգամ,—Նայիրյանն էր, հավիտենականը. ուղեղի մշտնջենական յեղջյուրների վրա օրորվում էր, ծանր,—յերկիրը Նայիրի։ Այդպես էլ հասավ իր բնակարանը և անցավ իր առանձնասենյակը. առանձնասենյակում նստած էր իր անզուգական դուստրը—Սեաչյա Գրիմադոննան։ Սեաչյա Գրիմադոննան արտասվում էր՝ գլուխը ձեռքերի մեջ առած՝ արմունկները գրասեղանին։ Մոտեցավ. գրկեց դստեր գլուխը Մազութի Համոն. ուղեղում Նայիրյանն էր դեռ և վոչ անձնականը. ուղեղի յեղջյուրների վրա դեռ նստած էր, ծանր, յերկիրը Նայիրի։ Մոտեցավ. ձեռքը, բնազդաբար, իջավ ցնցվող ուսին Սեաչյա Գրիմադոննայի. Սեաչյա Գրիմադոննան խոսելու փոխարեն արցունքոտ ցուցամատով ցույց տվեց մոր ննջարանը Մազութի Համոյին։—«Գնա՛ այնտեղ»—ասաց արցունքոտ ցուցամատը Մազութի Համոյին։ Համո Համբարձումովիչը կարծես զգաց. հասկացավ կարծես Մազութի Համոն քըրտմնելի մի բան. ուղեղում, ուղեղի յեղջյուրների վրա, յերերաց, անհանգիստ, յերկիրը Նայիրի։ Համո Համբարձումովիչը զգույշ, ինչպես գողը, մոտեցավ Անգինա Բարսեղովնայի ննջարանին։ Կռացավ, բանալիի ծակից ներս նայեց, Անգինա Բարսեղովնայի ննջարանը, Մազութի Համոն. օրորվեց, ուղեղի յեղջյուրների վրա թփրտաց անհանգիստ յերկիրը Նայիրի...։ Օրորվեց, թփրտաց

անհանգիստ.—Նայիրի յերկիրը, ցատկելով ուղեղի յեղջյուրների վրայից, ցատկելով ուղեղից—Նստեց Համո Համբարձումովիչի ականջներից բուսած... պոզերի վրա։ Յեվ այդ տարօրինակ—յերկար, հոր ականջներից ընտանեբար բուսած պոզերի արանքից, Մազութի Համոյին գաղտագողի մտեցած, Նրա յետեր շնչասպառ կռացած, Սեաչյան Պրիմադոննան տեսավ ... . մազերը, կոնակը և սպիտակ նստուկը քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի), վորին, նկարչական շքեղ մի կոնտրաստ կազմելով, քնքուշ փաթաթվել եյին պղնձագույն սրունքներն Անգինա Բարսեղովնայի՝ իր, Սեաչյա Պրիմադոննայի, մոր—Համո Համբարձումովիչի անդուգական կողակցի . . . .

. . . .

Այս։ Վո՞րն եր—«Նայիրին»...

Նա այնտեղ եր—Համո Համբարձումովիչի ուղեղա-ընտանեկան յեղջյուրներին... Ներողություն՝ պոզերին նըստած. սնում եր, սնում եր Նրան Համո Համբարձումովիչի ուղեղը, վորպես մի իրականացած «պերպետուում-մոբիլե». գերմանական հայտնի գիտնական Հելմհոլցի նշանավոր թեորիան հերքելով՝ անհատնում յեռանդ, իրա տերմինոլոգիայով ասած՝ ազգային եներգիա յեր մատակարարում իրեն ու ամենքին։ Բայց այստեղ հարկավոր է արդեն, ինչպես ասում են՝ «փակագծերը բանալ»։—Հարկավոր է ասել, վոր «Համո Համբարձումովիչի ուղեղ» ասելով պետք է մոտավորապես այն հասկանալ (մենք մոտավորապես այն ենք հասկանում), ինչ վոր հասկանում են իդեալիստ փիլիսոփաներից վոմանք «յես» ասելով.—«տիեզերական հոգի»—տվյալ դեպքում, իհարկե, նայիրյան մասշտաբով։ Իհարկե, Մազութի Համոյի ուղեղն եյապես մի մասնիկն եր միայն կենտրոնաուղեղասարդի, Նայիրյան այդ «տիեզերական հոգու», վոր շուտով, շուտով, իր դիալեկտիկական զարգացման սինթեզին հասնելով՝ պիտի իրականանար որերում ու տարիներում, վորպես հազարամյա Նայիրաարքայություն։ Նրա, այդ «տիեզերական հոգու» (Նայիրյան մասշտաբով) գե-

րագույն սուբստանցիան եր—«Ընկերությունը», այսինքն կենտրոնաուղեղասարդը, և այդ «տիեզերական հոգու» (Նայիրյան մասշտաբով) մի մասնիկն եր ահա Համո Համբարձումովիչի ուղեղը՝ տեղական սուբստանցիան։—Յեվ այդտեղ եր ահա Նայիրին, Համո Համբարձումովիչի այդ հանճարեղագույն ուղեղում։ Այդտեղ եր. շինվում եր այդտեղ. լրացել եյին որերն ու ժամանակները. ուղեղայինն արդեն յերկրայինի պիտի փոխվեր. ուղեղայինը պիտի իրականանար։

Յեվ այդ իրականացումը, ինչպես տեսանք, սկսվեց բավականին տարօրինակ, սկսվեց... արմատից։ Առաջին հերթին, ինչպես տեսանք, արմատը, այսինքն Համո Համբարձումովիչի ուղեղային յեղջյուրները, այնքան անսպասելի կերպով փոխվեցին—ընտանեկան ամենասովորական... պոզերի։ Բայց—«Ո՞վ չունի»—մտածեց Համո Համբարձումովիչը, մտաբերելով Արամ Անտոնիչին, գավառապետին իրան, հազար-հազարին։ Մի ժամ չանցած՝ մոռացավ, չեղյալ համարեց այդ ամենը Համո Համբարձումովիչը. տեղ չկար ուղեղում անձնականի համար. ուղեղում տիեզերականն եր, նայիրյանը։ Ինեց. կամքի յերկաթե ձեռքով սրբեց ուղեղից անհաճո միջադեպը. յերազում—գնացքն եր՝ նայիրյան ուժերով բեռնավոր. յերազում թռչում եր գնացքը... անկարելի հեռուն։ Բայց հաջորդ առավոտ, յերբ դուրս յեկավ տնից Համո Համբարձումովիչը և, կառք նստելով, ուզում եր «Լույսի» գրասենյակը գնալ—անսպասելի կերպով կառքը չշարժվեց. ձիերը, քարացած նիզակների նման, տեղերում մնացին։ «Ի՞նչ կա»—հարցրեց Համո Համբարձումովիչն անհանգստացած. և դեռ չեր լսել կառապանի փնթփնթոցը, յերբ նրա, Համո Համբարձումովիչի ուղեղից սահելով խուժեցին փողոցը, կանգնեցին իրականացած... Համո Համբարձումովիչի ուղեղա-ընտանեկան յեղջերա-պոզերը. փողոցի մայթերից ձգվեցին դեպի ինքը—կենդանի յեղջյուրներ, բազմագլուխ պոզեր։ Յեվ ահա՝ հազիվ եր գլուխը դուրս յերկարել կառքից—շրջապատեցին, լեզու առան հանկարծ այդ մարմնավորված յեղջյուրները, Ներողություն՝ պոզերը։ «—Աղաա, մզի

տէ—է—էղ, մղի խա-ա-ա-աց, մղի խա-ա-աց, մը՛-ղի՛-խա-ա-ա-ա-աց...»—խոսեցին, բազմաձայն ու բազմագլուխ, կենդանի յեղջյուրները, այսինքն՝ պոզերը: «Վո՞րտեղից եք»—մեքենայաբար հարցրեց Համո Համբարձումովիչը, բնազդորեն, յերևի, գլխի ընկնելով, վոր ինչ-վոր առնչություն պետք ե վոր լինի դրանից և իրա, այսինքն Համո Համբարձումովիչի, ուղեղա-բնատանեկան յեղջերա-պոզերի մեջ: «—Վո՞րտեղից եք»—հարցրեց Մազութի Համոն:

«—Բա-սէ-նա, Բա-սե-նա, -սե նա»—խոսեցին, հազարբերան ասին, խուժեցին ուղեղը,—«Գաղթական են, սահմանեն են փախե»—պարզաբանեց կառապանը Մազութի Համոյին. խռնվեց. խառնվեցին իրար. ուղեղից սահելով՝ յետ նորից Համո Համբարձումովիչի ուղեղը խուժեցին յեղջյուրներն ու պոզերը. ուղեղում, հաստատ ու մարմնավոր, Նայիրին եր արդեն—յերկրայինը. կառք, կառապան, բարձրահասակ սպա, Անգլինա Բարսեղովնայի պղնձագույն սրունքները—գաղթականներ... Բասեն:

Ձեռքը քաշում եր կառապանի թևից: Կառքի մեջ հաստակովը մեկ կանգնած՝ արդեն «Լույսի» գրասենյակն եր գնում Համո Համբարձումովիչը. ուղեղից յելնելով արդեն դիմավորում եր նրան գրասենյակի դռներում ընկ. Վառոդյանը՝ փափախավոր. . . . .

. . . .

Յերկուշաբթի յեր. հազար ինը հարյուր տասնչորս թվականի դեկտեմբերը:

Յեվ այստեղից ե ահա, վոր, կարծես Մազութի Համոյի ուղեղից սահելով, կերպավորվելով աշխարհում, վորպես Մազութի Համոյի ուղեղից յելած առոնին զառանցանք՝ գլորվեցին որերը, տխուր ու աղետաբեր. գլորվեցին և իրականացան 1914, 15, 16 թվականները—յելան, տեսիլանման, հանճարեղագույն այդ ուղեղից և իրականացան այնտեղ, սահմանի այն կողմը, այնտեղ, ուր պիտի հառներ տարիների մուժից յերկիրը Նայիրի, այնտեղ, ուր հեռացավ գնացքը՝ «Նայիրյան ուժերով» բեռնավոր: Իրականացան այդ տարիները, դաժան ու անկարելի, այնտեղ—Վանում, Բիթլիսում, Մուշում, Դիարբեքիրում,—այնտեղ—Երզրումում, Սվազում, Յերզնկայում,—այնտեղ Գարահիսարում...: Անապատում յելած միրաժի նման՝ յելավ—գետնահարվեց, վերջին պատրանքով շրջավորված հնամյա յերազը, գետնահարվեց—որդյո՞ք ընդմիշտ... Ու մնացին—դիյեր, դիյեր, դիյեր,—առոնին զառանցանք: Ու մնացին—ավերակներ: Ու մնաց... Մազութի Համոն՝ Նայիրյան այդ քաղաքում կանգնած կենդանի Նայիրի. վորպես հավիտենական պերպետուում մոբիլե, վոր, ինքն իրեն սնելով՝ անսպառ քանակությամբ «ազգային յեռանդ» ենդանում, շնչավորելով հավիտենացածը՝ միթե անկարելին...: Յեվ բազում դեպքեր ու պատմություններ յեղան մեր նկարագրած քաղաքում, բայց այդ բոլորը մենք թողնում ենք մի կողմ, թողնում ենք...դարերին: Գլորվեցին, ինչպես ասացինք, 1914, 15, 16 թվականները, դատարկվեց ու ամայացավ այդ մռայլ տարիներում յերկիրը Նայիրի,—բայց, ինչպես հայտնի յե քեզ, ընթերցող, պատահեց այնպես, վոր «ռուսը» կամ, ինչպես մեր նկարագրած քաղաքի բնակիչներն եյին ասում՝ «սոխը» գրավեց յերազյալ վայրերը, հասավ, ինարկե հասավ, Երզերում, բայց վոչ թե «յոթը» որում, ինչպես Մազութի Համոն եր գուշակում, այլ անհամեմատ ավելի յերկար ժամանակամիջոցում: Բայց միթե այս ե հարցը, ընթերցող: Ո, վոչ. ինարկե վոչ: Գռոշի արժեք չուներ այդ հարցը, մի ինչ վոր քաղաք գրավելու ժամանակամիջոցը սխալ գուշակելու խնդիրը, Մազութի Համոյի համար.—զինվորական չեր Մազութի Համոն և վոչ ել ստրատեգ, այնպես վոր նրա հաշիվներում պատահած այդ փոքրիկ սխալը, այդ ինքնին չնչին հանգամանքը, ապացուցում եր ամենից առաջ իրեն, Մազութի Համոյին, և ապա «Ընկերության» բոլոր մնացած անդամներին, վոր «աղետների» հարցում միանգամայն անմեղ ե ինքը, Մազութի Համոն, ինչպես և «Ընկերությունը»: Յեվ ճիշտ վոր. ինչո՞ւ հնարավոր չեր Երզերումի գրավումը «յոթ» որից. ով եր խանգարողը: Ո՞վ կար դեմը կեցած, ի՞նչ զորավոր ուժ. ռազմի ինչ կարողություն...: Ծիծաղելի յեր, դառը ծիծաղ եր հարու-

ցանում ինչպես Մազութի Համոյի իրա, այնպես էլ «Ընկերության» մյուս ազդեցիկ անդամների, սրտում այդ անհասկանալի անհեթեթությունը։ Հասկանո՞ւմ եք. Սոխը, տասնչորս միլիոնանոց բանակ ունեցող այդ տիեզերական Արջը, չէր կարող լղրճուկ մի քաղաք վերցնել յոթ օրվա ընթացքում...։ Յեվ սա այն ժամանակ, յերբ դեմը կեցողը—Զառամյալն էր, Հավիտենական Հիվանդը, Մահամերձը... Թափթփուկ հորդանելով կեցել էր զորավոր Սոխի հանդեպ, անգամ ջարդում էր ու քշում, սրի ու հրի յէր մատնում յերկիրը Նայիրի և վոչինչ. կարծես չէր էլ անհանգստանում Սոխը, և չէր էլ վրդովվում... գրավոր խոստումներ տվող Բարձրագույն Ինստանցիան...։ Մի բան կար թաքնված այս ամենի յետևը, և Մազութի Համոն ավելի քան հասկանում էր այդ բանը. հասկանում էր, իհարկե, և «Ընկերությունը», բայց՝ ինչո՞վ, ինչո՞վ էր մեղավոր Մազութի Համոն, ինչո՞վ էր մեղավոր Ընկերությունը։ Յեկան, աշխարհի չորս կողմից հավաքվեցին Նայիրյան ռազմիկները. արին, ինչ վոր կարող էին անել. ավելի՛ն արին. իրենց մայրերի և զավակների հավելյալ արյունը բերին ի նվեր նենգավոր Սոխի փրկարար առաջխաղացումին. և ինչ.—ստոր, նենգ, գետնաքարշ դավաճանություն էր հատուցումը՝ ավերված Նայիրին...։ Իսկ այն, վոր, լպիրշ ու լրբաբար, վախկոտ-վախկոտներ, թալանչիներ ու ավազակներ հայտարարվեցին Նայիրյան ռազմիկները, և այդ ըստոր սոխերի կողմից խայտառակության սյանը գամվեցին ամբողջ աշխարհի առաջ—ի տրիտուր այն մեծ ու հերոսական օգնության, վոր հասցրին Նայիրյան ռազմիկները սոխերի վոչխարային բանակին...։ Ամոթ էր, չկա՞ր դավաճանություն—սոխերի կողմից, իսկ «Ընկերության» և Նայիրյան բանակների կողմից—հերոսական պայքար, ապառաշունչ գոյամարտ, օրհասական կռիվ։ Ո՛վ, ո՞վ վերցրեց Վանը, յեթե վոչ՝ Նայիրյան բանակը. ո՞վ վերցրեց նույն Երզրումը...։ «—Սրիկաներ, լրբեր, դավաճաններ»—փրփուրը շրթունքներին վորոտում էր հաճախ, ձեռքը սեղանին խփելով, Տեղական Կոմիտեյի նիստերին, Մազութի Համոն.—«Վո՛չ. էլ

չես սոխասեր չեմ, էլ չեմ կարող հանդուրժել դրանց այդ լկտի վերաբերմունքը»—գոռում էր, փրփուրը բերանին, Մազութի Համոն,—և ապա գնում էր գավառապետի բնակարանը, ուր հանգստանում էր մի քիչ, հանգստացնում էր ջղերը Ագրիպինա Վլադիսլավովնայի, իր անգին կողակից Անգինա Բարսեղովնայի, քաղաքի պարետի (բարձրահասակ-սպայի) և իր անզուգական դստեր՝ Սեաչյա Պրիմադոննայի հետ՝ «դուռաչկի» խաղալով։

Չեր վհատում. Կենտրոնաուղեղաստարդի ուղեղատատանումներին յենթակա ու հլու՝ օրերի լրացմանն ու արյան հատուցմանն էր սպասում Համո Համբարձումովիչի ուղեղը. սպասում էր, վոր համաշխարհային պատերազմը վերջանա և հաղթության սեղանի նստեն ազգերն ու ժողովուրդները. գիտեր, համոզված էր նա, վոր այն ժամանակ արդեն կիրականանա յերազյալը, կը կատարվի անխուսափելին, կը թռչի, անգոյության գիրկը կը գլորվի Հավիտենական Հիվանդը, և նրա դիակի վրա, նրա նեխած մարմնի քայքայումից յելնելով՝ կը կանգնի, պայծառ ու յերկրային—յերկիրը Նայիրի։ Այսպես էր մտածում, այսպես էր հավատացած Համո Համբարձումովիչը, բայց անցավ 916-ը, յեկավ 1917-ը և, յերևակայո՞ւմ եք, պատահեց անսպասելին, կատարվեց—անսպասելի, կատարվեց—հանկարծ...։

Այդ անսպասելին, Համո Համբարձումովիչի—Մազութի Համոյի համար այդ հանկարծակի պատահածը, վոր շարժեց տեղից, շփոթ ու իրարանցում մտցրեց վոչ միայն Համո Համբարձումովիչի, այլ և ամբողջ «Ընկերության» կենտրոնաուղեղում—Ռուսական Հեղափոխությունն էր, հազար իննը հարյուր տասնյոթ թվականի փետրվարը...։

Այստեղից է ահա, վոր մենք պիտի անցնենք մեր նկարագրած քաղաքի վերջին դեպքերի պատմությանը։

Սկսվեց նրանից, վոր մի օր, միանգամայն անսպասելի կեր-

պով, քաղաքի փողոցներում յերևաց, զինվորականի շորերով և չսափրած, բորբոսնած դեմքով, վեպիս յերկրորդ մասից մեզ արդեն բավականին ծանոթ Կարո Դարայանը. ճիշտ այնպես, ինչպես առաջին անգամ իր հայրենի քաղաքը գալիս, յեկավ ու իջավ—ուղիղ պ. Մարուքեյի բնակարանը։ Յեվ ահա, նրա գալուց ընդամենը մի որ հետո, ցերեկվա ժամը մոտավորապես 11-ին, հանկարծ փակեց «Լույսի» գրասենյակը Համո Համբարձումովիչը. հապշտապ, և այն էլ վոչ թե կառքով, այլ—չտեսնված յերևույթ—վոտքով տուն յեկավ Մազութի Համոն ու փակվեց իր առանձնասենյակում, հրամայելով ծառային, վոր բոլո՛ր իրեն հարցնողներին, բացի ընկ. Վառոդյանից և բժշկից, հայտնի, վոր ինքը տանը չէ։ Մինչև յերեկո այդ որն իր առանձնասենյակում մնաց Մազութի Համոն։ Վարագույրները քաշել էր ու նստել կիսախավարում. լուռ էր. գլուխը ցավում էր մի քիչ. ուղեղում... պարապություն էր այդ օրը՝ անգամ մի մշուշ, բաց տարածություն։ Կորվել եյին կարծես օրերն ու տարիները. հատվել էր ինչ վոր բան Համո Համբարձումովիչի ուղեղում. այդ որն ուղեղում, ինչպես ասացինք, մշուշ էր թափանցիկ—բաց տարածություն։ Բայց այդ բաց տարածությունը յերբեմն յերբեմն սկսվում էր լցվել. կարծես քնած էր արթմնի ու, արթմնի յերազում, տեսնում էր տեսիլներ. տեսնում էր—

— Թեքվել էր Ագրիպինա Վլադիսլավովնան իր վրա ու քնքո՜ւշ-քնքո՜ւշ կկոցում էր, ինչպես մի անմեղ աղավնի...։ Նայում էր աչքերին. Ագրիպինա Վլադիսլավովնայի աչքերում էլ մշուշ էր թափանցիկ, բաց տարածություն...։ Ագրիպինա Վլադիսլավովնան թվում էր փոքրի՜կ-փոքրի՜կ. մանկական կարմիր շրթունքներով համբուրում էր Համո Համբարձումովիչի սառը շրթունքներն Ագրիպինա Վլադիսլավովնան։ Նայում էր, անթարթ նայում էր Ագրիպինա Վլադիսլավովնայի աչքերին Համո Համբարձումովիչն ու նկատեց. Ագրիպինա Վլադիսլավովնայի աչքերի բաց տարածությունն սկսեց լցվել, լցվել, իմաստավորվել, իմաստ ստանալ։—«Չե՞ս ճանաչում»—հարցնում էր բաց տարածությունն Ագրիպինա Վլադիսլավովնայի աչքերից Համո Համբարձումովիչին.

Համո Համբարձումովիչը նայեց—նայեց—ու վեր թռավ տեղից. յերազից արթնացողի նման ձեռքով շփեց ճակատը Համո Համբարձումովիչը. նայեց՝ թեքվել էր վրան—իր անզուգական դուստրը՝ Սևաչյա Պրիմադոննան. Նայում էր աչքերին։ Աչքերում—մշուշ էր անգո՝ բաց տարածություն։—«Ի՞նչ կա» —հարցրեց Համո Համբարձումովիչն անհանգստացած. Սևաչյա Պրիմադոննան հառեց աչքերը գետնին. հետո արագ-արագ, կարծես դաս ասելիս լիներ, խոսեց. Համո Համբարձումովիչն իր դստեր կարկտի պես թափվող խոսքերից միայն այն հասկացավ, վոր ինքն իսկույն պետք է գնա գավառապետի բնակարանը։ Վեր կացավ Համո Համբարձումովիչը, հագավ վերարկուն, վերցրեց ձեռնափայտը. գնաց։ Արդեն մութն էր, յերեկոյան ժամի արդեն 10-ը կը լիներ, յերբ Համո Համբարձումովիչը մտավ գավառապետի բնակարանը։ Մարտի 2-ն էր. 1917 թվի մարտի 2-ը։

Թե ինչ էր խոսվել այդ յերեկո գավառապետի բնակարանում—աստված ինքը գիտե, բայց մի քանի որ անց պ. Մարուքեն ասում էր, վոր այդ յերեկո գավառապետի մոտ են յեղել, բացի Համո Համբարձումովիչից, նաև բժիշկը, Ոսեփ Նարիմանովը, Գեներալ Ալոշը և դպրոցի տեսուչը—Արամ Անտոնիչը։ Բայց մենք այդ առթիվ ստույգ տեղեկություններ չունենալով՝ հարցը թողնում ենք բաց. հարցի տեղ թողնում ենք—բաց տարածություն. Թող լցնի, ում յերևակայությունն ինչով վոր կամենա, այդ բաց տարածությունը։ Մենք յենթադրություններ չենք ուզում անել։ Յեվ, վերջ ի վերջո, ինչ նշանակություն ունի, թե ով է ներկա յեղել այդ յերեկո գավառապետի և Համո Համբարձումովիչի զրույցին—եյականն այդ չէ, ընթերցող, այլ այն, թե ո՞ւր են գնացել այդ յերեկո, գավառապետի բնակարանից յելնելով, Համո Համբարձումովիչը և բժիշկը.—ահա՛ հարցը։—Յեվ այս հարցի շուրջն էր ահա, վոր մի քանի որ անց քաղաքում պտտվել սկսեցին զանազան հետաքրքիր զրույցներ. հետաքրքիր թեկուզ այն պատճա-

ռով, վոր այդ գրույցները կապված եյին—յերևակայում եք—«մութ տեղի» հետ, այսինքն Հինգհարկանի շենքի ներքևի հարկի ամենածայրը, անկյունում գտնվող այն փոքրիկ սենյակի, վոր ընկ. Վառոդյանի կինակի վրա—ինչպես հիշում է ընթերցողը վեպիս առաջին մասից—թողել եր... հետաքրքիր հետքեր: Խոսում եյին, վոր այս գրույցները տարածում է պ. Մարուքեն. նույնիսկ ասում եյին, վոր այս գրույցները տարածելում նույնպես մաս ունի—յերևակայում եք—ինքն ընկ. Վառոդյանը. բայց այս յերկրորդ հանգամանքը հետագայում միանգամայն հերքվեց և գրպարտության ամբողջ մեղադրանքը մնաց Կարո Դարայանի խղճին,—Կարո Դարայանի, վոր արդեն գիտակ եր, կորցված մութ մի գիշեր, ընկած—ով գիտե, թե ուր...: Մութ, խորհրդավոր պատմություն եր այդ, ընթերցող, վոր այնպես էլ մութ մնաց ու մնաց խորհրդավոր.— բայց այդ մասին հետո:

Հաջորդ որը, մարտի 3-ին, առավոտյան ժամը 8-ը դեռ հազիվ կը լիներ, յերբ բերդից հանկարծ, քաղաքացիների համար միանգամայն անսպասելի կերպով, դեպի քաղաք շարժվել սկսեցին—զորքեր, զորքեր, զորքեր. շարժվեցին թնդանոթներով ու գնդացիրներով. լցրին փողոցները: Սարսափած՝ խանութներն իրար յետևից փակել սկսեցին Լորիս-Մելիքյանի խանութպանները. բանն այն է, վոր նրանք վոչ մի տեղեկություն չունենալուց բացի՝ այդ անսպասելի շարժման, այդ իրարանցումի մեջ չեյին տեսնում նման դեպքերում քաղաքի յեզը ցեխից հանող Մազութի Համոյին, վոչ էլ մյուս պատկառելի Նայիրցիներից վորևե մեկին. գիտեյին, լսել եյին, վոր ինչ վոր բան պատահել է Ներսեսում, բայց այդ մասին վախենում եյին խոսել.—իրենց գործը չեր: Յերեք որ եր արդեն, վոր պտտվում եյին շշուկները, բայց քաղաքացիք, մանավանդ Լորիս-Մելիքյանի խանութպանները թերահավատ եյին դեպի նման շշուկները. թերահավատ ու կասկածոտ: Թերթեր յերրորդ որն եր չեր ստացվում: Չեյին ստացվում անգամ

Նայիրատառ «Մշակն» ու «Հորիզոնը». ասում եյին, վոր գավառապետը մարդ է կանգնեցրել կայարանում և ձերբակալում է բոլոր ստացված թերթերը. ասում եր—պ. Մարուքեն: Այնպես վոր կատարյալ անգիտության մեջ եր քաղաքը դեռ, յերբ այդ առավոտ, բերդից շարժվել սկսեցին—զորքեր, զորքեր, զորքեր. պուլեմյոտ ու թնդանոթ: Ինչպես ասացինք՝ փակեցին խանութները, վոր նոր եյին բացվել. խանութպաններից վորը տուն գնաց, վորը հենց ենպես կանգնեց իր փակ խանութի փակ դռան առջևը, վորն էլ Տելեֆոն Սեթոյի սրճարանը գնաց՝ լուրեր ստանալու: Տելեֆոն Սեթոյի սրճարանը գնացողների մեջ եր և Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆը, անգլիախոս գորգավաճառը:

—«Հը՞, բան մը կըհասկընա՞ք սա ղալաբալըղեն»—հեգնախառն հարցրեց Հաջի Ոնիկ եֆենդին սրճարանը մտնելով.—«Ընչի՞ չենք հասկընա որ»—կտրուկ պատասխանեց Տելեֆոն Սեթոն: «--Զորքին պրիկազ է եկե որ ռեալյուց ենեն»—վերջացրեց Սեթոն ու տիրեց լռություն. հեռվից, գավառապետի բնակարանի կողմից, լսվեց մի հազարբերան «ուռռա». գրոհի գնացող զինվորների ցնծալից ու ահավոր աղաղակ եր դա, վոր ներկաների վրա անում եր միստիկ տպավորություն: Լուռ եր. լուռ լսում եյին բոլորը. դեմքերի արտահայտությունն այն եր, վոր, կարծես, նրանք սպասում եյին թնդանոթի պայթունի. հառել են լսողություններն ու սպասում անհամբեր՝ հիմա կը պայթի:—«Կըսեն բերդեն թոփ յեն կապե նաչալնիկի տունը»—արտահայտեց ընդհանուրի միտքը պ. Արոմարշը, վոր նույնպես գտնվում եր սրճարանում. բայց հավանություն չգտավ:—«Զեղեկ-դեղեկ չխոսես նե, հայվան, քու ինչ խառնվելու գործդ ե»—բարկացավ Հաջի Ոնիկ եֆենդին ու ավելացրեց, մի փոքր լռելուց հետո, չոր ու խրատական: «—Ատ սինըլքորները ղուռնան յեսքը կիմանանք, յավրուս»—ու դուրս գնաց ձեռնափայտը գետնին խփելով—չոր ու խրատական: Ուզում եր տուն գնալ Հաջի Մանուկոֆ եֆենդին, բայց Հաջու տան ճանապարհն ընկնում եր Հինգհարկանի Շենքի մոտով. դեռ նոր եր թեքվել դեպի այդ շենքը Հաջին, յերբ յետ-յետ գնաց, զարհուրած կրթնեց պատին:—Դեմը, Հինգհար-

կանի Շենքի առաջ, Ոնիկ եփենդին տեսավ - զորքեր, զորքեր, զորքեր. անհաշիվ բազմություն: Դեմը—վեր ցցված սվիններ, ու վեր ցցված սվինների միջից Հաջի Ոնիկ եփենդի Մանուկոֆը տեսավ—Հինգհարկանի Շենքի պատշգամբը. պատշգամբում տեսավ—մի քանի սոխ գինվորներ, նրանց մեջ իրան—պ. Մարուքեյին, իր հորջորջած՝ «քամի կուլ տվող» Կարո Դարայանին և սրանց մեջտեղը—ո՜, զարհուրանք,—իրան՝ վոստիկանապետին...: Գլուխը բաց էր վոստիկանապետի. Հաջի Մանուկոֆ եփենդու նայած վայրկյանին՝ մի ինչ վոր սոխ-սալդաթ պոկում էր նրա, ինչպես տեղացիք էին ասում ուսդիրներին՝ «չիները». «քամի կուլ տվողը» բռնել էր ոձիքից վոստիկանապետի ու ցույց տալով վոստիկանապետի վախից ցամաքած դեմքը ներքևում կանգնած գինվորներին՝ «քամի կուլ տվողն» ասում էր—անկարելի խոսքեր: Շուռ յեկավ Հաջի Ոնիկ եփենդին ճեպով- վազեց հակառակ ուղղությամբ: Դեմից, նույնքան սարսափած ու շփոթված, դեպի ինքն էր գալիս—ընկ. Վառոդյանը. ընկ. Վառոդյանի փափախը թեքվել էր մի կողմ, գենքը չկար: «—Ո՞ւր, Հաջի»—հարցրեց ընկ. Վառոդյանը՝ դեմքը, աղաչական, Հաջուն մոտեցնելով. «—Գնա՛, գնա՛, յավրո՛ւս, ինծի հետ գործ չունիս»—հրեց նրան մի կողմ Հաջի Ոնիկ եփենդին ու շարունակեց վազել իր վազած ուղղությամբ: Ու դեռ չէր շուռ յեկել դեպի կողքի փողոցը, յերբ նորից սոխված յեղավ պատին կպչել Հաջին. կողքի փողոցից շուռ յեկան դեպի ինքը ու յցրին փողոցը - զորքեր, զորքեր, զորքեր—անթիվ բազմություն. դեպի Հինգհարկանի Շենքն եյին գնում նրանք: Խառնըված նրանց, այդ սոխ սալդաթներին, գնում եյին նաև մրոտ մարդիկ, «բաշիբոուզուկներ»—ինչպես մտածեց Հաջին.—յերկաթուղագծի ծառայողներն ու բանվորներն եյին դրանք, վոր խառնվել եյին զորքին—սոխ սալդաթներին: Սարսեց, քար կտրեց տեղն ու տեղը Հաջին: Հաջին տեսավ.—սոխերն ու բաշիբոուզուկները, մեջ առած, տանում եյին... բարձրաստիճան Սոխին. սոխ գինվորներով ու բաշիբոուզուկներով շրջապատված, գլխաբաց, առանց ուսդիրների, կալանավորի նման գետին նայելով, քայլում էր... բարձրաստիճան Սոխը, այսինքն գավառապետը...: Բնազդաբար ձեռքը գլխարկին տարավ Հաջի Ոնիկ եփենդին, յերբ անցնում էր մոտից գավառապետը. բարեբախտաբար, չնայեց նրա կողմը և Հաջի Ոնիկ եփենդին մի գոլ ուրախություն զգաց իր ներսում, վոր չնայեց իր կողմը գավառապետը: Բայց Հաջու այդ վայրկենական ուրախությունը հաջորդ վայրկյանին տեղի տվեց մի անզուսպ բարկության, անգամ կատաղության.—գավառապետին շրջապատող սոխ գինվորների ու բաշիբոուզուկների յետևից, յերգելով ու ազմկելով, գնում եյին քաղաքի տկլոր յերեխաները. նրանցից վոմանք գտել եյին թիթեղե թեյամաններ ու գինվորական կատելոկներ, վորոնց տակերին խփելով նրանք անասելի աղմուկ եյին բարձրացնում—վայրի յերաժշտություն: Զայրույթից ու կատաղությունից Հաջի Մանուկոֆ եփենդու ծնկներն սկսեցին դողալ. կընկներ, յեթե շարժվող գինվորների պատանման հոսանքը չպահեր: Հոսանքն անցավ, շըրջվեց դեպի Հինգհարկանի Շենքը. փողոցը դատարկվեց: Հանգիստ շունչ քաշեց Հաջի Մանուկոֆ եփենդին. հետո նստեց պատահաբար անցնող «Լույսի» գրասենյակի կառքը. քիչ անց, քըրտնաթոր, ինչպես բաղնիքից յելած, իր տան առջևը իջնում էր կառքից Մանուկոֆ եփենդին: «—Ո՞ւր է ազատ»»—հարցրեց Հաջին կառապանից՝ նրան դրամ տալով.—«Ես որ կանտոր չեկե, չեմ տեսե»-պատասխանեց կառապանը. շուռ տվեց կառքը. գնաց:

Խորհրդավոր ժպիտը դեմքին, ժպիտ, վորի մեջ խառը կային թե՛ զարմանք. թե՛ անսպասելի ուրախություն և թե խորին ակնածանք,—հանդիպեց Հաջի Ոնիկ եփենդուն Հաջու ազիզ կողակիցը—Նունուֆար հանըմը. շնչասպառ, նրան հանձնեց իր ձեռնափայտը Հաջին և ուզում էր արդեն ընդունարանը մտնել, յերբ Նունուֆար հանըմը կտրեց նրա ճանապարհը. Նունուֆար հանըմը մատները դրեց Հաջի Ոնիկի շրթունքներին.—«ը՜մ՜մ՜ս»—մատները Հաջու շրթունքներին դնելով՝ խորհրդավոր ժպտաց Նունուֆար հանըմը. «յա՛վաշ, հերիֆ, ներսը մարթ կա...»:

«Վո՞վ կա»—չոր, ցցվեց եֆենդին՝ դեմքին վախ ու սարսափ. ու չհամբերեց,—դեպի իրեն քաշեց դուռը...ու մնաց քարացած։ Հյուրասենյակում նստած եյին—յերևակայո՞ւմ եք—Համո Համբարձումովիչը, բժիշկը և,—Հաջու համար ամենազարմանալին ու ամենաանսպասելին,—քաղաքի պարետը (բարձրահասակ սպան)...։ «Ե՛, շա՜տ պիտի յերկարի սա սարսաղությունը»—ներս մտնելով հարց տվեց Հաջին՝ հերթով նայելով Համո Համբարձումովիչի, բժշկի և բարձրահասակ սպայի (քաղաքի պարետի) դեմքերին. բայց Համո Համբարձումովիչի, բժշկի և քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) դեմքերն անպատասխան թողին Հաջի Մանուկոֆ եֆենդու հարցմունքը։ «—Ե՛, երթա՛նք, երթա՛նք մեյմեկ թաս օղի առնենք»—ավելացրեց Հաջին՝ ընդհանուր շփոթմունքը ցրելու ցանկությամբ։ Ու մտան ճաշասենյակ։

Ճաշասեղանի ամենավերի գլուխը, Հաջի Ոնիկ եֆենդու կողքին նստած, լուռ ճաշում եր Մազութի Համոն։ Մազութի Համոն ուտում եր պաղ, ջրանման, կանաչավուն «չորբա»։ Ուտելով՝ Համո Համբարձումովիչը նայում եր պնակին. բայց Համո Համբարձումովիչի աչքերը կարծես չեյին տեսնում կանաչավուն չորբան. պնակում, չորբայի փոխարեն,—մշուշ եր. անգո մի մշուշ—բաց տարածություն։ Հասկանում եր Համո Համբարձումովիչը, զգում եր.—այն, վոր կատարվում եր դուրսը—կատարվում եր իրենից դուրս. կատարվում եր—իրենից անկախ։ Սպասում եր՝ ինչ կը լինի։ Մտածում եր՝ ինչո՞վ կը վերջանա։ Ու պատասխան չեր գտնում իր այդ հարցմունքին Մազութի Համոն. ուղեղում—մշուշ եր. անգո մի մշուշ-բաց տարածություն...։

Արդեն վերջացրել եյին ճաշը, յերբ յեկավ ընկ. Վառոդյանը։ Ընկ. Վառոդյանը ներս ընկավ շնչասպառ։ Յեվ ահա Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆի համար, իր իսկ բնակարանում, պատահեց

չտեսնված մի բան. Համո Համբարձումովիչը, բժիշկը և ընկ. Վառոդյանը խնդրեցին Հաջուն, վոր նա թույլ տա իրենց առանձնանալ հարևան սենյակը։ Հաջին, իհարկե, թույլ տվեց, թեկուզ և վո՛չ առանց զարմանքի, վոր իր իսկ բնակարանում հյուրերն ուզում են ազատվել իրենից։ Բայց և այնպես՝—«ընելիքդ ինչ, Հաջի. ընկեր ես—պիտի քաշես»—մտածեց Հաջին ու առաջնորդեց հյուրերին հարևան սենյակը։ Մտան հարևան սենյակը Համո Համբարձումովիչը, բժիշկը և ընկ. Վառոդյանը. Համո Համբարձումովիչը, բժիշկը և ընկեր Վառոդյանը փակվեցին հարևան սենյակում։ Իսկ Հաջին մնաց քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) հետ՝ ճաշասենյակում. նայիրախառն ռուսերենով սկսեց զրուցել քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) հետ որվա անց ու դարձի մասին։ Խոսում եր Հաջին քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) հետ, բայց միտքն այնտեղ եր—հարևան սենյակում։ Հասկանում եր Հաջին. գիտեր. այդ վայրկյանին հարևան սենյակում նիստ եր Տեղական Կոմիտեյի։ Գիտեր, բայց չեր հասկանում Հաջին, վոր այդ վայրկյանից պատմական վայր եր դարձել իր, Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆի բնակարանը. վոր այդ վայրկյանին իր, Հաջի Ոնիկ եֆենդի, Մանուկոֆի բնակարանում, հարևան սենյակում, կատարվում եյին, ինչպես իր, այնպես ել ամբողջ Նայիրյան ցեղի համար—ճակատագրական անցքեր։—Այդ վայրկյանին Համո Համբարձումովիչը, բժիշկը և ընկ. Վառոդյանը, այսինքն Կենտրոնաուղեղասարդի Տեղական Կոմիտեն, այսինքն Նայիրյան տիեզերական հոգու Տեղեկան Սուրսատանցիան իր դիրքն եր վորոշում դեպի կատարվող դեպքերը, և այս տիեզերական հանգամանքը չեր ըմբռնում Հաջին. Հաջին չեր հասկանում այս տիեզերական դեպքի ամբողջ նշանակությունը։ Թե ինչ վորոշում հանեցին կատարվող դեպքերի մասին Համո Համբարձումովիչը, բժիշկը և ընկ. Վառոդյանը հարևան սենյակում,—Հաջի Մանուկոֆ եֆենդին, ի հարկե, չիմացավ և չեր ել կարող իմանալ. բայց շուտով նա պիտի իմանար և պիտի իմանար նաև այն, թե ինչ բարի պատեհություն եր իր համար այդ թանկագին հյուրերի այդ օրն իր մոտ գալը։ Յեվ այս ամենը

Հաջին պիտի իմանար ընդամենը մի շաբաթ անց, յերբ բժիշկ Սերգե Կասպարիչը շրջանային կոմիսար եր արդեն, իսկ Համո Համբարձումովիչը—Քաղաքային Խորհրդի նախագահ...։

Տարօրինակ, մութ, չհասկացված դեպքեր պատահեցին Նայիրյան այդ քաղաքում այդ շաբթվա ընթացքում։ Դեպքեր, վորոնք ծածկված են գաղտնիքի ու խորհրդավորության անթափանցելի քողով — և դժվար թե վորևե մեկին յերբևիցե հաջողվի վեր հանել այդ քողը և նայել կատարված դեպքերի իսկական ատաղձին։ Այնպես վոր այստեղ մենք պիտի խուսափենք զանազան յենթադրություններ անելուց ու յեզրակացություններ հանելուց. պիտի պատմենք լոկ այն, ինչ վոր մեզ հաջողվել է տեսնել սեփական աչքերով կամ լսել մարդկանցից, վորոնք մեր աչքին ունեն ճշմարտախոսի անկաշառ կերպարանք։—Անցնենք այդ դեպքերին։

Ամենից առաջ հարկավոր է ասել, վոր այդ նույն ժամանակ, յերբ Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆի բնակարանում հավաքված՝ կատարվող դեպքերի հանդեպ իր բռնելիք դիրքն եր վորոշում Տեղական Կոմիտեն — այդ նույն վայրկյանին քաղաքում արդեն կային մարդիկ, վոր վոչ միայն արդեն վորոշել եյին իրենց դիրքը, այլև փակցրել եյին քաղաքի պատերին իրենց այդ դիրքի մասին սոխատառ և նայիրատառ հայտարարություններ։ Յեվ, կարևորն այն է, վոր այդ հայտարարությունների տակ, ի թիվս այլ, մեծ մասամբ քաղաքին անծանոթ, սոխերի ստորագրությանց, կային և յերկու ստորագրություն, վոր բավականին մտահոգություն եյին պատճառում վոչ միայն քաղաքի Նիսիտ բնակիչներին, այլև շատ ավելի պատկառելի մարդկանց.—Կարո Դարայանի և պ. Մարուքեյի (Մարուքե Դրաստամատյան) ստորագրություններն եյին դրանք, վոր մեխի գլուխների նման ցցվելով այդ հայտարարությունների տակից՝ մի շարք պատկառելի Նայիրցիների մեջ սկզբից և յեթ այն միտքն եյին առաջ բերում, վոր այդ մեխի գլուխներին հարկավոր է խփել։ Այդ հայտարարություններից բղխող այս, վորոշ չափով իմպրեսիոնիստական ցանկությունն ավելի ևս խորացավ մի շարք Նայիրցիների մեջ մի օր անց, յերբ քաղաքում տարածվել սկսեցին «Մութ Տեղ»-ի հետ կապված վերոհիշյալ լուրերը. ասում եյին, վոր այդ լուրերը տարածում է պ. Մարուքեն. ինչպես ասել ենք արդեն՝ նույնիսկ կարծողներ կային, վոր այդ լուրերը տարածելում մատ ունի նաև ընկ. Վառոդյանը. յերևակայում եք՝ այն ընկեր Վառոդյանը, վոր, ինչպես գիտենք՝ Տեղական Կոմիտեյի անդամ եր վաղուց հետե և Համո Համբարձումովիչի անձնական բարեկամը։ Չգիտենք մատ ունե՞ր թե չէ այդ լուրերը տարածելում ընկ. Վառոդյանը, բայց փաստը մնում եր փաստ. և այդ փաստն այն եր, վոր ինքն ընկ. Վառոդյանը գրտնըվել եր մի ինչ-վոր հայտնի ցուցակում, այսինքն վոչ թե հայտնի, այլ գաղտնի, վոր հայտնի չեր դարձել Կարո Դարայանի, այդ «քամի կուլ տվող» Նայիրցու շնորհիվ։ Դե արեք ու բան հասկացեք սրանից. և այն էլ սա դեռ ամբողջը չէ։ Բանն այն է, վոր այդ ցուցակը, ինչպես ասում եյին՝ լրիվ չեր. չորս թերթ պոկած եր այդ ցուցակից և այդ չորս թերթի շուրջն եր ահա, վոր Կարո Դարայանն ամեն մի ժողովում բարձրացնում եր անասելի աղմուկ, անտանելի հարայհրոց։ Յեվ վերջապես ինչքան աղմուկ ուզում եր՝ կարող եր բարձրացնել Կարո Դարայանը, բայց ինչո՞ւ չեր կապում նա իր այդ աղմուկը Համո Համբարձումովիչի—Մազութի Համոյի հետ։ Պ. Մարուքեյին նայած՝ այնպես եր դուրս գալիս, իբր Համո Համբարձումովիչի և բժիշկ Սերգե Կասպարիչի ձեռքերի գործն եր այդ հայտնի, այսինքն գաղտնի ցուցակի առաջին չորս թերթերի անհայտ անհետանալը. բայց ո՞վ կհավատա պ. Մարուքեյին։ Ո, վոչ, մենք չեյինք հավատա նման զրպարտության և չենք էլ հավատում, չնայած վոր—այդ յես հաստատ գիտեմ—անգամ ընկ. Վառոդյանն այդ առթիվ վորոշ շրջաններում արել եր բավականին յերկմիտ հայտարարություններ։ Բայց յենթադրենք անգամ, վոր վորոշ հիմք ունեյին պ. Մարու-

քեյի հայտարարությունները. հարց՝ ինչու էին Մազութի Համոն և Սերգե Կասպարինը, բժիշկը (յեթե միայն նրանց ձեռքերի գործն էր չորս թերթերի անհայտ անհետանալը)—ինչու էին նրանք ցուցակում թողել հինգերորդ թերթը, որի մեջ գտնվեց իրենց անձնական բարեկամի, իրենց Տեղական Կոմիտեյի անդամի—ընկ. Վառոդյանի անունը: Չենք հասկանում, մնում ենք շվարած, մնում ենք—ձեռնաթափ: Յեվ ապա՝ ինչո՞վ պիտի շահագրգռված լիներ ընկ. Վառոդյանը վերոհիշյալ հայտարարությունները անելով. մի՞թե ցանկալի յեր նրան իր անձնական բարեկամների, իր հետ միասին Տեղական Կոմիտեյում նստող այդ պատկառելի ընկերների, վարկաբեկումը. — Իհարկե ոչ, կասե ամեն մի խելքը գլխին անձնավորություն. — չէր կարող ցանկալի լինել, ինչքան էլ վիրավորված լիներ ընկ. Վառոդյանը հայտնի ցուցակի յերևան գալով: Համոզված պնդում ենք մենք այս, մանավանդ, որ մի շաբաթ անց մի կտրուկ հայտարարությունով Տեղական Կոմիտեն թյուրիմացության հետևանք հայտարարեց ընկ. Վառոդյանի հայտնի, այսինքն գաղտնի ցուցակում գտնվելու պատմությունը. այո, մի շաբաթ անց Տեղական Կոմիտեն իր պատկառելի ստորագրությամբ հայտարարեց ու հաստատեց ի լուր հանրության, որ ցուցակում գրտնըվել է ոչ թե Վառոդյան ազգանունը, այլ—Բարության և որ այդ Բարությանը ոչ մի կապ չունի ամենքին ավելի քան հայտնի ընկ. Վառոդյանի հետ: Յեվ այդ հայտարարությունը լույս տեսնելու յերկրորդ օրը,—մի ավելորդ ապացույց ևս, որ իզուր էին պ. Մարութեյի չարամիտ զրպարտությունները ընկ. Վառոդյանի հասցեյին,—ընկ Վառոդյանը նշանակվեց քաղաքի ու շրջանի միլիցիապետ ու առաջին գործը, որով միլիցիայում զբաղվեց ընկ. Վառոդյանը—յերևակայում եք՝ Կարո Դարայանի կորած դիակի որոնումն էր. ասում ենք դիակի, որովհետև ընկ. Վառոդյանի այդ նոր պաշտոնին անցնելուց ընդամենը յերկու օր առաջ հանկարծ լուր տարածվեց քաղաքում, որ Կարո Դարայանը (որ մինչ այդ ընտրրված էր շրջանի գործերի կոմիսար)—անհայտ չա-

րագործների ձեռով սպանված է գիշերվա ժամը 4-ին, իսկ թե ինչու անպայման «4-ին»—անհայտ էր, ոչ-ոք չգիտեր, բայց համառ կերպով ասվում էր, որ դեպքը պատահել է գիշերը՝ ճիշտ այդ ժամին:—Գետափին, սառույցի վրա (գետն այդպես ուշ էր հալչում Նայիրյան այդ քաղաքում) միլիցիան գտել էր արյան կարմիր—կարմիր, քստմնելի հետքեր...: Բայց մենք առաջ անցանք ու չասացինք այն հայտնի, այսինքն գաղտնի ցուցակների մասին այն ամենը, ինչ որ հայտնի յե մեզ: Մութ, մութ, խորհրդավոր պատմություն էր այդ պատմությունն, ընթերցող,—և մենք չենք կարող չհիշատակել այստեղ այդ պատմության առթիվ այն ամենը, ինչ որ լսել ենք ու գիտենք—ինչ որ հայտնի յե մեզ:

Ինչպես ասել ենք վերևում՝ այդ պատմությունը, այսինքն հայտնի (գաղտնի) ցուցակից չորս թերթ կորչելու պատմությունը, մեզ համար միանգամայն անհասկանալի պատճառով մարդիկ կապում էին այն հարցի հետ, թե գավառապետարանից յելնելով՝ ու՞ր էին գնացել Համո Համբարձումովիչը և բըժիշկը մարտի 2-ի գիշերը. ահա հարց, որ մի շաբաթ ամբողջ զանազան փսփսուկների նյութ էր տալիս քաղաքի նիսիա (ինչպես Հաջի Ոննիկ էֆենդին էր ասում) բնակիչներին և, առաջին հերթին—պ. Մարութեյին: Բայց մենք խղճի ամենայն հանդըստությամբ պիտի ասենք, որ մինչև վերջ էլ չենք հավատում պ. Մարութեյի չարամիտ փսփսուկներին և չենք էլ հավատա, և այժմ այս տողերը դու չես կարդա, ընթերցող, յեթե մեր աչքին բավականին ծանրակշիռ մի հանգամանք շուտով չգար խախտելու մեր այդ անհողդողդ հավատքը. բանն այն է, որ Կարո Դարայանը ևս, իր յեղերական վախճանից մի քանի օր առաջ, իմ, հեղինակիս, ներկայությամբ մի անգամ հայտարարեց մի բավականին բազմամարդ ժողովում, որ տեսել է այն յերեկո, ավելի ճիշտ կը լինի ասել՝ մարտի 2-ի գիշերը, ժամը մոտավորապես 2-ին, Համո Համբարձումովիչին և բժշկին՝ «Մութ Տեղի» պաշտոնյայի հետ Հինգհարկանի Շեն-

քից չլինելիս։ Հարց՝ ինչ գործ ունեյին գիշերվա այդ ուշ ժամին այդ ակնածելի վայրում Համո Համբարձումովիչը և Սերգե Կասպարիչը—բժիշկը...։ Հիշում եմ՝ երբ տվեց այս հարցը Կարո Դարայանը Համո Համբարձումովիչին—դահլիճում, ուր տեղի էր ունենում ժողովը, տիրեց ահասարսուռ լռություն, զարհուրելի զարգանդ... բոլորը քար կտրած սպասում էյին Համո Համբարձումովիչի պատասխանին։ Թվում էր, թե յեփրայական Յեհովայի նման, կամ ինչպես Զեվսը—կփրփրի ահա Համո Համբարձումովիչը, այդ, մենք կասեյինք՝ Նայիրյան Արամազդը.—յեփրայական Յեհովայի, կամ հունական Զեվսի նման ցասման կայծակ ու շանթ կըթափե այդ չեղկ մահկանացուի գլխին, այդ վողորմելի մահկանացուի, վոր համարձակվում է կասկածի տակ առնել նրա, Համո Համբարձումովիչ Աստուրովի, Տեղական Կոմիտեյի նախագահի հեղափոխական կուսությունը։— Բայց—յերևակայեցեք—կայծակը չճայթեց, շանթը չշողաց, վոչ էլ ամպրոպը վորոտաց, այլ, պատկերավոր ասած՝ խաղաղարար անձրև, յերկնային զովություն հորդեց Նայիրյան Արամազդի աչքերից, հորդեց — դառնաթախիծ արցունք...։ Ալեհեր գլուխը պրեզիդիումի սեղանին դրած (Համո Համբարձումովիչը պրեզիդիումի անդամ էր այդ ժողովում)—դառնաթախիծ թափեց, դառնացած լաց յեղավ Մազութի Համոն—և ամբողջ դահլիճը, ուր ներկա էյին բավականին թվով սոխ գինվորներ ու մի քանի վակզալի բաշիբոզուկներ, ուր ներկա չէր նաև,—ո, խայտառակություն,—պ. Մարուքեն,—այո, ամբողջ դահլիճը քար կտրած, ահասարսուռ նայում էր Մազութի Համոյի հեկեկանքից ցնցվող, ալեհեր գլխին...«—Փա՛ստ, փա՛ստ» —վեր ցատկելով տեղից՝ դառնաձայն բացագանչեց հեկեկանքի միջից Մազութի Համոն։ Բայց փաստ չկար. կար—մթին կասկածանք. միակ փաստանման բանը—Կարո Դարայանի ձեռքին գտնվող հայտնի, այսինքն գաղտնի ցուցակն էր, վորի չորս թերթերը, ինչպես արդեն գիտենք,—պոկված էյին ինչ վոր անհայտ ձեռքով։—Իսկ կարելի՞ չէ արդյոք՝ այդ չեղյալ թերթերի վրա հիմնվելով խայտառակության սյանը գամել, կասկածի տակ առնել մի պատկառելի Նայիրցու, մի ալեհեր հեղափոխականի հեղափոխական կուսությունը։—«Փա՛ստ»—դառնաթախիծ բացագանչում էր արցունքից խեղդվող ձայնով Համո Համբարձումովիչը, ու պատերի լռությունն էր միայն և դեմքերի զարմանքն ու ակնածանքը դառնորեն արձագանգում Համո Համբարձումովիչի արդարություն հայցող աղեկտուր ձայնին...։ Ահա իրողությունն, ընթերցո՛ղ. փաստ չկար, կար—մթին կասկածանք։ Գրում եմ այնպես, ինչպես տեսել ու լսել եմ յես, առանց յեզրակացություն հանելու. հանիր, ինչ յեզրակացություն վոր կուզես, ընթերցող. —Պիղատոսի նման մենք լվանում ենք մեր ձեռքերն այս մութը, անհասկանալի, անիմանալի գործից։ Ասենք միայն այն, վոր փաստ չլինելու պատճառով Համո Համբարձումովիչն արդարացավ. անգամ, ասում էր հետագայում, վոր, յեթե կենդանի մնար Դարայանը—նրան դատի պիտի կանչեր, հեղափոխական դատարանի առաջ պատիվ պիտի պահանջեր նրանից ինքը, բայց, դժբախտաբար, Կարո Դարայանն այնպես անսպասելի կերպով զոհ գնաց անհայտ չարագործների ձեռքից, և Համո Համբարձումովիչը մնաց չբավարարված։

Այո՛, մութը, կասկածելի, խորհրդավոր դեպքեր էյին, վոր տեղի ունեցան այդ շարաթվա ընթացքում Նայիրյան այդ քաղաքում, և այդ դեպքերից ամենամութն ու ամենակասկածելին Կարո Դարայանի մահն էր, նրա անսպասելի սպանությունն անհայտ չարագործների ձեռքով։ Յեվ ի զուր էր, իր՝ միլիցիապետի բոլոր կարողությունները գործի դնելով, քրտնաթոր վորոնում նրա դիակը և նրան սպանողներին ընկ. Վառոդյանը. —Նրանք չգտնվեցին։ Վոչ միայն չգտնվեցին նրանք (այսինքն Կարո Դարայանի դիակը և Դարայանին սպանողները), այլև շատ շուտով կորցվեց, հայտնի չէ, թե Նայիրյան այդ քաղաքից ո՞ւր հեռացավ... պ. Մարուքեն։ Ընկ. Վառոդյանը կասկած էր հայտնում, վոր, ամենայն հավանականությամբ, Կարո Դարայանի սպանության հետ վորոշ առնչություն պիտի վոր ունենար պ. Մարուքեյի անհետանալը. բայց այդ կասկածը կասկած էլ մը-

նում էր և չէր կարող փարատվել, քանի դեռ գտնված չէր պ. Մարուքեն։ Իսկ թե ուր էր գտնվում պ. Մարուքեն—միայն իրան էր հայտնի և մեկ էլ ծխականի վարժուհի, մեզ վեպիս առաջին մասից արդեն բավականին ծանոթ, օր. Սաթոյին, որ արդեն մի շաբաթից ավելի չէր, ինչ յերեկոյան դասընթացներ էր կազմակերպել կայարանի մոտ գտնվող ինչ որ կասկածելի մի տեղում, ուր նա ինչ-որ բաներ էր պարապում վակզալի բաշիբոզուկների, այսինքն կայարանի բանվորների հետ՝ օրական մի ժամ պարբերաբար, տոն օրերին—յերկու, անգամ յերեք։ Բայց այդ մասին, ինարկե, վոչ վոք չգիտեր, չգիտեր անգամ ինքը՝ ընկ. Վառոդյանը։ Ցեվ այժմ էլ քաղաքում այդ օր. Սաթոն էր ահա, վոր բռնել էր պ. Մարուքեյի տեղը՝ զանազան լուրեր, զրպարտություններ և մութ կասկածանքներ տարածելու գործում։ Բայց օր. Սաթոյի և պ. Մարուքեյի մեջ կար մի խոշոր տարբերություն. նախ՝ օր. Սաթոն կին էր, իսկ պ. Մարուքեն—տղամարդ (ամենաեյական տարբերությունը)—և ապա—վոր ավելի կարևոր է գուցե, քան առաջին հանգամանքը,—այս հարցում մեր կարծիքը տարբերվում է Հաջի Ռոնիկ եֆենդու կարծիքից,—օր. Սաթոն ավելի չէր զգուշ ու խորամանկ, քան պ. Մարուքեն։ Փաստ. Թեկուզ հենց այն, վոր, չնայած օր. Սաթոյի տարածած մի շարք բավականին մութ ու պատասխանատու լուրերին—վոչ վոք չէր իմանում այդ լուրերի իսկական աղբյուրը. օր. Սաթոն այնպես էր տարածում այդ լուրերը, վոր լուրերի սկզբնական աղբյուրը, այսինքն ինքն օր. Սաթոն, մընում էր, ինչպես ասում են, ստվերում. մնում էր—անհայտ։ Ահա այս էր պատճառը, վոր, չնայած ընկ. Վառոդյանի թափած գերմարդկային ջանքերին—նրան, ընկ. Վառոդյանին, այնպես էլ չէր հաջողվում այդ լուրերի առաջն առնել. իսկ այդ բանում ով կարող էր ավելի շահագրգռված լինել, քան ինքը միլիցիապետը, այսինքն նույն ընկ. Վառոդյանը։ Ցեվ իր այս շահագրգռման համար, ասում են, ընկ. Վառոդյանն ուներ ավելի քան ծանրակշիռ պատճառներ։ Օրինակ՝ թեկուզ հենց այն, վոր այդ լուրեր տարածող աղբյուրը քաղաքում բաց էր թողել այնպիսի մի լուր, վորից նույնիսկ ընկ. Վառոդյանի մազերը, ինչպես ասում

են, բիզ-բիզ եյին կանգնում—էլ ուր մնաց ուրիշներինը։ Այդ լուրեր տարածող աղբյուրը Կարո Դարայանի սպանության առթիվ քաղաքում տարածել էր, վոր զուր տեղն է պ. միլիցիապետն այնքան յեռանդուն կերպով վորոնում Դարայանի սպանողներին։ Այդ աղբյուրին նայելով՝ միլիցիապետը Դարայանին սպանողներին կարող էր գտնել... իրենից չափազանց մոտիկ, յեթե վոչ—հենց իր մեջ...։ Այսպիսի ահա անպատկառ լուրեր էր տարածում ստախոսության այդ անպատկառ աղբյուրը, և նրան շատ թանկ կնստեր նման հանցագործությունը, յեթե նա ընկներ հեղափոխական իշխանության, այսինքն ընկ. Վառոդյանի ձեռքը։ Բացի այս՝ ստերի այդ աղբյուրը տարածում էր լուրեր, վոր իբր թե քաղաքում նոր հաստատված հեղափոխական իշխանությունը, այսինքն Տեղական Կոմիտեն հանձինս Համո Համբարձումովիչի, բժշկի, ընկ. Վառոդյանի և այլոց, ազատ է արձակել, յերևակայում եք — գավառապետին, վոստիկանապետին և «Մութ Տեղի» գլխավոր վարիչին — ահա թե ինչ։ Ցեվ միթե այդ միևնույն աղբյուրը չէր, վոր շրջանառության էր հանել մի այլ, վոչ պակաս անպատկառ, զրպարտություն ևս այն մասին, թե քաղաքի պարետը (բարձրահասակ սպան) գաղտնի պահվում է—հենց իրա՝ Համո Համբարձումովիչի բնակարանում։ Այսպիսի լուրեր էր տարածում ահա Կարո Դարայանի սպանությունից և պ. Մարուքեյի անհետանալուց հետո սոսր պրովակացիաների (ինչպես ասում էր ընկ. Վառոդյանը) այդ աղբյուրը, այսինքն օր. Սաթոն, և այս լուրերն այնքան եյին ջղայնացնում ու անհանգստացնում քաղաքի հեղափոխական իշխանությանը (Տեղական Կոմիտեյին), վոր նա, այսինքն քաղաքի իշխանությունը (Տեղական Կոմիտեն) հարկադրված յեղավ ի վերջո մի ընդարձակ հայտարարությունով պաշտոնապես հերքել քաղաքում տարածված այդ պրովակացիաները, վորոնք, ինչպես ասված էր հայտարարության մեջ, նպատակ ունեն փորել ժողովրդական իշխանության դեռ նոր հաստատված հիմերը և վերականգնել ցարական լպիրշ ռեժիմը։ — Այսպես էր ասված այդ հայտարարության մեջ. ավելին՝

ժողովրդի թշնամի և ցարական սոսկ վարձկան էր հայտարարվում այդ հայտարարության մեջ նման պրովոկացիաներ տարածողը, իսկ հայտարարության ամենավերջում ասված էր, վոր, ճիշտ է, հեղափոխության թշնամի մի շարք ցարական վարձկանների ջանքերով բանտից փախած են յեղել գավառապետը, վոստիկանապետը, «Մութ Տեղի» գլխավոր վարիչը և քաղաքի պարետը, բայց հեղափոխական իշխանության (կարգա՝ Տեղական Կոմիտեյի) ջանքերով, նրա ձեռք առած կըտրուկ միջոցներով ժողովրդի թշնամիները գտնված են և վերստին փակված բանտում։ Յեվ ճիշտ վոր, վերոհիշյալ անձնավորությունները վերստին ձերբակալված և փակված եյին, բայց—«—Վո՞ր բանտում»—հարցնում էր որ. Սաթոն խորամանկ։ Ու ինքն էլ պատասխանում էր հարցին՝ «Զինվորական բանտում»։—Լավ, լինի զինվորական, ինչ տարբերություն,—կարող էր ասել միամիտ խոսակիցը, և յեթե այդպես ասեր միամիտ խոսակիցը—որ. Սաթոն բաց կաներ նորից իր սուտերի տոպրակը և արագ-արագ, զանազան «լսել եմ»-ներով ու «ո՞վ գիտե»-ներով քողարկված, մանվածապատ նախադասություններ կթափեր խոսակցի գլխին—կարծիքներ ու կասկածներ։ Զտեսնված լեզու ուներ այդ ծամը կտրած որխորդը, վորի «որխորդությունը» վաղուց արդեն կասկածի չեր յենթարկել ընկ. Վառոդյանը։ Գիտեր՝ ո՞ւմ հետ պետք է խոսել և ո՞ւմ հետ ինչ լեզվով պետք է խոսել։ Ինչպես ասում եյին քաղաքում՝ «դարմանի տակի ջուր»էր իսկ վոր որ. Սաթոն. տեսքից՝ անմեղ, ներսից՝ սատանա։ Յերևակայո՞ւմ եք՝ անգամ վերոհիշյալ «վերստին ձերբակալության» մասին որ. Սաթոն տարածել էր քաղաքում անհավատալի սուտ. տարածել էր, վոր երբ վերոհիշյալ անձնավորություններին «վերստին ձերբակալել» է վոչ թե քաղաքի իշխանությունը (այսինքն Տեղական Կոմիտեն), այլ զինվորականը.—յեկեք ու հավատացեք...։ Մի խոսքով՝ սուտերի կատարյալ տոպրակ էր դարձել Կարո Դարոյանի սպանությունից և պ. Մարութեյի անհետանալուց հետո այդ որ. Սաթոն, և մենք ցավում ենք, վոր նա ժա-

մանակին չընկավ հեղափոխական իշխանության, այսինքն ընկ. Վառոդյանի ձեռքը։

Բայց սուտը սուտ, իսկ ռուսական առածն ասում է—«Չիք ծուխ առանց կրակի»։ Իհարկե, ռուսական այդ առածը ես կարելի չե այնպես շուռ տալ, վոր դուրս գա,—սատանան գիտե, թե ինչ. վոր դուրս գա այն, ինչ ով ուզում է՝ նայած քեֆին ու ճաշակին։ Որինակ՝ այդ առածից յելնելով կարելի յե ասել, վոր ներկա դեպքում «ծուխը» որ. Սաթոյի տարածած սուտերն եյին, իսկ «կրակը»—հենց ինքը՝ որ. Սաթոն...։ Յեվ սա այսպես էլ էր, վորովհետև վերստին ձերբակալությանց որից մի յերկու որ անց այնպիսի մի ծուխ տարածեց այդ կրակը, այսինքն որ. Սաթոն, վոր բոլոր քաղաքացիք, մանավանդ Համո Համբարձումովիչը, բըժիշկը և ընկ. Վառոդյանը ստիպված եյին քթները պահել, վորպեսզի չխեղդվեն այդ ծխից, ավելի լավ է ասել՝ այդ ծխանման զարշահոտությունից, վոր տարածում էր այդ «կրակը»։ Իսկ այդ ծուխը կայանում էր նրանում, վոր որ. Սաթոն, ո՞վ գիտե ինչ անիմանալի միջոցներով ու ճանապարհներով, ձեռք էր բերել ինչ-վոր մի միֆական նամակի պատճեն և կարդում էր սրան նրան, այսինքն նրանց, ում վրա ինքը վստահություն ուներ և դրանք էլ իրենց հերթին տարածում եյին, ում վրա վոր վստահություն ունեյին, վերջ ի վերջո այնպես էր դուրս գալիս, վոր վոչ վոք չգիտեր, թե ո՞վ է այդ լուրերի իսկական ակը, մեկը լսում էր մյուսից և պատմում էր մյուսին—ահա և ամբողջը։—Ինձ էլ է կարդացել այդ միֆական նամակի պատճենն որ. Սաթոն, բայց յես, դժբախտաբար, մոտավորապես միայն հիշում եմ հիմա այդ միֆական նամակի բովանդակությունը։ Հետաքրքիր նամակ էր այդ նամակը, ընթերցո՛ղ, բայց ավելի հետաքրքիր եյին որ. Սաթոյի կոմենտարիաներն այդ նամակին։ Յեվ ավելի քան հետաքրքիր էր այն (և այս հանգամանքը մինչև վերջն էլ ինձ համար մի չլուծված առեղծված մնաց), թե ինչպե՞ս էր այդ նամակը, հասցեագրված լինելով իրեն—Մազութի Համոյին,—ընկել որ. Սաթոյի ձեռքը. նու, յեթե վոչ իսկական նամակը, գոնե պատճենը։ Գուցե որ. Սաթոն հենց ինքն էր հնարել այդ միֆական նամակը իր հնարածից

պատճեն հանել, վորպեսզի յուղ լցնի իր առանց այդ ել բավականին լավ աշխատող անիվին, այսինքն լեզվին...: Ո՞վ իմանա: Մենք պատմում ենք այն, ինչ վոր լսել ենք իրենից—որ. Սաթոյից, և թողնում ենք, վոր ընթերցողն ինքը հավատա կամ չհավատա որ. Սաթոյին:

Այդ միֆական նամակը գրված եր զինվորական բանտից և հասցեագրված Համո Համբարձումովիչ Աստաուրովին: Նամակի հեղինակն եր—(յեթե, իհարկե, ընդունենք, վոր նամակն իսկապես գրված եր մեկի կողմից և վոչ թե հնարված որ. Սաթոյի ուղեղում)—վերստին ձերբակալված գավառապետը: Այստեղ կարելի չե ավելացնել որ. Սաթոյի հետաքրքիր կոմենտարիան: Որ. Սաթոյի ասելով՝ նամակը գրելուն գավառապետին առիթ ե տվել վերստին ձերբակալությունը, վորի մեջ, գավառապետի կարծիքով՝ անշուշտ մաս ունեցել ե Մազութի Համոն: Որ. Սաթոն ել այս հարցում համամիտ եր գավառապետին, իսկ թե ինչո՞ւ չե Մազութի Համոն մաս խառնել գավառապետի վերստին ձերբակալությանը—պարզ ե ինքն ըստ ինքյան, ասում եր որ. Սաթոն, թեկուզ մեզ համար դա այնքան ել «պարզ չե ինքն ըստ ինքյան», ինչպես ասում եր որ. Սաթոն: Բայց անցնենք նամակին: Հիշում եմ՝ նամակն սկսվում եր «—Հարգելի պ. Ամո Ամբարձումովիչ» խոսքերով—և յես այդ խոսքերը կարդալիս, չգիտեմ ինչու, իսկույն պատկերացրի գավառապետի՝ չոր, դեղնած, իսկապես վոր սոխի գլուխը, գայրացկոտ զինվորականի նույնպես չոր, պաշտոնական հայացքը և ցանցառ մորուքը: Զայրույթի ու ցասման ահասարսուռ բոթ փչեց դեմքիս գավառապետի այդ հասարակ, քաղաքավարի խոսքերից և, թերևս, մասամբ ել իմ այս հոգեկան շփոթմունքն եր պատճառը, վոր յես հիմա այնքան ել լավ չեմ հիշում նամակի առաջին նախադասությունները: Հիշում եմ միայն այն, վոր նամակն սկսվում եր հարձակողական նախադասություններով: Նամակի առաջին իսկ խոսքերից յերևում եր, վոր հաստատ կերպով վճռել ե կյանքի ու մահվան գրոհի դիմել այդ կալանված առյուծը, այդ հուժկու զինվորականը, վորի պատահական անկումից ոգտվելով՝ ինչպես ասված եր նամակում,

քացի եյին տալիս նրա աղնվական կողերին անգամ չերկարականջ քեռիները:—Այսպիսի մի այլաբանական նախադասությունով ել, կարծեմ, հենց սկսվում եր գավառապետի նամակը. Նախադասությունը չեմ հիշում, բայց հիշում եմ որ. Սաթոյի կոմենտարիան «չերկարականջ քեռիների» մասին. Նրա կարծիքով այդ այլաբանական խոսքի տակ պետք ե նապաստակներ հասկանալ, այն ինչ իմ կարծիքը բավականին տարբերվում եր որ. Սաթոյի կարծիքից: Այո, ինչո՞ւ նապաստակներ, և վոչ ուրիշ մի բան...: Բայց անցնենք նամակին: Կրկնում ենք՝ մենք բառացի չենք հիշում այդ միֆական նամակի բովանդակությունը, բայց բավականին լրիվ հիշում ենք նամակի ընդհանուր իմաստը, վոր դժբախտաբար պիտի պատմենք մեր տկար լեզվով, տեղ տեղ միայն բառացի մեջ բերելով նամակի այն ցայտուն տողերը, վոր այն ժամանակ մեխվեցին մեր ուղեղում ու մնացին այնտեղ—և, կարծում ենք, վոր այդպես ել մեխված կը մնան այնտեղ—ընդմիշտ ու հավիտյան:

Նամակն, ինչպես ասացինք, սկսվում եր դառնագին հոխորտանքով, բայց գնալով փոխվում եր դառնաթախիծ տրտունջի և նորից ծայր եր առնում հոխորտանքն ու մեղադրանքը և, նորից տրտունջի դառնության փոխվելով՝ վերջանում եր հույսով, վոր ամենակարող տերը կը վերականգնի արդարությունն Ահեղ Դատաստանի որը, վորին նա հավատում եր այնպես, ինչպես հավատում ե Նորին Կայսերական Մեծության մոտալուտ հաղթանակին: Բայց այս չե եյականը և ամենահետաքրքիրն այդ նամակում, այլ այն, թե ի՞նչ լեզվով եր այդ նամակում խոսվում Համո Համբարձումովիչի և մանավանդ բժշկի—Սերգե Կասպարիչի մասին, այստեղ ե ահա նամակի ամենայուղալին ու ամենահյութալին և նամակի այդ տեղերն եյին ահա, վոր հատուկ բավականություն եյին պատճառում որ. Սաթոյին, վառում նրա հայացքը ու թքակալում նրա, ինչպես ասում եյին քաղաքում—շնական շրթունքները:—«Միթե՞ դուք չեյիք, հարգելի Ամո Ամբար-

ձուլմովիչ»—ասվում էր այդ միֆական նամակում—«որ լիզում էյիք իմ պնակները և բռնում իմ շուբան ամեն անգամ յերբ իմ բնակարանն էյիք գալիս—և մի՞թե ձեր անզուգական դուստր Սևաչյա Պրիմադոննան չէ՞ր, որ հանգստացնում էր իմ, ծանր պաշտոնից քայքայված, ծերությունից հյուծված, վաստակած ջղերը...։ Իսկ ո՞վ էր, ո՞վ էր, արդյոք»,—ասվում էր ապա այդ միֆական նամակում,—«որ Նայիրյան գեղեցկուհիներ էր մատակարարում գաղտնի բաժանմունքի վարիչ Անգելևևին, յեթե ոչ այսօրվա «Շրջանային Կոմիսար» Սերգե Կասպարիչը, յերեկվա քաղաքային բժիշկը...։ Իսկ ո՞վ էր,—ասվում էր նամակում,—որ Տեղական Կոմիտեյի կնիքով և «Տեղական Կոմիտե» ստորագրությամբ ահարեկող նամակ ուղարկեց յերկու տարի առաջ մեր քաղաքում հսկայական պրակտիկա ձեռք բերած բժիշկ Կարչևսկուն, վորպեսզի վերջինս իսկույն և յեթ թողնի մեր քաղաքը և հեռանա սատանաների գիրկը—ո՞վ էր այդ անողը, յեթե ոչ նույն ինքը, ձեր (այսինքն Մազութի Համոյի Յե. Զ.) անզուգական բարեկամ, ներկայումս «Շրջանային կոմիսար», Սերգե Կասպարիչը, նախկին քաղաքային բժիշկը...։Յեվ ո՞վ էր, վոր—ասվում էր ապա այդ զարմանալի նամակում,—իր տան արտաքնոցի տախտակները թակարդի նման հարմարեցնելով՝ որը ցերեկով իր տան արտաքնոցում խեղդեց իր հարազատ, խելագարված կնոջը, վորպեսզի ազատվի նրանից, իբր մի ավելորդ բալաստից,—ո՞վ էր, ո՞վ էր այդ ամենի դիվային հեղինակը, յեթե ոչ—էլի ինքը, նույն ինքը, բժիշկ Սերգե Կասպարիչը, Ձեր Տեղական Կմիտեյի անդամը, ներկայումս «շրջանի կոմիսար» բժիշկ Սերգե Կասպարիչը... Իսկ դո՞ւք,—դիմելով իրան՝ Համո Համբարձումովիչին՝ ասում էր ապա զավառապետը, այսինքն միֆական այդ նամակը, դուք չէ՞յիք միթե, հարգելի Ամո Ամբարձումովիչ,

վոր իմ ստորադաս պաշտոնյա, շրջանի նաչալնիկ Շմերլինգի միջոցով ձեր «Լույսի» պահեստներից արողներով նավթ էյիք ուղարկում մեր և ժանավանդ ձեր դարավոր վոսոխին, անորեններին, և վոսկիներ դիզում մեր ու ձեր յեղբայրների թափած ծով արյան գնով... Դո՞ւք էյիք, հարգելի Ամո Ամբարձումովիչ, դո՛ւք,—և իզուր էք դուք այսօր բանտ քշում ինձ, ծերուկիս, մոռանալով այն աղուհացը, վոր տարիներ շարունակ վայելել էք իմ լիառատ սեղանից...»։ Այսպիսի ահա չլսված ամբաստանություններ կային իրա—Համո Համբարձումովիչի և բժիշկ Սերգե Կասպարիչի հասցեյին այդ միֆական նամակում, և մենք չենք կասկածում, վոր այդ միֆական նամակը հետևանք չեր ու. Սաթոյի փչացած ուղեղի։ Այո, յես չեմ էլ կասկածում, վոր այդ միֆական նամակը կարող էր այլ աղբյուր ունենալ, քան ու. Սաթոյի փչացած ուղեղը, վոր ի բնե փչացած լինելուց բացի՝ տարիներ շարունակ կրել էր իր վրա մի ավելի ևս փչացած, ավելի քան շնական ուղեղի - պ. Մարուքեյի ուղեղի—ազդեցությունը։

Ինչևէ, ընթերցո՛ղ. ։ Մութ ու խորհրդավոր պատմություններ էյին դրանք, վոր մինչև վերջ էլ ինձ, հեղինակիս, համար այնպես էլ մութ մնացին ու մնացին խորհրդավոր։ Հիմա յել, յերբ այստեղ նկարագրված դեպքերից անցել են արդեն բավականին տարիներ, յերբ բավականին ջուր է հոսել, ինչպես ասում են, պատմության ջրաղացի անիվին և մեր նկարագրած դեմքերից ու անձնավորություններից շատ շատերն արդեն պատմության, այսինքն անգոյության գիրկն են անցել—հիմա անգամ, ընթերցո՛ղ, յերբ յես մտքով շուռ եմ գալիս, դառնում եմ յետ և աշխատում եմ վերհիշել ու հասկանալ այն ժամանակ կատարված դեպքերն ու պատմությունները—այդ դեպքերն ու պատմություններն ինձ պատկերանում են, ինչպես պղտոր մի հոսանք, մութը մի գետ, վոր անցնում է

հորդած և խեղդում իր դեմն առնել ցանկացող ամեն մի խութն ու արգելք: Հիշում եմ՝ մի անգամ, յերբ յես դեռ յերեխա եյի, հորդել եր մեր այդ նկարագրած քաղաքի գետը. գիշեր եր, յերբ յես ու յեղբայրս, տնից փախչելով, գնացինք հորդած գետին նայելու: Մութն եր. կարծես մազութ եյին քսել յերկնքին, ու հոսել եր մազութը յերկնքից և ծածկել քաղաքը, փողոցները, շենքերն ու մարդկանց: Մենք ապրում եյինք Վարդանի կամուրջի մոտերքը, բերդի տակ, և տնից իջնելիս մենք կարծում եյինք, վոր կը հասնենք գետափնյա փողոցը և այնտեղից կը նայենք հորդած ջրին: Բայց մենք չարաչար սխալվեցինք: Մեր տնից դեպի հիշյալ փողոցն եր իջնում ծուռ ու մութ մի արահետ. դեռ նոր եյինք շուռ յեկել այդ քարքարոտ արահետի վերջին վոլորտը, վորից հետո արահետը ուղիղ դեպի գետափյա փողոցն եր իջնում, յերբ մեր աչքերի առաջ փռված խավարի մազութը բաժանվեց յերկու մասի՝ վերը մուգ, իսկ ներքևը բաց գույնի մազութ եր, վոր հազիվ եր տարբերվում վերի մազութից: Վարի համեմատաբար բաց գույնի մազութը— հորդած գետն եր. ջուրը, վոր լցրել եր գետափնյա փողոցը ու ծանր շնթռկել՝ լայն ու ահավոր, ինչպես մի առասպելական վիշապ: Մի ծանր, ճնշող, դեպի իր վերևը քաշող խոնավություն եր շնչում հորդած գետը, ու յես կպչում եյի յեղբորս, վոր ինձ իր գիրկը չքաշի, չխեղդի, կուլ չտա առասպելական այդ վիշապը: Դեմը, բաց գույնի մազութի խոնավ գրկից յելնելով՝ իր համեմատական մուգությամբ հետզհետե լուծվելով վերի մութ մազութին՝ տեսիլանման յերևում եր ահռելի մի սևություն, հսկա մի քարակույտ. Վարդանի կամուրջն եր այդ, վոր սևին եր տալիս մազութանման մշուշում: Մեր մոտ կանգնած մարդիկ վիճում եյին, թե կդիմանա՞ արդյոք Վարդանի կամուրջը հեղեղած ջրի ահռելի հոսանքին, թե վոչ. կային, վոր կարծում եյին կդիմանա, ու կային, վոր կարծում եյին, թե վոչ: Այդ միջոցին եր ահա, վոր գետի վերի կողմից, ծանր վողողած հեղեղատի միջից, լսվեց զարհուրելի, սիրտ ճեղքող, անպատմելի մի ճիչ, ու ճիշտ նույն վայրկյանին սրընթաց հեղեղատի վրա յերևաց փոքրիկ—փոքրիկ, վախկոտի պուշ աչքի նման ահաբեկված թարթող, սրընթաց մի

կրակ: Յես ավելի պինդ սեղմվեցի յեղբորս, գրկեցի նրա վոտքը. շուրջս հավաքված մարդիկ բարձրացրին մի ահախտան աղմուկ, շարժվեցին տեղերում ու, չգիտեմ ինչու, հայհոյեցին իրար. այդ ժամանակ մի վերջին անգամ ես խոնավ հեղեղատի ծանրանիստ մազութի միջից լսվեց զարհուրելի սրտակեղեք ճիչը. վախկոտի աչքի պես ահաբեկված թարթող պուշ կրակը սրընթաց սուրաց դեպի Վարդանի կամուրջի սևասև ուրվականը—և ամեն ինչ կորավ, լռեց, սուզվեց մազութանման հեղեղատում: Պարզվեց, վոր քաղաքի գետափնյա փողոցներից պոկված մի նավակ եր դա, վոր հոսանքի մեջ ընկնելով՝ քշվել եր դեպի Վարդանի կամուրջը: Յեղբորս կողքին կպած՝ դողալով տուն յեկա յես, պառկեցի մորս կողքին—և ամբողջ գիշերը մինչև լույս իմ մանկական ուղեղի միջից ծանրանիստ ընթանում եր հորդած գետը, ուղեղիս ահաբեկված մազութում կախված՝ որորվում եր Վարդանի կամուրջի սևասև ուրվականը, ու այդ սևասև ուրվականին դիպչելով՝ սրտակեղեք մի ճիչ եր արձակում վախկոտի աչքի պես ահաբեկված թարթող, պուշ կրակը: Առավոտյան արթնանալիս իմ առաջին գործն այն յեղավ, վոր յես շնչակտուր վազեցի դեպի գետը և —ո, զարմանք և ուրախություն,—տեսա, վոր գետափնյա փողոցից արդեն քաշվել եր առասպելական վիշապը. գետն իր ափերն եր մտել և հոսում եր հանդարտ, իսկ Վարդանի կամուրջը գետի մեջտեղը արքայաբար նստած չորացնում եր իր թրջած կողերը յելնող արևի պայծառ ճառագայթների ներքո...: Մանկական միամտությամբ նայեցի Վարդանի կամուրջի կողերին դիպչող մթափրփուր ջրին, կարծելով, վոր այնտեղ կգտնեմ վորևե հետք գիշերվա սրընթաց սահող նավակից և անգամ—ո՛, մանկական անմեղություն, —վախկոտի պուշ աչքի նման ահաբեկված թարթող այն կրակից...: Բայց վոչ մի հետք, իհարկե, չկար, և չեր էլ կարող լինել այդ բոլորից: Վարդանի կամուրջն եր միայն, վոր արքայաբար կուրծքը դեմ եր տվել մթափրփուր ջրերին...: Մանկության օրերին կատարված այս ինքնին աննշան դեպքից անցել են համարյա քըսանից ավելի յերկար ու ձիգ տարիներ, բայց յես հիշեցի հանկարծ ինքնին աննշան այդ դեպքը՝ Նայիրյան մեր նկարագրած

քաղաքի վերոհիշյալ դեպքերն ու պայմանները մտաբերելիս։ Իսկ պատահական բան է արդյոք, յերբ մարդ այս կամ այն դեպքի կամ պատմության առթիվ հիշում է մի ուրիշ, այլ դեպք կամ պատմություն։—Իհարկե պատահական բան չէ, ընթերցող—և խորը, խորը, խորագույն իմաստ կա նման, գիտական տերմինով ասած՝ գաղափարների ասոցիացիայում, և՝ներկա դեպքում այդ խորագույն իմաստն ինձ համար պարզ է ավելի, քան արևի լույսը։ Յեվ իրոք. իր ափերից յելած, հորդած գետ չէ՞ր միթե այն օրերում Նայիրյան այդ քաղաքի կյանքը, մի կյանք, վորի վրա, ինչպես հայտնի յե քեզ, ընթերցո՛ղ, վաղուց հետե կախված եր մաղութանման մշուշը, վորը վաղուց հետե ծածկել եր, ինչպես հայտնի յե քեզ, Նայիրյան այդ քաղաքն ու բնակիչներին, շենքերն ու մարդկանց։ Հեղեղել եր կյանքը, յելել եր այդ օրերին իր սովորական ափերից և, թերևս, իզուր եր Կարո Դարյանը փորձել լույսի նշույլ մացնել, վերոհիշյալ դժբախտ նավաստի նման թարթել իր տարտամ կրակը, մաղութանման մուժում։—Ո, պիտի իմանար, պիտի հասկանար այդ Կարո Դարյանը, վոր զարնվելու յե իր նավակը «Վարդանի կամուրջի» արքայանիստ քարակույտին, վոր վաղուց սովոր եր արդեն իր քարակերտ կուրծքը դեմ անել ամեն հոսանքի ու հեղեղատի։ Յեվ ճիշտ վոր. վերը նկարագրած դեպքից հետո յես հեռացա Նայիրյան այդ քաղաքից և վերադարձա մի տարի անց, ու ինչ. նույնն եր տպավորությունս, ճիշտ նույն տպավորությունը, վոր յես ստացել եյի մանկությանս օրերին՝ հորդած գետը տեսնելու գնալուս հաջորդ առավոտը. ճիշտ այն ժամանակվա նման յես տեսա, վոր համարյա թե իր սովորական ափերն է մտել Նայիրյան այդ քաղաքի առօրյա կյանքի այն ժամանակ այնպես մթափրփուր հորդած, հեղեղած գետը—և նույն ակնածանքով ու ահավոր հիացմունքով յես տեսա մեր ամենահարգելի Մաղութի Համոյին, վոր, ինչպես գետի հորդելուց հետո Վարդանի կամուրջը, արքայակերպ կեցել եր կյանքի արդեն բավականին հանդարտած, համարյա իր ափերը մտած հոսանքի մեջտեղը և այլևս իզուր եյին նրա, այսինքն Մաղութի Համոյի, հասարակական դիրքի քարակերտ պա-

տերին դիպչել փորձում արդեն իջած գետի մի քանի մանրիկ, մթափրփուր ալիքները...։ Բարեբախտաբար այլևս յերեխա չեյի յես այդ ժամանակ, վորպեսզի այդ լղրճուկ (ընկ. Վառոդյանի խոսքով ասած) ալիքների փրփուրում փնտրեյի ինչ-վոր նավաբեկման հետքեր։ Որ. Սաթոն եր միայն, վոր դեռ շարունակում եր տարածել քաղաքում իր անսպառ ստերն ու պրովոկացիաները,—բայց ել ո՞վ եր որ. Սաթոյին, այդ «ծամը կտրած լրբին», կարևորություն տվողը։ Մաղութի Համոն կար ու կանգնած եր ելի, ինչպես Վարդանի կամուրջը, անսասան ու քարակերտ։ Կանգնած եր Նայիրյան այդ քաղաքի ու իսկական, այո, համարյա թե մարմնացած Նայիրիյի, այսպես կոչված «գրավված վայրերի» կենտրոնում, վորպես «Ընկերության» լիազոր ներկայացուցիչ, Տեղական Կոմիտեյի և Քաղաքային Խորհրդի նախագահ, Զինվորական Բարձրագույն Ատյանի անդամ—և այլն, և այլն, և այլն,—և նրա, Մաղութի Համոյի ուղեղում ելի Նայիրյանն եր ու հավիտենականը՝ արդեն մարմնավորվել սկսող յերկիր Նայիրին...։

Շատ ջրեր եյին հոսել Նայիրյան այդ քաղաքի և ընդհանրապես Նայիրիյի ու աշխարհի վրայով այդ մի տարվա ընթացքում, յերբ յես բացակայում եյի քաղաքից ու Նայիրիյից, և ամենանշանավորն ու կարևորն այն եր, վոր այդ ջրերի հետ մեկտեղ հոսել եյին նաև ռուսական բանակները Նայիրիյից ու այդ քաղաքից, և Նայիրին ու քաղաքը մնացել եյին Մաղութի Համոյին ու նայիրցիներին. յերազյալը, կարծես, յերկրային եր դարձել. Մաղութի Համոյի ուղեղից սահելով՝ մարմնավորվել եր կարծես յերկիր Նայիրին։ Հավաքել եր «Ընկերությունը» և գրավված վայրերն եր ուղարկել բազում ու անհամար նայիրյան ռազմիկներ. դարերի մուժից, մրշուշից յելնելով՝ հանել եր, վերջապես, նայիրյան կարծր վոգին, գրավել եր շեներ ու քաղաքներ. բռնել եր բերդը։ Անթիվ տարիներից, դարերից հետո վերստին Նայիրյան դարձած Առաքելոց յեկեղեցում Նայիրյան հնամյա բարբառով աստվածահաճո պատարագ եր անում արդեն տեր-Հուսիկ քահա-

նան—Խաչագողը, ու բերդի ամենաբարձր աշտարակի վրա յեռագույն դրոշ պարզած՝ բերդի հրամանատարն էր արդեն ընկ. Վասոդյանը: Քաղաքի ու շրջանի, արդեն ամբողջովին Նայիրյան դարձած, դպրոցների վարիչ էր Արամ Անտոնիչը: դպրոցի (այսինքն ռեալականի) տեսուչը, իսկ Գեներալ Ալոշը, Հաջի Ոնիկ էֆենդի Մանուկոֆը, կոշկակար Սիմոնը—Կլուբի Միյմունը, մանրավաճառ Կոլոպոտյանը և շատ ու շատ ուրիշ պատկառելի Նայիրցիներ դարձել եյին Քաղաքային Խորհրդի անդամներ: Մենակ Մեռելի Ցենոքն էր իր տեղը մնացել. Քոռ Արութի հետ միկտեղ նա եյի չայ ու կալրաս էր ծախում վակզալի մեյդանում,—և վոչինչ՝ գոհ էր իր վիճակից: Մոռացանք Ոսեփ Նարիմանովին. հաշտ.դատավոր Ոսեփ Նարիմանովը միանգամայն լքել էր իր հաշտարար գործունեյությունը և բժիշկ Սերգե Կասպարիչի հետ միասին դարձել էր Զինվորական Գերագույն Ատյանի անդամ, այսինքն մենակ ինքը, Ոսեփ Նարիմանովն էր՝ անդամ, իսկ բժիշկ Սերգե Կասպարիչը—այդ Գերագույն Ատյանի նախագահն էր, քաղաքի ու շրջանի ամենաազդեցիկ մարդը, այո՝ նույնիսկ ասողներ կային, վոր ավելի ազդեցիկ, քան ինքը՝ Մազութի Համոն:—Բայց մենք, ինարկե, չենք հավատում նման յերեխայամիտ կարծիքներին: Այսպիսով, ինչպես տեսնում եք, ամեն ինչ փոխվել էր և ընդունել միանգամայն նայիրյան կերպարանք: Նայիրին էր, հին, յերազյալ, հավիտենական Նայիրին, վոր տարիների մուժից, մշուշից յելած՝ առել էր իրական կերպարանք: Յեվ ամեն ինչ լավ էր գնում, նույնիսկ կարելի յե ասել, վոր կատարյալ հանգիստ ու խաղաղություն կր տիրեր Նայիրյան այդ քաղաքում և շրջանում, յեթե չլինեյին մի շարք ստոր, անպատկառ, նայիրադավաճան մարդիկ, վորոնք խանգարում եյին նորաստեղծ նայիրապետության հանգիստը: Յեվ ո՞վ գիտե՝ կը կատարվեյի՞ն արդյոք հետագա դժբախտ ու ահավոր դեպքերը, յեթե չլինեյին այդ ստոր, անպատկառ, նայիրադավաճան մարդիկ: Յերևակայում եք՝ դրանք, այդ ստոր, դավաճան, անպատկառ մարդիկ,

դեմ եյին «գրավված վայրերի» պաշտպանության. ինչ-վոր խաղաղություն եյին պահանջում այդ ստոր, դավաճան մարդիկ, յերբ դեռ չէր զետնահարված վոսոխը. ավելին՝ յերբ իր վերջին հորդաները հավաքած՝ Թափթփուկ բանակներով պատրաստվում էր «գրավված վայրերը» խուժել, վերստին հրի ու սրի մատնել այնքան դժվարություններով վերջապես ազատագրված յերկիրը Նայիրի...: Հասկանում եք՝ դուշը, ինչպես ասում էր Հաջի Ոնիկ էֆենդին, յերկնային Թոչունը յեկել, իր վոտքով մեր ձեռն էր ընկել, իսկ այդ ստոր պարոնները պահանջում եյին, վոր մենք մեր ձեռքով վերցնենք ու բաց թողնենք այդ դուշը՝—հանուն ինչի՞, կամ, ինչպես նույն Հաջի Ոնիկ էֆենդի Մանուկոֆն էր ասում—անունըն ինչ դնենք...: Ո, վոչ մի անուն չէր կարելի դնել այդ նայիրուրաց տխմարությանը. քան այն անունը, վոր դրել էր Տեղական Կոմիտեն. վոչ՝ «Ընկերություննը» ինքը. և այդ անունն էր, ինչպես քանիցս կրկնել ենք արդեն ի մեջի այլոց—«Ազգային դավաճանություն»: Յեվ ովքեր եյին դրանք, և ով էր դրանց ղեկավարը.—մի քանի լղրճուկ սինլըքորներ, ինչպես ասում էր Հ.Համբարձումովիչը, կամ հայվորա սանքյուլոտներ, ինչպես կարծում էր անգլիախոս Հաջի Ոնիկ էֆենդին և չհասկացողին թարգմանում ու հասկացնում, վոր սանքյուլոտներ նշանակում է—անվարտիք շներ, կարծես թե վարտիքավոր շներ էլ են լինում...: Յեվ ով էր, ով էր, ինչպես ասացինք, դրանց ղեկավարը, կամ, ինչպես էլի նույն Հաջին էր ասում «վերի գլուխը».—արյունարբու մի սկյութ, ռուսացած մի մոնղոլ, մի գերմանական ագենտ, վոր պլոմբրած վագոնով հայրենիք վերադարձած՝ չին զորքերու և անվարտիք ավարաներու օգնությամբ ներսերում խլել էր արդեն իշխանությունն ու հանձնել այն գերմանացիներին՝ այդպիսով գլուխ բերելով իր խոստումը, վոր տվել էր արյունարբու Վիլհելմ կայսեր... Ահա թե ովքեր եյին դրանք և ահա թե ով էր դրանց «ամենավերի գլուխը», այսինքն ամենամեծ ղեկավարը: Յեվ, յերևակայում եք, ընթեր-

ցո՛ղ—այդ ժամանակ արդեն պարզվել էր (գոնե այդպես էր ինձ հավատացնում պ. Արոմարշը), որ Նաիրյան այդ քաղաքում այդ սանքյուլոտների, այսինքն անվարտիք չների ղեկավարն է յեղել,—հավատո՞ւմ եք՝ նույն Հաջու խոսքերով ասած՝ այն «շանսատակ յեղած» Կարո Դարայանը, որի սպանողներին զուր տեղն էր իր թանկագին ու անսպառ յեռանդն անձնվիրաբար մսխելով՝ այնքան տենդագին փորոնում ընկ. Վառոդյանը: «—Շունը շան մահով կըսատկի»—ասում էր այդ առթիվ Հաջի Ոնիկ Եֆենդի Մանուկոֆը, և նա, թերևս, իրավունք ուներ, որովհետև պե՞տք է վերջապես մի կերպ արտահայտություն գտներ այդ պատկառելի Նաիրցու անձնուրաց Նաիրասիրությունը: Ահա թե ով է յեղել Կարո Դարայանը, ընթերցո՛ղ, իսկ մենք դեռ ցավում եյինք նրա յեղերական մահվան համար և անվերապահ հավատ եյինք ընծայում նրա ամեն մի խոսքին: Իսկ նրա ընկերները. ո՞վքեր եյին նրանք Նաիրյան այդ քաղաքում.—առաջինը՝ Կարո Դարայանի խորհըրդավոր սպանությունից հետո քաղաքից անհայտ անհայտացած պ. Մարուքեն էր, ընկ. Վառոդյանի հորջորջած այդ պ. Դրաստամատյանը, և ապա—մեզ քաջ ծանոթ «ծամը կտրած» չակերտավոր «որխորդ» օր. Սաթոն և ելի մի քանի նման արարածներ, մի յերկու հոգի, որ վակզալի մոտերքը հավաքված՝ գլխահան եյին անում վակզալի բաշիբոզուկներին, այսինքն յերկաթուղային բանվորներին ու ծառայողներին և ֆրոնտից փախած դեզերտիրներին:—Ահա՛, ահա՛, ընթերցո՛ղ, թե ո՞վքեր եյին Նաիրյան այդ քաղաքի և նորարողորջ Նաիրապետության հանգիստը խանգարողները. դրանք եյին, այդ ստոր, Նաիրուրաց, Նաիրադավաճան մարդիկ, որ մրոտ, կամ, Տեր-Հուսիկ քահանա—Խաչագողի խոսքով ասած՝ «խլնքոտ» քթներն ամեն տեղ խոթելով՝ ջուր եյին պղտորում, որ ձուկ որսան: Յեվ դա, հասկանո՞ւմ եք (կրկնում ենք, ընթերցող, որ լավ գլխի ընկնես և հարկ յեղածի չափ լավ պատկերացնես դրության ամբողջ խայտառակությունը)—յեվ այդ ամենն այն ժամանակ, յերբ գրավված վայրերը, այսինքն արդեն իրողություն դարձած Նաիրյան

յերկիրն անցնելով՝ արդեն անկախ Նաիրի յեր հայտարարել Նաիրյան հայտնի հերոս, այժմ հայտնի զորավարը,—այն ժամանակ, յերբ, ինչպես ասում են՝ քաջ ու քրտինք կորած՝ Նաիրյան ռազմիկներ էր ուղարկում գրավված վայրերը, այսինքն յերկիր Նաիրին պաշտպանելու համար, Տեղական կոմիտեն, ո՛չ՝ տեղական, այսինքն Նաիրյան իշխանությունը,—յերբ, մյուս կողմից, արդեն ստույգ լուրեր ուներ ստացած Նաիրյան իշխանությունը, որ, վերջին հորդաները հավաքած, թափթփուկ բանակներով մտադրություն ունի գրավված վայրերը խուժելու Հավիտենական Հիվանդը,—այդ ժամանակ ահա այդ ստոր, դավաճան, Նաիրուրաց մարդիկ դեզերտիրություն եյին քարոզում Նաիրյան բանակում և խոսում եյին հաշտության մասին—ո՞ւմ հետ.—Հավիտենական վոսոխի ու Հավիտենական Հիվանդի, որին Նաիրցի մի ռազմիկի քացին անգամ բավական էր, ինչպես ասում էր Մազութի Համոն,—որպեսզի նա հավիտենապես փչեր իր շունչը, և նա, իհարկե, կըփչեր իր շունչը, յեթե չլինեյին այդ Նաիրուրաց, ստոր, Նաիրադավաճան մարդիկ...:—Ո՛ւշ, շատ ուշ գլխի ընկան (և դեռ հարց է՝ գլխի կընկնեյին արդյոք մյուսները, յեթե չլիներ ելի նույն Մազութի Համոն)—և ուշ, շա՜տ ուշ հարկ յեղած խստագույն միջոցներին դիմեցին հիշյալ լրբերի վերաբերմամբ Նաիրյան իշխանավորները,—բայց թե ինչ կարող եյին անել այլևս նրանք, յերբ արդեն մեր նկարագրած քաղաքի համարյա պարիսպների տակ էր վոսոխը, յերբ, յերկու օր անց, ինչպես հետագայում մանրամասն կիմանանք, դեպքերի թավալգլոր արագությամբ ընկավ Նաիրյան այդ քաղաքը, և Հավիտենական վոսոխը վոտք դրեց վառվող քաղաքի մոխիրների վրա...:

Մենք արդեն անցնում ենք Նաիրյան այդ քաղաքի և սույն

այս պոեմանման վեպի վերջին դեպքերի նկարագրությանը—և մի սուր, անողոք, դառնաթախիծ կսկիծ սկսում է ուտել մեր սիրտը. ձեռքս կրկին սկսում է դողալ, և գրությանս տառերը գրվում են ծուռ ու գոգդոջ, կարծես որորում է տողերս աներևույթ մի հողմ...: Սև, մրուրոտ, արյունալի չեն այդ դեպքերը, վորոնց նկարագրությանն անցնելու չենք հիմա, ընթերցո՛ղ, և չգիտենք՝ կարողանալո՞ւ չե արդյոք մեր ակար գրիչը պատկերել այդ դեպքերն այնքան սրտակեղեք ու ահավոր, վորքան սրտակեղեք ու ահավոր եյին նրանք իրականում: Մենք ավելի քան կասկածում ենք դրան, ընթերցո՛ղ, վորովհետև դժվար թե մեր հնամյա արևի ներքո գտնվի մի գրիչ, վոր պատկերել կարողանա այդ վերջին դեպքերը, պատկերել այնպես, վոր բիզ-բիզ կանգնեն ընթերցողի մազերը, կասկածից ու ցավից խորովվի ընթերցողի սիրտը, և այրող, այրող, այրող արցունքներ թափվեն ընթերցողի աչքերից: Մենք չենք հավատում, վոր դա կը հաջողի մեզ, ընթերցո՛ղ, և բարկությունից ու ցավից ուզում ենք դեն նետել մեր գրիչը, չգրել, չվերջացնել պոեմանման այս վեպը, վոր առանց այդ էլ բավականին յերկարեց,—բայց ահա իմ, հեղինակիս, ուղեղի խորհրդավոր գաղտնարանից ելնելով՝ խուժում են հոգևոր հայացքիս առջևը սև, մրուրե, արյունալի դեպքեր ու դեմքեր, և յես կրկին վերցնում եմ գրիչս՝ ընդհատված պատմությունս շարունակելու:

Այս անգամ ևս պատմությունը սկսվեց նրանից—այսինքն էլի իրանից՝ Համո Համբարձումովիչից—Մազութի Համոյից...: Յեվ ինչպես կարող եր նրանից, այսինքն Համո Համբարձումովիչից—Մազութի Համոյից չսկսվել, յերբ, ինչպես հայտնի յե արդեն, վոչ միայն Նայիրյան այդ քաղաքը, այլ և ամբողջ Նայիրին նրա շուրջն եր դառնում, և վոչ միայն շուրջը դառնում, այլև, ինչպես գիտենք, հառնել եր նրա ուղեղից՝ նրա, Մազութի Համոյի ուղեղից սահելով՝ ուղեղայինը դարձել եր, կամ համարյա թե դարձել եր յերկրային. դարձել եր—համարյա փաստ...: Այո՛, այս անգամ ևս սկսվեց նրանից, վոր քաղաքում հանկարծ

լուրեր տարածվեցին, թե Համո Համբարձումովիչ Ասատուրովը—Մազութի Համոն գրավված վայրերն է մեկնում, իբր արտակարգ լիազոր՝ տեղում դիմադրություն կազմակերպելու համար: Դրա հետ զուգընթացաբար քաղաքում պտտվել սկսեցին լուրեր, թե շարժվել է արդեն վոսոխը և գալիս է Նայիրյան այդ քաղաքի վրա. գալիս է սելավանման, քար ու քանդ անելով այն ամենը, ինչ վոր գտնվում է ճանապարհին: Այսպիսի ահա լուրեր պտտվել սկսեցին այդ առավոտ քաղաքում, և այս լուրերի հետ մեկտեղ, սրանց զուգընթաց՝ պտտվել սկսեցին քաղաքում—վոչ թե ուրիշ լուրեր, այլ կենդանի մարդիկ. քաղաքում պտտվող այդ վոչ թե լուրերը, այլ կենդանի մարդիկ մտնում եյին տները և տներից դուրս եյին բերում—վոչ թե իրեր, այլ զենքի ընդունակներին ու քշում կայարան, քշում ֆրոնտ: Յեվ այս ամենը կատարվում եր վոչ թե այնպես, քամու բերածով, այլ այն պատերին փակցրած սպիտակ, բայց այս անգամ նայիրատառ, և վոչ թե հայտարարությունների, այլ հրամանների հիման վրա, հրամաններ, վորոնց ներքևը—ո՛, զարմանալի զարմանք.—գրված եր վոչ թե ընկ. Վառոդյանի, կամ Տեղարան Կոմիտեյի, կամ զինվորական իշխանության, և կամ, վերջապես, իրա՝ Համո Համբարձումովիչի անունը, այլ—այդ նայիրատառ հրամանների ներքևը գրված եր—յերևակայում եք—վոչ թե անուն, ազգանուն, կամ հիմնարկության անուն ասենք, այլ—յերեք տառ միայն, յերկու Հ. և մի Դ. (Հ. Հ. Դ.)...—Յեվ այդ յերեք տառերի ազդեցությունն ավելի յեր ուժեղ ու զարհուրելի, քան հազար-հազար թեկուզ և Մազութի Համոների, կամ զանազան իշխանությանց անուններ...: Մահվան սարսուռ եր փչում այդ յերեք տառերից—ահա թե ինչ: Յերեք այդ զարհուրելի տառերով ստորագրված հայտարարությունը, ներողություն՝ հրամանը սկսվում եր «—Նայիրցիներ»—դիմումով. կարճ ու ազդու: Այո՛, կարճ ու ազդու յեր այդ դիմումը, ինչպես կարճ ու ազդու յեր այդ դիմումի, այսինքն հրամանի, ներքևի ստորագրությունը,—բայց հասկացողի համար մի ամբողջ, այո՛, մի ամբողջ տիեզերք կար այդ մի հատիկ բա-

ում, և այս բանը հասկանում եյին վոչ թե ընտրյալները միայն, վոչ թե բացառությունները, այլև ամենքը, բառացի ամենքը,—առանց բացառության։ Ավելին՝ վոչ միայն հասկանում եյին, այլև մտնում եյին մեջը, այդ մի հատիկ բառի մեջ—ամենքը. սա չեր ահա զարմանալին։ Այո, այդ մի հատիկ բառի մեջ եյին մտնում թե Համո Համբարձումովիչը—Մազութի Համոն ինքը, թե ընկ. Վառոդյանը, թե Սերգեյ Կասպարիչը—բժիշկը, թե Ոսեփ Նարիմանովը, թե Հաջի Մանուկոֆ եֆենդին, թե մանրավաճառ Կոլոպոտյանը, թե Մեռելի Յենոքը ու Քոռ Արութը և անգամ վակզալի բաշիբոզուկներն ու դեզերտիրները. այսպիսի ահա տիեզերական տարողություն ուներ այդ դիմումը, այդ մի հատիկ բառը, վորով սկսվում եր հրամանը։—«Նայիրցինե՛ր»—ասված եր այդ հրամանում,—«Hannibal ad portas»!...։—Հենց այսպես էլ տպված եր՝ ինգլիզի լեզվով, ինչպես կարծում եյին սարսափած քաղաքացիները, և թերևս սա չեր պատճառներից մեկը, բայց վերոհիշյալ դիմում—մի հատիկ բառից, վոր այդ հրամանը բոլոր Նայիրցիների վրա թողեց մի զարհուրելի, համարյա միսթիքական տպավորություն։«—Թշնամին մոտենում ե մեր դարպասներին»—ասվում եր ապա այդ հրամանում,—«յեվ ամեն մի Նայիրցի պետք ե պարզ հաշիվ տա իրեն, թե ինչ ե նշանակում այդ...»։—«Նայիրցինե՛ր»—կրկնված եր ապա տիեզերապարփակ դիմումն այդ հրամանում «—Մեր չքնաղ յերկիրը, դարեր շարունակ յերազված յեվ այժմ մեր զավակների հավելյալ արյունով վերջապես ձեռք բերված մեր հայրենիքը, մեր դրախտավայր Նայիրին, կանգնած ե անասելի վտանգի առաջ. մոտեցել ե վոսոխը և կրկին, կրկին սրի ու հրի կոխան ե կամենում դարձնել մեր յերկիր Նայիրին»...։—«—Նայիրցինե՛ր»—յերրորդ անգամ դիմում եր հրամանը տիեզերքին ու ամենքին,—«—Մի բան ե մնում անել այսօր ամեն մի իսկական Նայիրցու՝ վերցնել զենք և ճակատ գնալ իր սեփական արյունով պաշտպանելու մեր աննման յերկիրը,—ծծկեր

յերեխայից մինչև իննսուն տարեկան ծերունին պետք ե այսօր ռազմաճակատ գնա և իր կուրծքը դեմ անի վոսոխի սվիններին և իր սրբազան արյունով փրկի անկումից ու ավերումից նվիրական հայրենիքը—մեր դրախտանման Նայիրին»—Յեվ—«Նայիրցինե՛ր»—չորրորդ ու վերջին անգամ դիմում եր հրամանը տիեզերքին ու ամենքին—«—Հասել ե վճռական րոպեն և Հ. Հ. Դ. մի կոչ ունի միայն անելու իր սիրեցյալ Նայիրյան ժողովրդին.—Դեպի կռի՜վ...։ Ի զեն, վերջի՜ն անգամ ի զեն, տառապյալ Նայիրյան ժողովուրդ. Նայիրին վերջին անգամ կանչում ե քեզ։ Յեվ թող հեռանան մեր ճանապարհի վրայից վախկոտներն ու թուլամորթները, թող վտարվեն, անարգանքի սյանը գամվեն բոլոր նրանք, ովքեր այս ճակատագրական վայրկյանին իրենց անձնական կաշին ավելի բարձր կը դասեն, քան նայիրասիրական վեհ գաղափարը։ Հ. Հ. Դ. հայտնում ե սրանով, վոր տեղնուտեղը հրացանազարկ են արվելու բոլոր նրանք, ովքեր փորձ կանեն իրենց վողորմելի կաշին փրկելու համար ռազմաճակատ չգնալ, կամ փախչել ռազմաճակատից։ Այդ ե պահանջում մեզանից այսօր հայրենիքը, այդ ե պահանջում այսօր մեր նվիրական Նայիրին։ Ուն, ուրեմն՝ ի զե՛ն, Նայիրցինե՛ր,—դեպի ռազմաճակա՜տ...»։ Այսպես եր վերջանում հրամանը, և ապա գալիս եյին վերոհիշյալ յերեք տառերը—Հ. Հ. Դ.։—Եվ կարո՞ղ ե արդյոք զարմանալի թվալ, վոր այդ հայտարարությունը, ներողություն, հրամանը բոլոր քաղաքացիների վրա թողեց մի անասելի, շշմեցնող, զարհուրելի տպավորություն։ Այնպիսի մի անասելի իրարանցում ընկավ քաղաքում, վոր, ինչպես կասեր Մեռելի Յենոքը՝ «մերը մանուկը մոռացավ». ժամըք չեղավ կարծես, կարծես չեկավ ահեղ դատաստանի օրը։ Յեվ, յեթե ճիշտը կուզեք, հենց այդ օրվանից էլ պետք ե հաշվել յերկիր Նայիրիի և այդ քաղաքի վախճանի ըսկիզբը. և դա վոչ թե վերոհիշյալ հրամանի պատճառով, այլ այն,

մեզ համար միանգամայն հասկանալի, իսկ այլ քաղաքացիների
համար այնպես էլ անհասկանալի մնացած, պատճառով, որ Մա-
զութի Համոն, թեկուզ և ժամանակավորապես, թո-
ղեց իր հայրենի քաղաքը. իսկ ի՞նչ կարող էր անել այդ
քաղաքն առանց Մազութի Համոյի, այսինքն՝ առանց այն ա-
ռանցքի, որի շուրջը դառնում էր քաղաքը: Պարզաբանենք մեր
միտքն օրինակով: Օրինակ՝ «—Վո՞րն է ֆայտոնի նպա-
տակը»—հարցնում է մի անգամ Քոռ Արութին Մեռելի Ենոքը.
բայց Քոռ Արութը չի իմանում, և քանի որ Քոռ Արութը չի
իմանում՝ իր տված հարցին պատասխանում է ինքը, Մեռելի Ե-
նոքը. «—Ֆայտոնի նպատակը ոսն է»—պատասխանում է
իր դրած հարցին Մեռելի Ենոքը ու պարզաբանում է հետո.—
«էն որ չեղնի—ֆայտոնը չի երթա»: Եվ մենք միանգա-
մայն համամիտ ենք Մեռելի Ենոքին.—այդպես էլ տվյալ դեպ-
քում: Երևակայեցեք, ընթերցո՛ղ, որ, ինչպես Նայիրյան այդ
քաղաքը, այնպես էլ ամբողջ Նայիրին, Մեռելի Ենոքի տերմի-
նոլոգիայով ասած՝ մի հսկա «ֆայտոն» է, իսկ Համո Համբար-
ձումովիչը—Մազութի Համոն՝ նրա «ոսը». է, ի՞նչ կարող է անել
«ֆայտոնը» այսինքն Նայիրյան այդ քաղաքը, կամ ամբողջ
Նայիրին, առանց «ոսի»—այսինքն Համո Համբարձումովիչի—
Մազութի Համոյի: Հարցնում ենք՝ ի՞նչ կարող է անել: Պատաս-
խանը մեկն է.—ոչինչ ու ոչինչ:—Կը քանդվի, տեղում կը մնա՝
կը փտի ու կը թափվեն մասերը, ինչպես քայքայվող դիակի մա-
սեր: Եվ այս հանգամանքն ավելի պարզ ու հասկանալի կը լի-
նի, եթե հիշենք, որ Մազութի Համոն ոչ միայն «ոսն» էր
Նայիրյան այդ քաղաքի, այլև հոգին: Դե երևակայեցեք հիմա
մարմնի գոյությունը՝ առանց հոգու. ի՞նչ կը լինի մարմինը, եթե
հեռանա հոգին:—Սրա էլ պատասխանը մեկն է.—կը քայքայվի,
կը տարրալուծվի, մարմին կազմող քիմիական տարրերն
ամենքը մի կողմ կը փախչեն ու կը մնա ի՞նչ. ոչինչ. կը մնա—
մահ, մոռացության մշուշ—բաց տարածություն: Եվ նույ-
նը, ճիշտ նույնը կատարվեց Նայիրյան այդ քաղաքի, ապա և
ամբողջ Նայիրիի հետ, հենց որ Մազութի Համոն թողեց այդ

քաղաքը և գրավված վայրերը գնաց՝ տեղում դիմադրու-
թյուն կազմակերպելու...:

Մե՛ծ, մե՛ծ, աններելի սխալ էր Մազութի Համոյի բացակա-
յելը քաղաքից. հետո, երբ նա վերադարձավ գրավված վայ-
րերից—արդեն ուշ էր, քայքայվել էր արդեն քաղաքի մարմի-
նը և ոչ մի հոգի չէր կարող այլևս կենարար շունչ փչել ու
վերստին գոյություն պարգևել այդ քայքայված մարմնին: Ավելին՝
հետո, երբ Մազութի Համոն վերադարձավ արդեն գրավված
վայրերից - ոչ միայն ի վիճակի չեղավ կենարար շունչ փչել քայ-
քայվող քաղաքի ուռած երակները, այլև շուտով ստիպված եղավ
փչել իր սեփական շունչը, փչել—հավիտյան ու անդարձ.
փչել—ընդմիշտ...: Եվ նրա հետ միասին իրա շունչը փչեց
երազային ու հավիտենականը՝ երազյալ ու հավիտենական, իրա,
Մազութի Համոյի հանճարեղագույն ուղեղից դեպի երկրայինն ու
գոյացյալը ձգտող, համարյա գոյացած Նայիրին...: Համոզ-
ված, այո՛ խորին համոզմունքով մենք կարող ենք ասել, որ
գուցե իսկի էլ տեղի չունենային թավալգլոր արագությամբ Մա-
զութի Համոյի գնալուց հետո Նայիրյան այդ քաղաքում կատար-
ված դեպքերն ու իրողությունները, եթե Մազութի Համոն չըհե-
ռանար քաղաքից.—երկրորդ, բայց առաջինից ավելի կարևորա-
գույն սխալն էր այս, որ Մազութի Համոն ինքը, մասամբ և
ամբողջ «Ընկերությունը» կատարեցին այդ ժամանակ.—
առաջին սխալը, ինչպես մասամբ արդեն գիտենք, այն էր,
նայիրուրաց, նայիրադավաճան մարդկանց հանդեպ խըս-
տագույն միջոցների չդիմելն էր ժամանակին, իսկ երկրորդ, և
ինչպես ասացինք, ամենակարևորագույն սխալը—Մազութի Հա-
մոյի քաղաքից հեռանալը: Այո, Մազութի Համոն չպետք է հե-
ռանար քաղաքից, բայց նա, ինչպես տեսնում եք, հեռացավ, և
անսպասելի, եղերական ահասարսուռ դեպքերն ու իրողություն-
ները, Նայիրյան այդ քաղաքի վերջին դեպքերն ու իրողություն-
ները, իրար հաջորդեցին, ինչպես ասացինք՝ թավալգլոր արա-
գությամբ...:

Մազութի Համոյի քաղաքից հեռանալու օրը, ինչպես արդեն

գիտենք, քաղաքում լույս տեսավ վերոհիշյալ զարհուրելի, համարյա միստիքական տպավորություն թողնող, հայտարարությունը, այսինքն հրամանը։ Յեվ դրա հետ մեկտեղ, ինչպես գիտենք, քաղաքում պտտվել սկսեցին—վոչ թե լուրեր, այլ կենդանի մարդիկ, վորոնք մտնում եյին տները և հանում տներից—վոչ թե իրեր, այլ զենքի ընդունակներին։ Բացի այս՝ ընկեր Վառոդյանը կայարանում կանգնցրել եր մարդիկ, արտակարգ փափախավորներ, վորոնք խստիվ արգելում եյին հեռանալ քաղաքից։ Սխալվեցինք. սկզբներում դեռևս թույլատրվում եր քաղաքից հեռանալ, բայց—միմիայն կանանց ու յերեխաներին. և ահա սկսվեց նրանից, վոր քաղաքից հեռանալ սկսեցին կանայք ու յերեխաները։ Յեվ զարմանալին այն է, վոր մի շարք այլափոխություններ տեղի ունեցան Նայիրյան այդ քաղաքում այդ որերին. քաղաքում խոսում եյին, վոր, վերին հրաշքով, կնոջ կերպարանք են ստացել մի շարք պատկառելի նայիրցիներ, ինչպես, որինակ՝ պ. Արոմարշը. կոշկակար Սիմոնը—Կլուբի Մեյմունը, մանրավաճառ Կոլոպոտյանի յերիտասարդ տղան և ուրիշ շատ-շատերը.—բայց, հավատացնում եմ, ընթերցող, վոր այստեղ վոչ մի հրաշք չկար. պարզապես բռնել եյին դրանց կայարանում կանգնած արտակարգ փափախավորները—կանացի շորերով. ահա և ամբողջը։ Ինչ հրաշքով, չգիտենք, բայց այդ պատկառելի նայիրցիներն ազատվեցին գնդակահարությունից. ավելին՝ շուտով իմացվեց, վոր նրանք բոլորն ել անհոգ թռչունների նման թափառում են, թեպետ և Նայիրիից դուրս գտնվող, բայց համարյա Նայիրյան, չքնաղագույն մի քաղաքի լազուր յերկնքի ներքո և նույնիսկ զարմանում են, վոր մնացած նայիրցիները չեն հետևում իրենց գեղեցիկ որինակին...։ «Չեն հետևում...»—Բայց վոնց հետևեյին, յերբ քաղաքի պատերից, որ որի յետևից, շշմած քաղաքացիների գլխներին եյին թափվում մեկը մեկից զարհուրելի, մեկը մեկից անողոք ու սարսափ տարածող հրամաններ, այնպես վոր ի վերջո քաղաքի խեղճ բնակիչները զարհուրում եյին քըթները բարձրացնել և չեյին ել բարձրացնում, վորպեսզի իրենց այդ պատկառելի, Նայիրյան քթներով չդիպչեն վորևե զարհու-

րելագույն հրամանի։ Ինչպե՞ս, ինչպե՞ս կարող եյին հետևել պ. Արոմարշի և ընկերների որինակին սարսափած նայիրցիները, յերբ շուտով, ընկ. Վառոդյանի մի նոր խստագույն հրամանով, արգելվեց քաղաքից հեռանալ անգամ կանանց ու յերեխաներին, վորպեսզի, ինչպես ասված եր ընկ. Վառոդյանի հրամանում, —«խուճապ չառաջանա»։ «Թշնամին պարտված ե»—ասվում եր ապա այդ հրամանում,—«և բոլորը կարող են հանգիստ տեղները նստեն։»—Դե յեկեք ու ընկ. Վառոդյանի այսպիսի հրամաններից հետո հետևեք պ. Արոմարշի և ընկերների գեղեցիկ որինակին...։ Բայց բանն այն է, վոր, չնայած ընկ. Վառոդյանի ու մյուսների խստագույն հրամաններին, չնայած կայարանում կանգնած արտակարգ փափախավորներին, վորոնց ձեռքին եր իրապես գտնվում այդ ճակատագրական որերին քաղաքի բանալին,—չնայած այդ ամենին՝ քաղաքի բնակչությունն որ որի յետևից նոսրանում եր ու նոսրանում, և նոսրանում եյին, ամենից առաջ, քաղաքի վարի, այսինքն կենտրոնական թաղերը։ Վոնց, ինչպես, ինչ հրաշքով, չգիտենք, բայց վաղուց արդեն առանց Նունուֆար Հանըմի ու իր, արդեն 18-ը տարեկան դարձած, «պպաիկի» յեր իր ամենորյա չորբան խմում Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆը, և վաղուց արդեն նույն այդ դառը մենակությանն եր յենթարկված Արամ Անտոնիչը, դպրոցի տեսուչը (այժմ քաղաքի ու շրջանի բոլոր նայիրյան դպրոցների վարիչը)։ Յեվ նույն այդ դառնադառը մենակության վիճակին եյին վաղուց արդեն յենթակա թե Ոսեփ Նարիմանովը, թե գեներալ Ալոշը, թե Տեր-Հուսիկ քահանան—Թաչագողը,—բոլորը, բոլորը, բոլոր պատկառելի նայիրցիները՝ Ալեքսանդրյանի ու Լորիս Մելիքովի բնակիչները։ Ասենք բացառություններ ել, իհարկե, կային, ու այդ տխուր բացառությունների մեջ եյին Ծելեֆոն Սեթոն, Մեռելի Յենոքը, Քոռ Արութը, հայտնի ճաշարանատեր Բոչկա Նիկալայը և շատ ու շատ նման, թեկուզ և Ալեքսանդրյանի ու Լորիս Մելիքովի վրա խանութ ունեցողները, բայց եյապես հասարակ, մանր-մունր մարդիկ։ Սրանք բոլորն ել իրենց ընտանեկան հարկի ներքո

դեռևս վայելում էին ընտանեկան կյանքի բոլոր քաղցրությունները։ Իսկ ինչ վերաբերում է վերի թաղերի, այսինքն բերդի և Առաքելոց յեկեղեցու թաղերի բնակիչներին՝ դրանք բոլորն էլ տները նստած էին մնացել, և, ընկ. Վառոդյանի հրամաններին հետևելով՝ նստած էլ մնում էին, վորպեսզի խուճապ չառաջացնեն։ Բայց շատ բան եր կախված այդ վերի թաղերի բնակիչներից, այդ «բուն անասուններից», ինչպես անվանում եր նրանց վարսավիր Վասիլը, վորը, ի դեպ, վաղուց արդեն փակել եր իր հռչակավոր վարսավիրանոցը և ռազմաճակատ եր գնացել, ուր, ընկ. Վառոդյանի կողմից նշանակված լինելով՝ մթերքներ եր հայթայթում Նայիրյան բանակին։ Թե ինչով բացատրել վարսավիր Վասիլի այս տարորինակ քայլը—չգիտենք, սակայն այդ բանն ավելի քան լավ գիտեր Հաջի Մանուկոֆ եֆենդին, վոր նույնպես «հայթայթող» եր, բայց վոչ թե «փինթի», ինչպես վարսավիր Վասիլը, այլ—խոշոր, անգամ ամենախոշոր, խոշորագույն։ Այո, նոսրացել եր քաղաքի բնակչությունը, սակայն այս նոսրացումն հարկավոր է հասկանալ վոչ թե քանակի, այլ վորակի իմաստով. քաղաքից հեռացել էին արդեն ամենապատկառելի քաղաքացիների ընտանիքները, բայց դրանց տեղը շրջանի գյուղերից քաղաք էին թափվել հազարավոր նոր ընտանիքներ, վորոնք լցրել էին փողոցները սայլերով, յեզներով, կովերով, յերեխաներով և տնային այլ անասուններով, բացի տղամարդկանցից, վորոնց վաղուց արդեն ռազմաճակատ էին ուղարկել ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները։ Քաղաքի վորակն եր փոխվել ամբողջովին—ահա թե ինչ. ու փոխվել եր քաղաքի տեսքը։ Յեվ այս հանգամանքը մեծ մտահոգություն եր պատճառում ընկ. Վառոդյանին, բայց, չնայած նրա մի շարք ավելի քան խստագույն հրամաններին—այնպես էլ չհաջողվեց շրջանից փախած այդ «վախկոտ վոչխարներին» իրենց տեղերն ուղարկել. նրանք չգնացին, չնայած անգամ նրան, վոր ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները քանիցս փորձեցին մտրակային լեզվի փոխել ընկ. Վառոդյանի հրամանների նայիրյան քաղցըր լեզուն։ Զոգնեց, վոչինչ չոգնեց, դրանք մնացին քաղաքում,

անբան անասունների նման թափված մնացին նայիրյան չքնաղ այդ քաղաքի վոչ այնքան էլ չքնաղ փողոցներում ու լցրին այդ վոչ այնքան էլ չքնաղ փողոցներն իրենց անհուլի գարշահոտությամբ. յերևակայում եք՝ հենց այդտեղ, նայիրյան չքնաղ այդ քաղաքի վոչ այնքան էլ չքնաղ փողոցներում էլ նրանք ուտում էին ու քնում և կատարում իրենց բոլոր բնական առաքումները։ Բայց ընկ. Վառոդյանին ջղայնացնողը գերազանցապես այն եր, վոր դեզերտերները կատարյալ բույներ էին դարձել փողոցներում, բակերում ու այգիներում թափված մարդկային այդ գարշահոտ կույտերը. ռազմաճակատից փախչում էին ռազմիկները և պահվում դրանց մեջ, դրանց սայլերի արանքում, վերմակների տակերին և նույնիսկ իրենց կանանց ու մայրերի փեշերում։ Յեվ ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները, իրենց ամոթխածությունը մի կերպ զսպելով՝ շատ անգամ ստիպված էին լինում դեզերտիրներ վորոնել... շրջանից փախած այդ կանանց փեշերում։ Բայց այս բոլորը դեռ ելի վոչինչ, մի կերպ կարող եր հարթվել, սակայն քաղաքի մեծագույն դժբախտությունն այն յեղավ, վոր մի գեղեցիկ օր էլ ընկ. Վառոդյանը և Սերգե Կասպարիչը նկատեցին, վոր քաղաքում փակվել են համարյա բոլոր խանութները։ Ընկ. Վառոդյանը և Սերգե Կասպարիչը, վոր Մազութի Համոյի գնալուց հետո նրա տեղակալն եր Տեղական Կոմիտեյում և Քաղաքային Խորհրդում, շուտափույթ կերպով մի հրաման արձակեցին, վոր խանութները բացվեն. բայց, ավաղ, խանութները չբացվեցին, իսկ ժողովուրդը մթերք եր ուզում—չայ, սապոն, նավթ, լուցկի և ելի հազար ու մի նման զահրումար։ Տեսնելով, վոր անելանելի յե դրությունը, Քաղաքային Խորհրդում մի ինչ-վոր վերի թաղեցի հարց բարձրացրեց, վորպեսզի խանութներից մի քանիսը ջարդեն և Քաղաքային Խորհուրդն ինքը վաճառել սկսի այդ խանութների ապրանքները։ Ինչպես և կարելի յեր սպասել, առաջարկն ընդունվեց միաձայն։ Բայց ցավալին այն է, վոր յերբ ջարդեցին խանութները—դուրս յեկավ, այսինքն վոչինչ էլ դուրս չեկավ խանութներից. խանութները դատարկ էին, ինչպես Քոռ

Արութի ձախ աչքը...: Հարց՝ ուր էին այդ խանութների ապրանքները: Պատասխան՝ չկային—և ուրիշ վոչինչ: Յեվ այն էլ վոչ միայն ապրանքները չկային, այլ և իրենք—ապրանքների տերերը. զարմանալի հրաշքով վերացել էին նրանք Նայիրյան այդ քաղաքից, չնայած կայարանում կանգնած արտակարգ փափախավորներին: Գուցե ռազմաճակատ էին գնացել նրանք, կարող է հարցնել ընթերցողը. բայց մենք ստույգ տեղեկություններ ունենք, վոր նրանք այնտեղ չեյին: Յեվ սա չէ, այս ամենն էլ դեռ հեչ, յեթե չլիներ քաղաքը և ռազմաճակատը բաժանող ամենամեծ չարիքը, վորի մասին քանիցս թեթևակի հիշատակեցինք,—դեզերտիրությունը: Ամեն առավոտ անկյուններից ու փողոցներում թափված մարդակույտերից, սայլերի արանքից և նույնիսկ կանանց փեշերի տակից հազարներով հանում էին ու ռազմաճակատ ուղարկում դեզերտիրների հարյուրավոր խմբեր,—բայց գիշերը, մութն ընկնելուն պես, նրանք կրկին փախչում ու քաղաք էին վերադառնում բազմաթիվ խմբերով, և հաջորդ առավոտ ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորների կողմից էլի ճակատ քշվում, վոր մութն ընկնելուն պես նորից վերադառնան քաղաք: Չարիք էր, անասելի չարիք, նայիրյան խայտառակություն: Ի՞նչ միջոցներ ասես, վոր ձեռք չեյին առնում անասելի այդ չարիքի առաջն առնելու համար Զինվորական Գերագույն Ատյանի նախագահ բժիշկ Սերգե Կապարիչը և Բերդի հրամանատար ընկ. Վառոդյանը. սրանց հրամանով՝ ծեծի, հրապարակային ամբաստանության, թքի ու մուրի էին յենթարկվում այդ Նայիրադավաճան լրբերը, բայց չէր օգնում վոչինչ, դրությունը նույնն էր մնում, նորից փախչում էին ռազմաճակատից, ինչպես սարսափած վոչխարներ և ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորների կողմից նորից ճակատ էին քշվում թքելով ու մրելով: Պարզ է, վոր այսպես չէր կարող շարունակվել. հարկավոր էր գերագույն միջոցի դիմել, բայց այդ գերագույն միջոցին դիմելուց առաջ հարկավոր էր գտնել չարիքի արմատը: Յեվ չարիքի արմատը գտնվեց. և այդ չարիքի արմատը գտնողը, այսինքն վոչ թե գտնողը, այլ այդ արմատի վրա առաջին անգամ մատնողը

էլի ինքն էր, նույն ինքը՝ հանճարեղագույն Մազութի Համոն, վոր համապատասխան բովանդակությամբ գրություն էր ուղարկել ռազմաճակատից: Այո, նա չէր էլի, էլի նույն հանճարեղագույն Մազութի Համոն, վոր իր վճռական մատը վերջապես կարողացավ դնել չարիքի իսկական արմատի վրա. ասում ենք կարողացավ «մատը դնել», վորովհետև այնքան էլ, վերջիվերջո, դժվար բան չէր այդ արմատի գտնելը, վորովհետև նա, այդ արմատը, վոչ թե թաղված էր գետնում, ինչպես ամեն մի արմատ, այլ ցցված էր դուրս, ինչպես Նայիրյան մի քիթ, և վաղուց արդեն բոլորն էլ տեսնում էին այդ չարաբաստիկ քիթը, այսինքն արմատը: Բայց—մի բան տեսնելը, տարբեր բան՝ տեսածի վրա վճռական կերպով մատ դնելը: Տեսնում էին, այդ չարաբաստիկ արմատը բոլորն էին տեսնում, բայց, կրկնում ենք, Մազութի Համոն էր միայն, վոր ժամանակին մատնանիշ արավ այդ արմատը և առաջարկեց այն հիմքից պոկել և դեն շպրտել, ինչպես վարակող մի սպի: «—Դեզերտիրության արմատը հարկավոր է տեսնել այն Նայիրադավաճան սրիկաների մեջ, վորոնց առաջնորդն էր մեր քաղաքում անհայտ չարագործների (հարկավոր է ասել բարեգործների, փակագծում ավելացրել էր Մազութի Համոն) ձեռով շանսատակ յեղած Կարո Դարայանը»—այսպես էր գրել ռազմաճակատից ուղարկած իր նամակ-հրահանգում Մազութի Համոն.—«—Դրանք լցրել են հիմա ռազմաճակատը և դեզերտիրություն են քարոզում մեր արի զինվորներին, դրանք խոստանում են զինվորներին հող, խաղաղություն ու հանգստություն և նման լկտի միջոցներով քայքայում են մեր բանակը»—գրել էր Մազութի Համոն իր այդ հրահանգ-նամակում:—«Դրանց վերաբերմամբ հարկավոր է ամենախիստ միջոցների դիմել, չքաշվել անգամ գնդակահարությունից»—հրահանգել էր վերջում Մազութի Համոն և հրահանգի վերջին տողերը յերեք անգամ ընդգծել. Մազութի Համոյի այդ ընդգծումներն են ահա, վոր մենք անվանում ենք «մատ դնել»:—Յեվ իրոք վոր Մա-

գութի Համոյի այդ հրահանգ-նամակն ստացվելուց հետո բոլորը բաց արին աչքերը ու մնացին, ինչպես վարսավիր Վասիլը կասեր — «էշ կտրած».— այդ վոնց եր, վոր իրենք չեյին հասկանում այդպիսի հասարակ մի բան, հասարակ, նու, ինչպես որվա լույսը։ Այսպես թե այնպես՝ չարիքի արմատը գտնված եր արդեն և ահա ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները սկսեցին այդ արմատը պոկելու համար արտակարգ պատրաստություններ տեսնել։ Հիշում եմ՝ քաղաքի մեյդանում ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները գեղեցիկ մի որ իրարից մի հեռագրասյան հեռավորությամբ կանգնեցրին յերկու հեռագրասյուն և դրանց վրա խփեցին յերրորդը։ — «Եդ ինչ կը շինեք, յեղբայր» — հարցրեց փափախավորներից մեկին այդտեղ կանգնած յերեխաներից մեկը, վոր խորին հետաքրքրությամբ ու ակնածանքով հետևում եր յերրորդ հեռագրասյան վրա նստած արտակարգ փափախավորի արտակարգ շարժումներին։ — «Քյանդրբազի չվան կըշինենք, որ դեզերտիրները վրեն քյանդրբազ խաղան», պատասխանեց փափախավորը և յերեխաներն ուրախ հրճացին, պատկերացնելով յերևի, վոր բավականին զվարճալի մի բան պետք է լինի այդ զվարճալի դեզերտիրների քյանդրբազությունը։ «Քյանդրբազի չվանը», ճիշտ է, շինեցին, բայց, ցավոք սրտի հարկավոր է ասել, վոր վոչ արտակարգ փափախավորները և վոչ ել հիշյալ յերեխաներն առիթ ունեցան այդ զվարճալի դեզերտիրների «քյանդրբազությունը» տեսնելու. հեռագրասյուները կանգնեցնելուց յերկու որ հետո, դեպքերի գլխիվայր արագությամբ, Նաիրյան այդ քաղաքն ընկավ և արտակարգ փափախավորների շինած այդ «քյանդրբազի չվանի» վրա — ո, ճակատագրի յեղերական հեգնանք,— հարկադրված յեղան քյանդրբազություն անել — յերևակայում եք — ինքն ընկ. Վառոդյանը, Սերգե Կասպարիչը — բժիշկը, և Համո Համբարձումովիչ Աստատուրովը — Մազութի Համոն...։ Ճակատագրի տարօրինակ մի խաղ, բախտի յեղերական մի հեգնանք եր դա, ընթերցող, վոր դեպքերի այնքան վողբերգական

ու սխրալի բերումով յեզրափակելու յեկավ Նաիրյան այդ քաղաքի աղետալի պատմությունը...։

«Հեռագրասյուները» կանգնեցնելու որն եր հենց, վոր Մազութի Համոն անսպասելի կերպով վերադարձավ քաղաք. բանն այն է, վոր արդեն գրավված եյին գրավված վայրերը. ավելին՝ վոսոխը, Հավիտենական Հիվանդը, անսպասելի մի հրաշքով արդեն անցել եր սահմանի այս կողմը և յեկել; իր թափթփուկ բանակներն եր դրել քաղաքից 30 վերստ հեռավորության վրա։ Սարսափ առած նախիրների նման՝ Նաիրցի ռազմիկները փախել եյին վոսոխից ու լցրել քաղաքը. ել վոչ «դեզերտիր» եր մնացել, վոր քյանդրբազ խաղացնեյին, վոչ բան. հո չեր կարելի մի ամբողջ բանակ յերեք հեռագրասյան վրա քյանդրբազ խաղացնել։ Թե ինչ եր ներկայացնում քաղաքն արդեն — դժվար է նկարագրել։ Յերևակայեցեք, ընթերցող, վոր մի առավոտ վեր եք կենում ձեր տեղից և ուզում եք շորներդ հագնել, բայց տեսնում եք, վոր, անհասկանալի մի հրաշքով քանդվել են ձեր շորերի բոլոր կարերը. վերցնում եք ձեր շապիկը — թափվում են շապկի մասերն առանձին-առանձին՝ թևը մի կողմ է գնում, օձիքը մի կողմ, մնացածը — ուրիշ մի կողմ. վերցնում եք ձեր վարտիքը — նույնը. դե հիմա սրան ավելացրեք և այն, վոր հանկարծ հրդեհ է ընկնում ձեր բնակարանը.— ինչ պիտի անեք, դուրս վազեք, բայց դուրսը կանգնած են կանայք ու յերեխաներ, ախր հո չե՞ք յերևա կանանց ու յերեխաների աչքին.— ներսը մնաք.— բայց ներսում ել ձեզ խեղդում է ծուխը, և մի վայրկյան չանցած՝ հրդեհի ալ-կարմիր բոցերն արդեն լիզել կսկսեն ձեր մարմինը...։ Այսպիսի ահա անելանելի մի դրության մեջ ընկավ Մազութի Համոն գրավված վայրերից վերադառնալիս. քաղաքի, պատկերավոր ասած՝ բոլոր կարերն արդեն քանդվել եյին, մասերից ամեն մեկը մի կողմ եր փախել, իսկ քաղաքի շուրջը — հրդեհ եր. ծուխը լցվել եր արդեն քաղաքը և մոտենում եյին արդեն քաղաքի ծխախեղդ մարմին ահավոր հրդեհի ալ-կարմիր բոցերը։

Ի՞նչ էր մնում անելու Մազութի Համոյին. փախչե՞լ. հա՛յ.— բայց ինչպե՞ս կարող էր, ասացեք խնդրեմ, փախչել Մազութի Համոն. կարո՞ղ էր արդյոք փախչել մարդու հոգին և իր սեփական, հարազատ մարմինը թողնել հրի բերան…։ Յեվ Մազութի Համոն մնաց. վոչ միայն մնաց, այլ և իր վրա վերցրեց բովանդակ իշխանությունը. մի վերջին ճիգ ևս, գերմարդկային մի ճիգ գործադրել կամեցավ Մազութի Համոն, վոր փրկի դրությունը. բայց դրությունը չփրկվեց.—ուշ էր բավականին ուշ էր արդեն՝ և դրությունը չէր կարող փրկել այլևս վոչ մի, թեկուզ և գերմարդկային, ճիգ…։

Վո՞նց, վո՞նց փրկեր դրությունը Մազութի Համոն, յերբ, ինչպես ասացինք, քանդվել էին արդեն քաղաքի բոլոր կարերը և վոչ մի, թեկուզ և հանճարեղագույն, դերձակ չէր կարող այլևս իրար միացնել այդ վոչ միայն իրարից բաժանված, այլ և զարմանալի թափով իրարից խույս տալ սկսող, մասերը. Համո Համբարձումովիչի բացակայության ընթացքում այնպիսի մի չտեսնված զարգացման էին հասել քաղաքի, ինչպես ասում են՝ կենտրոնախույս ուժերը, վոր այլևս անհնարին էր դրանք վոչ միայն վոչնչացնել, այլև չեզոքացնել։ Յերևակայեցեք՝ ընդամենը մի ամիս բացակայությունից հետո քաղաք վերադարձավ Մազութի Համոն,—և ի՞նչ. առաջին հերթին դեպի բերդը վազեց Մազութի Համոն և նրա աչքերի առաջ պատկերացավ… Ո, այն, ինչ վոր պատկերացավ Մազութի Համոյի աչքին բերդում—թող վոչ մի գերագույն հրամանատարի չպատկերանա…։ Բերդը, նայիրյան արքաների շինած և դարեր շարունակ հազար չարի ու վոսոխի իր քարակերտ կուրծքը դեմ դրած այդ բերդը, Մազութի Համոն գտավ վողբալի վիճակում…։—Զարթնեցին՝ տարիների մուժից, մշուշից յելնելով՝ թունդ առան Մազութի Համոյի սրտում… յերազները. յելան, Մազութի Համոյի դառնաթախիծ սրտից յելնելով՝ Մազութի Համոյի վշտից ու դառնությունից բորբոքված հանճարեղագույն ուղեղը խուժեցին… դարավոր սպասումները…։ Մի՞թե այսպես

էր յերազել Մազութի Համոն այս որը. մի՞թե այսպես էր նկարվել Մազութի Համոյի հանճարեղագույն ուղեղում—բերդը, նայիրյան այս բերդը՝ հույսով ու սպասումով հարուստ այն հեռու որերին, յերբ «Լույսի» գրասենյակում նստած այս որերն էր յերազում ինքը, այն ժամանակ դեռ միմիայն «Լույսի» կառավարիչ Մազութի Համոն…։ Այստեղից, այո, բերդի այս ժայռակերտ պատնեշների վրայից պիտի ռումբեր տեղային մի որ, յեթե այդ որը գար…։ Այստեղից, այո, բերդի այս ժայռակերտ պարիսպների վրայից իջներ պիտի մի որ—պերճ, անպարտ կորովը նայիրյան ցեղի…։ Վորպես յերկաթե մի բռունցք՝ իջներ պիտի մի որ թշնամու գլխին։—Այստեղից, բերդի այս անառիկ բարձրություններից հառնելով՝ պիտի յելներ ահասաստ, պիտի հառներ հաստատ նայիրյան վոգին. կորովը, ուժը հազարամյա—նայիրյան աշխարհի…։ Ու պիտի վառվեր նորից, պիտի ժպտար խնդագին յերկիրը հազարամյա—հընամյա Նայիրին…։ Ահա թե ի՞նչ էր յերազել Մազութի Համոն «Լույսի» գրասենյակում անցկացրած իր անքուն գիշերներին՝ այս որվան սպասելիս…։ Որը յեկավ։ Դեպքերի անսպասելի, հեքյաթային բերումով՝ քաշվեցին ռուսական բանակները նայիրյան աշխարհից. դեպքերի անսպասելի, հեքյաթային բերումով՝ հանկարծ մարմնավորվեց, իրողություն դարձավ յերկիրը Նայիրի…։ Յեվ ի՞նչ՝ Հավիտենական Հիվանդի հորդաներից սարսափած, Մահամերձի Թափթփուկ բանակներից սարսափահար՝ նախիրների նման պուկ տվին նայիրյան բանակները. մնացել է բերդը միայն, նայիրյան այս բերդը, վոր վաղը վոտնակոխ պիտի արվի Հավիտենական Հիվանդի հորդաների կողմից, պիտի լիզե նորից Հավիտենական Հիվանդի հորդաների վոտները, Հավիտենական Հիվանդի թափթփուկ բանակների չաքմաների փոշին…։ Ո՞ւր է, ո՞ւր է ուժը, ո՞ւր է կորովը հնամյա նայիրյան ցեղի. ո՞ւր է յերկաթե բռունցքը…։ Ո՞ւր է—հարցնում էր, դառնացած Յեհովայի նման մազերը պոկելով, Մազութի Համոն.—«Ո՞ւր է»։ Դառնացած Յեհովայի նման պոկոտում էր մազերը ու նայիրյան արքաների կորովը էր վողբկոչում բերդի ամենաբարձր աշտարակի վրա կանգնած, նա-

յիրյան յեռագույնի դողդոջ փայտին կռթնած, Մազութի Համոն.—«Ո՞ւր է»—հարցնում էր Մազութի Համոն, բայց պատասխան չկար. բերդի հազարամյա, մռայլ պարիսպներն եյին միայն լուռ նայում Մազութի Համոյին, վերջին այդ արքայակերպ նայիրցուն, վոր պոկոտում էր մազերը և նայիրյան կորովը վոգեկոչում։ Ու չկար կորովը. ու լուռ էր բերդը։ Ու բերդի ամենաբարձր աշտարակի վրա կանգնած, նայիրյան յեռագույնի դողդոջ փայտին կռթնած՝ դառնաթախիծ թախծեց, լաց յեղավ, ինչպես այն ժողովում, Մազութի Համոն, և Մազութի Համոյի, վերջին այդ արքայակերպ նայիրցու բոցե արցունքներն այրեցին նայիրյան հնամյա այդ բերդի հազարամյա պատերը...: «Վա՜յ»—ձեռքը նայիրյան յեռագույնի դողդոջ փայտին խփելով, դառնաթախիծ լացի, հրե արցունքների միջից բացագանչեց հանկարծ Մազութի Համոն. «Չի՜ լինի»։—Ցնցվեց. վայրկենական քնից, կամ կաթվածից արթնացածի նման՝ ցնցեց իր գլուխը Մազութի Համոն. հանեց թաշկինակը և սրբեց աչքերը։ Յեվ նոր կարծես տեսավ, վոր կանգնած են շուրջն ընկ. Վառոդյանը, բժիշկը, մի յերկու նայիրյան գեներալ և մի քանի նայիրցի սպաներ. անհուն պատկառանքով նայում եյին նրանք Մազութի Համոյին ու լուռ, լուռ, լուռ եյին, ինչպես բերդի պատերը։ «Ո՞ւր են»—ցասման շանթեր տեղալով աչքերից՝ հարցրեց վորոտաձայն Մազութի Համոն.—«Ո՞ւր են մյուսները»։ Բայց «մյուսները», վորոնց մասին հարցնում էր Մազութի Համոն, իր քիչ առաջ վոգեկոչած նայիրյան կորովի և ուժի նման, չկային. պարզվեց, վոր բերդի սպայության բավականին նկատելի մասը գիշերը հեռացել է բերդից և չի վերադարձել։—«Իսկ ո՞ւր է բերդի գարնիզոնը»—ավելի մեղմ, կարծես կոտրած ձայնով, շարունակեց իր ռեվիզիան Մազութի Համոն. ընկ. Վառոդյանը ցույց տվեց մատով. Մազութի Համոն նայեց ընկ. Վառոդյանի մատի ուղղությամբ. և Մազութի Համոն տեսավ.—այնտեղ, բերդի յերկրորդ աշտարակի վրա Մազութի Համոն տեսավ ի մի խռնված նայիրյան տրեխավոր ռազմիկների բավականին բազմամարդ մի խումբ, վոր զբաղված էր իրեն, Մազութի Համոյին նայելով։«—Ներողու-

թյուն...»—ասաց Մազութի Համոն—«դրանք... թոփ քցել... գիտե՛ն...»—«Այո՛, ճիշտ այդպես է»—զինվորական պատիվ բռնելով՝ պատասխանեց գեներալներից մեկը և Մազութի Համոյի արքայակերպ դեմքը մեղմիվ լուսավորվեց մի մանկական, համարյա իդիոտային, ժպիտով։ Հասկացավ Մազութի Համոն՝ վերջացած էր. ուղեղում, հանգող մոմի վերջին բոցերի նման, հրասխառն յերերաց, կողքե-կողք ընկավ.... յերկիր Նայիրին։ Բայց—«Վա՜յ»—բացագանչեց մտքում, վերջին ուժերը հավաքելով, Մազութի Համոն.—«Չի՜ լինի»։ Ու հրամայեց նոր ռազմիկներ բերել բերդ, թնդանոթներ դնել, անգամ ցույց տվեց, թե ինչ ուղղությամբ է հարկավոր դնել այդ թնդանոթները. հետո կառք նստեց և վերադարձավ քաղաք։

Քաղաքում սպասում էր նրան անսպասելի մի ուրախություն. ռազմաճակատից հաղորդագրություն կար ստացված, վոր հերոսական մի գրոհով նայիրյան ռազմիկները տասը վերստ յետ են քշել թշնամուն և գրավել միանգամայն կայուն դիրքեր։ Ավելին՝ տեղեկության մեջ ասված էր, վոր շուտով հավանական է առաջխաղացում սկսեն և քշեն թշնամուն—մինչև Հայտնի Քաղաքը։ Կարդաց Մազութի Համոն այդ հաղորդագրությունը և նրա սրտից կապարե մի ծանրություն ընկավ գետին. կասկածն ու քիչ առաջ նրան պատող հուսահատությունը նրա սրտից, ինչպես ասում են, վոնց վոր ջնջոցով սրբեցին. շտկեց իր, քիչ առաջ բերդում կորված մեջքը Մազութի Համոն. աչքերը լցվեցին աշխուժությամբ ու կայտառությամբ։ Մինչ այդ քաղաքում սկսվել էր անօրինակ մի խուճապ. շրջաններից փախածներն ու վերի թաղեցիք ամեն ինչ հավաքել՝ պատրաստվում եյին գաղթի. հազարավոր խմբերով դրանք բռնել եյին փողոցները ու դեպի կայարանը տանող խճուղին. քաղաքի քիչ թե շատ պատկառելի բնակիչներն արդեն գտնվում եյին կայարանում, և մի յերկու գնացք արդեն հեռացել էր՝ քաղաքի պատկառելի բնակիչներով բեռնված։ Թե ինչ էր կատարվում այդ ժամանակ կայարանում՝ անհնարին է նկարագրել։

Թուձապի չընթարկված բազմահազար ամբոխը լցրել եր պլատֆորմը. տեղի չեր ունենում այնպիսի մի իրարանցում, վորի հանդեպ մանկական մի խաղ եր Բաբելոնի աշտարակաշինությունը, յեթե միայն դա իրոք տեղի չի ունեցել: Մարդիկ կոխոտում եյին իրար ու իրարու վրայով սողալով առաջ անցնում, վորպեսզի մոտ լինեն յեկող գնացքին. մայրերն ամբոխի գլուխների վրայով առաջ եյին նետում իրենց յերեխաներին, վորպես զի իրենք ել առաջ սողան, բայց յերեխաները խեղդվում եյին ընդհանուր հրհրոցում, իսկ մայրերը, առանց յերեխաներին հասնելու, փչում եյին իրենց շունչը՝ չորս կողմից սեղմված: Տղոցկան կանայք ծնում եյին կանգնած տեղերում, և նրանց ճիչը լսելի չեր լինում անգամ այն ահռելի աղմուկում, վոր բարձրացնում եր բազմահազար, սարսափից խելագարված, ամբոխը: Տղամարդիկ ծեծում եյին իրար, կանայք ճանկռոտում եյին տղամարդկանց դեմքերը, և այս ամենի վրա շաչում եր արտակարգ փափախավորների մտրակը: Մտրակով ճանապարհ եյին բաց անում նրանք և առաջ անցնում, հետներն առաջ տանելով զանազան պատկառելի նայիրցիների ընտանիքներին, վորոնք ընկեր Վառոդյանից կամ Մազութի Համոյից ունեյին պատկառելի թղթեր: Բայց, չնայած արտակարգ փափախավորներին, չնայած անգամ «պատկառելի թղթերին», հաճախ չեր հաջողվում նրանց իրենց նպատակին հասնել. ամբոխը, կատաղած թշնամու նման, գրոհի չեր դիմում ու ընդհանուր հորձանքում խեղդում թե արտակարգ փափախավորներին և թե նրանց հովանավորած պատկառելիներին: Անասելի, այո, աներևակայելի բաներ եյին կատարվում այդ ժամանակ կայարանում, բայց ավելի անասելին ու անյերևակայելին այն եր, ինչ վոր տեղի չեր ունենում քաղաքում: Քաղաքում ծայր եյին առել հրդեհները: Քաղաքից հեռացող նայիրցիները, նայիրական անասելի, չտեսնված մի յեռանդով, այրում եյին իրենց տներն ու խանութները, վոր վոսոխին չմնան: Տեղական իշխանությունը գուցե և դեմ լիներ նայիրասիրության նման թեժ արտահայտություններին, յեթե միայն, ինչպես ասում են՝ խելքը գլխին լիներ: Բայց նրա խելքը գլխին չեր և ժողովուրդ

անում եր այն ամենը, ինչ վոր թելադրում եր նրան նայիրասիրական բարձր զգացմունքը: Բայց այդ չե զարմանալին. տներն ու խանութներն այրում եյին, ասենք, դրանց տերերը, այրում եր ժողովուրդը. բայց ո՞վ եր այրում հիմնարկությունները: Քաղաքում ասողներ կային, վոր հրդեհներն սկսվել են հիմնարկություններից. ամենից առաջ այրվել եր «Լույսի» գրասենյակը, յերևակայում եք՝ իրա, Մազութի Համոյի գրասենյակը, վոր ժամանակավորապես փակված եր՝ պահեստներում նավթ և Համո Համբարձումովիչի տրամադրության ներքո ազատ ժամանակ չլինելու պատճառով: «Լույսի» գրասենյակն այրվել եր Մազութի Համոյի քաղաք վերադառնալուց մի օր առաջ, գիշերը (առավոտյան արդեն նա քաղաքում եր գտնվում) — և Մազութի Համոն, արտակարգ մի պատվասիրությամբ՝ քաղաք վերադառնալուն և հրդեհի լուրն ստանալուն պես՝ հրամայել եր ինչ գնով ել լինի հրդեհի լափող ճիրաններից, վոր արդեն մխացող մոխիրների եյին փոխվել, ազատել «Լույսի» մատյաններն ու հաշիվները, բայց այդ կարելի՞ չեր արդյոք, ընթերցող, հնարավո՞ր եր արդյոք…: Ապա այրվել եր «Մանր Վարկի Ընկերությունը», այսինքն ընկերության շենքը, հետո—միլիցիատունը: Յեվ, ասում են, դրանցից հետո չեր ահա, վոր քաղաքից հեռացող նայիրցիները ցուցադրել սկսեցին իրենց թեժ նայիրասիրությունը, վոր ահռելի արագությամբ ծավալվում եր քաղաքում և լցնում քաղաքի փողոցները նայիրասիրական յուրօրինակ մի արտահայտությամբ, այսինքն հրով ու ծխով: Այսպիսի ահա դրության մեջ եր քաղաքը, յերբ Մազութի Համոն ստացավ ռազմաճակատից վերոհիշյալ ուրախալի հաղորդագրությունը: Ռազմական արտակարգ նիստ գումարեց իսկույն Մազութի Համոն, վորը վորոշում կայացրեց՝ 1) Գերագույն միջոցներ ձեռք առնել խուճապը կանգնեցնելու համար, 2) վերջ տալ հրդեհներին, 3) հրամայել ժողովրդին հանգիստ իր տեղը մնալ, վորի համար արտակարգ միջոցներով արգելել քաղաքից հեռանալը, 4) արգելել գնացքների յերթևեկությունը: Վորոշումը հանելով՝ Մազութի Համոն անձամբ հրա-

մայեց կայարանին գնացքներ բաց չթողնել և ընկ. Վառոդյանի միջոցով արտակարգ փափախավորներ ուղարկեց՝ խճուղիով փախչող ժողովրդին վերադարձնելու, կամ, ծայրահեղ դեպքում, մնացածների առաջն առնելու։ Այդ կարգադրություններին զուգընթաց՝ Քաղաքային Խորհուրդը վազեց Մազութի Համոն, վոր նրա միջոցով ևս ազդի ժողովրդի տրամադրության վրա. արտակարգ նիստ նշանակեց, բայց, ցավոք սրտի, դուրս յեկավ վոր քաղաքից բացակայում եյին քաղաքային խորհրդի համարյա բոլոր անդամները. վոչ Գեներալ Ալոշը կար, վոչ մանրավաճառ Կոլոպոտյանը, վոչ Հաջի Ոննիկ եֆենդին և վոչ էլ մյուսները. Վերի թաղեցի անդամն եր միայն, վորը մի անգամ արդեն ցույց եր տվել իր ամբողջ քաղաքական հմտությունը՝ փակ խանութները ջարդելու իր այն հիշատակելի առաջարկը մտցնելով, մի առաջարկ, վորից հիշում եք, թե ինչ դուրս յեկավ,—այսինքն վոչինչ էլ դուրս չեկավ։ Ի՞նչ պիտի աներ Քաղաքային Խորհրդի այդ մի հատիկ անդամի հետ Մազութի Համոն,—այո, ի՞նչ պիտի աներ։—Վոչինչ էլ չեր կարող անել Քաղաքային Խորհրդի այդ մի հատիկ անդամի հետ Մազութի Համոն. Մազութի Համոյին մնում եր միայն թափահարել իր ձեռքը և գնալ տուն՝ հանգստանալու. և Մազութի Համոն թափահարեց իր ձեռքը և վորոշեց տուն գնալ՝ հանգստանալու։ Արդեն յերեկո եր. հոգնել եր ինքը. ուղեղը նվում եր հոգնությունից. և, հոգնությունից, ուղեղում նվում եր... Նայիրին։ Հարկավոր եր քնել, հանգստանալ,—և արդեն, կառք նստելով, ուզում եր կառապանին «քշի տուն» ասել Մազութի Համոն, յերբ հանկարծ հիշեց, վոր վաղուց արդեն քաղաքում չէ «տունը». գրավված վայրերը մեկնելուց առաջ քաղաքից ուղարկել եր Անգինա Բարսեղովնային և Սեաչյա Գրիմագոնյային։ Մազութի Համոն, վորպեսզի միանգամայն ազատի իր, Նայիրյան հոգսերով ծանրաբեռնված, ուսերը՝ ընտանեկան ավելորդ բեռից։—Հիշեց ու դառնորեն ժպտաց մտքում իր ազիզ կողակից Անգինա Բարսեղովնային Մազութի Համոն. ու, նրան ժպտալով՝ հիշեց Ագրիպպինա Վլադիսլավովնային Համո Համբարձումովիչը...։ «Քշիր բերդը»—հրամայեց կառապանին Մազութի

Համոն ու ընկողմանեց կառքում. գլուխը ձեռքերի մեջ առավ. քնեց...։

Հաջորդ առավոտ...։ Բայց լավ է չլուսանար այդ առավոտը, վորովհետև այդ չարաբաստիկ առավոտը դեռ նոր եր լուսանում, յերբ քաղաքում մնացած ժողովուրդը, վոր վերոհիշյալ արտակարգ նիստի հրամանից և ռազմաճակատից ստացված ուրախալի հաղորդագրությունից հետո բավականին հանգըստացել եր կարծես ու սրտապնդվել,—լսեց հրացանների տրաքտրաքոց և թնդանոթների դեռ բավականին հեռու, բայց հետըզհետե մոտեցող վորոտ։ Վոչ մի ուժ այլևս, անգամ վոչ մի յերկնային վերին զորություն, ի վիճակի չեր «տեղը նստած» պահել քաղաքում մնացած ժողովրդին։ Հսկա, տասնյակ և հարյուր հազարավոր գլուխներով հաշվող մի նախիրի նման, սարսափահար տեղահան յեղավ քաղաքում մնացած ժողովուրդը. մի մասը բռնեց կայարանի ճամբան, մյուսը խճուղու։ Քաղաքի տները մեկը մյուսի յետևից սկսեցին վառվել, և այդ վառվող տներում, հրի ու ծխի միջից, ինչ վոր բան եյին փախցնում ռազմաճակատից նահանջած նայիրցի ռազմիկները։ Հաստատ կարելի յե ասել, վոր այդ վայրկյանից քաղաքը կարելի յեր արդեն ընկած համարել, բայց նա այդպիսին դեռ չեր համարվում, վորովհետև վոսոխը դեռ չեր կտրել փախուստի ճանապարհը և դեռ հնարավոր եր փախչել։ Այդ վայրկյանից սկսած քաղաքում չկար այլևս վոչ մի իշխանություն։ Գերագույն Իշխանությունը բերդում եր հավաքվել, վորպեսզի այնտեղից անմիջապես ղեկավարի ռազմական գործողությունները։ Քաղաքի վարի թաղեցիք (այսինքն կենտրոնական փողոցների բնակիչները) բոլորն էլ համարյա հեռացել եյին քաղաքից, արդեն հեռանալ եյին սկսել վերի թաղեցիք ևս, այնպես վոր քաղաքի բուն բնակչության չնչին մասն եր միայն դեռ քաղաքում գտնվում։ Բայց, չնայած դրան, քաղաքը լեփլեցուն եր դեռ մարդկային բազմահազար, խուռն, խայտաբղետ խմբերով, գերազանցապես շրջանից փախած «բոխներով...». ծայր, վախճան չկար սրանց խայտաբղետ շարքե-

րին։—Տելեֆոն Սեթոն էր, վոր մինչ այդ մի զարմանալի անփութությամբ քաղաքում էր մնացել, իր յեղբոր՝ Բոռ Արութի և նրա հավիտենական ընկեր Մեռելի Յենոքի օգնությամբ այրեց իր հռչակավոր «սրճարան-ճաշարանը» և իր «չոլուխ-չոճուղն» հավաքած՝ բռնեց կայարանի ճամբան։ Հարկավոր է ասել, վոր մինչև սրճարանն այրելը, մինչև վերի թաղը վառելը և «չոլուխ-չոճուղն» հավաքելը բավականին ժամանակ անցել էր արդեն. թաղեցիք համարյա բոլորն էլ արդեն հեռացել էին, այնպես վոր, յեթե չհաշվենք ուրիշ մի քանիսին, վոր այնպես էլ վերի թաղում մնացին, Տելեֆոն Սեթոյի թափորը վերջինն էր, վոր հեռանում էր այդ թաղից։ Վերի թաղեցիք փախել էին քաղաքից խճուղու ճանապարհով, այնինչ Տելեֆոն Սեթոն վորոշեց կայարանով գնալ, հույս ունենալով, վոր «վերինի օգնությամբ» իրենց կհաջողվի գնացք նստել։ Յեվ նրան, Տելեֆոն Սեթոյին, ինչպես և «չոլուխ-չոճուղին», Բոռ Արութին ու Մեռելի Յենոքին, հաջողվեց գնացք նստել և այդ անյերևակայելի հանգամանքը տեղի ունեցավ վոչ թե վերինի օգնությամբ, այլ իրա, Տելեֆոն Սեթոյի, ռազմագիտական քանքարի շնորհիվ։ Բանն այն է, վոր Տելեֆոն Սեթոն վորոշեց կայարան գնալ վոչ թե քաղաքի միջով, վոր միանգամայն անհնարին էր, այլ սարի վրայով, թեպետ սարի վրայով տանող ճանապարհն իջնում էր դեպի յերկաթուղին կայարանից բավականին հեռու՝ կայարանին հակառակ ուղղությամբ։ Յեվ հենց այս էր պատճառը, վոր նրանց հաջողվեց գնացք նստել։ Արդեն կեսօր էր, հրացանների տրաքտրաքոցը և թնդանոթների թնդյունն արդեն լսելի յեր բերդից համարյա թե մի յերկու վերստ հեռավորության վրա, յերբ Տելեֆոն Սեթոյի թափորն իջնում էր դեպի յերկաթուղագիծը. թափորի առաջից իր փոքրիկ յերեխային գրկած, գնում էր ինքը՝ Տելեֆոն Սեթոն, կողքից, մի մեծ բոխչա գրկած, վազում էր նրա «ողլուշագը». յետևից վազում էր Բոռ Արութը՝ մի բավականին ծանր խուրջին շալակած, Բոռ Արութի յետևից—Մեռելի Յենոքը։ Մեռելի Յենոքը, այլ հարստություն չունենալով. տանում էր շալակին իր «վակըլ թյուքանը», այսինքն մի, իր իսկ ձեռքով հին ափսեներից

շինած, կշեռք, մի-յերկու գրվանքա-քարեր, մեկ էլ իր ունեցած չայն ու կալբասը։ Այսպես էլ հասան նրանք յերկաթուղագծին և ճիշտ իրենց առաջ կանգնած տեսան—գնացքը. գնացքը, փախչող նայիրցիներով ծայրե ի ծայր լեցուն, հեռացել էր կայարանից և ինչ վոր անհայտ պատճառով կանգ առել այդտեղ։ Յետի կողմից մոտեցավ գնացքին Տելեֆոն Սեթոյի թափորը և, ինչպես համոզված էր Տելեֆոն Սեթոն՝ վերինի հրաշքով դեմ յելավ հենց այն բաց վագոնին, վորի վրա, ճիշտ է, լցված էին «հազարից ավելի», ինչպես պատմում էր հետագայում Տելեֆոն Սեթոն, բայց հենց վագոնի յեզերքին տեղ էին բռնել—Հաջի Մանուկոֆ էֆենդին և վարսավիր Վասիլը. դրանք, ինչպես յերևում էր, վերջացած համարելով իրենց հայթայթողական ֆունկցիաները («—Է. ում պիտի հայթայթեյին, յերբ բանակ չկար»)—վորոշել էին իրենք էլ միանալ ընդհանուրին։ «—Տուր տեսնիմ պզտիկդ»—ասաց Հաջին Սեթոյին, և Տելեֆոն Սեթոն տվեց Հաջուն իր յերեխան. հետո վարսավիր Վասիլի օգնությամբ բարձրացրին և Սեթոյի ողլուշագին։ Մնացին իրենք։ «Դուք ալ գացեք զնճիլներու վրա կայնեցեք»—խորհուրդ տվեց Հաջին, վորովհետև իրենց մոտ վոչ միայն դրանց, այլ և ասեղի տեղ չկար։ Գնացին. յերկար հայհոյելուց, խնդրելուց ու աղաչելուց հետո, վերջապես հաջողվեց բարձրանալ զնճիլներու, այսինքն բուֆերների վրա. կանգնեցին կողք-կողքի՝ մի-մի ձեռով իրարու բռնած, մյուս ձեռներով՝ իրենց ապրանքը։ Հենց այդ ժամանակ գնացքը շարժվեց։ Վերջին գնացքն էր դա, վոր դուրս յեկավ նայիրյան այդ քաղաքից. յերբ շարժվեց գնացքը—տրաքտրաքոցներն արդեն լսվում էին բերդի տակից։ Թշնամին, ինչպես յերևում էր, արդեն մոտեցել էր բերդին։ Զնճիլներու վրա կանգնած Տելեֆոն Սեթոն, Բոռ Արութը և Մեռելի Յենոքը, ինչպես և այդ վերջին գնացքում գտնվող բոլոր նայիրցիները, սարսափահար հայացքները հառած՝ նայում էին բերդին։ Յեվ այն միտքը, վոր արտահայտեց, բերդին նայելով, Բոռ Արութը՝ գնացքում գտնվող բոլոր նայիրցիների միտքն էր.— «Յա՛, մերո՛նք ընչի չեն կրակե...»—ասաց Բոռ Արութը, զայրա-

ցած ու զարմացած։—Բայց նրան, ավա՜ղ, չվիճակվեց լսել իր այդ օրինավոր հարցի պատասխանը, չվիճակվեց վոչ թե այն պատճառով, վոր այդ հարցի պատասխանը չկար, այլ այն հասարակ պատճառով, վոր, յերկու վայրկյան չանցած, ինքը, Քոռ Արութը չկար։ Յեվ վոչ միայն ինքը, այլ և իր հավիտենական ընկերը՝ Մեռելի Ցենոքը։ Յեվ ահա թե ինչու։—Դեռ հազիվ էր ասել իր վերոհիշյալ, հեռագայում պատմական դարձած, նախադասությունը Քոռ Արութը, յերբ գնացքն ուժգին առաջ ցընցվեց. գնացքի ուժգին ցնցումից վայր ձգվեց Քոռ Արութի խուրջինը. այդ վայրկյանին յերկրորդ անգամ, յետ ցնցվեց գնացքը. խուրջինը պոկվեց։ Քոռ Արութը ձեռից ընկնող խուրջինի յետևից բնազդաբար կռացավ, վոր բռնի խուրջինը. չբռնեց. կորցրեց հավասարակշռությունը... ընկավ։—«Յա՜, Հարո՜ւթ...» —վախեցած ու լացակումած կանչեց նրա յետևից Մեռելի Ցենոքը. ինքն էլ բնազդաբար կռացավ, ձեռքը մեկնեց, վոր բռնի ընկերոջը. չբռնեց. կորցրեց հավասարակշռությունը... ընկավ։—Ու հաջորդ վայրկյանին Քոռ Արութի և Մեռելի Ցենոքի, այդ հավիտենական ընկերների մխրճված գլխերի վրայով անցնելով, սարսափահար փախչում էր վերջին գնացքը Նայիրյան այդ քաղաքից, ուր արդեն վոտք էր դրել վոսոխը, ուր մահ էր արդեն, ավերմունք, անասելի կոտորած, անպատմելի սարսափ...։

Յեվ այսպես՝ Քոռ Արութի ու Մեռելի Ցենոքի սըխրալի գլխերի վրայով անցնելով՝ հեռացավ վերջին գնացքը Նայիրյան այդ քաղաքից, և թշնամին, վոսոխը, մտավ քաղաք։ Մենք չենք պատմի, ընթերցո՛ղ, թե ինչ պատահեց այդ վայրկյանից հետո Նայիրյան այդ քաղաքում, վորովհետև դա վեր է մեր կարողությունից. կասենք միայն, վոր քաղաքում մնաց բազում ժողովուրդ, վոր և սրի քաշվեց վոսոխի հորդաների կողմից։ Բայց այս չէ էյականը, ընթերցո՛ղ. էյականն այն է, վոր, բացի, ուրեմն, այդ բազում ժողովրդից, քաղաքում մնացին, և սա յեր ամենաէյականն ու սարսափելին, – ընկեր Վառոդյանը, Սերգե Կասպարիչը — բժիշկը, և Մազութի Համոն...։ Մինչև վերջին վայրկյանը նրանք քաջաբար մնացել եյին իրենց դիրքերի վրա, մնացել եյին բերդում և հենց բերդում էլ գերի եյին ընկել վոսոխին,—ընկել եյին թշնամու արյունարբու ձեռքը։ Այդ ժամանակ գերի ընկածներից վոմանք, վոր հրաշքով ազատվել եյին հետո, փախել կոտորումից,—այդ հրաշքով ազատվածներից վոմանք հետագայում պատմում եյին, վոր քաղաք մտնելու յերրորդ օրը վոսոխը, մի դաժան նենգամտությամբ, հանձնել էր նրանց հորդաների ձեռքը, վորոնք և—յերևակայում եք—կախել եյին ընկ. Վառոդյանին, Սերգե Կասպարիչին—բժիշկին ու իրան՝ Մազութի Համոյին ճիշտ այն յերեք հեռագրասյուներից, վոր—ո՛, ճակատագրի անօրինակ հեգնանք,—իրա, ընկ. Վառոդյանի հրամանով յերկու օր առաջ կանգնեցրել եյին ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները՝ դեզերտիրներին կախելու համար...։ Վոսոխից փախածները բավականին մանրակրկիտ կերպով նկարագրում եյին այդ սխրալի դեպքը իր բոլոր սրտաճմլիկ մանրամասնություններով, այնպես վոր մենք էլ, նրանց պատմածների հիման վրա, կարող ենք արձանագրել այստեղ այդ սխրալի դեպքի սրտաճմլիկ մանրամասնությունները։ Դեպքը պատահել է մոտավորապես այսպես։ Բերդը մտնելով՝ վոսոխի սպաները գտել են ընկ. Վառոդյանին, բժիշկին ու Մազութի Համոյին՝ բերդի ամենաբարձր աշտարակի վրա, Նայիրյան յեռագույնի դողդոջ փայտի մոտերքը, իրենց մազերը պոկոտելիս։ Տեսնելով Նայիրյան հրամանատարների այս անասելի վիշտը՝ խորին ակնածանքով մոտեցել են նրանց վոսոխի նենգ սպաները, մեծ պատիվ են տվել և մեծագույն շուքով տարել քաղաք։ Պատմում են, վոր ճանապարհին հանդիպած բոլոր վոսոխ-սպաները պատիվ են բռնել նրանց, և նույնիսկ ինքը, վոսոխի ամենամեծ փաշան սեղմել է նրանց ձեռքը և ցավակցություն հայտնել նրանց վշտի համար։ Այսպիսի ահա մի չտեսնված վերաբերմունք են գտնում ընկ. Վառոդյանը, բժիշկը և Մազութի Համոն վոսոխի հրամանատարության կողմից, բայց, յերկու օր անց, մի դաժան նեն-

գությամբ հանձնվում են նրանք վոսոխի թափթփուկ հորդաների ձեռքը, վորոնք և կախում են նրանց ու յենթարկում զարհուրելի գանահարության։ Նրանք, վոսոխի այդ թափթփուկ հորդաները աջից կախ են անում ընկ. Վառոդյանին, ձախից բժիշկին, իսկ մեջտեղից — իրան, Մագութի Համոյին, — և սա չե դեռևս ամենազարհուրելին ու ամենաքստմնելին։ — Ամենազարհուրելին և ամենաքստմնելին այն ե, վոր նրանք, վոսոխի այդ թափթփուկ հորդաները, ասում են, մի տախտակ են փակցընում յերրորդ հեռագրասյան մեջտեղը, Մագութի Համոյի գլխավերևը, — ու գրում վրան, յերևակայեմ եք — Նայիրյան տառերով.

Մ. Հ. Ա. Ն.

վոր նշանակում ե՝

«Մագութի Համո Արքա Նայիրի»։

. . . .

. . . .

ՎԵՐՋԱԲԱՆ

Ահա և ամբողջը, ընթերցող. ահա և մեր սույն այս պոյեմանման վեպը, վորը, վերջին հաշվով, վոչ թե վեպ դուրս յեկավ, այլ «այլակերպ» մի բան։ «Այլակերպ» բառն առնում ենք չակերտների մեջ, վորովհետև այդպես պիտի ասեր սույն այս վեպիսի մասին մեզ բավականին ծանոթ Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆը, այդ հայտնի անգլիախոս Նայիրցին, յեթե նա կենդանի լիներ և սույն այս վեպս կարդար։ Այո, այսպես պիտի ասեր Հաջին և մենք միանգամայն համամիտ պիտի լինեյինք նրան, վորովհետև նա, իբր հմուտ անգլիախոս և պատկառելի Նայիրցի, հարց պիտի դներ սույն այս վեպիս ձևի վոչ ամբողջական լինելու, նրանում վեպի ելեմենտար կանոնների բացակայության և հազար ու մի այլ թերությանց մասին, ու՝ մեր բազում քանքարավոր քննադատներին ի խրատ՝ պիտի հիմնավորեր իր կարծիքն իր հմուտ անգլիախոսությամբ և պատկառելի Նայիրասիրությամբ...։ Բայց — ավա՜ղ, ավա՜ղ, — մեր ստացած ստույգ տեղեկությանց համաձայն՝ կենդանի չե այլևս Հաջի Ոնիկ եֆենդին, ուստի թողնենք ձևի խնդիրը և անցնենք բովանդակությանը, այսինքն մեր առաջադրած այն հիմնական հարցին, թե վո՞րն ե վերջապես, Նայիրին։ —

— Ընթերցող։

Վաղուց հետե մեր գրականության, մանավանդ բանաստեղծության մեջ չկա մի բառ, վոր ավելի հոլովվեր, քան «Նայիրի» գոյականը. բայց, չնայած դրան, մինչև իմ սույն այս պոյեմա-

Նման վեպը, մեր լեզվագիտության ամուլ անդաստանում չեր ճարվում և վոչ մի Մանուկ Աբեղյան, վոր զբաղվեր այդ չամիչի պես գործածական դարձած բառի քերականական կազմությամբ,—և յես, նույն հարգելի Հաջու տերմինով ասած՝ «քամի կուլ տվող» նվաստս եյի, վոր առաջին անգամ զբաղվեցի այդ քերականական հարցով և գլխի ընկա, վոր «Նայիրի» բառը վոչ թե գոյական է, այլ—յեթե միայն կարելի յե քերականության մեջ այսպես ասել—«մազութի համոյական»…: Յերևակայում եմ, թե ինչպես պիտի ծիծաղի Մանուկ Աբեղյանը, յերբ իմ այս քերականական նոր տերմինս կարդա. վոչ, չպիտի ծիծաղի, բարկանա պիտի նա, յեթե այս տերմինս կարդա, բայց մենք չենք բարկանա նրա վրա, վորովհետև մեր գործը չե քերականությունը, և իր, Մանուկ Աբեղյանի անփութության շնորհիվ է, վոր ինձ պես համբակները զբաղվում են քերականությամբ:—Մյուս կողմից, կարծում ենք, վոր մեզ վրա ևս բարկանալու այնքան էլ հիմք չպիտի ունենա նա, քանի վոր մեր, համբակիս, կարծիքով՝ «Նայիրին», իբր քերականության յենթակա մի հանգամանք, այսինքն իբր բառ գոյություն ունենալուց առաջ՝ վաղուց արդեն գոյություն է ունեցել մի շարք ավելի քան պատկառելի մարդկանց մեջ (կարդա սույն վեպս), վորպես ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն…: Իսկ նման դեպքերում, ինչպես գիտեք, քիչ գործ ունի անելու լեզվագիտությունը. այստեղ, կարծում ենք, արդեն բժիշկ է հարկավոր, անդամահատական աքցան կամ լանցետ և վոչ թե քերականություն…: Թող ներեն ինձ բժիշկները, յեթե գտնեն, վոր չի կարելի ուղեղային մորմոքը ու սրտի հիվանդությունը հանել մարդկանց միջից աքցանների ու լանցետների ոգնությամբ. բժիշկ չենք մենք, ընթերցող, և վոչ էլ, դժբախտաբար, կենդանի չե սույն այս վեպիս մեջ քանիցս հիշատակված դոխտուր Արշակը, վոր նրանից կարծիք հարցնենք:—Բայց ինչ էլ լիներ դոխտուր Արշակի կարծիքը՝ մի բան պարզ է մեզ համար. և այդ պարզ բանն այն է, վոր վաղուց արդեն պատմությունը, այդ, կարծում ենք, ավելի հան-

ճարեղ բժիշկը, քան դոխտուր Արշակը,—պրակտիկայում կիրառել և վերոհիշյալ միջոցը և չենք կարծում, վոր պատմության այդ փորձերն ապարդյուն են անցել. արյուն, ճիշտ է, շատ է հոսել, սակայն կենդանի մնացածներից շատերն արդեն ազատ են վերոհիշյալ ուղեղային մորմոքից ու սրտի հիվանդությունից և այսոր իրենց յերկիրն են շինում—մի յերկիր, սակայն, վորի գոյական լինելը ճշտելու համար կարիք չկա դիմելու վոչ մի Մանուկ Աբեղյանի, վորովհետև այդ պարզապես տեսնում են բոլոր նրանք, ովքեր գործ ունեն հողի ու աշխատանքի հետ և վոչ թե այն հռչակավոր, մենք կասեյինք՝ «նայիրոմազութիհամոյական» դարու, վոր, ըստ Նայիրյան անեկդոտի՝ տեսել եր մի անգամ յերկարականջ քեռին իր այն նշանավոր յերազում…:

Ահա և բոլորը:

ՀՀ Ազգային գրադարան
NL0353307

48919

891.99
9-28